ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՐ ՕՒՇԱԶԻՆ

Per me si va nella citta dolente
Per me si va nell'eterno dolore
Per me si va tra la perduta gente
Lasciate ogni speranza, voi ch'entrate.

Dante

Հրատարակութիւն
Հ. Ց. Դ.

1912
ՓԻՆՆԻՎ

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

„Բազմահոյլ գարեր սուր և հուր կը բերեն ի Հայաստան. հզօր ազդեր կը խաւժեն, բռնակները կ'սրուտան, կը գոռան, արեամբ կը ներկեն, աւերակով կը լեցնեն զայն։ Բայց նա միշտ անմեռ կը մնայ, նա միշտ կը վերականգնի, նա միշտ կը պատասէ, որ օր մը իր դերը լեցնէ աշխարհի մէջ, այն դերը, որ իրեն ճակատագրեալ է։ Վերին Ասիոյ սէգ բարձրաւանդակին տէր և նիրհատար արգասաբեր հովտին բնական ժառանգ՝ հայը դեռ և սառնձնած, կատարած չէ այն դերը, զոր կը պատանեն իրմէն քաղաքագիտութիւն և քաղաքակրթութիւն“։

(Խորէն Նարպէյ Լուսինեան, Բերլինի վենաժողովի առթիւ Ազգային ժողովի մէջ արտասանած իր ճառում, 1878 թ. 10 նոյեմբեր)։

Հրատարակութիւն
Հ. Ց. Դ.

1912
ԺԸՆԵՎ.

ԴԷՊԻ ՄԵԾ ՏԱՌԱՊԱՆՔԸ

Per me si va nella citta dolente
Per me si va nell'eterno dolore
Per me si va tra la perduta gente
*Lasciate ogni speranza, voi ch'entrate**).

Dante

Իջնենք Դանտէի դժոխքը — և չ'ողբանք, չ'անիծենք, այլ ձգտենք հասկանալ Աստեղանք իրերին՝ պաղատարիւն և վեհանձն առարկայականութեամբ, ինչպէս որ կը վայելէ մեծ, հպարտ սգաւորներին, վշտատանջ, բայց և զգաստ, գիտակից ազգերին Աստեղանք՝ գիտակցելով, որ համաշխարհային պատմութեան մի արտուածն ենք ապրիլ մեր վտիտ ուսերի վրայ—թէկուզ և ամենատխուր, ամենահեղ արտուածը—մի պատմութեան, որ նոյնպէս իր երկաթէ օրէնքներն ունի, որ նոյնպէս թաւալւում է պաղ, անողոք տրամաբանութեամբ, ինչպէս ամրողջ շնչաւոր և անշունչ տիեզերքը...

Եւ երբ մենք մտեղնում ենք այդ արիւնոտ ճաշին—

*) Ահատեղից կ'ընթանան դէպի ցաւոտ մայր-քաղաք,
Ահատեղից կ'ընթանան դէպի վիշտ յաւերժական,
Ահատեղից կը քայլեն դէպի կորած մարդիկներ,
Թողէ՛ք յատեղ ամեն յոյս, դուք բոլոր անցորդներ։

(Դանտէի խօսքերը՝ դժոխք իջնելիս):

որ կոչւում է հայկական պատմութիւն — երբ սկսում ենք փորփորել հայրենի և օտար գրականութեան արշիվները, երբ թեկուզ Հարևանցօրէն դիտում ենք այդ պատմութեան պղտոր, արտասւախառն հոսանքը, թըշնամի հօրդանների խօլական գահավիժումները, լքումի և օրհասի վիթխարի գալարումները, երբ զարհուրած անցքերի դաժանութիւնից, ընթերցողը մի վայրկեան կանգ է առնում և փորձում է հաշիւ տալ ինքնիրեն այդ հսկայ, անօրինակ դրամայի վերաբերմամբ, — մի հարց, անխուսափելի և կնճռալի, ցցւում է նրա խռովեալ գիտակցութեան մէջ.

„Ինչպէ՞ս կարողացանք ապրել“...

Ինչպէ՞ս այդ վտիտ, անզէն ժողովուրդը, որ բնաւ չէր կոչւած գոյութեան ահեղ մենամարտի համար, որ վաղուց իվեր, իբրև ճշմարիտ խաչակիր-քրիստոնեայ, մարզւել էր բացառապէս համակերպութեան ու կրաւորականութեան հաւատամքի մէջ,—ինչպէ՞ս նա կարողացաւ, այնուամենայնիւ, ապրել ու յարատևել այն աւերիչ ուրագաններն ի յորձանքներում՝ բարբարոս արշաւանքների, բռնի կրօնափոխութեանց, մասսային բնաջնջման, բռնակալական անդադրում սարսափների մէջ, ինչպէ՞ս նա կարողացաւ ճողոպրել այդ անօրինակ նահատակութեան անդունդներից, ծածանեցնելով մշտապէս — չարչարանքի իր անեզր ովկիանի մէջ — ոչ միայն իր գոյութեան, այլ և համեստ, թանկարժէք քաղաքակրթութեան դրօշը. ինչպէ՞ս էր, որ այդ դարաւոր և անլուր տագնապներից դուրս լողալով, նա կարողացաւ — վերջին 20 տարւայ ընթացքում, թէև արդէն յոշոտ-

ւած, անգամալոյծ — ապրել մի այլ ճգնաժամ, ամենամեծը, ամենաահարկուն, որ իր եզակի գժոխայնութեամբ կը գերազանցէ „Աստուածային Զուեշտի“ *) սոսկանեցուցիչ չղացումն անգամ, ապրեց՝ և այսօր յոյսերի ու գրաւականների նոր պաշարով բեռնաւորուած, ճակատը միշտ հողմերին, գնում է թաւելու քաղաքակրթութեան սանդուխի պատուաւոր աստիճանների վրայ, գնում է բազմելու լուսաւոր ժողովուրդների արէօպագում, իբրև օսմանեան, ռուսական, արևելեան պետականութեան մի ազդեցիկ գործօն, գնում է կատարելու այն դերը, որ 34 տարի առաջ, պատմական անժուռանալի թուականին, ծանուցանում էր տարտամ կերպով բերլինեան Վեհաժողովի հայկական պատգամաւորութեան մի անդամ։

Գրեթէ առեղծուած...

Փորձենք լուսաւորել գէթ մի քանի խորշերը այդ զարմանալի և զարհուրելի առեղծուածի։ Փորձենք առաջադրել ոչ միայն հայկական այդ դարաւոր նահատակութեան հակիրճ ուրուագիծը իր էական պատճառների ու հետևանքների թափօրով, այլ և ըմբռստմտքի ու գործի հրապուրիչ ցոլքերը, յատնաւորապէս վերջին դարում, ի դէմս հայկական վեհափառ պլէադների՝ Ալիշանների ու Խրիմեաններբ, Րուսինեաններբ ու Պալեաններբ, Նալբանդեաններբ և Րաֆֆիներբ, որոնք մի հզօր և մարտաշունչ հայրենասիրութեամբ տոգորուած, ձգտեցին խորտակել քրիստոնէական տխուր համակերպութեան դոգմը, փարատել տգիտութեան և բռնութեան

*) *La Divina Commedia.*

ձմեռը ազատատենչ գարունի հմայիչ գեղգեղներով, ձգտեցին առաջ մղել հայրենի ժողովուրդը Արևմուտքից ղօղանջող կոչերի ուղեկցութեամբ, և իրենց անդուլ ճիգերով — մերթ խաղաղ, օրինական, մերթ գոռ և ապըստամբ — պատրաստեցին ըմբռնացման այն անհրաժեշտ փոթորիկը, որին մենք ականատես եղանք վերջին քառորդ դարի ընթացքում, Թիւրքաց Հայաստանի մէջ, որին դեռ ականատես ենք Հայրենիքի երկու միւս հատուածներում, Կովկաս և Պարսկաստան։

Առեղծուած — այո՛, Հայ ճակատագիրը ըմբռնելու համար անհրաժեշտ է ժտքի մեծ և հուժկու ճիգ. հայ իրականութեան արիւնլուայ խորշերը թափանցելու և պաղօրէն, առարկայօրէն ցուցադրելու համար՝ անհրաժեշտ է նաև կամքի ու նիարդերի ծայրագոյն լարուածք և մի տեսակ անզգածութեան, հանգարտ, փիլիսոփայական ինքնատիրապետման խոշոր դօզ — մարդկայնօրէն գրեթէ անհնարին...

Առեղծուածային էութիւնների մէջ՝ մի յայտնի ուժ է թագնուած — ասում է փիլիսոփայական տարրական իմաստութիւնը։ Գիտակցե՞նք այդ ուժը — և թո՛ղ նա հայ-ժողովրդական սերունդների մէջ նոր կորով ներշնչէ, ստեղծագործ, հայրենաշէն նոր եռանդ՝ ոչ միայն պրպըտելու, ուշի ուշով ուսումնասիրելու հայրենի պատմութեան արիւնազանգ արշիվները — մտքի և հոգու լիակատար անդորրութեամբ — այլ և հզօր ու գիտակից ներազդակ լինելու այդ պատմութեան խորհրդաւոր յեղյեղումների...

Մ. Վ.

Ժընեվ, մարտ 1912 թ.

I

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Անցեալի արձուագրում. — Հաւատի զինուորներ եւ նահատակներ. — Տավերնիէ եւ Առաքել Դավրիժեցի. — Կրօնի դերը բնդհանրապէս, Իսլամի դերը մասնաւորապէս — „Մահմեդական նամբեռողութեան“ պատրաւքը. — Օսմանեան բադամական սիստեմը. — Իսլամ եւ „տնտեսական մատերիալիզմ“.—Ռայեայի կացութիւնը իսլամական ռէժիմի տակ. — Տուրնըֆor եւ Ռիկօ. — Իսլամի այլասերող ազդեցութիւնը հայ նամայնքի վրայ. — Բայրքի խօսքը. — Հակասութիւններ օսմանեան բադամական սիստեմի մէջ. —

Նահատակութիւնը սկզբում է կրօնի նշանակի տակ։ Նրա հակազդակ—ըմբոստացումը՝ նմանապէս։ Ո՞րն է որին յաջորդում, ո՞րն է պատճառ, ո՞րը հետևանք։ Դիւրին չէ պատասխանել։ Մի բան միայն բացայայտ է. — անհատական նահատակութիւնների երկայնաձիգ շարանը, որ կտրմրտգոյն ժապաւէնով ձգւում է հայկական տարեգրութիւնների միջից, հիւսւած է ըմբոստացման անհաշիւ ու մոլեռանդ, բայց և վսեմ, խօլական արտայայտութիւնների հետ. ըմբոստացում՝ յանուն կրօնի ու եկեղեցու, յանուն խղճի ազատութեան։

Կրօնի, խղճի ազատութեան պատերազմը նախորդել է արեւմտեան աշխարհի մէջ՝ բոլոր միւս ազատութեանց պատերազմներին։ Մարդկութիւնը նախ և առաջ խորտակել է խղճի վրայ ծանրացած կապանքները, ապա փշրել է քաղաքական-բռնապետական շղթաները, ապա և դիմել է ամենածանր, ամենակնճռոտ պրօբլէմին — տնտեսական ազատութեան և հաւասարութեան պատերազմին։ Երեք կարգի պրօբլեմները խճողել են երբեմն, զուգադիպել այս կամ այն պատմական շրջանի մէջ կամ թէ գրել ժամանակագրական այլ կարգով, սակայն նրանք հաստատացել ու լուծել են — գէթ լուսաւոր մարդկութեան մէջ — յիշատակած յաջորդութեամբ։

Հեռու ասիական լեռնագաշտում թաւալած փոքրիկ հայ ազգը բացառութիւն չկազմեց այդ օրէնքից. նա էլ ապրեց — մանրանկար ծաւալով, բայց աւելի արհաւրոտ ու արիւնոտ ելևէջներով — քաղաքակրթ մարդկութեան բազմերանգ ճակատագիրը. նա էլ անցաւ պրօբլեմների ու պայքարների նոյն էական հանգրւանները, և նախ քան ծածանեցնել քաղաքական ազատութեան դրօշակը իր անհամբոյր լեռների մէջ, նախ քան փարել ժողովրդապետութեան ու „աշխարհիկ“ յեղափոխութեան համամարդկային աւետարանին՝ նա պայքարեց երկար դարեր յանուն պաշտած իր հաւատի ու եկեղեցու, սրբազնագոյն դրօշակած աւանդների, տեղ անթիւ ողջակէզներ, տեսաւ անթիւ նահատակութեան խաչեր ու գերաններ, հեծկլտաց, արտասուեց իր

„սրբերի“, „վիճակորների“ *) շիրիմներին, և իր աւետեան թանկագին գոլորշիների հետ դէպի երկինք առաքեց— ամբողջ դարեր շարունակ —իր լուին, կրաւորական „ըմբռնողութեան“ սրտաճմլիկ աղօթքները...

Կրօնը, այո, նախնական սրբութիւնն է, նա ժարդկային հասարակութեանց առաջնագոյն իրողութիւններից է։ Ազգը, Հայրենիքը, Հայրենասիրութիւնը — յետագայ, աւելի անագան գոյացումներ են... Հայրենիքը կարելի էր ոտնահարել, ազգութիւնը կարելի էր յօշոտել, ցիրուցան անել, անտեսապէս սպկացնել, հարստահարել և տանջել, անհատների կեանքն իսկ տրորել, ոչնչացնել — հայ ժարդը, այնուամենայնիւ, կը տոկար, կը հաւքերէր Բայց կար մի բան, որ նրա աչքում գերագոյն, անբռնաբարելի սրբութիւն էր — իր Հաւատը. և նրա համար, յանուն նրա՝ կ'ապստամբէին ու արիւնով իսկ կը բողոքէին ազգի ընտիր, զգայուն, գաղափարական տարրերը... եթէ կարելի է „գաղափարական“ յորջորջումը տալ այդ կոյր, մոլեռանդ, տարերային ընդվզումներին։

„Թէև ապէտ և վատ տեղեակ իրենց կրօնին՝ այնուամենայնիւ, երբ պէտք է մեռնել Հաւատի համար, նրանք (հայերը) գնում են զուարթ և քաջաբար դէպի չարչարանք“.—այսպէս է վկայում Տ ա վ ե ր ն ի է, հռչակաւոր ֆրանսիացի ճանապարհորդը, որ 17-րդ դարում

*) Ուշագրաւ է սրակում հայ ժողովուրդը իր սրբերին, գէթ մեզ մօտ, Անգրկովկասում նա ասում է „վիճակոր“, որ ասել է վիճակ—մարդանշող և միանգամայն նահատակ յատնուն կրօնի ու եկեղեցու։

վեց անգամ պտոյտ է արել մահմեդական Արևելքի մէջ, տեղն ու տեղը ծանօթանալով նաև հայոց կացութեան ու բարքերի հետ։

Ինչքա՜ն սրտագրաւ էջեր ունի այդ զարմանալի, արկածախնդիր ուղևորի մեծահատոր աշխատութիւնը *)։

Ահա նա Տիգրանակերտում Հայկական մարտիրոսութեան գնացող իրողութիւնները շանթում են նրա հարուստ, փրանսիական երևակայութիւնը, և նա յուզիչ գոյներով նկարագրում է՝ այնտեղ, Տիգրանակերտի մէջ կատարուած (1651 թուին) արևելեան բարբարոսութեան մի տեսարանը։ Պատմենք այն՝ հեղինակի խօսքերով—և կը տեսնենք մեկ-երկու տոսկուժնալի դէպքերի մէջ գոյացող մեր վաղեմի իրականութիւնը։

Հարուստիք էր, ասում է Տավերնիէ, մի Իւրք երիտասարդի և իր ցեղակից մի աղջկայ։ Տղայի մայրը հրաւիրում է իւ մէջի այլոց իր մտերիմ ընկերակից մի ունևոր հայ տիկնոջ, որ ունէր մատղաշ արու զաւակ։ Այդ վերջինը յանկանում է ուղեկցել իր մայրիկին, նոյնպէս լինել հարսանիքում։ Բայց թիւրքական օրէնքը կար, որ արգելում էր վեց տարեկանից բարձր քրիստոնեայ մանուկներին՝ խառնուելու թիւրք կանանց ու աղջկանց հետ։ Տղայի խնգիրքը այդ պատճառով մերժւում է։ Բայց նա գտնելով շարունակում է աղերսել։ Միջամտում է հօրաքոյրը և տանում են տղային թիւրքական հարսանիքը, բայց ծպտեալ, զգեստաւորած, որպէս աղջիկ։ Սկսւում է պարը։ Եւ այդ պարի միջոցին հայ տղան իր անուսում շարժուձևերով մատնում է անմիջապէս իր սեռը։ Մի պատառ թիւրքուհի գոռում է ահագանգը... Շփոթութիւն, իրարանցում և յանկարծ աղաղակներ։

*) *Tavernier: Les six voyages en Turquie, en Perse et aux Indes, pendant 40 ans.*

„Սա դիտաւթեան՛վ է կատարւած, որանք ուզում են ծաղրել մեր օրէնքը և հաւատը“... ոռնում է խուժանը և պահանջում վրէժ, պատիժ։ Տղայի հայրը միջամտում է, խոստանում՝ իր հարստութեան կէսը. ապարդիւն։ Եւ կատարւում է մի ճշմարիտ գողգոթայ, ակռւում են անլուր չարչարանքներ։ կանգնեցնում են հայ տղային քաղաքի մեծ հրապարակում, մերկացնում են և կաշին ակռւում են քերթել... Մոլլան, քաղաքի այլ իսլամ կղերականները համախմբւում են և պահանջում, որ տղան դրկէ մահմետական հաւատը։ Մերժում... Սոսկալի տանջանքների մէջ գլուխը մեռնում է, և ապա փաշան վրայ է հասնում ու կտրել տալիս գլուխը։

Մի այլ օրինակ, ոչ պակաս հիացուցիչ — ասում է Տավերնիէ.

Նահատակութեան թատերաբեմը Վանն է։ Հայ և թիւրք մանուկները, դպրոցներից դուրս գալով, երբեմն սովորութիւն ունին իրարու վրայ քարեր նետել։ Մի օր այնպէս եղաւ, որ կռւի միջոցին մի հայ մանուկ գետին դրեց մի թիւրքի և մեռցրեց։ Անմիջապէս վրայ թափւեցին միւխեանարիքը և խուժանը. պահանջեցին, որ սպանողը փոխէ հաւատը, դառնայ իսլամ՝ իր ոճիրը քաւելու համար։ Եւ մերժումի հանդիպելով՝ որոշեցին մահով պատժել։ Տարան մանկան իր կատարած սպանութեան տեղը։ Առաջին հարւածը հասցրին սպանւածի ծնողները, ապա տեղւոյ քարերի տարափը խուժանի կողմից։ Մանուկը մեռաւ։

Առաքել Դավրիժեցու պատմութեան մէջ գտնում ենք նոյն դէպքերը, փոքր ինչ տարբեր նկարագրութեամբ։ Այդտեղ սրբերի շարքում գտնում ենք Խաչատուր Տիգրանակերտցի անունով քանամեայ երիտասարդին (նահատակւած 1652-ին), որ

թերևս նոյն Տավերնիէի յիշատակածն է, միայն տարբեր պատճառների ցուցադրութեամբ։

Դատը և պատիժը այսպէս են պատմած.

... Եւ ժողովեցան բազում մահմեդականք... և յոփըշատակեցին գխաչատուրն և տարան առ դատաւորն։ Եւ դատեին ի մահ գխաչատուր... Եւ Մուֆիին ետ ֆաթվայ.

„Կ՚ետք է զնա քերթել"։

Եւ ապա առեալ գխաչատուրն՝ տարան առ փաշային։ Իսկ փաշային... ասայ. „տամ քեզ բազում դանձս և գպատուական առարուածս... և կին գեղեցիկ, եթէ ուրանաս գքրիստոնէական հաւատն և ընդունիս գհաւատն Մահմեդի"։ Եւ խոչտատուր ոչ ուրացաւ։ Յայնժամ եկեալ դահճայն՝ իբրև զդազան արիւնախանձ, պատեցան շուրջ զնովաւ և մերկացուցին զնա և կապեցին ձեռս ի յետս և առեալ տանէին ի տեղի սպանման... Եւ ժողովեցան ի վերայ նորա բազմութիւնք մահմեդականաց, իբրև զաւազ ծովու անթուելի և իբրև զդազան կատաղի կրճտէին զատամունս իւրեանց ի վերայ նորա, հարկանէին, կռփահարէին և ընդ քարշս տանէին... Եւ ապա դազան դահիճքն պատառեցին զմորթ մարմնոյ նորա յամենայն ուրեք մինչև զձախայ ուսն և քերթեցին գկաշին թիկանցն և իջուցին մինչև զքամակն և շրջեցին գկաշին ի վերայ միջոցն. այլ և յառաջուստ կողմանէ քերթեցին զմորթ լանջացն՝ մինչ ի ներքոյ առեանցն և շրջեցին զմորթն ի վերայ փորին։ Եւ ապա տարեալ շրջեցուցանէին ի մէջ բազաքին... և ամենայն տեսողաց մարմինք ողկացեալ սարսէին։

Եւ ապա... ասացին դահիճքն ցխաչատուր. „Որովհետև յամառիս և ոչ լսես մեզ, արդ՝ տարածեա զձեռս քո ի վերայ վիմիդ՝ զի խորտակեսցուք"։ Եւ նա յօժար կամօք իւրում տարածեալ զձեռսն ի վերայ վիմին և դահիճքն հարին կացնաւք և խորտակեցին զբազուկսն երկոցունց ձեռացն։ Ապա խնդրեցին զոտսն և նա տարածեալ գերկոսին ոտսն և դահիճքն խորտակեցին զոլոքս երկոցունց ոտացն...

Եւ յետ աւանդելոյ հոգւոյն սրբոյ, փառաւորեաց զնա Տէրն Քրիստոս, զի լոյս պայծառ էջ յերկնից ի վերայ նորա...

Վանի դէպքը (1665 թ.) Առաքել Դավրիժեցու պատմութեան մէջ այսպէս է նկարագրուած.

Այր մի՝ որուն անունն էր Սիրուն և էր սա յաշխարհէն Վասպուրականի... Ցաւուրս գարնանոյ գնացեալ ի Ղլաթ, էառ կեռաս, եբարձ ձիոյն և եբեր ի Վան քաղաք։ Եւ եկին ժողովեցան ի վերայ նորա մանկունք մահմեդականաց և իւրաքանչիւր ոք ընթացեալ յափշտակէր կեռաս ի բեռանէ անտի, իսկ Սիրուն ոչ թողոյր յափշտակել, այլ հալածէր զմանկունսն։ Եւ ոմն ի մահմեդականաց մանկանոյն առեալ բռնաբար և եհար զՍիրուն բարիւն. իսկ Սիրուն առեալ զքարն ձգեաց առ ձգօղն, և դիպեցաւ քարն ի գլուխ տղային և վիրաւորեաց և... աստուածեցաւ տղայն ի պատճառէ վիրացն։

Եւ սուխտէք քաղաքին դատարեալք ի միասին, երկու և երեք հարիւր սուխտայք գրոհ առնել ժողովեցան ի վերայ անպարտ երիտասարդ Սիրունին, ամենեքեան մերկացուցեալ զսուրս իւրեանց, Թուր և խանջալ, մեծարան խրոխտանօք ահայուցանէին զնա՝ թէ „Դարձի՛ր ի հաւատս Մահմեդի և առճկայիր, ապա թէ ոչ սրախողխող և քարկոծ լեալ մեռանիս ի ձեռաց մերոց“։ Իսկ Սիրունն ոչ հաւանէր. „Զկեաս հաւատս իմ ոչ թողում“...

Եւ. մարգարէմ գազանք սուխտայքն յաւուրս քան կապեալ զձեռս ի կեսս, գլուխ ի բաց շրջեցուցանէին ի մէջ քաղաքին Վանայ և... ի գլխոյ միւնարէին կանչեն ի ժամ աղօթիցն իւրեանց, առելով թէ „Խանգարեալ խափանեցաւ և յերկիր սուզաւ հաւատս մահմեդական, զի անհաւատ հայ զմուսուլման սպանեալ է“։

Եւ... բերեալ հասուցին ի Նալբանդանոյի շուկայն և անդէն ի սուխտայիցն ոմն չարագոյն, որ ի ձեռին իւրում ունէր

մերկ զինանշանն, ուժդին բաղմամբ եհար ի թուլակուշտ Սիրունին, և նա անկաւ ի վերայ երեսացն. և այլ ոմն սուխտայ առեալ ծանր վէմ մի՝ եզարկ ի վերայ գլխոյ Սիրունին և Յարպեսայ զդլուխն և ի բաց ցնդեցաւ ուղեղ գլխոյն... Եւ ապա եդին պարան յատան և քաշեցին տարան արտաքոյ քաղաքին... և անդէն զմեռեալ ժարմինն բարկածեցին, այնքան՝ մինչ որ ծածկեցաւ ի քարանցն և ապա թողեալ ի բաց գնացին արիւնարբու գազան սուխտէքն։

Լեգենդականը, հիպերբոլիկը, չափազանցութիւնը, անտարակոյս, իրենց որոշ բաժինն ունին այդ սրտառուչ պատմութիւններուն մէջ, մայց և, անշուշտ, պատմական եղելութիւններ են այդ դէպքերը, ցնցող ու արտասուաշարժ՝ անգամ իրենց մերկ պարզութեան մէջ։

Ժողովրդական երևակայութիւնը ամենուրեք աւելի ևս գեղեցկացնում, զարդարում է այդ դէպքերի հերոսներին արտասովոր յատկանիշներով, տալիս է նրանց հրաշքի բնոյթ և „սուրբերը“, նահատակները դառնում են մի մի գերմարդ։

Ժողովուրդը պաշտում է նրանց, իր հաւատի „զինաւորներին“, երդւում է նրանց անունով, առասպելներ և երգեր է հիւսում նրանց շուրջը... Ժողովուրդը պաշտում է նրանց մօտաւորապէս նոյն եղանակով, ինչպէս այսօր մի Գէորգ Զաւուշ պաշտամունքի առարկայ է Տարօնի հայութեան զգայուն ու բարեպաշտ սըրտերի համար։ Ահա մի երգ, ուռանաւոր, որ յօրինւել է 1784-ին նահատակւած Թուխման Տիգրանակերտցու, որ մահմեդական կրօնը արհամարհած լինելու համար պատժւել էր կախաղանով.

Մանուկ անուն ոմն Թ ո ւ խ մ ա ն,
Որ էր երկրէս նա Տ՛իգրանեան,

Աւուր միում յանկարծական
Փայլեաց իբր աստղ առաւօտեան։

Կացեալ ընդդէմ բռնաւորաց,
Մեծամեծաց, դատաւորաց,
Զօրէնս նոցա արհամարհեաց,
Դաւանելով զքրիստոս Աստուած։
. . . . . .

Ցայնժամ յուսեալ բռնաւորին
Եւ ետ հրաման մահու նորին.
Առեալ և դուռ ժամու բերին
Զնա անդէն գլխատեցին։

Արիական քաջ նահատակ,
Հեղեր զարիւնս իբր վտակ,
Սիրով արքեր զմահու բաժակ
Ի հանդէս քո հրճւին հրեշտակք։

Այլ երգ *), հիւսուած ի յիշատակ մի երիտասարդ հայ նահատակի.

Եւ յարձակին փոյթ ընդ փոյթ
Դահիճք վառեալ ի գէնս ահեղ
Իբրև ի դաշտ մարտի դույթ
Տալով յանգէն մարմինն անմեղ
Անգէ՞ն... ոչ։ Լոյս չէր անգէն,
Սուր և ատպար ունի նա խաչ
Ցոր պատսպար հոգևղէն
Ի մեռամարտ մաղէր յաւաչ,
Զպյս մի տալով պատասխան.
„Ես քրիստոսի եմ զօրական...

*) Մանանդեան և Ամատունի, „Հայ նոր վկաներ“, եր. 731։

Կախազանները, „մարտիրոսութեան խարոյկները“ բարձրացել են Թիւրքիոյ մէջ՝ նաև 19-րդ դարուս, իբրև ծնունդ մասամբ նոյն կրօնական հակամարտութեան։ 1843 թուականուն ենք. Յովակիմ Սամաթիացի անունով մի հայ, մահմեդականութիւն ընդունած լինելով, մի քանի տարի յետոյ զղջում է և խոստովանւում մի քահանայի։ Բայց մատնութեամբ բանտարկւում է և ենթարկւում չարչարանքի։ Ծնողները անգլիական դեսպանի, լօրդ Քանինկի, միջամտութիւնն են աղերսում։ Դեսպանը միջամտում է, մեծ վեզիրը մինիստրական խորհրդի մէջ կարգում է նրա դիմումը, սակայն դեսպանը և մի քանի մոլեռանդ նախարարներ արհամարհում են դեսպանի խնդիրքը և գլխատել տալիս հային „ի Պալըգ բազար, դուռն կոնստանդնուպօլսոյ“ *)։

Անգլ. դեսպանը զայրացած և միւս պետութիւնների դեսպաններն էլ՝ գրեցին իրենց կառավարութիւններին։ Եւ „Թագաւորք եւրոպացւոց համաձայնութեամբ և խորհրդով միմեանց հետ գրեցին առ օսմանեան կառավարութիւնն, խստիւ պահանջելով ղազատութիւն կրօնի ամենայն ազգաց... Թող տացի ամենայն ումեք պաշտել զոր կրօն և ինքն կամիցի“։

Բ. Դուռը իբր թէ զիջաց. „Այս ամ և նահատակութիւն Յովակիմայ եղև սկզբնապատճառ ազատութեան կրօնի“։

Այնուհետև իբր թէ քրիստոնեայ ազգերը „Թոյլտու-

*) Դէպքը նկարագրւած է Աւետիս վարժապետ Պէրպէրեանի „Պատմութիւն Հայոց“ի մէջ, հրատ. 1871-ին։

թիւն սասցան շինել և նորոգել զեկեղեցիս, առաւել վայելուչ և պայծառ, քան զառաջինն“։

Եւ նոյնիսկ „եգար զանգակատուն յեկեղեցիս Հայոց և ցունաց՝ փոխանակ անախորժ ձայնից ժամակոչաց“...

Իսլամական ժոլեռանդութեան և բարբարոս չարչարանքի դէպքեր է պատմում նաև Էրզրումի անգլիական հիւպատոս Ռոբեր Կրզըն (*Robert Curzon*), իր կարևոր աշխատութեան մէջ՝ *Armenia. A year at Erzeroom, and on the frontiers of Russia, Turkey and Persia* (հրատ. 1854 թ. Լօնդօնում)։

Դէպքը տեղի է ունենում Կարնոյ մէջ, 1843-ի օգոստոսին։ Պատմենք Կըրզընի խօսքերով.

Մեհմեդ անուն մի թիւրք վաճառական բերում է իր ապրանքը Գենջէ ազայի խանը (պանդոկը) և այնտեղ քնանում։ Երկու թիւրք գինուորներ պատկում են քովը։ Ցաջորդ առաւօտ ապրանքը չկայ։ Մեհմեդը մեղադրում է գինուորներին։ Երկար ուրանալուց յետոյ, սրանք վերադարձնում են վաճառականից գողցած ապրանքի կէսը և յայտնում են, որ միւս կէսը գողցել է օդաբաշին, Արթին անուն հայը։ Արթինը քաշւում է դատարան։ Փաշան հրամայում է „տանջել“ նրան, երբ նա յայտնում է, որ բոլորովին անտեղեակ է գործից։

Գլխին դնում են պղնձէ այրող մի թաս և փիղը չուան են կապում։ Ձգում են չուանը, մինչև որ աչքերը համարեա դուրս են ցցւում ուղղակի։ Մարդը շարունակում է ժխտել։ Սկսում են ունելիքով դուրս քաշել ատամները, եղունգները։ Ամբողջ 12 օր այդպես տանջում են այլ և այլ ձևերով, ապա բանտ նետում։

Օդաբաշին տանջել ու բանտարկել է փաշայի մի կամայական կարգադրութեամբ, ասում է Կրզըն։ Գնում են պատուհան վալիի, ֆիամիլ փաշայի մօտ։ Նա յայտնում է, որ

մարդը յանցաւոր է, իր սեփական վկայութեամբ իսկ... „Եւ քանի որ Դուք այդպէս կարեկցութեամբ հոգում էք նրա վիճակի մասին, ես ազատել կը տամ նրան և կը յանձնեմ Ձեզ":

Ես պատասխանեցի. „ուրախ եմ լսել, որ մարդը չի չարչարուել, որովհետև մեզ մօտ Անգլիայում չարչարանքը համարւում է ոչ-անհրաժեշտ մի անգթութիւն, սակայն Ձեր պատմածը փոխում է խնդիրը. մարդը, անտարակոյս, յանցաւոր է, և ես կուզէի, որ արդարութիւնն իւ գործ դրուէր. մի՛ յանձնէք ինձ այդ մարդուն, այլ պատժեցէք ըստ օրէնքի, միայն մի՛ տանջէք: Եւ մեկնեցի՝ Երեկոյեան, լսելով, որ օդաբաշիի կինը տունն է եկել, ես ասացի ծառային, Պաօլօ Կաթելլիին, որ Հայաստան ազատելու իմ ցանկութիւնը փոխուեց, որ նա տանջանքի չի ենթարկուել և որ նա չիրաւի դող է:

Ինչպէ՞ս, բացականչեց Պաօլօ, աստիճ վրդովուած. դող նա կարող է լինել, բայց տանջանքի նա, անկասկած, ենթարկուել է, ես ինքս տեսել եմ սեփական աչքով փայլակեան պատառաքաղ: Ցեսայ այդ խնձոր ոլորմելի հային աչխարի պէս գետին դլորուած և բոլորովին ապշած սարսափից ու տանջանքից: Ատամները, եղունգները թափուում էին, երանքնելը՝ պատուսում ունելիքով, նա կիսամեռ վիճակի մէջ էր... Եւ ճչում էր իր շրջապատողներին. „ի՞նչ կարող եմ անել, ես անմեղ եմ, ազատեցէք ինձ, բայց ես չե՛մ կարող վերադարձնել այն երերը, որ չեմ վերցրել... Ա՛հ, նա քրիստոնեայ է, չէ՞, հայը քրիստոնեայ է: Թուրքերը չտանջեցին գինուորներին, որոնք յանցաւոր են, բայց այս մարդը տանջուեց, որովհետև հայ է":

Ինձ համար անակնկալ էր այդ—չարունակում է հիւպատոսը: Երեկ վաչան եկաւ նախաճաշի և ես նրան խնդրեցի իւ յայտ բերել ճշմարտութիւնը: Փաչան խոստացաւ բերել ինձ օտաբաշիին: Եւ ես ասուցեցի, որ յիրաւի տանջ լ են... ամեն բան ճշտուեց... Մարմնի վրայ երեւում էին ունելիքի

հետքերը և ուրիշ սպիացած վէրքեր Ակներև ապացոյցներ էին դրանք"...

Մէկուսացած, սպօրադիկ դէպքեր չեն սրանք մեր *ancein régime*-ի տակ, նախայեղափոխական վիճակի մէջ, որի „բարիքները" յաճախ են շեշտել և գրատել մեր մի կարգ հակայեղափոխական հրապարակագիրները. քանի՛ նոյնանման իրողութիւններ են արձանագրուած հայոց տխուր ժարտիրոսութեան արշիւներում և քանի՛սը չեն արձանագրուած... Թէ նորագոյն ժամանակներում, երբ քիչ թէ շատ գործադրել է քրիստոնեայ Եւրոպայի բարոյական հսկողութիւնը, թէ ժանաւանդ նախնի դարերի մէջ, երբ բնաւ չկար հսկողութիւն, հայ տարրը միշտնջենապէս ենթակայ է եղել մի բացառիկ ոէժիմի, մի բացառիկ օրէնսդրութեան, նա չի վայելել անգամ այն խղճուկ հաւասարութիւնը, որ տիրել է սովորաբար միևնոյն բռնապետութեան ենթարկուած ստրուկների ժարդկային նախիրների մէջ. Մենք դեռ յետոյ կը բնորոշենք նախայեղափոխական այդ կացութեան անօրինակ սարսափները, հայ ժարդու, „հայքաղաքացու" կրած բոլոր գերմարդկային տանջանքները. առայժմ մեզ պէտք է ի յայտ բերել այն խորունկ, արտասուելի տարկանոնութիւնները, որ ծնունդ է տուել կրօնների, դաւանանքների անհաշտ հակամարտութիւնը, երկու տարբեր քաղաքակրթական ուղղութիւնների միջև ձգուած խրամատը. „Մահմեդական օրէնքներին ենթարկուած քրիստոնեաների պատմութիւնը — ասում է Ֆօն Համմեր — մի մշանջենաւոր, անհատնում տեսարան է վայրագութեան ու բռնութեան". Արաբ, Թաթար,

սելջիւկ, օսման և այլն — բոլորն էլ թողել են այդ երկրի մէջ աշխարհասաստան գազանութիւնների իրենց հետքերը։ Լանկ-Թամուր և Համիդ տարբեր չեն իրենց աւերի ու բնաջնջման մեթոտներով... Եւ Թուխ Արծափացու աչքով տեսած ու նկարագրած 1424-ի արեան բաղանիքները տարբեր չեն Դիլլօններին ու Լեպցիուսների պատկերացրած հայկական նորագոյն զուլումներից։ Այն ժամանակ ևս — թաթարական, մոնղոլական հօրդաների օրով — նոյն մասսային խուճապները, նոյն յուստահատ լացն ու փախը, կանանց ու երեխաների սրածութիւնը, նոյն խօլական գահավիժումները ժայռերից, նոյն աղէկատուր հաւա՜րը, նոյն ծանօթ պատկերները. ջարդ, թալան, աւերած, բռնաբարում և սրբապղծում, բարբարոսութեան մի վիթխարի, համայնաջինջ հեղեղատ, մի հսկայական գարհուրանք...

Թուում է թէ օսմանեան արքայատոհմի հաստատութեամբ՝ մեր երկրի մէջ թագաւորում է համեմատական անդորրութիւն — մի տեսակ „պրօգրէս“, հանդէպ նախկին արհաւրալի քաոսի։ Թուում է թէ օսմանցիների տիրապետութիւնը բերեց այդտեղ մօտաւորապէս նոյն կայուն, յարաբերաբար խաղաղ և հանդուրժելի կացութիւնը, որ տիրել էր արևմտեան Եւրոպայում Ֆէոդալիզմի արիւնոտ քաոսից յետոյ, բացառիկ միապետութեան յաղթանակով։ Փոքր ինչ աւելի ապահովութիւն, փոքր ինչ նւազ ցնցումներ ու կատակլիզմներ, սրածութիւններ ու աւերումներ։

Սակայն ոչ մի համեմատութիւն չկայ, ի հարկէ, ֆրանսիական Արև-Արքայի կառավարութեան (*Le roi-*

soleil, Լուդովիկոս XIV-ի մակդիրը) և օսմանեան սուլթաններուն հաստատած ռէժիմի միջև...

Ցարաբերութիւն – պրօգրէս, այո, բայց անդունդ կայ յարաբերականի և բացարձակի միջև. Պրօգրէս էր դա, համեմատած նախկին կացութեան հետ,— այն կացութեան՝ որ յաջորդել էր ազգային քաղաքական անկախութիւնը կորցնելուն. Փոքրագոյն չարիք էր դա —բայց դարձեալ հսկայական.

„Քրիստոնեաներուն պատմութիւնը մահմեդական օրէնքի տակ — մի անհատնում տեսարան վայրագութեան ու բռնութեան“...

Ճիշտ է ասում Ֆօն Համմերը և. հայոց կրած մարտիրոսութիւնը չունի իր նմանը համաշխարհային տարեգրութեան մէջ. Հեռու ենք աչառոտ նախապաշարումով խտացնելու գոյները և պատմական տխուր յուշերով ստուեր ձգելու հայ-մահմեդական յարաբերութիւնների վրայ, որոնք այսօր սկսում են մանել նոր, յուսալի շրջանի մէջ. Հեռու ենք նաև մահմեդական կրօնին յատկացնելու տիրական, միահեծան դեր այդ անօրինակ, բազմադարեայ սոսկումների մէջ. Լանկ-թամուրները չեն խնայել երբեմն նաև իրենց հաւատակիցներին, չեն խնայել յաճախ և սելջիւկները, աաճիկները, քրդերը.

„Կրօնական հակամարտութիւն“ անունը տալով ներկայ գլխին, մենք չենք էլ հակւած խլամի հանդէպ ներքողելու քրիստոնէութիւնը, իբրև գօդմ և իբրև մօրալ, բարոյախօսութիւն.

Սակայն պատմութիւնն էլ փոխել չի լինի և մենք

պէտք է տանք անուչառօրէն մեր տուրքը պատմական ճշմարտութեանը։ Եթէ կրօնները ընդհանրապէս—նաև Քրիստոսի կրօնը—իրենց տարաժամեայ բնաւորութեամբ և դարերով արծարծած կոյր, էգօիստ մոլեռանդութեամբ յաճախ աղէտալի, բթացուցիչ և պատակիչ դեր են խաղացել մարդկային պատմութեան մէջ, ապա այդ դերը մանաւանդ աղէտալի է իսլամ աշխարհում։ Եթէ կրօնական հակամարտութիւնը ընդհանրապէս ահեղ թափով ծանրացել է համաշխարհային պատմական զարգացման վրայ, ապա աւելի ծանր է եղել և չարաշուք՝ նրա թափը իսլամահպատակ քրիստոնեայ ազգութիւնների ճակատագրի վրայ։

Որքա՜ն բան կայ ասելու այդտեղ։ Որքա՜ն հարուստ ու արդասաւոր է հասարակական էւօլիւցիայի մէջ, կրօնի ալևոր ոգեաւանջը իր այլազան արտայայտութիւններով ու ազդեցութիւններով։ Նա միահեծան տնօրինողը չէ այդ էւօլիւցիայի, ինչպէս երբեմն ծանուցում էին աստուածաբան սոցիօլօգները. նա այն հզօր խթան-պատճառը չէ, պատմական վերիվայրումների, ինչպէս ընդունում են դեռ այսօր ևս շատ բարեպաշտ մտածողներ։ Նա յաճախ իսպառ նսեմանում է տնտեսական պատճառների զօրաւոր ճնշումի տակ, յաճախ իսպառ հալւում է, շոգիանում — իբրև „խթան“ և „ազդակ“ — դասակարգերի ահեղ բաղխումների, նրանց նիւթական ախորժակների յորձանքի մէջ։

Սակայն, այդտեղից մինչև „տնտեսական մատերիալիզմի“ պնդումները՝ դեռ հեռու է։ Կրօնը մ իշտ չի հպատակւում նիւթական և նիւթապաշտական ժողովներին,

դասակարգային անձուկ մտահոգութիւններին. նա գործում է երբեմն նաև իբրև ուրոյն, անկախ ուժ, որ իր խոշոր տեղն ունի իդէօլօգիական, գաղափարական ուժերի շարքում։ Կան վայրկեաններ և շրջաններ, կան ամբողջ ազգերի պատմութիւններ, ուր կրօնական ազդակը հանդիսանում է երկար ժամանակ, իբրև մի տեսակ հրամանատար բոլոր այլազան գործօնների ու պատճառների, նեժամացնում է նրանց ուժը, ձնշում է, կաշկանդում տնտեսական ազդակների թռիչքն ևս, ձևաւորում է, կնանքի այլազան հիւսուածքը իր տարամերժ պատգամներով, պահպանում է իր յարատև բռնակալութեան տակ քաղաքականութիւնը, իրաւունքը, օրէնսդրական և դատական հաստատութիւնները, ժողովրդի, զանգւածների մտածողութիւնն ու կամեցողութիւնը։ Այդպիսի գերիշխող դեր է ունեցել Իսլամը, մահմեդական հաւատամքը միջնադարեայ պատմութեան մէջ, այդ դերը նա շարունակում է մասամբ նաև մեր օրերում, Սահմանադրութեան յաղթանակից յետոյ։

Ոչ մի այլ տեղ, գուցէ ոչ մի այլ պատմական ժամանակաշրջանում կրօնական իդէօլօգիայի (idéologie) բռնաւոր տիրապետութիւնը չի շեշտւում այնքան ուժով ու գոռոզ յաւակնութիւններով, ինչպէս այնտեղ, մահմեդական երկիրներում։ Այդտեղ ևս, անտարակոյս — ինչպէս կը տեսնենք յետագայում — պետական կնճիռների միջոցին՝ կրօնը երբեմն յետ է նահանջում քաղաքական և տնտեսական անհրաժեշտութիւնների առջև,— անհրաժեշտութիւններ, որոնք ստիպում են սուլթաններին և հոգևոր պետերին՝ փոխել իրենց սրբազնագոյն օրէնքի

բառը, փոխել նրա մեկնաբանութիւնը, դիմել անարժան կազուիստիկի, յարմարեցնել ղուրանի պատգամները նոր կացութեան պայմաններին ու պահանջներին։ Սակայն, ընդհանրապէս կրօնական ֆետիշը իշխում է տիրակալօրէն, երկրաւոր հեղինակութիւնները հպատակւում են երկնաւորին, Ղուրանը տոն է տալիս ամբողջ պետական պաշտօնավարութեան, նա տոն է տալիս – որ ամենից սարսափելին է — մահմեդական միլիօնաւոր զանգուածներին։

Աւ իչգոյէ ուրիշ, աշխարհիկ ուժերի՝ իսլամը այդտեղ, կարելի է ասել, գարբնում է ազգի ամբողջներքին կեանքը, նա գարբնում է և միջազգային յարաբերութիւնները, աւելի ճիշտ՝ յարաբերութիւնները իսլամ ցեղերի և նրանց հպատակ ազգերի միջև։

Թողնենք առայժմ „ներքին“ անդրադարձումները և քննենք իսլամ կրօնի ազդեցութիւնը մ ի ջ ա զ գ ա յ ի ն կամ աւելի ճիշտ՝ տիրոջ ու հպատակի գարաւոր յարաբերութիւնների վրայ։

***

Եւրոպացի մի շարք ճանապարհորդներ և գրողներ բազմից նշմարել են օսմանեան և ընդհանրապէս մահմեդական հ ա մ բ ե ր ո զ ո ւ թ ի ւ ն ը (*tolérance*) քրիստոնեայ հպատակների վերաբերմամբ։ Ուրիշները կան՝ նոյն եւրոպական շրջաններում, որ բռնել են տրամագծօրէն հակառակ դիրք, կարծիքները խորապէս բաժանւում են այդ հարցի մէջ, ինչպէս որ նրանք բա-

ժանուամ են և իսլամի ամբողջ կրօնական դօքտրինի ու աշխարհահայեացքի գնահատութեան մէջ։

„Համբերողութեան“ պատրանքը ստեղծել է թերևս գլխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ այլացեղ ու այլադաւան տարրերը օսմանեան կայսրութեան մէջ— քրիստոնեայ հայեր, յոյներ, սլաւներ, կիսակռապաշտ ասորիներ, սատանայապաշտ եզիդիներ, մովսիսապաշտ հրէաներ, ապա դրուզներ, ղըզըլբաշներ և այլն — պահպանել են դարերի ընթացքում իրենց գոյնն ու դաւանանքը, իրենց լեզուն և հաւատը, որ մուսուլման պետութիւնը չի ձուլել նրանց (թէև կարող էր գուցէ ձուլել), մինչդեռ աւելի քաղաքակիրթ, նոյնիսկ արևմտեան պետութիւններից ոմանք մեծ եռանդով ու սիստեմով հետապնդել են „այլազգիներին“ կլլելու և „ժարսելու“ նպատակին։

Պատրանքը, յիրաւի, բաւական ուժեղ էր։ Թուում է թէ դժւար չէր օսմանեան պետութեան համար՝ ժամանակականութեան գիրկը նետել — մի ամբողջ շարք դարերի ընթացքում — գէթ մի բուռն հայ ժողովրդին։ Եւրոպական միջամտութիւնը չ'օգնեց այդ վերջինին՝ անգամ 20-րդ դարու մէջ, սպառազինուած միջազգային դաշնագիրներով, — ո՞ւր մնաց թէ նա օգնութեան գար փոքր Ասիայի մի բուռն անյայտ „ռայեա“ներին 15-րդ, 16-րդ, 17-րդ դարերում... Եթէ անողորմ հեռևողականութեամբ սկզբից ի վեր հնչէր ձանօթ գելեժմը՝ „ժամանականում կամ ժա՛“, եթէ սուլթանները փորձէին յարատև ճիգերով և խմբական սրաճութիւնների սպառնալիքով կրօնափոխ անել իրենց հպատակ „ռայեա“ներին, թուում

է թէ այդ փորձերը չէին վիժի... Հազիւ թէ հայ ժողովուրդը զանգուածօրէն ընտրէր ժահը, իսլամացման վտանգի դիմաց... Անշուշտ, քրիստոնեաների մի ընդհանուր ըմբռստացման հեռանկարը—նոյնիսկ քիրտ, անասնական ստրկութեան այն խաւար ժամանակներում—որոշ չափով մտնում էր սուլթանական հաշիւների մէջ, այնուամենայնիւ, այդ տարատամ հնարաւորութիւնը չէր, որ պիտի կանգնեցնէր խալիֆներին: Եղել են, հարկաւ, ուրիշ կարգի „զսպանակներ“: Ւղղել է մասամբ տնտեսական պատճառը, որ քիչ առաջ յիշատակեցինք:

Օսմանեան քաղաքական սիստեմը իր հիմնադրութեան օրերից ի վեր որոշել է, ի տեղի ընդելուկամ բռնի իսլամացնելու նւաճւած աշխատաւոր քրիստոնեայ ազգաբնակութիւնը, պահպանել յայտնի սահմաններում նրա ուրոյն դէմքը, խնայել նրա հնաւանդ ստացուածքները—լեզուն, կրօնը, ազգային առանձնայատկութիւնները — խնայել, մի խօսքով, այդ աշխատող և արտադրող տարրը, իբրև մի տեսակ յաւիտենական կթան կով, որ կարող է կուլտուրական աշխատանքի ու ձեռնէրեցութեան իր ուժով, երկրագործութեան, առևտրի, ճարտարութեան իր հնաձին և քնածին ընդունակութիւններով՝ սնուցանել ու պահպանել իշխող տարրը, որ ներկայանում էր, իբրև ասելի ստորին տիպ քաղաքակրթութեան, որ վարժւել էր դարերից ի վեր գլխաւորապէս ռազմական ասպետի մէջ — թալանի ու սպանութեան, սանձարձակ ազատասկութեան և կոպիտ շահագործման—որ տակաւին չէր դուրս եկել նահապետական, խաչնարած հա-

ժայռերի շրջանակներից, չէր ընտելացել աշխատանքի աւելի բարձր, արդիւնաւոր ձևերի և այդ պատճառով դեռ երկար ժամանակ պիտի քարշ տար մի տեսակ ժամկաբուծային գոյութիւն, թարգմանելով ու արդարացնելով այն ուշագրաւ, Արևելքում բաւականաչափ տարածուած, երևոյթը, որ կոչւում է գիտութեան մէջ՝ սոցիալական զանգուածային պարազիտիզմ։

Ապրել քրիստոնեայ ժողովուրդների հաշւին, ստիպել նրանց՝ վճարելու գլխահարկ, անխախտ պահել նրանց ցեղային կերպարանքը — որից առանձին երկիւղ չունէր տիրապետող, զինուորական տարրը — և միաժամանակ ճնշել ու սխմել նոյն այդ տարրը, թոյլ չտալ, որ նա զարգանայ „չափից դուրս“, որ նա անցնէ յայտնի սահմաններից, թոյլ չտալ, որ նրա մէջ բողբոջեն ըմբոստացումի սաղմեր, վտանգաւոր Իսլամի տիրապետութեան համար — ահաւասիկ այդ քաղաքական սիստեմի իմաստը և գաղտնիքը... մի գաղտնիք, որ, աւա՛զ, հզօրապէս շեշտւում է անգամ այսօր, օսմանեան սահմանադրական ռէժիմի տակ...

Օսման, Մահմեդ II, Սուլէյման, Ահմեդ, Մահմուդ, Աբդիւլ Մեջիդ, Աբդիւլ Ազիզ, ամենքն էլ որոշ չափով հետևող են եղել այդ սիստեմի, իրականացնելով — մինչև մի յայտնի աստիճան — քրիստոնեայ համայնքներին, տալով նրանց առաջաւոր տարրերին — կղերին, ամիրաներին, վաճառականներին — յայտնի դիրք, առանձնաշնորհումներ պետական կեանքի մէջ, յաճախ նոյնիսկ յանձնելով քրիստոնեաներին կարևոր, պատասխանատու պաշտօններ։ Կարմիր գազանը միայն շեղուեց այդ սիս-

տեմի հրամայականներից և հակառակ իր թափանցող իմացականութեան ու գործնական ժտակաղմին, տարուելով բնազդային, անասնական վրէժխնդրութեամբ, նետեց երկիրը աւերածի անդունդի մէջ, չորցնելով արգասաւոր աշխատանքի աղբիւրները, անդամալուծելով անտեսական կեանքը հսկայական տարածութիւնների վրայ, շղթայազերծելով անօրինակ, լանկ-թամուրեան ուրագանները...

Կամ գլխահարկ — մի շարք ուրիշ „իլօտային“ տուրքերի հետ — կամ խմբովին իսլամացում... Դիլեմմը այսպէս է դրել այն ահաւոր օրերի մէջ, երբ դաժան մահիկը ստորադրել էր խաչը ահագին տարածութեան վրայ, քրիստոնեաները նախընտրել են տուրքերը — մի շարք ուրիշ նւաստացուցիչ պահանջների հետ — և սուլթաններն էլ գոհ են մնացել դիլեմմի այդպիսի լուծմամբ, ևս առաւել, որ իսլամական վարդապետութիւնն ևս իր մի յօդւածով այդպէս էր որոշադրում։

Երբ — ասում է Արմինիօն *) — սուլթան Մահմետ II-ը գրաւեց Կ. Պօլիսը, նա ձեռնարկեց անմիջապէս նւաճած երկրի կազմակերպման։ Այդ նպատակով նրան պէտք էր միայն հետևել քաղաքականութեան այն կանոնին, որ ներշնչած էին Մարգարէին և իր անմիջական աշակերտներին՝ միջավայրի պայմանները, այն միջավայրի՝ ուր սաղմնաւորուել էր իսլամական դօքտրինը. պէտք էր պահպանել նւաճող բանակի տիրապետութիւնը՝ յանդի, լեզուի, կրօնով ու բարքերով տարբեր ժողովուրդների վրայ...

*) *P. Arminjon, La Protection religieuse dans l'Empire Ottoman, La Revue de Paris, 15 Avril 1903.*

1453 թ. մայիսի 29-ին սուլթանը հանդիսաւորապէս մուտք գործեց քաղաքի մէջ և յունիսի 1-ին մեծ շուքով ընդունեց տիեզերական պատրիարք Գեննադիոսին — որ ընտրուած էր իր, սուլթանի, հրահանգով մի քանի ուղղափառ քահանաների ու սարկաւագների կողմից — և յանձնեց նրան, բիւզանդական թագաւորների ընդունած մեծարանքներով, գաւազանը, զարդարուած թանկագին քարերով, որ պատուանշանն էր հայ. ապետական իշխանութեան։ Երկու օր յետոյ, Բրուսայի հայ եպիսկոպոս Յովակիմ II հրաման առաջարկել հաստատուելու նոր մայրաքաղաքում, 200 հայ ընտանիքով։ Մօտ 30,000 հայեր միացան թիչ յետոյ այդ կարիքին։ Յովակիմը առաջաւ պատրիարքական տիտղոս, վիզիրի աստիճանով ու պատիւներով։ Նոյն ժամանակներում, Կապալի տնուհով առաքին հռչակուեց առաջնորդ հրեաների, որ ունէր իր հաստատակիցների վրայ նոյն իշխանութիւնը, ինչ որ երկու պատրիարքները իրենց հօտերի վրայ. այն է՝ կառավարել իրենց կրօնների ա ա յ ե ա ն ե ր ի ն, տուրք գնել նրանց վրայ, օրէնքներ սահմանել և դատել։

Երեք նաճառած „ազգութիւնների“ — յոյների, հայերի և հրեաների — առաջնորդներից իւրաքանչիւրը պատասխանատու էր — ի հարկին իր գլխով իսկ — թէ իր համայնքի անդամների տուրքերը վճարելու և թէ նրանց ներքին կարգի ու խաղաղութեան համար նոյն պատասխանատուութիւնն ընկնում էր վիճակների առաջնորդների և ծխական քահանաների վրայ։ Այդ պատասխանատուութիւնը ունէր և համազօր իշխանութիւն։ Տիեզերական պատրիարքը, հաւաքիչ գլխահարկի, ունէր իրեն օժանդակ, մի միայն խորհուրդ, որ միանդամայն ազգային խորհուրդն էր և գերագոյն առեանն անձնական կանոնագրութեան խնդիրներում։ Նա ունէր սուլթանի մօտ իր ներկայացուցիչ-դրծակալը։ Նոր չէր այդ կազմակերպութիւնը, լրացած տեղական լոյն ինքնավարութեամբ։ Թիւրքերն այդէն Ասիոյ մէջ կիրառել էին, արաբ-

ներից ընդօրինակելով նրա անմիջական առաւելութիւնները ակներև են.—հպատակութեան մէջ պահել նուաճուած ազգութիւնները, նրանց ծոցից իսկ ընտրուած առաջնորդների միջոցով և առանց ծախքի հաւաքել տուրքը, գլխահարկը թիւրք իշխանութիւնները, իրենք քնաւ չխորհուրդով ռայեաների իսլամացումը, ծուռ աչքով էին դիտում կրօնափոխութիւնը, որը եթէ ընդհանրանար, կարող էր յոժարեցնել տուրքի աղբիւրը։

Անհաւասիկ „հանրորդութեան“ պատրանքի տեսական ստուգը։

Թոյլատրելով հանդերձ հպատակ ռայեաներին, իբրև մի մի կրօնական համայնքների, պահպանելու իրենց ներքին կազմակերպութիւնը, օրէնքները, բարքերն ու սովորութիւնները, իսլամական դօքտրինը դնում էր նրանց ամենաանարդ, նւաստացուցիչ պայմանների մէջ, դիտում էր նրանց իբրև մի տեսակ ստոր ցեղ՝ մահմեդական ցեղերի հանդէպ.. Ռայեան պէտք ոչ միայն վճարէր գլխահարկը և հողահարկը, այլ և պէտք է զանազանուէր մահմեդականից իր զգեստով, իր անների արտաքինով, պէտք է միշտ խոնարհագին մեծարանքի ցոյցեր անէր իսլամ տեսին մահմեդական ոստիկի. նա չէր կարող զէնք կրել, անարժան էր պինուրական արուեստի մէջ հաւասարուելու իսլամին. նա չէր կարող ձի հեծնել, նա պէտք է հրաժարուէր բոլոր առնական մարզանքներից և պէտք է կնանար, ժեղկանար, հոշմանդամուէր. նա չէր կարող իր ժամը, ազօթատեղին կառուցանել իր ցանկացած շքով ու ձևով, որոշ չափից աւելի բարձր, նա չէր կարող բարձրաձայն կատարել իր ժամերգութիւնը,

երգել իր սաղմոսները, կազմակերպել կրօնական թափօր-ներ. նա չէր կարող հնչեցնել զանգակների զօղանջն անգամ—ամեն ինչ պիտի կատարուէր գերեզմանային լռութեան մէջ, ամեն ձայն պիտի պապանձուէր... որպէս զի քնաւ չհասնէր „տէրերի“ ականջներին, չվիրաւորէր իսլամ հաւատացեալի ղգացումները և որպէս զի խաչն ու աւետարանը մնային միշտ մի անարգ ստորադասութեան, մի անպատիւ մոռացութեան մէջ... Հայաստանի հայ ժողովուրդը, ասում են, այն աստիճան մարզուել է, ընտելացել այդ պապանձուն, մեռելային հոգեբանութեան, որ դեռ այսօր էլ շատ տեղերում հայ ժամերի մէջ չէք տեսնում զանգակներ, չէք լսում կանգահարութիւն:

„Համբերողութիւնը“ դառնում էր իրօք մի ծայրայեղ անյարգանք — ասենք աւելի պատշաճ խօսք — արհամարհանք դէպի ուխտեան փաստերը բերենք նաև օտար աղբիւրներից: Նախ ամենից հները: Ահա Տաճարն իէ և Տուրնըֆօր, ահա և Ուիկօ: Երեքն էլ՝ նշանաւոր, արկածասէր, իմացական տուրիստներ, որ տենդային հարցասիրութեամբ գինուած, գնացել են ուսումնասիրելու այն հեռաւոր ժողովուրդների կեանքն ու պատմութիւնը՝ 17-րդ և 18-րդ դարերում: Ի՞նչ է նրանց վերաբերումը դէպի Արևելքի տիրող տարրը. տեղ-տեղ նոյնիսկ խօսում են գովեստով օսմանցիների, մահմեդականութեան, Ղուրանի մասին: Բայց երեքն էլ շեշտում են այն խորունկ անտագոնիզմը, որ եղել է մահմեդականի ու հայի միջև.

„Թուրքերը արհամարհում են հայերին՝ նրանց

կրօնի համան“—ասում է պիտոն Տուրնըֆօր, որ խօսում է անսովոր յափշտակութեամբ այն ժամանակւայ հայերի մասին, համարում է նրանց „երկրագնդի ամենահոչակաւոր վաճառականներ“... և „աշխարհի լաւագոյն մարդիկ, ազնիւ, քաղաքավարի, օժտուած ողջմտութեամբ ու շիտակութեամբ“ *)։

Աւելի խիստ է Ռիկաֆտի արտայայտութիւնը կրօնական այդ հակամարտութեան մասին.

„Դէպի քրիստոնեաները նրանք (օսմանցիք) ատում են մի սոսկալի գարշանք (*une aversion horrible*)—ասում է նա։

„Չկայ բռնութիւն, որ նրանք չգործադրեն քրիստոնեաներին ապքանացնելու, դժբախտացնելու համար... Դա համբերութիւն չէ, այլ հալածանք և տառապանք...

„Ճիշտ է, մուսուլմանները հանդուրժում են, որ քրիստոնեանները ունենան իրենց եկեղեցիները, պաշտամունքը, որոնք վաղուց հինւած են։ Սակայն նրանք թոյլ չեն տալիս նորերը հինելու։ Եկեղեցիների կամարները կարող էին շահել տալ, բայց նրանց վրայ որևէ բան աւելացնել—չէին կարող։

1660 թ.-ին, ասում է Ռիկաֆտ, մեծ հրդեհի ժամ գնացին Ղալաթայի և Պօլսի մէջ մի շարք քրիստոնեայ եկեղեցիներ ու մատուռներ։ Բարեպաշտ քրիստոնեաները շուտով նորէն կառուցին։ Բայց հէնց որ շինւածքն աւարտուեց, եկան աւերեցին իշխանութեան հրամանով։ Արգելւած է, ասում են թիւրքերը, վերաշինել այն եկեղեցիները, որոնց միմիայն հիմերն են մնում“ **)...

---

*) *Pitton de Tournefort, Relation d'un voyage du Levant* (Հրատ. Ամստերդամ, 1718 թ.), հատ. II, էջ 158։

**) *Ricaut, Histoire de l'état présent de l'Empire Ottoman*. Հրատ. 1670 թ.։

Ա՛ի այլ տեղ, նոյն գրքի մէջ, ասում է Ռիկօ.

„Քրիստոնեաները ճնշւած են ամեն կերպ։ Այն դէպքերը, որ նրանք վաստակում են մեծամեծ դժւարութիւններով իրենց աշխատանքի ու ճարտարասւեստի շնորհիւ, ենթակայ են իշխող անձանց յափշտակութեան։ Չեն հանդուրժում, որ նրանք — քրիստոնեաները — զէնք ունենան, պատերազմի էլ չեն տանում նրանց, որպէս զի վախկոտ գարձնեն, անընդունակ՝ ձեռնարկելու որևէ գործ՝ գայթակղութիւնների միջոցին“։

Ոչ պակաս հետաքրքրական է ասելի հին մի հետազօտողի՝ Գ ի յ օ մ պ օ ս տ է լ ի վկայութիւնը (16-րդ դարու կիսում)։ Իր մի կարևոր աշխատութեան մէջ, հրատարակւած 1560 թւին, նա շօշափում է այն ժամանակւայ թիւրքերի յարաբերութիւնը հպատակ քրիստոնեաների, մասնաւորապէս հայերի հետ։ Եւ բառացի հետևեալն է ասում, իր ժամանակի փոքր ինչ խոպան ֆրանսերէնով.

„*Des Esclaues chrestiennes vous en trouues là à vendre comme des moutons au marché, tous les jours... Les anciens Turcs de la Natalie les achetaient non seulement pour les convertir à leur Loy et en user, mais pour les marier avec Eslaues, pour leur seruir de proletaires à faire des enfans pour leur patro*“... („*De la Rèpublique des Turcs*“).

„Քրիստոնեայ ստրկուհիներ դուք ամեն օր կը տեսնէք այնտեղ վաճառքի հանւած, որպէս շուկայի ոչխարներ... Անատոլուի հին թիւրքերը գնում էին նրանց՝ ոչ միայն իրենց օրէնքին դարձնելու (իսլամացնելու) և գործածելու համար, այլ և ամուսնացնելու ստրուկների հետ, որպէս զի դառնան նրանց պրօլետարուհիները և զաւակներ արտադրեն իրենց տէրերի, պատրօնների համար“...

գանք նորագոյն—նոյնպէս օտար—վկայութիւններէն, հրատարակուած հայկական խնդրի բորբոքման շրջաննե-րուն, անցեալ դարու 80-ական և 90-ական թուերի մէջ։

Ճիշտ է, սակայն է անգլիացի Ջէյմս Կրէէգ, թիւրքերի արհամարհանքը հոյլ տալիս էր յոյն ու հայ քրիստոնեա-ներին—որոնք դերադասում էին աւելի վճարել, քան կրօ-նափոխ լինել—ճիշտ է նրանց թոյլ էր տալիս կատարել իրենց ծէսերը և գաւանել իրենց կրօնը, սակայն նրանց ոչ միայն արգելում էր զանգակները հնչեցնել, խաչօրներ կատարել, ձի հեծնել ու զէնք կրել, այլ և մինչդեռ թիւր-քական ձևերն (*manners*) ու գլեսաները տարածում էին երկրի բոլոր անկիւնները, նրանց — հայերին ու յոյներին— սահմանափակում էին կրել այնպիսի գլեսաներ, որ բոլորովին նման-էին կանանց։

Տների և եկեղեցիների հասակն ու լայնութիւնը նախա-գրուած էին օրէնքով, հասցրուած նւազագոյն չափերի, եւ նրանք (քրիստոնեաները) հարկադրուած էին յոյժ ու մեծ ստանքով դիմաւորել իրենց հանդիպած ամենայետին մուսուլմանին անգամ։

Տիրող տորրը նայում էր քրիստոնեաների վրայ նոյն ար-համարհանքով և դժանքով, ինչպէս սպարտացին՝ կոշտ ու ապուշ իլոտների վրայ... Մահմեդականի աչքում քրիստո-նեան նոյնն էր, ինչ որ իր եզը կամ էշը, օգտակար՝ սակ իրեւ բեռնակիրներ... Զրկուած լինելով զէնք կրելու իրաւունքից, երբեք չմարզուելով պատերազմի մէջ քրիստո-նեաները տյպիսով կանացիացան (*effeminate*) և դարձան նւազ վտանգաւոր ապստամբութեան տեսակէտից *)։

Այսպէս է վկայում Ջէյմս Կրէէգ, որ ընդհանրապէս

---

*) *James Creagh, Armenians, Koords and Turks* (Լոնդոն, 1880 թ.). էջեր 41, 139, 140—143։

նպաստաւոր լեզու է գործածում ժահմեդականների վերաբերմամբ։

Նոյն վկայութիւնները գտնում ենք մի այլ հետաքրքրական և անօնիմ աշխատութեան մէջ, *Armenia. A historical sketch, by an old Indian* (էջեր 87—90)։

Ասե՞լ արդեօք, թէ ինչ աւերիչ, այլասերող ազդեցութիւն էին գործում հայ տարրի վրայ՝ կրօնական խտրութիւններից բղխող (մեծ մասամբ) այդ դարաւոր անարգական յարաբերութիւնները։ Այլասերում — ֆիզիկական, մտաւոր ու հոգեկան, այլասերում — բարոյական։

Եւ այն հեռաւոր ժամանակներից, մեր զուլում-պատմութեան այն խորունկ ու ոճրանիւթ ծալքերից էր, որ ժառանգեցինք անասնական սերվիլիզմի և բարոյական ամեն տեսակ ախտերի այն զարհուրելի բեռը, որ այնքան ծանրացրեց մեր ժանուկ յեղափոխութեան ընթացքը, որ այնքան թունաւորեց հայկական մթնոլորտը,— մտանութեան, լրտեսութեան, դաւաճանութեան համաճարակով—որ այնքան նսեմացրեց արտաքին աշխարհի մէջ մեր հոյակապ ռազմիկների դիւցազնական թռիչքները։

Ահ այն մռայլ շրջաններից ժառանգուած յատկութիւններն են, որոնց վրայ ակնարկում է և Ս. Ղազարի հինաւուրց Թանաստեղծ-Հիւրը, Չայլդ-Հարօլդի վեհափառ երգիչը, որ ասում էր հայերի մասին, իր սրտառուչ նամակներում (1817 թ.).

... *Their virtues have been thouse of peace and their vices thouse of compulsion.*

„Նրանց առաքինութիւնները խաղաղութեան առաքինու-

խիւններ են, իսկ տրաւանքը—արդիւնք են բռնութեան, բռնապատուհասութեան"...

Եթէ լորդ Բայրընն ապրէր հարիւր տարի ևս, գուցէ չպիտի գրէր այդ նշանաւոր, հայերի կոտմից այնքան անգամ հոլովուած նախադասութեան առջի մասը.

It would be difficult, perhaps, to find the annals of a nation less staiened with crimes...

„Դժուար կը լիներ թերևս գտնել մի այլ ժողովրդի տարեգրութիւն, այնքան ազատ ոճիրներից, այնքան քիչ արբնպղծուած ոճիրներով ...

***

Ի՞նչ կարող էր լինել արհամարհուած և տրորուած, մշտնջենական անարգանքի ու բռնութեան տակ գեգերող մարդ-գրաստի վիճակը... Ստրուկ, տիրապաշտ, նենգաւոր և ծածկամիտ, խարդախ և խաբեբայ, կեղծ, քծնող ու շողոքորթող և երկչոտ, երկչոտ.. *Effeminate!* —Ամենից դաժան հնչում է մեր ականջին անգլիացի ուսումնասիրողի այդ սարսափելի խօսքը:

„Ինացո՞ծ"—արդարև... Եւ իշխող տարրի նպատակն էլ հէնց այդ էր.—առնել իր վրայ զինուորական մարզանքների ժնաշնորհը և դաստիարակել բոլոր „գիտուրներին" մի այնպիսի հեռատես և դիւային մեթոդով՝ որ նրանցից դուրս գան միայն հլու կին-քաղաքացիներ, անընդունակ՝ ըմբոստանալու, զէնքով դիմադրելու, ընդունակ՝ միայն լռելու և պարանոցը ճկելու...

Ահա թէ ինչ տուեց մեզ սուլթաններն և փաշաների մեծահռչակ „Համբերողութիւնը",

Եվրոյթը ունի, սակայն, իր դրական կողմերն ևս։ Կրօնական խտրութիւնը իր ձգած անջրպետներով, թուում է թէ մի յայտնի չափով նպաստել է քրիստոնեայ տարբերի ազգային պահպանութեանը։ Ո՞վ գիտէ... եթէ օսմանցիք չձգէին կրօնի այդ անանցանելի խրամատը իսլամի ու „գիաուրի“ միջև, եթէ նրանք չխորշէին ու չգարշէին այդ վերջինից և փոքր ինչ աւելի յարգանք տածէին դէպի հպատակ ժողովուրդները, նրանց մարդկային ու ազգային արժանապատուութիւնը, եթէ տիրողի ու հպատակի միջև լինէր փոքր ինչ նմանութիւն կուլտուրական, քաղաքակրթական ձգտումների ու աշխատանքի տեսակէտից, եթէ հայ ազգը ունենար գէթ փոքրիկ հնարաւորութիւն մօտենալու տիրապետող ցեղին, սերտ շփումն հաստատելու նրա հետ,—ո՞վ գիտէ... գուցէ նա ձուլուէր հեռզհետէ, յօժարակամ, բեկոր-բեկոր, այդ իշխող, օսմանեան զանգուածի հետ, գուցէ լուծուէր լեզուով ու բարքով, ինչպէս որ լուծուել է — իր խիստ շեշտուած օտարամոլ բնազդի շնորհիւ — Կեսարիայում, Կիլիկիայում, Թիւրքահայաստանի մի քանի այլ վայրերի մէջ, ինչպէս նաև Ընդրկովկասի և Ռուսաստանի ուսահաս և վրացախօս գաւառներում, Լեհաստանի, Ունգարիայի հայկական գաղթավայրերում և այլուր։

Կրօնը միայն, հայ եկեղեցին կը ճնար կանգուն, ինչպէս կանգուն է Եգիպտոսի, Գալիցիայի, Տրանսիլվանիայի կենտրոններում, իբրև տխուր խորհրդանշան երբեմն ազատ ու բարգաւաճ հայրենիքի...

Սակայն ձուլումը, բարեբախտաբար, դժուարանում էր մասամբ հէնց այն հանգամանքով՝ որ տիրող

տարրը սկզբից ի վեր պահել է ալակրօններին մի յայտնի տարածութեան վրայ, համարել է մի տեսակ սրբապղծութիւն՝ սերտ շփումի մէջ մտնել „անաժաքուր“ և „նզովեալ“ ցեղերի հետ, ձգել է նրանց, այսպէս ասած, իրենց ճակատագրին, տալով նոյնիսկ ինքնօրինութեան մի քանի փշրանք և հետաքրքրելով լոկ նրանց գրաստի աշխատանքով, նրանց արիւն-քրտինքով արտաբերած հարստութեամբ։

Մի հարց ևս։ Արդեօք իսլամի և քրիստոնէութեան միջև գիտակցաբար ձգուած անջրպետների և իրամատների մէջ որևէ դեր չի՞ ունեցել իշխող տարրի, այսպէս ասած, ինքնապաշտպանութեան մտահոգութիւնը։ Արդեօք չի՞ վախեցել նա—այդ կղերա-զինուորական թէօկրատիկ դասակարգը—թէ քրիստոնեայ աւելի բարձր, կուլտուրական տարրերը իսլամացնելով՝ կարող է մտցնել վտանգաւոր մի *intrus*, մի „ինքնակոչ“, զեկավարող կորիզ այդ տիրական, առանձնաշնորհեալ, ի ծնէ և ի պաշտօնէ իսլամ, ուղղափառ դասակարգի մէջ և այդպիսով խախտել նոյն այդ դասակարգի միահեծան տիրապետութիւնը, հեգեմօնիան։

Հարցը դնում ենք միայն... առանց որոշակի պատասխանել կարողանալու։

Մի անլուծելի առեղծուած է թւում մեր տեսութեան այս նշանաւոր կէտը, որ վերաբերում է կրօնական հակամարտութեան և իսլամահպատակ քրիստոնեաների տարապայման ճակատագրին։ Մէկը բազմաթիւ հակասութիւններից՝ որոնցով այնքան փայլում է օսմանեան ինք-

նատիպ քաղաքական սիստեմը։ Հակասութիւններ—մերթ գիտակից, նպատակաւոր, մակկեավելիկ, որոշ շահերի հետապնդող, մերթ—անգիտակից, անհնթեթ ու տարրալուծող... Այդպէս, օրինակ, XIX դարի 60-ական թուականներին այդ սիստեմը տալիս էր մեզ կուլտուրական ներքին ինքնօրինութիւն, որ այն ժամանակւայ պայմանների մէջ հսկայական վաստակ էր մի տրուած, գրեթէ իսպառ առնազուրկ եղած ցեղի համար. օսմանեան պետութիւնը, առանց լինելու տ ա ր կ ա դ ր ո ւ ա ծ, բռնադատուած, առանց լսելու հայերի կողմից վէնքի շառաչ ու ռազմի որոտ (ջէյթունը դեռ բաւական չէր), տալիս էր նրանց իրաւունք ու հնարաւորութիւն՝ հիմնելու ազգային-հասարակական պէս-պէս հաստատութիւններ, պատելու Հայաստանը դպրոցների ցանցով, զարկ տալու, մի խօսքով, ազգային վերածնութեան և ազատութեան,—հապա միւս կողմից՝ նոյն քաղաքական սիստեմը յամառաբար ջնջում էր մեզ գաւառներում, գաղտնօրէն ու յայտնօրէն ճարակում էր յաչս ամբողջ Եւրոպայի, ճարակում էր սովով, գաղթով, հողային գրաւումներով, տուրքերով, քրդերով ու չէրքէզներով...

Եօթանասնական թուականների պատմական օրերում—նոյն ճչացող հակասութիւնը։ Մի կողմից սուլթանական կամարիլլան ափաշկարայ իրախուսում էր թիւրքահայոց ինքնավարութեան ծրագիրները, թոյլատրում էր նոյնիսկ յատուկ պատգամաւորութիւն առաքել ի Բերլին և ամեն տեսակ դիւրութիւններ էր ընծայում պատրիարքին ու պատգամաւորութեան,—հապա միւս կողմից՝ նոյն կամարիլլան թալանի ու սպանութեան, արեան և ար-

տասուքի թատր էր դարձնում օսմանեան Հայաստանը. . .

Հակասութիւն—թէպէտ և ոչ նոյնանման—տեսնում ենք և այն հեռաւոր ժամանակներում։ Մի կողմից „քաղաքական սիստեմը“, իր գոյութեան շահերից իսկ հրահանգւած՝ հրաժարւում էր քրիստոնեաներին իսլամացնելուց—հապա միւս կողմից մենք տեսնում ենք նոյն այդ վաղեմի դարերում կրօնական հալածանքների, բռնի իսլամացման և հայկական նահատակութիւնների մի անվերջ շարան, որոնք յաճախ կատարւել են իսլամ խուժանի ձեռքով և որոնց գրեթէ միշտ նախագահել են գաւառական իշխանութիւնները, ի դէմս վալիների, փաշաների, գայմագամների. . Կարծես թէ կենտրօնը, իբրև աւելի խելօհաս և աւելի գիտակից համապետական բարգաւաճման շահերի—գուցէ նաև վախենալով „հեգեմօնիայի“ խախտման հեռապատկերից—հրաժարւել է ընդհանրապէս իսլամացման քաղաքականութիւնից, իսկ այնտեղ, հեռուն՝ խուժանները և իրենց անձնական առաջնորդները, իբրև աւելի նախանձախնդիր կրօնի բարգաւաճման, օգտւել են սովորաբար պատեհ առիթներից, որպէս զի ժողեգնօրէն արձագանք տան Ղուրանի ռազմաշունչ պատգամներին, գրոհ տան գիաւուրի դէմ և խաչի աւերակների վրայ տնկեն իրենց Մահիկը։

Յամենայն դէպս, կրօնը և կրօնական հակամարտութիւնը, իբրև ուրոյն ու զօրաւոր ներազդակ — անկախ նոյնիսկ տնտեսական գործօններից, անկախ ամեն դասակարգային և նիւթական ներշնչումից—յաճախ է դեր

խաղացել մահմեդական զանգւածների հոգեբանութեան, նրանց խօլական, արհաւրալի թռիչքների մէջ։ Ապացոյցներով հարուստ են թէ հին, թէ նոր պատմութիւնը, յատնաւորապէս մեր նորագոյն գուլումների պատմութիւնը Թիւրքիայում ու Կովկասում։

Յիշենք մէկը և—բնորոշը։

Պատմողը անգլիական փոխ-հիւպատոս Ֆից-Մօրիսն է (պաշտօնական Կապոյտ գրքում), որ 1896 թւին իր կառավարութեան հրահանգով, ուղեկցեց Թիւրքական քննիչ յանձնաժողովին՝ Հալէպի վիլայէթում տեղի ունեցած մահմեդական խժդժութիւնները ստուգելու համար։ Երբ—ասում է նա—խուժանը գրոհ տւեց Բիրեճիկի հայ ազգաբնակութեան վրայ ջարդելու և աւերելու որոշումով, երբ հայերը տեսան, որ այլ և այլ փրկութիւն չկայ, մի հայ կին բարձրացաւ տանիքի վրայ, պարզեց ձերմակ դրօշը և յայտարարեց, թէ իրենք ամենքն էլ գրկում են մահմեդականութիւնը։ Մնացած հայերն և կրկնեցին խլամ Հաւատամքի ֆօրմուլը. այն ժամանակ խուժանը անմիջապէս հեռացաւ, չուզենալով յարձակւել իր նոր հաւատակիցների վրայ *)..

Կրօնի բացած խրամատը հսկայական է։ Փնտրենք այժմ նրա հեռաւոր արմատները, ժամենք փոքր ինչ խլամական հաւատամքի այլազան և շփոթ մեկնութիւնների մէջ, ծանօթանանք փոքր ինչ Ղուրանի դրական և բացասական պատգամների հետ. տեսնենք նաև, թէ ինչ-

*) *Blue Book, Turkey No 5 (1896).*

պէս է անդրադարձել կրօնական միահեծան վարդապետութիւնը „նեստուր“, օսմանեան ցեղի ու պետութեան ընդհանուր ճակատագրի վրայ և թէ որքան հաշտելի է (*compatible*) իսլամի ժամանակակից ուղղութիւնը արևելեան Թաթիլօնի, մասնաւորապէս մեր երկրի, զարգացման ու առաջադիմութեան պրօցէսի հետ։

II

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՑՈՒԹԻՒՆ

Բ.

Իսլամ եւ քրիստոնէութիւն —Ղուրանի լոյսերն ու սեւերները. — Թեմօկրատիզմը եւ հաւասարութիւնը՝ միմիայն „հաւատացեալների“ երջանկում.—Ջնադ.—Հակասութեանց մեկնութիւնները.—Անհամբերողութիւնը՝ արաբական տիրապետութեան օրով. — Օմար՝ Երուսաղէմի պատերի տակ. — Իսլամի ռազմական ոգին — Մարդ-մեքենաների լէգէոնները. — Ֆատալիզմ եւ մոլեռանդութիւն.—Իսլամը եւ արաբական բաղաքակրթութիւնը. — Արեւմուտք եւ Արեւելք. — Երկու հակամարս ուղղութիւններ. — Ղուրանը՝ հրամանատար եւ կանոնաւորիչ ամբողջ կեանքի. — Իսլամ եւ պրօգրէս. —

—

Եթէ քրիստոնէութիւնը գէթ սկզբունքով հռչակել էր բոլոր մարդկանց հաւասարութիւն ու եղբայրութիւն, Իսլամը այդ թէօրիական առաքինութիւնն ևս չունեցաւ: Բայց նա ունէր և զգալի առաւելութիւններ Քրիստեան կրօնի հանդէպ: Աւելի պարզ և աւելի ժողովրդական՝ նա զերծեց սկզբից ի վեր քրիստոնէական դօգմերի վերացական բնաւորութիւնը, խստաբարոյ ասկետիզմը, ճգնութեան ու ապաշխարութեան դաժան պատուիրանները, գրկեց կեանքը նրա վարդագոյն կողմ-

ժերով, շեշտեց նրա բնական, հաճոյապաշտ պահանջները, մարմնաւոր, զգայական ախորժակները — և այդ պատճառով ծաւալուեց այնքան ուժով ու արագութեամբ, գտաւ այնքան խանդավառ ընդունելութիւն՝ պարզ, նախնական ժողովուրդների մէջ։ Պարզ էր դօգմը, պարզ էր, մատչելի ու կենսական — նաև մօրալը, բարոյախօսութիւնը։

Այստեղ ևս, սակայն, անելու հնք մի փոքրիկ վերապահութիւն։ Այդ ծայրայեղ պարզութիւնը — մէկ վերացական Աստուածութեան գաղափարով — և այդ զգայապաշտ, հաճոյամոլ բարոյախօսութիւնը՝ գալոց դրախտի հեշտանքներով, երանութիւններով, այդ բոլորը հիանալիօրէն յարմարեցրած է, ինչպէս ասում է Ֆօն Հարտմանն, միմիայն յետամնաց և խոպան ցեղերի կեանքին ու պահանջներին... Իսլամի կրօնական աշխարհահայեացքը չունի բնաւ խորութիւն ու ինքնուրոյնութիւն, որպիսին յայտնի չափով մատնում են քրիստոնէութիւնն ու մովսիսականութիւնը։ Երկուսի խառնուրդ է նա, երկուսի ընդօրինակումն, բայց առանց ստեղծագործելու և խորացնելու նրանց երկուսի շօշափած պրօբլեմները, առանց բերելու մի նոր տարր, մի նոր մօմենտ մարդկութեան կրօնական գիտակցութեան մէջ *)... „Ֆանատիկոսացած հրէութիւն“ — ասում է Հեգել Իսլամի մասին։ Այդ կրօնը այն աստիճան անինքնուրոյն է մեծ փիլիսոփայի աչքում, որ սա գրեթէ չի էլ զբաղ-

*) *Ed. von Hartmann: Das Religiose Bewusstsein der Menschheit*, էջ 542—43։

ւում նրանով իր „պատմութեան փիլիսոփայութեան“ մէջ, ուր ահագին տեղ են բռնում միւս կրօնները։

Խառնուրդ է Ղուրանը—նաև դրական ու բացասական պատգամների, լոյսերի և ստուերների։

Նա ևս, այո, հրահանգում է բարիք գործել և դատապարտում է չարը. նա ևս ըմբոստանում է հասարակական մի շարք տարկանոնութիւնների, արատների դէմ, նշաւակում է վաշխառութիւնը, գողութիւնը, սպանութիւնը, մերժում է կաստերի գոյութիւնը, քարոզում է հաւասարութիւն։ Սակայն, այդ մեծ հրահանգները, և մանաւանդ վերջինը, կիրառելի են հաւատացեալների շրջանում միայն։ Նրանք են միայն հաւասար իրարու միջև... Թէև այդտեղ ևս կայ բացառութիւն, իսկան ստրուկը, որ շատ հեռու է տղամարդկանց հետ հաւասարեցուց։ Բարւոյ և չարի հասկացողութիւնների վերաբերմամբ՝ մահմեդական աստուածաբանների մէջ տիրում է խոր տարաձայնութիւն։ Միայն ստրկան աստուածքը կայ. „բարի է, լաւ է այն ամենը, ինչ որ մահմեդականների ընդհանրութիւնը գիտում է իբրև այդպիսին“։

Այլ է մօտալը՝ „անհաւատների“ վերաբերմամբ։ Այդտեղ Մահմեդի աւետարանը հակասական է. մերթ հաշտարար և գիջող, մերթ թշնամի և շանթող։ Այդ է պատճառը, որ նա կարող է բոլորին էլ գոհացուցած։ — և՛ նրանց՝ որոնք Ղուրանի մէջ փնտրում են համբերողութեան ապացոյցներ և՛ նրանց՝ որոնք հռչակում են Մահմեդին անհամբերողու-

թեան քարոզիչ։ Այդ դուալիզմը, երկուութիւնը միմիայն Ղուրանին չէ վիճակուած։ Մենք այն գտնում ենք նաև Քրիստոսի վարդապետութեան մէջ։ Այդտեղ էս իրենց պաշտպանած թեզիսներին ապացոյցներ կարող են գտնել գաղափարական ամենաճայրայեղ հակոտնեաները — և ժամանակակից սօցիալիստը և ժամանակակից բուրժուան, միապետականը և կղերականը։ Եւ նոյնիսկ երկու տեսակ քրիստոնէութիւն կայ — մէկ՝ հիմնադրի քարոզածը, մէկ էլ՝ նրա յաջորդներինը։ Ակզբնական քրիստոնէութիւնը, չը նայեած մի շարք անհարազատ խառնուրդներին, էապէս ռամկավարական էր և համարեա կօմմունիստ. առաջին քրիստոնեայ համայնքները ապրում էին մեծ մասամբ կօմմունիզմի — թէկուզ և բիրտ, նահապետական կօմմունիզմի — ռէժիմի տակ. չէր ճանաչւում մասնաւոր, անհատական սեփականութիւնը։ Բայց ո՞ր սլացաւ այնուհետև Յիսուս նազովրեցու այդ մաքուր և ռամկաշունչ ոգին... Ժամանակը խեղաթիւրեց այն և այսօր նա գարձել է պաշտպան հարստահարութեան ու շահագործման, նեցուկ մեծերի ու հզօրների, անգամ կարմրագլխատ դահճապետների...

Նոյն ճակատագիրը կրել է մասամբ և Իսլամը։ Եթէ սկզբում, իր հիմնադրութեան օրերի մէջ, նա ունեցել է մի քանի ազնիւ, համակրելի ներշնչումներ — ապա յետագայում իրականութեան տարրայուծող կոհակների մէջ նրանք էս մաշւել, խեղաթիւրւել են և հեռաւոր երկրպագուները, օսմանցիք, հանդէս են եկել, սպառազինւած՝ գրեթէ միայն Ղուրանի բացասական, հակահասարակական հրահանգներով։ Մի կողմն են թողել

լոյսի հազւագիւտ ցոլքերը և փարել են... միայն ա ս ւ ե ր ն ե ր ի ն։ Ցետ են մղել հաշտարար քաղաքականութիւնը „գիավուրների“ վերաբերմամբ և դրւատել են աւելութիւնը, հալածանքը, պատերազմը...

„Եթէ հանդիպէք անհաւատների — ասում է Մահմեդ իր Ղուրանի մէջ — կուեցէք նրանց դէմ, մինչև որ մեծ ջարդ աւաջ բերէք, ապա շղթայեցէք գերիներին... Այդպէս է երկնքի հրամանը... Նրանք, որոնք կը նահատակուին հաւատի համար կուելով, չպիտի ձեան աւանդ հատուցման... Աստուած նրանց կը մտցնի երանութիւան պարտէզի մէջ...

„Իսկ դժոխքը — անհաւատների բնակավայրը... Ամենակարողը կը չնչէ նրանց...

„Երկնքի հովանաւորութիւնը ապահով է հաւատացեալների համար, իսկ անմաքուրները բնաւ չունին հովանաւոր։

„Ո՛վ հաւատացեալներ, ես ձեզ հրաւիրում եմ զոհաբերել ձեր հարստութեան մի մասը սրբազան պատերազմի համար։

„Նրանք, որոնք չեն հաւատում Աստծուն և նրա առաքեալին, թող նրանք իմանան, որ մենք բացել ենք կրակարաններ անհաւատների համար“ *)...

Ահա բառեր, որ էլեքտրական հոսանքի պէս ցնցել են ծայրէ ի ծայր հսկայական զանգուածները և դարեր շարունակ իրենց աղետալի ներգործութիւնն են ունեցել թէ Իսլամի և թէ մանաւանդ նրա հպատակ քրիստոնեայ ժողովուրդների բախտի վրայ։

„Ջհադը“, սրբազան պատերազմը տիրական մտահղացութիւնն է այդ կարմիր աւետարանի մէջ, որ ամբողջապէս տոգորուած է ռազմական ոգով, արշաւելու, կուելու և ջնջելու տրամադրութեամբ։

---

*) *Le Coran, trad. p. M. Savary* (*Paris 1821*) էջեր 265—66։

կան, ասացինք, դրա հանդէպ և մի քանի հաշտարար պատգամներ... ասես՝ ակամայ մի տուրք ու մեծարանք, հատուցած մի ուժեղ ու հակառակորդ կրօնի... Այդ մի քանի հաշտարար ձրագները մեծ դեր, ի հարկէ, չեն խաղացել անցեալի մէջ, ուր գրեթէ միշտ գերակշռել է հալածողական տրամադրութիւնը *)... Բայց

*) Փիւռնական ճանապարհորդ Վիլեամ՝ Պալգրաւ, որ Նապոլէօն III-ի օրով և նրա խրախուսանքով գնացել էր ուսումնասիրելու իսլամիզմը Հնդկաստանում, Պարսկաստանում, Թիւրքիայում և նոյնիսկ Արաբիայի սրտում, յայտարարում է, որ Մահմեդի ամբողջ քաղաքականութեան դրդապատճառը նրա խորունկ տեսլութիւնն էր գէպի քրիստոնէութիւնը։ Գ ի ն ի ն անգամ, ասում է Պալգրաւ, Մահմեդը մերժեց իբրև անմաքուր մի ըմպելի լոկ այն պատճառով, որ նա համարում էր քրիստոնեայ աշխարհի մէջ կրօնական մի որբութիւն, խորհրդանշան միութեան, բարեկամութեան ու քաղաքակրթութեան, խորհրդանշան հասարակութիւնների և ընտանիքների...

Նոյն պատճառով պէտք է բացատրել և Մահմեդի տեսլութիւնն ու գաղջանքը դէպի քանդակները, արձանագրութիւնը, պատկերներն ու զարդարանքները, որոնք անբաժան յատկանիշներն են արևելեան քրիստոնէութեան, ինչպէս վկայում են յոյն ու հայ եկեղեցիները։ Արդարէն պատասխանատու նրանց անուղղակի խստութեամբ և չանաց ներշնչել մահմեդականներին մի սուրբ գաղջանք դէպի այդ սիրուն զարդարանքները։ Այնպէս և պ ա ն դ ո ւ կ ն ե ր ը անէծքի, անաթեմայի ենթարկելուցին ոչ այն պատճառով՝ որ իբր թէ նրանք խանդարում են հրեշտակների քունը, այլ որովհետև նրանք ամենուրեք գործածւում են հակառակորդ դաւանութեան մէջ։ Վերջապէս, նոյն շարժառիթով՝ Մահմեդ դատապարտեց երաժշտութիւնը, իբրև խաւարի սպիների մի ևս

Ղուրանի այդ հաշտարար պատգամներին վերապահած է, ի շարս նրա միւս դրական, ժարդկայնական ֆօրմուլների, դեր խաղալու ներկայում և ապագայում, երբ մահմեդական նորակառոյց սահմանադրութիւնները պիտի ձգտեն համաձայնեցնել Մահմեդի կրօնը եւրոպական քաղաքակրթութեան հրամայականների հետ...

Ինչպէ՞ս են բացատրում „հաշտարար“ հրահանգները „անհաւատների“ վերաբերմամբ։ Ուշագրաւ է 17-րդ դարի ճանապարհորդ Ռիկօի կարծիքը Ղուրանի այդ դուալիզմի, այդ հակասական երկուութեան մասին. մի կարծիք, որ կրկնում են և ուրիշները։ Քանի դեռ Մահմեդի տիրապետութիւնը թոյլ էր — ասում է Ռիկօ — նա բաղցրութեամբ էր վերաբերում քրիստոնեայ ժողովուրդներին, և մինչև իսկ նրանց հետ կապած մի դաշինքի մէջ խոստանում էր չը հալածել իր իշխանութեան սահմաններում ապրող քրիստոնեաներին, տուրք անգամ չ՚առնել նրանցից, չը դիմել բռնի կրօնափոխութիւնների և այլն. խոստանում էր կատարեալ հանդուրժողութիւն քրիստոնեաներին և ասում էր.

„Ո՛վ անհաւատներ. եթէ դուք չէք պաշտում իմ պաշտածը, թող ձեր կրօնը ձեզ մնայ և իմը՝ ինձ“։

յղացումն, որ կոչուած է մարդկութիւնը կործանելու։ Այդպիսով նա կանխապէս վաւերում էր այն գեղեցիկ խօսքերը, որ Շէքսպիրը գրել է Լօրենցօի բերանում.—„նա որ չունի իր հոգու մէջ ոչ մի երաժշտութիւն, նա որ անմատչելի է մնում նւագական հնչիւնների ներդաշնակութեան համար, նա բնդունակ է դաւաճանութիւնների, ռազմագաւերի ու բռնութիւնների։ Նրա սրտի շարժումները մթնոլորտային, որպէս գիշերը“... (*W. Palgrave, Une année de voyage dans l'Arabie centrale*)։

Բայց հենց որ ամրապնդեց իր դիրքերը, ուժեղացավ —նրա վերաբերմունքը հիմնականապես փոխվեց. նա դարձավ գրգռիչ ու ամբարտավան, գրեց Ղուրանի երկու ծանօթ գլուխները „Սուր“ և „Կռիվ“, ուր ասում էր.

„Երբ հանդիպեք գիտավորների, կտրեցեք նրանց գլուխները, ապանեցե՛ք, դերեցե՛ք, կապեցե՛ք, շղթայեցե՛ք, մինչև որ յարմար դատեք ազատութիւն շնորհելու նրանց, կամ թէ փրկանք վճարել տալու. և մի՛ դադարեք հալածելու նրանց, մինչև որ վար դնեն իրենց զէնքերը և հպատակվեն ձեզ“։

„Հպատակվելուց“ յետոյ, Մահմեդ ընդհանրապէս խնայել է քրիստոնեաներին։

Պատմութիւնը արձանագրում է մահմեդական անհամբերողութեան փաստեր՝ նաև վաղեմի, արտաքսական սերապետութեան օրերով։ Այն բոլոր բացառիկ օրէնքները, որ սահմանել են օսմանցիք Հայաստանում ու մինս քրիստոնեայ երկրներում և որոնց մասին երկարօրէն խօսեցինք նախընթաց գլխի մէջ, — նրանք գրեթէ բոլորն էլ գալիս են հին դարերից, մահմեդական արաբներից։ Վաշինգտըն Իվրինգ իր „*Successors of Mahomet*“ գլուածքի մէջ նկարագրում է Իսլամի ոգին. նախ քան օսմանցոց թատերամուտը, նկարագրում է այն պայմանները, որ Օմար գրել էր Երուսաղէմին՝ նրա կապիտուլասիօնի, անձնատուութեան ժամանակ, — պայմաններ՝ որ յետոյ դարձան մի տևական մօդել, կաղապար մահմեդական իշխողների համար՝ իրենց ամեն մի աշխարհակալութեան միջոցին։

„Քրիստոնեաներն արդելում էր շինել նոր եկեղեցիներ՝ նաև (Երուսաղէմի) հոգի սահմաններում եկեղեցիների

գուներըը պէտք է միշտ բաց ձեայիկ ուղևորների առջև և մահմեդականները ազատ մուտքի իրաւունք ունէին ‹ր ու գիշեր։ Զանգերը պէտք է հնչէին կամայուկ, ձեղմաձայն, բայց երբէք ղօղանջէին։ Ոչ մի խաչ չպէտք է տնկուէր ժամերի վրայ և ոչ էլ յուցադրուէր փողոցներում։ Քրիստոնեաները չպէտք է քաւանդէին Ղուրանը իրենց դաւակներին, ոչ էլ խօսէին հրապարակով իրենց կրօնի վրայ, ոչ էլ փորձէին գինուորագրելու համախոհներ, ոչ էլ արգելէին իրենց կրօնակիցների իսլամացումը։ Նրանք չպէտք է հագնէին մուսուլմանի զգեստ, ոչ էլ գլխարկ, ոչ էլ շակէին իրենց մազերը մուսուլմանի պէս, ոչ էլ ողջունէին նրա ձևով, ոչ էլ կրէին մուսուլման անուն։ Նրանք պէտք է ոտքի կանգնէին մուսուլմանի մտնելուն պէս և պէտք է ձեայիկ ոտքի վրայ, մինչև նա նստէր։ Նրանք պէտք է անուշանէին, պահպանէին ձրիաբար և երեք օր տանն մի մահմեդական ուղևորի։ Նրանց արգելուած էր գինի վաճառել, զէնք կրել և ձիաձի գոծածել ձի հեծնելիս“ *)։

Ահա այն դրակօնեան, նուաստացուցիչ պայմանները, որ Իսլամը դրել էր հպարտ և ընկճուած Հրուսաղէմին։ Եւ նոյն դաժան, ալլասեռող պահանջները դրել են միշտ մահմեդական բռնաւորները իրենց նուաճած քրիստոնեայ ազգութիւններին։

Օսմանեան ցեղը նոր ոչինչ չէր հնարում իր սրի առջև փռուած Բիւզանդի ու Հայաստանի մէջ. նա կըրկնում էր իր համակրօն և ազգապաշտ նախնիքներին, պատուաստում էր նրանց տարտմերժ աւերտարանը, նրանց մոլեռանդ, ստրկացուցիչ օրէնսդրութիւնը։ „Կրկնում էր“

*) *Armenia, A historical sketch, by an Old Indian.* էջ 89։

—գերազանցելով՝ "պատւաստում էր" —աւելի ուժգին շեշտելով այդ տարամերժ, խաղողական ոգին, աւելի ևս լարելով, թունաւորելով քրիստոնիայի ու մահմեդականի յարաբերութիւնը... և դրանով իսկ մղելով աստիճանաբար ինքզինքը դէպի քաղաքական ու սոցիալական տարրալուծում, դէպի անկում...

Արաբներն ևս անկարող եղան հաստատելու յաբտաև տիրապետութիւն. իսլամական դաւանանքը իր երկասէրի բնաւորութեամբ և իսլամ օրէնսդրութիւնը՝ նրանց ձեռքում ևս միջոց եղան ծաւալումի, ապա և անկումի։

Արդէն իսկ — ասում է Կրէմեր — դեռ արաբական պետական կեանքի պատրիարքալ շրջանի մէջ — Օմարի մահից յետոյ — երկու մեծ, հաւասարազօր ժողովներ կային այդ պետական գոյութեան ծոցում, երկու ժողովներ, որ իրարու հետ հակամարտելով, պահպանում էին մի առ ժամանակ հաւասարակշիռ. մէկը բղխում էր ազնիւ, վեհանձն բնազդից, կրօնական ցնորքներով թեւաւորուած տենչանքից՝ իրականացնել մեծ գաղափարը, ի մի ձուլել բոլոր արաբներին, իբրև ազատ և հաւասար եղբայրների՝ մէկ ընդհանուր ու հոյակապ կրօնա-զինուորական համայնքի մէջ։ Միւսը, հակադիր հոսանքը, արբած իր աջողութիւններով ու նւաճումներով, միշտ աւելի և աւելի խորասուզւեց աւազակութեան ու աշխարհակալութեան յարաճուն տենդի մէջ *)։

---

*) *A. von Kremer, Geschichte der herrschenden Ideen des Islams.* էջ 335։

Այդ երկրորդ հոսանքը ի վերջոյ գերակշռեց և տա-
րաւ ամբողջ օրգանիզմը դէպի կործանում։

Այդ նոյն երկրորդ հոսանքն էր, որ շեշտեց առանձ-
նապէս օսմանեան օրգանիզմի մէջ և այդտեղ ևս ունե-
ցաւ մօտաւորապէս նոյն ուերիչ, ճակատագրական հե-
տևանքները...

Պարելի է ասել, Իսլամը ուելի ևս ուժ տուեց օսման-
ցիների մի շարք բացասական, հակակուլտուրական գծե-
րին, որ նրանք արդէն ունէին առաջ, իբրև ռազմիկ,
աւարառու մի հօրդա։ Մահմեդի կրօնը բնաւ չխրա-
խուսեց այդ առողջ, կենսաթարմ, աշխարհակալող ցեղի
առաջադիմութիւնը, կուլտուրական նախաձեռնութեան
ոգին, արդիւնարար աշխատանքը, ընդհակառակը, ուելի
ևս խորասուզեց նրան լեթարգիական քնի մէջ, անշար-
ժութեան ծոցում..

Հրահանգներ կան այդ կրօնի մէջ, որ կարծես ժամա-
նում են նոյնիսկ որոշ հակակրանք՝ անգամ դէպի տըն-
տեսական կեանքի ու առաջադիմութեան տարրական
անհրաժեշտութիւնները։ Այդպէս, օրինակ, նաւարկու-
թիւնը, առևտուրը, երկրագործութիւնը, շատ էլ յարգի
չեն Ղուրանի մէջ։ Այդտեղ ասուած է. „Ով որ երկու
անգամ նաւ է նստում ծովի վրայ, անհաւատ է“։ Մի
այլ տեղ. „Հրեշտակները չեն այցելում այն տունը, որի
մէջ կայ մի արօր“։

Թուում է թէ այդ բոլոր պարապմունքները անար-
ժան են սեպուել Մարգարէի կողմից, անարժան իսլամ
հաւատացեալներին. Թուում է թէ այդ Մարգարէի միակ
մտահոգութիւնն է եղել՝ մարզել իր լեգիոնները սուսկ

հաւատի և սրբազան պատերազմի մէջ, կենտրօնացնել նրանց ուշքն ու միտքը այդ երկու իրողութիւնների վրայ և հեռու վանել այն բոլոր մարզանքները, որոնք կարող էին այս կամ այն ձևով ցրել այդ կենտրօնացած ուշադրութիւնը, բաժանել այդ խտացած կորովը հաւատացեալների...

Կրօն և ջհադ — անհրաժեշտագոյն և գերագոյն պարտաւորութիւնները... Երբեմն նոյնիսկ թւում է թէ երկրորդը գերակշռում է և յարմարեցնում առաջինի հրահանգներն ու ծէսերը իր հրամայական պահանջներին... Դիտեցէ՛ք միայն այդ խորհրդաւոր, զինուորական հանդիսաւորութիւնը, որ տրւում է կրօնական արարողութիւններին, այդ կարգապահ լեգէօնները, որ խոնարհագին տարածւում են գետնի վրայ՝ ասես տրւած ազդանշանով, այդ պարբերական և պարտադիր ազօթքները, „նամազները“, որ կատարւում են ամեն օր մի քանի անգամ, այնքան կոյր հնազանդութեամբ ու դիսցիպլինով... այդ բոլորը նախամտածւած և զօրաւոր մի սիստեմի թարգման է, արտայայտութիւն, մի սիստեմի՝ որ նպատակ ունի շանթահարել և գերել հաւատացեալների երևակայութիւնը, դաստիարակել նրանց միտքը զինուրական ուղղութեամբ, ստեղծել մարդ-մեքենաներ — անպայման, ստրկական հնազանդութեամբ — որ պատրաստ լինին ազդանշանը լսելուն պէս՝ բեմ նետւելու արիաբար և անտրտունջ՝ մղելու „գիհադուրի“ դէմ սրբազան պատերազմը, թափելու արիւնը „աստուածային դատի“ համար...

Իսլամը — մի հսկայական զօրանոց, Ղուրանը — մխիթարիզմի մի գերազանց ձեռնարկ...

Այդպես էր նա երբեմն, Մարգարէի ու արաբների տիրապետութեան օրով. այդպես է նա և ցայսօր։ Եւ այդ սարսափելի իրողութիւնը գարեր շարունակ ցաւագինօրէն անդրադարձաւ միւս, այլակրօն ցեղերի վրայ։

„Հաստարակութիւններ“ երբէք չ'եղան հաւատացեալների այդ բազմամիլիոն զանգւածները, այլ միայն մարդժեքենաների ողնազուրկ համախմբութիւններ։ Ազգութիւն երբէք նրանք չկազմեցին, այլ միայն կրօն և միայն „համայնք հաւատացեալների“։ Ո՛ւ պատմութեան մի աղագին տարկանոնութիւնը, նրա մեծագոյն պատուհասներից.

Մահմեդական կօլօսի այդ սրարշաւ աճումն ու տարածումը, իրաւի, իր նմանը չունի մարդկային պատմութեան մէջ և Մահմեդը, որ ստեղծեց արաբներից գիներներ մի ազգութիւն, կարող էր գուցէ դեռ շատ ծաւալել իր իշխանութիւնը, կարող էր թերևս դարձնել այն՝ մի երկրորդ հռոմէական կայսրութիւն, եթէ փոքր ինչ բանաւոր և տանելի սիստեմ իշխէր խալամական քաղաքականութեան մէջ։

Ջինուորների և աղօթողների ազգութիւն... Այդպէս— գրեթէ բոլոր իսլամագաւան հասայնքները։ Անհատը կատարելապէս կուլ է գնում նրանց մէջ, թագաւորում է մարդ-մեքենան։ Անկամ, անգիտակից մի խաժաճիկ, մի ավազամած, որ գիտէ միայն բացարձակ, դիակնային հնազանդութեան օրէնքը, որ վարժւած է միայն կոյր, անպայման, մեքենական կարգապահութեան, բայց որ չգիտէ մտածել, բարձրանալ իր երամ-զանգւածի մակերևոյթից, դուրս նետել քարացած դոգմերի ու

սովորոյթներէ շրջանակներից, քննադատել, հարւածել, յեղաշրջել... Քննադատական միտքը, որ մեզ ևս է—և թերևս մեծագոյնը—արևմտեան քաղաքակրթութեան պարծանքներից, որի զարգացման հանգրւանները համաշխարհային պրօգրէսի, առաջադիմութեան հանգրւաններն են, քննադատական միտքը, որ հեռզհետէ բարձրանալով կոպիտ նախապաշարումների ու անապաշտութիւնների ճահիճներից, ծնունդ տւեց Եւրոպայում խղճի ազատութեան դաւանանքին — այդտեղ, միջնադարեան արևելքի մէջ, նա միանգամայն անդամալուծւել էր դարերի ընթացքում, կաշկանդւել էր իսլամական ֆաթալիզմի ու ֆանատիզմի խեզդուկ մթնոլորտում:

Ֆանատիզմ... և ֆաթալիզմ... Մոլեռանդութիւն և ճակատագրականութիւն: Երկու ազգակից գաղափարները ոչ մի ուրիշ կրօնի մէջ չեն հաստատել այնքան մտերիմ համակեցութիւն, ինչպէս այդտեղ, իսլամի մէջ: «Իսլամ» բառը արդէն իսկ նշանակում է համակերպում, նշանակում է կոյր, մոլեռանդ, ճակատագրական հնազանդութիւն: Ասածուն և բոլոր գերբնական էակներին: Մարդիկ, ըստ Մարգարէի, նախատեսւած են յաւիտենական երջանկութեան կամ անբախտութեան, գեռ երբ գանւում են մօր արգանդի մէջ: Դօհսօն, որ առհասարակ ջերմ համակրանքով է խօսում միջնադարեան կրօնի ու պետութեան մասին, որ երկար տարիներ ուսումնասիրել է իսլամ մարդկութիւնը, հետևեալն է վկայում միջնադարեան ֆաթալիզմի առթիւ.

«Նախեւառաջ, ասում է, դօքտօրների խելացի մեկնութիւն-

ներին (մահմեդ. օրէնքի վերաբերմամբ), որոնք սահմանափակում են նախատահմանութեան գործը,—մարքերի վրայ սիրում է մի նախապաշարում. „Գրեթէ ամբողջ ազգը դատանում է անփոփոխելի մի ճակատագրի սկզբունքը, սահմանած երկնքի վճիռների մէջ, և ազատ կամքի գործադրութիւնը ընդունում է միայն թոյլ չափերով, թէ ժողովուրդը և թէ թագաւորները տոգորուած են այդ „ճակատագրով". Նա ազդում է թէ իւրաքանչիւր անհատի մանաւանդ բայլերի և թէ հասարակական մարմնի հանրային գործողութիւնների վրայ։ Ա.յդտեղից է առաջանում այն լէթարգիական թմրութիւնը, որի մէջ ապրում է մուսուլման Ազգը և այն կատարեալ համակերպումը, որով նա տանում է—առանց երկար ու բարակ քննութիւնների—ամեն տեսակ ձախորդ անցքեր, հանրային դժբախտութիւններ։ Ամեն բան վերագրելով Յաւիտենականի գերագոյն կամքին, մի երկնային ու աներեւոյթ ձեռքի, որ հրամայաբար կառավարում է և՛ իւրաքանչիւր մահկանացուի բայլերը, և՛ քաղաքական կազմակերպութեան ընթացքը, նա (մահմեդական ազգը) զանց է առնում բանականութեան միջոցները, առողջ դատողութիւնը... Իր ապառնոյին, իր դժբախտութեան հեղինակին՝ մահմեդականը գիտում է, որպէս մի գործիք նախախնամութեան ձեռքում՝ որը գործադրում է ճակատագրի անդրդեւելի վճիռը. մի վճիռ՝ որ նրա կարծիքով, գրուած է ճակատի վրայ, նախ քան ծնուելը" *)։

Անագին է ճակատագրի, „զսմեթի" ուժը։ Անագին է և նրա հակամարտ, գիմադրական զօրութիւնը — հ ա մ ա կ ե ր պ ո ւ մ ը։ Թո՞ղ այդ վերջինը լինի սոսկ կ ր ա ւ ո ր ա կ ա ն. նա դարձեալ ճնում է մի ամեհի ուժ, որով Իսլամը լուռներ է խորտակել... Եւ սակայն,

*) *D'Ohsson, Tableau général de l'Empiae Ottoman*, հատ I. էջ 57։

այդ ուժի վրայ յենելով, խլած էր աջողութեամբ մղել միայն իր գոյութեան պայքարը, բայց երբէք քաղաքակրթութեան... Կոյր զկուրայն հնազանդելով կրօնական և աշխարհիկ քուրմերին — կրօնի մէջ Աստուածութեան գաղափարին, քաղաքական կեանքի մէջ՝ Պետութեան գաղափարին — մշակելով, ծայրագոյն կատարելագործման հասցնելով զուտ հօրդային, երամական դիսցիպլինը, — մահմեդական մարդկութիւնը յամառեցաւ մշտապէս այն յետամնաց վիճակում, որ Սպենսեր անուանում է ընկերաբանական իր սխեմայի մէջ „մ ի լ ի տ ա ր ի զ մ ի շրջան“ — մի շրջան, որ հակապրւում է „ի ն դ ո ւ ս տ ր ի ա լ ի զ մ ի ն“ կամ ճշմարիտ յառաջադիմական հոսանքին, անհատական ու քաղաքական ձիրքերին ու ազատութեան, անհատների ու խմբումների գիտակցական գործունէութեան.. Մահմեդական աշխարհը ձեաց միշտ այն ժօնոտօն ովկիանը, այն գորշ, դիմազուրկ, միապաղաղ զանգուածը — որի մասին քիչ առաջ ակնարկեցինք — ուր չկան արգասաւոր հակամարտութիւններ ու բաղխումներ, ուր անհատը արժէք չունի և կլանւում ու կորչում է տեսակի մէջ — ինչպէս որ այդ տեղի ունի կենդանական աշխարհում — ուր չկայ տոկուն, համբերատար, արդիւնարար աշխատանք, յարատև, ստեղծագործող կորով, ուր չի գործում վերլուծող, քննադատական միտքը ոչ կրօնի և ոչ պետութեան այլազան կնճիռների լաբիւրինթոսում...

Եղել է, սակայն, արաբական ամրողջ քաղաքակրթութիւն միջնադարում — կ'ուարկէ մեզ իրագեկ ընթերցողը

եղել է, այո, սակայն պէտք չէ չափազանցնել և այդ քաղաքակրթութեան արժէքն ու հմայքը: Նա երևան եկաւ քրիստոնէական կուլտուրայի ամենախաւար շրջանում. Օդերևոյթի պէս փայլեց նա դարերի անեզր տարածութեան մէջ և մարեց՝ գրեթէ առանց հետք թողնելու... Որովհետև այդ փայլն ևս սեփական չէր, ինքնուրոյն չէր, այլ փոխառուած, — մի փոխառութիւն, որ ընդհանրապէս ճնաց ամուլ, անարգասիք: Արաբական հանճարը քիչ թէ շատ յարատև արդիւնք ունեցաւ միայն ճարտարապետութեան մէջ: Կարծիքները, իրաւ է, մեծ մասամբ սուբ՝եկտիվ են, ենթակայական. այնուամենայնիւ, նման պարագաներում արժէք ունին հեղինակաւոր կարծիքները, և առաւել՝ վկայութիւնը մի այնպիսի աշխարհահռչակ հեղինակութեան, որպիսին է սեմիտաբան Ը ր ն ե ս տ Ռ ը ն ա ն:

Ահա թէ ինչ է ասում „Ցիսուսի կեանք“ի հեղինակը արաբական հանճարի բարձրագոյն արգասիք՝ փ իլ ի ս ո փ ա յ ո ւ թ ե ա ն մասին („Ավէրրօէս և Ավէրրօիզմ“ իր աշխատութեան նախաբանի մէջ).

Ես առաջինը կը խոստովանիմ, որ մենք ոչինչ, գրեթէ ոչինչ բան չունինք ստորելու՝ ոչ Ավէրրօէսից, ոչ արաբներից... Փիլիսոփայութիւնը սեմիտների մօտ եղել է միշտ ստոկ արտաքին մի փոխառութիւն, առանց մեծ արգասաւորութեան, ստոկ ընդօրինակումն յոյն փիլիսոփայութեան“ *):

Աւելի ևս հետաքրքրական են նոյն Ռընանի յետագայում գրուած տողերը, որ գտնում ենք նոյն գրքի ապդարարութեան մէջ: Այդտեղ նա ասում է, որ թէև

*) *E. Renan, Averroès et Averroisme*, հրատ. 1866 թ.:

աւելի է ուսումնասիրել խնդիրը, բայց չի փոխել իր կարծիքը արաբական փիլիսոփայութեան բնոյթի վերաբերմամբ։ Ընշուշա, ասում է, այդ փիլիսոփայութիւնը մի ահագին իրողութիւն է, որ 12-րդ դարում նա հասել էր ճշմարիտ ինքնուրոյնութեան, որ այդ դարի վերջում նա նոյնիսկ բարձր էր քրիստոնէական մտաւոր զարգացումից. սակայն՝

„Աստուածաբանութիւնը ցցեց նրա առջև անանցանելի պատնէշ, թոյլ չտուեց, որ այդ փիլիսոփայութիւնը մանէ հաստատութիւնների մէջ։ Մահմեդական փիլիսոփան միայն միշտ մի սիրող (*amateur*) կամ պալատական մի պաշտօնեայ... Ֆանատիկոսութիւնը երկիւղ ազդեց իշխաններին, փիլիսոփայութիւնը չքացաւ նրանց հրամանով, ձեռագիրները չնչեցին... Արաբ փիլիսոփայութիւնը հետք չթողեց և իրենք արաբները մատացան նրան... Իսլամիզմը մերկացրեց այդ պարագայում իր անդարմանելիօրէն նեղ հանճարը... Անընդունակ կերպարանափոխելու և առնելու իր մէջ քաղաքացիական ու աշխարհիկ կեանքի օրէնք տարերքը՝ իսլամականութիւնը դուրս պոկեց իր ծոցից բանապաշտ քաղաքակրթութեան ամեն սաղմ։ Այդ ճակատագրական ձգտումի դէմ մաքառում էին, բանի դեռ Իսլամի հրամանատարութիւնը միտում էր նուրբ և արտիստ արաբ ցեղի կամ պարսիկների ձեռքում. բայց նա տիրապետեց առանց դիմադրութեան այն ժամանակից՝ երբ Իսլամի ղեկավարութիւնն անցաւ թիւրքերի, բերբերների և այլոց ձեռքը։ Մահմեդական աշխարհը մտաւ այնուհետև տգէտ անանուանցման այն շրջանը... (*le monde musulman entra dès lors dans cette période d'ignorante brutalité*)... որին հետևեց այժմեան հոգեվարքը...

***

Անշարժութիւն՝ կրօնի մէջ, անշարժութիւն՝ պետութեան մէջ, անթիւ հոդմեր և ուրուգաններ անցան մի շարք դարերի ընթացքում արևմտեան Եւրոպայով, ոչ հեռու օսմանեան սահմաններից, տակնուվրայ արին ժողովուրդների քաղաքական ու հասարակական կենցաղը — իսլամ Արևելքը ճնաց միշտ անյոյզ ու անխռով, Բոսֆորի ալիքները պահպանեցին յաժառաքար իրենց մահաշունչ անգորրութիւնն ու անտարբերութիւնը. Ասես բոլորովին ջոկ, տարբեր մի մարդկութիւն էր, տարբեր կերպով մտածող և զգացող, տարբեր օրէնքներով շարժուող — աւելի ճիշտ՝ չը շարժուղ, միանգամ ընդմիշտ քարացած՝ հանդէպ փնտրող, անհանգիստ, յաւիտենօրէն փոթորկուղ Արևմուտքի...

Արևմուտքում քաղաքակրթութեան պրօցէսը առաջ է ընթացել, շնորհիւ, այսպէս ասած, երկու կարգի ապահարզանի:

1. Անջատուել են իրարից — վերացական մտքի աշխարհում — Կրօնը և Փիլիսոփայութիւնը կամ ուրիշ խօսքով՝ աստուածաբանութիւնը և մետաֆիզիկան (բնապանցաբանութիւնը);

2. Անջատուել են — հասարակական-պետական կեանքում — Հոգևորը և աշխարհիկ գործօնները:

Անջատուել և մնալ են հակամարտութեան, մրցման մէջ և դրա շնորհիւ խոկ՝ թաւալուել է կուլտուրայի, առաջադիմութեան անիւը: Աւելի քան ուրեմից է, տեղին է այստեղ Հեգելի ծանօթ խօսքը. „*Der Widerspruch ist das Fortleitende!*“, „Հակասութիւնը յառաջատար ուժ է“: Արդարև, եթէ հակամարտ գործօններից մինը

կամ միւսը չքանային հրապարակից, — առաջադիմութիւնը թերևս դադար առնէր և կեանքը լճանար ու ճահճանար։ Բողոքականութիւնը — որ հանդէս եկաւ իբրև ազատ, քննադատական մտքի ճիւղաւորութիւններից մէկը—երբէք լիովին չյաղթանակեց կաթոլիկութեան դէմ. երկու մոլեգին հակառնեանները շարունակեցին առաջ սահել զուգահեռաբար։

Նմանապէս և՝ հակամարտ հոսանքները փիլիսոփայութեան, գիտութեան, գեղարուեստի մէջ, ապա նաև հասարակական, քաղաքական կեանքի ասպարէզներում ընդհանրացնելով նոյնը կարելի է ասել երկու խոշոր հոսանքների վերաբերմամբ — կ օ ն ս ե ր վ ա տ իզ մ ի և Լ ի բ ե ր ա լ իզ մ ի, պահպանողականութեան և ազատականութեան, ռեակցիայի և յառաջադիմութեան։ Մինը միւսին երբէք չի աջողում վերջնականապէս խորտակել և տապալել, հակառնեանները յարատևում են և անդուլ մրցակցութեամբ ու յաղխումներով առաջ են մղում պատմութեան պրօցէսը։

Արևմտեան քաղաքակրթութեան արշալոյսին և՝ կ ր օ ն ը, կարելի է ասել, ամեն բան էր. նա բովանդակում էր մարդկային բոլոր ձանօթութիւնների, գիտութիւնների. Ընտուծոյ կամ աստուածների շուրջն էին պտտւում մարդկանց բոլոր վերացական պատկերացումները։ Փիլիսոփայութիւնը չունէր անկախ, ուրոյն գոյութիւն. նա մի ճիւղն էր աստուածաբանութեան, նա ձուլուած էր այդ վերջինի հետ։

Կամաց-կամաց, անտեսական կեանքի զարգացման հետ,

առաջ եկաւ և մտաւոր գործունէութեան ճիւղաւորում կամ, ինչպէս ասում են, զ ա ն ա զ ա ն ա ւ ո ր ո ւ մ ն (*différentiation*)։ Արդկային աշխատանքը բաժանուեց, մանաւորից՝ նաև այդ ասպարէզում. կրօնի համայնակուլ արգանդից զատուեց փիլիսոփայութիւնը կամ մետաֆիզիկան, իբրև մտքի մի ուրոյն ճիւղաւորութիւն և զարգացաւ ու առաջադիմեց իր յատուկ օրէնքներով։ Դա ազատ մտքի յաղթանակն էր կոյր, անպայման հաւատի դէմ։ Դա գիտութեան յաղթանակն էր դ օ գ մ ի դէմ։ Կռիւը, սակայն, շարունակուեց մօր և իր խորթ զաւակի միջև. փիլիսոփայութիւնը միշտ աւելի և աւելի դիմադրական դիրք բռնեց դէպի կրօնը... Այդ կռիւը մի առանձին սաստկութեամբ բորբոքուեց գիտութեան ու կրօնի միջև. նա տակաւին շարունակւում է։

Ն՚յն ապահարզանը երկու հակամարտ սկզբունքների միջև դիտում ենք և պետական, քաղաքական էւօլիւցիայի մէջ։ Ա յդտեղ ևս, արևմուտքում, երկար դարեր ժողովուրդները ապրել են հոգևոր, կրօնական իշխանութեան լծի տակ. կրօնը, իբրև տիրական գործօն, ի դէմս իր երկրաւոր ներկայացուցիչների ու հրամանատարների՝ ազդել է բռնակալօրէն կեանքի բոլոր արտայայտութիւնների վրայ, ստորադրել է իր հմայքին ու իշխանութեան՝ անգամ թագաւորներին, ապա և — վերջիններիս ազատագրութիւնից յետոյ — եղել է նրանց անբաժան խորհրդակիցը, ներշնչողը՝ թէօկրատիկ („աստուածավար“) պետութիւնների մէջ, սրբագործել է նրանց բոլոր արարքները „աստուածային ծագման“ և „աստուածային հովանաւորութեան“ հինաւուրց առասպելնե-

բով, դրել է մի խօսքով, իր կնիքը պետական ամբողջ գոյութեան ու առաջադիմութեան վրայ... Սակայն—և այդտեղ է արևմտեան կեանքի մեծ յատկանիշը—վաղուց ի վեր նոյն այդ խոշոր, կղերավար և „աստուածավար" պետութիւնների ծոցում ծայր է տւել հեգելեան մեծագործ հակադրութիւնը, անտիթեզը, ծնունդ է առել կեանքի խորունկ ծալքերի մէջ նաև, աշխարհիկ, ազատական գաղափարը, որ փորել է աստիճանաբար կրօնական տիրապետութեան հիմքերը, յարուցել է սաստափելի ընդհարումներ ու փոթորիկներ և այսօր, վերջապէս, յաղթանակել է մի շարք ուժկավար երկիրների մէջ։

Երկու աստարէզներում էլ — թէ վերացական մտքի և թէ պետական-քաղաքական կեանքի աստարէզում — դա ռացիոնալիզմի, բանապաշտութեան հոսանքն է, որ շեշտւում է աստիճանաբար՝ ընդդէմ կոյր դօգմատիզմի՝ քաղաքակրթութեան պրօցէսի մէջ և որ կազմում է այդ քաղաքակրթութեան ամենաէական ստացւածքներից մինը։

Աստուածային արևելքում... ծայր չտւեց այդ փրկաբար ռացիոնալիզմը *); Ոչ կրօնի, ոչ էլ պետու-

*) *Rationalisme*.—դօգմատապաշտութեան և գերբնապաշտութեան (*supernaturalisme*) հակառակ հոսանքն է, որ հռչակում է մարդկային բանականութեան միակ հեղինակութիւնն ու ձեռնհասութիւնը, որ ուզում է քննել, վերլուծել բոլոր կրօնական, եկեղեցական դօգմերի էութիւնը առանց այդ բանականութեան տարերքներով, որ միանգամայն հեռացնում է այդ վերլուծման գործողութիւնից՝ հրաշքի,

թեան էւօլիւցիայի մէջ։ Եղան ազօտ նշոյլներ—գլխաւորապէս արաբական շրջանում—որ և շուտով մարեցին անծայրածիր խաւարի մէջ։ Մ է կ ս կ զ բ ո ւ ն ք տիրապետեց մշտապէս ու բացառապէս։ Դա կրօնն էր։ Դօգմէ էլ։ Դօգմը՝ առանց իր հակոտնիայի։ Դօգմատիզմը՝ առանց իր ախոյեան—սկեպտուիզեան։ Կոնսերվատիզմը՝ առանց լիբերալիզմի, ազատական հոսանքի։ Ռուտինը, աւանդութիւնը՝ առանց քննող, վերլուծող, առաջադիմող հոսանքների... Ազանդներ եղան, այո, բայց նրանք երբէք չը զարգացման այն աստիճան, որ ծնունդ տային խղճի ազատութեան դաւանանքին։

Եւ կեանքը լճացաւ։ Եւ ասիական տիտանը խորասուզուեց լէթարգիական մրափի մէջ։

Կրօնը իշխեց—և իշխեց միահեծան։ Նա տարածեց իր թունաւոր շունչը Իսլամի բովանդակ հասարակական կենցաղի վրայ։ Նա մտաւ օրէնսդրութեան մէջ, հաստատուեց քաղաքացիական ու պատժական իրաւագրքերումն։ Նա բազմեց՝ խրոխտ և վեհապանծ՝ մինիստրական ժողովներում, խորհուրդներումն։ Նա գնաց ղեկավարելու հաւատացեալների նիստ ու կացը, նրանց ամենօրեայ ժանր ու խաշոր գործողութիւնները, նրանց մտաւորն ու բարոյականը,—չափեց, ձևեց, կանոնաւորեց և կազապարեց մինչև յետին մանրամասները, ինչպէս չափում,

---

դ ե ր բ ն ա կ ա ն ի և „դերագոյն յայտնութիւնների" գաղափարը — իբրև հակառակ մարդկային առողջ դատողութեան—որ ձգտում է բացատրել Աւետարանի և բոլոր նման գրքերի „հրաշքները" ու առասպելները՝ զուտ բնական եղանակով։

կաղապարում են միլիտարիզմի հսկայական զօրանոցներում։

Բուն, անժուռնչ հնազանդութիւնը դարձաւ ամենուրեք —նշանաբան։ Եւ Մահմեդի հաւատամքը լաւագոյն միջոցն էր՝ մշակելու, կատարելագործելու այդ անձայն ու անպայման հնազանդութիւնը՝ իշխանութիւններին։ Մահմեդական թագաւորները, իշխանները, այդ հաւատամքի զօրութեամբ, ներկայացուցիչ ու արտայայտիչ էին աստուածային կամքի, գործում էին նրա անունով։ *Omnis potestas a Deo!* — „Ամեն իշխանութիւն Աստուծոյ մէջ է“... Հին սեմիտական աստուածապետութիւնը (*théocratie*) նոյնպէս հասնում է իր կատարելագործման Իսլամի մէջ, որի կղերը տոն է տալիս ամբողջ հանրային գործացման, ձուլելով իրարու հետ աստուածայինն ու մարդկայինը, սերտ, յարատև հնազօրդակցութիւն սահմանելով Աստուծոյ և մարդկանց միջև, երկնային սանկցիա տալով բոլոր երկրաւոր այլանդակութիւններին ու չարիքներին։

Իսլամ կղերը...

Մահմեդական հասարակութիւնների *élite*-ն էր նա երկար դարերի ընթացքում, միակ քիչ-շատ կրթուած դասը, ցեղի „ընտիր“ ու ղեկավարող հաւաածը։ Ամեն ուրիշ տեղ,—անգամ մեր հայ պատմութեան մէջ, այդ կրօնաւոր *élite*-ը, բացասական իր դերի հետ ունեցել է և դրական, նշանակալի մի պաշտօն, մատուցել է կարևոր ծառայութիւններ ազգի առաջադիմութեան, նրա իմացական քաղաքակրթութեան գործին. իսկ յանձին իր ուժեղ, տաղանդաւոր դէմքերի՝ նա մերթ ընդ մերթ արձարծել է—ուսման ու գիտութեան անհրաժեշտու-

թեան հետ—և մարդկային քաղաքացիական ազատութեան ոգին, բողոքել է այս կամ այն ձևով, ժողովուրդների կեանքը տրորող, այլանդակող չարիքների դէմ։ Մահմեդական կղերը առհասարակ դժկամութեամբ երես է դարձրել այդ կարգի մարգանքներից, նա ձգտել է միշտ՝ աւելի ևս խտացնել Ղուրանի սաւերները, և դրա հետ խտացնել տիրապետող խաւարը, նա ձգտել է մեկնաբանել այդ Ղուրանի դրութիւնները միշտ ի նպաստ երկրաւոր իշխանութեան և իր սեփական, դասակարգային տիրապետութեան։ Պահպանողական և դօգմապաշտ կրօնի մէջ՝ նա եղել է խորապէս պահպանողական և իր ընկերային-քաղաքական աշխարհահայեացքի մէջ... Աւելի ևս խտացած, չափազանցուած ձևերով՝ նա արծարծել է Ղուրանի մի այլ բացասական հրահանգը, որ թոյլատրում, արբագործում է հաւատացեալի ըմբոստացումն ու նահատակութիւնը՝ մ ի մ ի ա յ ն կ ր օ ն ի խ ն դ ի ր ն ե ր ու մ, միմիայն հաւատը պաշտպանելու և տարածելու նպատակով։ Առանձնապէս շեշտում է կղերի այդ չարաշուք գերը օ ս մ ա ն ե ա ն պատմութեան մէջ։ Հին արաբական շրջանում, ինչպէս և նորագոյն Պարսկաստանում, իսլամ կղերը փոքր ինչ տարբեր կերպարանքով է երևան գալիս։ Պարսկաստանում նա, ինչպէս տեսանք, աջակից էր սահմանադրական շարժումներին, թէպէտ և այդ աջակցութիւնը աւելի մասնակի, կցկտուր ու վաղանցուկ էր, քան սիստեմատիկ, շարունակական և հաւաքական։

Ամեն տեղ, սակայն, գրեթէ բոլոր իսլամական հատուածներին ու աղանդներին ընդհանուր է և յատուկ է՝

մեր նկարագրած կրօնական անհամբերողութիւնը, ճակատագրապաշտ ֆատալիզմը, զանգւածային մոլեռանդութիւնն ու դօգմայնութիւնը. գրեթէ բոլոր հատւածների մէջ՝ Ղուրանը գլխաւոր կանոնաւորիչն է հանրային յարաբերութիւնների և պետական մեխանիզմի։ Մասնաւորապէս Թիւրքիայում՝ իսլամական իրաւագրքի, Շէրիաթի սիստեմատիկ միջամտութիւնները ցեղային և միջցեղային կնճիռներում՝ ստեղծել է վազուց ի վեր, մանաւանդ հայ տարրի համար, անհանդուրժելի մի կացութիւն, որ մասամբ շարունակւում է, անգամ այսօր, սահմանադրական ռէժիմի տակ։

Այո, ամեն տեղ իսլամի և քրիստոնէի յարաբերութեանց մէջ շեշտւում է այդ տարկանոն և տարամերժ շէրիական օրէնքը, որ բղխում է նոյն Ղուրանի մշտադալար տղբիւրներից և որ միշտ կաշկանդում է իսլամ պետութեան զարգացումը, թոյլ չի տալիս, որ նա յարմարւի եւրոպական իրաւակարգին, թոյլ չի տալիս, որ պետական հաստատութիւնները ազատւին, մաքրւին աստիականութեան ժանգից և գրկեն անկեղծօրէն արեւմտեան գաղափարները։ Իսլամագաւան „միլլեթը“ ունի արդէն իր իրաւական կեանքը, միանգամ ընդմիշտ քրիստոնացած իրաւագիտական կօդէքսը, որ չի բղխում — արեւմտեան կօդէքսների պէս — մարդկային բանականութիւնից, այլ թարգման է „աստւածային կամքի“, արւած է իվերուստ Մարգարէի ու Ղուրանի միջոցով, արւած է, իբրև անձեռնմխելի, յաւիտենական և անսխալական օրէնսգիրք։ Կառավարութիւններ և ոյսութեաններ պէտք է շարժւին համաձայն այդ կրքի,

քաղաքական, պալատական վերիվայրումները չպետք է հակառակեն նրա տառին, և այսօրւան նորաբողբոջ թիւրք ու պարսիկ սահմանադրութիւնները ձգտում են ամեն վայրկեան հաւաձայնութեան մէջ դնելու երկու հակաժարտ, անհաշտելի էութիւնները — իսլամի այդ յետադէմ ու քարացած իրաւագիրքը և արեւմտեան ազատաշունչ իրաւակարգը։ Օսմանեան պարլամենտի և պարսից մէջլիսի մէջ մշակւած օրէնքները չպետք է հակասեն շէրիական օրէնքին... Եւ այդ պատճառով Եւրոպան միշտ սկեպտիկ է մահմեդական յեղափոխութիւնների նկատմամբ, թերահաւատ է դէպի նրանց բարոյագիտական, „ռէֆորմային ընդունակութիւնը“։

Բրիտանէութիւնը զբաղւում է գրեթէ միայն հաւատացեալի ներքին կեանքով, նա չունի յաւակնութիւն կանոնաւորելու մարդկանց բոլոր յարաբերութիւնները ու գործողութիւնները, նա արձակում է մի քանի ընդհանուր բարոյակրթական հրահանգներ, բայց հրաժարւում է սահմանելու և որոշելու անհատական իրաւունքների և պարտաւորութիւնների բովանդակ ու այլազան ամբողջութիւնը, թողնում է այն — պետութեան, օրէնքին։ Օրէնք՝ որ ծնունդ է բնական ու սոցիալական միջավայրի, մարդկային բանականութեան ու կամեցողութեան։ Իսլամի մէջ՝ կրօն և իրաւունք բղխում են նոյն աստւածային կամքից, հիւսւած են ազգակցութեան ամենանուրբ թելերով։ Կրօնը և „միլլեթը“ (ազգը)—միևնոյն բանն է... Ալլահը միանգամ ընդմիշտ գծել է իրաւունքներն ու պարտաւորութիւնները, որոնցից շեղւելը մահացու սրբապղծութիւն է..

Ղուրանը միանգամ ընդմիշտ և ամեն ոյն ժանրամասնութեամբ սահմանել է հաւատացեալի թէ ներքին և թէ արտաքին կեանքը, նրա յարաբերութիւնը իր իշխանի, իր նմաններին, կրօնակիցների, թշնամիների հետ. Ղուրանը մշտնջենապէս նրա ձեռքում կամ գլխուին է, թէ այն ժամանակ, երբ նա ծուում ու նամազ է անում, թէ այն ժամանակ, երբ նա իբրև գործի մարդ, գնում է ու վաճառում, կապում է, ստորագրում պայմանագիրները, դաշինքները, կամ թէ երբ նա, իբրև զինուոր, կատարում է իր պարտաւորութիւնները, կամ իբրև յանձաւոր, քաւում է իր յանցանքը *)։ Շէրիաթը նրա գլխուին է—իբրև գերագոյն ուղեցոյց — իր ամուսնական, ընտանեկան և քաղաքացիական կեանքի բոլոր պարագաներում, երբ նա իբրև հարկատու, վճարում է իր տուրքը կամ գնում է վկայելու դատական ատեանի առաջ։ Շէրիաթը այդ ատեանի առջև է միշտ, երբ մանաւանդ պէտք է լինում ընդունելու — աւելի ճիշտ, չ ը ն դ ո ւ ն ե լ ո ւ—քրիստոնէից վկայութիւնը այս կամ այն ծանրակշիռ, ժառանգական ու այլ տեսակ խնդրի մէջ... Շէրիաթը մահուան պատժի սպառնալիքով արգելում է ուղղափառին քրիստոնեայ կին առնել, արգելում է քրիստոնեային՝ ամուսնանալ մահմեդական կնոջ հետ, առանց նախապէս իսլամանալու... Եւ ահա այդ դրակօնեան, բարբարոս սպառնալիքով իսկ՝ խղճի ազատութեան գաւազանը ոտնահարուած ու խողխողուած — յայտնի չէ մինչև երբ...

*) *Johann Kresmarik, Beiträge zur Beleuchtung des Islamitischen Strafrechts, Leipzig* 1904. էջ 73։

Ամեն տեղ, Ղուրանի տառի ջօրութեամբ, քրիստոնեան „ոայեա“ է, հպատակ է, „ստոր ցեղ“ է ուղղափառ մահմեդականի աչքուն։ Ամեն տեղ օդարադաւան հպատակները քաղաքացի չեն, այլ սոսկ հարկատու և „իսլամի պաշտպանութիւնը վայելող օտարներ“ *)։ Եւ անգամ Պարսկաստանը, որ իր ազատութեան նւաճումը պարտական է, մի զգալի չափով, հայ բազուկին, իմացականութեան և զոհողութեան, — անգամ պարսիկ սահմանադրական պետութիւնը աներևակայելի փոքրոգութեամբ ղլանում է հայ տարրին ամենահամեստ զիջումները, նայում է այդ տարրի վրայ, որպէս օտար ստորադրեալի՝ որ երբէք չպիտի բարձրանայ մինչև տիրող ցեղի մակերևոյթը, որ երբէք չպիտի մասնակցէ վինուրական ծառայութեան, չպիտի վարէ մինիստրական պաշտօններ և այլն։

Անհաւասիկ Իսլամի այն „անդարմանելիօրէն անձուկ ոգին“, որի վրայ ակնարկում է Ռընանը։

Եւ մենք կը տեսնենք մեր տեսութեան ընթացքում, թէ ինչպես այդ „ոգին“, այդ խորական և չարաշուք պատուհասը մոլեգնօրէն ծառանում էր ամեն անգամ, երբ այս կամ այն սուլթանը, Եւրոպայի ճնշման տակ, փորձում էր կիրառելու Հաւասարութեան սկզբունքը տարբեր, այլազան ցեղերի միջև...

Երկու տարբեր ուղղութիւններ — անառարկոյ։ Այդպէս բնորոշեցինք արևմտեան և արևելեան, մահմե-

*) Այդ խօսքերով էր պատասխանում մի պարսիկ հեղինակաւոր երեսփոխան — երեք տարի սրանից առաջ — Մէջլիսի մէջ ընկեր Ց. Միրզայեանցի արտասանած ճառին, պինւորագրութեան առիթով։

դական քաղաքակրթութիւնը։ Ձափազանցւած, սխալ ձևով չմեկնաբանւի այդ բնորոշումը։ Արևմտեան քաղաքակրթութեան գերազանցութիւնը, հարկաւ, չի պայմանաւորւում սոսկ կրօնի առաւելութիւններով, քրիստոնէական դօգմի ու բարոյախօսութեան յատկանիշներով։

Քրիստոնէութիւնն ևս դարեր շարունակ հալածեց ազատ միտքը, թշնամական դիրք բռնեց դէպի գիտութիւնն ու ռացիոնալիզմը, բանադրանքի ենթարկեց գալիլէիներին ու Բրունօներին, խարոյկներ բարձրացրեց հարիւր հազարաւոր „հերետիկոսների“ դէմ և ինկվիզիցիայի, հաւատաքննութեան ոճիրներով սևացրեց միջնադարեան պատմութիւնը։

Միւս կողմից՝ մահմեդական անշարժութիւնն ևս չի կարելի վերագրել միմիայն իսլամ կրօնի առանձնայատկութիւններին։

Մէկ թէ միւս պարագայում՝ պատճառների ամբողջութիւնը ընդգրկելու համար, պէտք կը լինէր իմնել մինչև այդ երկու տարբեր հասարակութիւնների օրօրոցները, ճանաչել, ուսումնասիրել նրանց՝ ժամանակներում, ուսումնասիրել սերտ կապերը, յարակցութիւնը շրջապատող բնութեան հետ, այն յարատև ու բռնակալ ազդեցութիւնները ու հակազդեցութիւնները, որ գործել են՝ տիեզերական միջավայրը, կլիմաներն ու աշխարհագրական դիրքերը, ծովերն ու գետերը, հողերի որպիսութիւնը, բուսականութիւնը, անուններ և հարիւրաւոր այլ պայմաններ ու պատճառներ, որոնք կռել և դարբնել են հասարակութիւնների ֆիզիկական և հոգեբանական տիպը այն անդրագոյն շրջաններում։

Ոչ. կրօնը միակ վճռական ազդակը չէ, — մանաւանդ արևմտեան քաղաքակրթութեան մէջ։ Բայց և, անշուշտ, մեր յիշատակած կրօնական տարբերութիւնները ունին իրենց որոշ տեղը երկու քաղաքակրթական ուղղութիւնների — արևմտեանի և արևելեանի — ուժգին հակամարտութեան մէջ։ Ընտարակոյս, քրիստոնէութիւնը — շնորհիւ գուցէ իր սկզբնական կորիզի յարաբերական մաքրութեան, շնորհիւ թերևս իր հիմնադրի քարոզած մի շարք վեհանձն, համամարդկային սկզբունքների, որոնք այլանդակօրէն խեղաթիւրեցին յետագայում կղերի դասակարգային տիրապետութեան բուրայի մէջ — անտարակոյս, ասում ենք, քրիստոնէութիւնը ցոյց տուեց ինքզինքը պատմութեան մէջ շատ աւելի ճկուն, առաձգական, հաշտարար ու յարմարուող՝ հանդէպ ամեն տեսակ նոր, „մօգերն“ հոսանքների, հանդէպ ժողովրդապետութեան, հաւասարութեան և եղբայրութեան նշանաբանների։ Նա յարմարուեց անգամ ամենամօգեռն հասարակական հոսանքին — Սօցիալիզմին։ Ո՞վ չգիտէ, որ հին ու նոր սօցիալիստական ուսմունքներից շատերը կոչ են արել յաճախ նախնական քրիստոնէութեան հաւասարապաշտ հրահանգներին։ Ո՞վ չգիտէ նաև, որ այդ նոյն նախնական քրիստոնէութեան և հաւասարապաշտ կօմմունիզմի անունով բռնկւել են մինչ-նադարեան Եւրոպայում մի անվերջ շարք սօցիալական շարժումներ, անաբապտիստ աղանդաւորների, տաբօրիտների, գիւղացիների մեծածաւալ, զանգւածային շարժումներ, որոնք արեան հեղեղներով ոռոգեցին հասարակական զարգացման ճանապարհը, ցանեցին արգասաւոր սերմերը աւելի երջանիկ ապագայի համար, նախա-

պատրաստեցին ժամանակակից սոցիալիզմի համաշխարհային հոսանքը։

Իսլամիզմը սկզբից արդէն նեղ, տարաժերժ ոգի ժառանգեց և դրանով իսկ շեշտեց իր անբարեհաճ դիրքը դէպի ճշմարիտ քաղաքակրթութեան հրամայականները։

Մարդկանց, բոլոր մարդկանց, հաւասարութեան և եղբայրակցութեան նշանաբանը,—որ այդ քաղաքակրթութեան վախճանական ու գերագոյն նպատակներից մինն է —խորթ էր միշտ Իսլամի համար, խորթ է մնում և ցայսօր։ Կրօնական խարութիւնը, իշխողի և հպատակի, ուղղափառի և „ուայեա"ի խորունկ անտագօնիզմը՝ ղեկավարող սկզբունքն է միջցեղային քաղաքականութեան։ Քրիստոնեայ հայութիւնը դեռ ազգ էլ չէ, այլ սոսկ միայն կրօնական համայնք։ Եթէ անգամ նա ստանայ էլ ապագայում աւելի լայն ազգային ինքնուրոյնութիւն, եթէ նա *de facto* օժտուի իսկ գործադիր իշխանութեան և գործօն ազգայնութեան ստորոգելիներով—նա դարձեալ *de jure* դիտուելու է միշտ, իբրև կրօնական մի համայնք։

Դեռ Թիւրքիայում՝ քրիստոնեայ ազգերը շօշափելի թուական ու որակական ուժ կազմելով, կարող են ապագայում մի յարմար յեղաշրջումն մտցնել ուժերի փոխյարաբերութեան մէջ, կարող են նւաճել թերևս լիակատար իրաւահաւասարութիւն։ Իսկ այնտեղ, ուր քրիստոնեաները կազմում են մի չնչին թիւ (ինչպէս, օրինակ, Պարսկաստանում), այնտեղ նրանք դատապարտուած են—յոյսն էլ չէ, մինչև երբ — կրելու „ուայեա"ի, իրաւական և իրական *ստորադրեալի* ոչ-պատուաւոր ճակատագիրը։

Այդպէս — միջցեղային յարաբերութիւնների մէջ։ Հապա ներքո՞ւժ... Ի՞նչ պիտի լինի բուն իսկ իսլամ մարդկութեան վիճակը։ Ե՞րբ արդեօք կը խորտակի վերջնականապէս նրա դարաւոր անշարժութեան սառուցը, այդ սարսափելի մառյնութիւնը, որի վրայ արձիճային լեռան պէս ծանրացած է իսլամական դոգմը։ Ե՞րբ արդեօք կը թօթափի այդ ահաւոր լուծը։ Ե՞րբ կը ծնէ մահմեդական աշխարհը... մի Լութէր։

Եւրոպական Լութէրը իր ծաւալուն, վերանորոգչական շարժումով արդիւնք էր թէ քննադատական մտքի բազմադարեայ զարգացման և թէ տնտեսական-դասակարգային որոշ պայմանների ու ժողովների, արդիւնք էր մասամբ այն խուլ, երկարաձև ու յարաճուն դժգոհութեան՝ որ մթերւել էր արևմտեան զանգուածների մէջ, ընդդէմ պապական հարստահարիչ և կեղեքիչ տիրապետութեան։

Ե՞րբ կը գայ, կը հասունանայ այդ քննական միտքը և այդ փրկարար դժգոհութիւնը մահմեդական մտաւորականութեան և տրորւած, ֆանատիզմի ու ֆատալիզմի թոյնով մշակւած զանգուածների մէջ...

Թւում է թէ մինչ այն՝ բոլոր կատարւած ու կատարելիք ազատական նւաճումները պիտի մնան հարկադրաբար կիսատ ու երերուն. թւում է թէ մինչ այն՝ իսլամ մարդկութիւնը չպիտի կարողանայ հաշւել անկեղծօրէն արևմտեան քաղաքակրթութեան իրական նշանաբանների հետ, գրկել անկեղծօրէն համամարդկային ազատութեան և հաւասարութեան աւետարանը։

III

ՅԻՐԱՊԵՏՈՂ ՅԵՂԸ

Բնաւորու. նախատագիր.—Սեպր եւ ճօղան.—Խաճնարած եւ երկրագործ ժողովուրդներ.—Բարբարոսութիւն եւ հաղտակրթութիւն.— Աշխարհակալող կարաւանը եւ իր պետր.— Ցեղի առանձնայատկութիւններր.— Զուն դէպի Հայաստան եւ Փոքր Ասիա.—Պետութիւնր՝ ցեղի հայելին.— Չինւորական տարր գերիշխող.—«Զուս բռնապետութեան» տիպարր.— Սոցիալական բոյլ շերտաւորումն.— Ազնւականութեան բացակայութիւնր եւ հետեւանքր —Պարագիտիզմ եւ ամուլութիւն.—

Կենտրօնական Ասիայի լայնածաւալ ստեպներ ո ւ մ է, որ պիտի փնտրել կորիզը, նախանիւթը այն ուշագրաւ սոցիալական տիպարի — օսմանեան զանգուածի — որ դարեր առաջ աշխարհակալ հեղեղի պէս յորձանք տուաւ դէպի Հայաստան ու փոքր Ասիա, այնտեղից յաղթականօրէն սլացաւ դէպի Արեւմուտք, գողացրեց մի վայրկեան ամբողջ Եւրոպան, Քրիստոնէութիւնը, ապա վերստին գահավիժուեց իր ահարկու մեծութեան զէնիթից, յետ նահանջեց դէպի Բոսֆոր ու Անատոլիա, հաստատուեց աշխարհագրական մի էքնազ,

առանձնաշնորհեալ միջավայրում, ուր չնայեած դարաւոր շփումներին աւելի բարձր, քաղաքակիրթ ցեղերի հետ, չնայեած շարունակական խառն, բռնի ամուսնութիւններին՝ ձեաց միշտ նոյն յետադէմ տիպարը, նոյն յաւիտենական անչափահասը քաղաքական և կուլտուրական տեսակէտից, ըմբռստ հանդէպ արդիւնաբերող, արգասաւոր աշխատանքի, ծոյլ ու իներտ համաշխարհային պրօգրէսի ճանապարհին, վարժւած միայն հրամայելու և հարստահարելու, բայց անվարժ՝ արտադրելու, ստեղծագործելու և ժանաւանդ կառավարելու...

Այնտեղ, Ալտայի հոզմակոծ բարձունքներում է՝ որ կազմւել են նրա առաջին աստղատակող կարաւանները. այնտեղ, իր նախնական օրրանի մէջ է, որ նա ստացել է իր դրական և բացասական գծերը. այնտեղից, այն հեռաւոր և լայնարձակ հորիզոններից է, որ տարել են մարդկային ամենամեծ հեղեղները — հոների, մոնղոլների, թաթարների, սելջիւկների — որ անցել են հրով ու սրով հսկայական տարածութիւններ, կտակելով սերունդներին դարհուրանքի անլուր էջեր։

Որքա՜ն մեծ է բնական, ֆիզիկական ազդակների դերը, որքա՜ն ուժեղ և վճռական է այն վաղեմի ժամանակներում՝ աշխարհագրական միջավայրի ազդեցութիւնը մարդկային համախմբումների վրայ...

Բնութիւնն ինքն է կռել ու դարբնել ցեղի յատուկ նկարագիրը, կարելի է ասել՝ ձակատագիրը։

Խաշնարած, թափառական հօրդաներ էին։ Միջավայրը այդպէս էր հրամայում։ Ստեպը բռնակալօրէն դնում էր իր կնիքը իր հիւրընկալած հօրդաների

սոցիալական կենցաղի վրայ։ Ստեպը, խոտի անեզր տարածութիւններով, որոշում էր բնակիչների անհրաժեշտ պարապմունքը, բնաւորութիւնը, խառնուածքը։ Ստեպը ի վերջոյ խլացրեց նրանց մէջ գժտարին, ճիգառատ աշխատանքի տենչը և զարգացրեց աւարելու, յափշտակելու, ուրիշների վաստակով ապրելու ցանկութիւնը, խթանեց ռազմական, աշխարհակալող բնազդը...

Անծայրածիր ու խոտաւէտ լեռնագաշտ՝ ձիերի, ոչխարների անհաշիւ հօտերով։ Եւ նրանց հետ՝ ցիր ու ցան մարդկային նախիրներ՝ կիսավայրենի, նահապետական կենցաղով։ Խոտը — մշանջենաւոր և անսպառ ճարակ հօտերի համար։ Ձին — սնունդի նոյնքան առատ մի աղբիւր մարդկանց համար՝ իր արտադրած կաթով, կումիսով։ Ձին — մանաւանդ, հաղորդակցութեան ու շարժման մի գերազանց գործիք, մի սքանչելի լոկոմօտիվ։

Պէտք էկար՝ ոչ գետինը հնկելու, ոչ անտառներ կտրտելու, ոչ ճահիճներ մաքրելու, ոչ ճամբաներ հարթելու և շտկելու։ Ամեն բան պատրաստ էր մայրբնութեան ծոցում, պատրաստ էին և ճամբաները։ Ստեպը — ամենուրեք հարթ ու հաւասար, ամենուրեք ճանապարհ ու արօտավայր։

Հօրդան ածում է,— ածում է և խաշինքը պէտք են նոր արօտատեղեր, նոր սնունդ ու հարստութիւն։ Եւ կարաւանը շարժւում է միշտ դէպի առաջ, շարժւում է մի խիզախ առաջնորդութեամբ դէպի հեռու և անծանօթ հորիզոններ... Նա մշտական շարժման մէջ է՝ նոր հողեր գրաւելու, նոր արկածներ փնտրելու մտա-

հոգուբեռամբ։ Տնտեսական կարիքը միակ շարժիչ-պատճառը չէ։ Որքա՜ն ուժեղ է դեռ այն հեռաւոր շրջաններում մարդկանց հրամանատար-անհատների մէջ՝ ներքին, հոգեբանական մղումը, իշխելու, տիրապետելու աենչը... Ինչե՞ր չ'արին այդ մի քանի մօնղոլատիպ հերոսները — մի Ատտիլա, մի Չինգիզ խան, մի Լանկ-Թամուր — իրենց անյագ և փառատենչ ախորժակներով, իրենց ահեղ, աշխարհասասան կամքի ուժով...

Ցորձանքը առնում է իր յարաճուն ալիքների մէջ նստակեաց, խաղաղ, երկրագործ ժողովուրդներին, որոնք մարզուած խաղաղասէր առաքինութիւնների մէջ՝ անկարող են ցոյց տալ երկարատև դիմադրութիւն։ Եւ խաշնարած, թափառական ցեղերը նոր հողերի ու շարժական գոյքերի հետ՝ նւաճում են նաև մարդկանց, հպատակեցնում, ստրկացնում... Եւ կարաւանը նորէն շարժւում է։

Երկու տարր—ասպատակող հօրգայի մէջ։ Մինը ազատ, միւսը ստրուկ։ Մինը՝ պատերազմող և հրամայող, միւսը նւաստ ծառայող, բոլոր սև ու չարքաշ աշխատանքների կատարող։ Ցիրապետող, պատերազմիկ տարրը խսկզբանէ խորշում էր այդ չարքաշ և ճիգոտ աշխատանքից, արդիւնաւոր արհեստներից, հողերի, մարգերի, այգիների մշակումից, ապա և աւելի ուշ՝ առևտրից ու արդիւնաբերութիւնից։ Նա խորշում էր ոչ միայն այն պատճառով, որ անընդունակ էր յարատև, արդիւնագործ ճիգերի, այլ և որովհետև համարում էր այն՝ անպատիւ գործ, ստրկի գործ... Ռազմիկ ցեղը վաղուց ի վեր սովորեց արհամարհել դժւարին, սեղծագործող

աշխատանքը—իբրև մի բան, որ ստոր էր իր, ռազմիկի, արժանապատուութիւնից—և ստանձնեց սոսկ առաջնորդի, հրամանատարի դերը, ուղղեց իր ճիգերը դէպի բոլորովին այլ տեսակի մարզանքներ, դէպի կռիւ ու նաճուժ, յափշտակութիւն և կեղեքում...

Այդպէս ահա առաջացաւ այն հասարակական պարազիտիզմը—հացկատակային որամադրութիւնը—որի մասին ակնարկեցինք մեր առաջին գլխի մէջ։

Այդ աղէտաւոր որամադրութեամբ էր, որ թիւրքերը եկան հաստատուեցին Հայաստանում։

Այդ նոյն աւերիչ հակումներով է՝ որ անյիշատակ ժամանակից ի վեր հաստատել է նոյն աշխարհագրական միջավայրում մի այլ նօմադ, խաշնարած հօրդա—քիւրդը։

Եթէ հայկական դարաւոր ողբերգութիւնը մեր նախընթաց յօդուածների մէջ բնորոշեցինք մասամբ իբրև արդիւնք կրօնական, իսլամական անհաշտ թշնամութեան, ապա միւս կողմից պիտի ասենք, որ նա մասամբ էլ արդիւնք է, մէկը բիւրաւոր արդիւնքներից այն հսկայ և համատարած անտագօնիզմի, որ եղել է տասնեակ դարերից ի վեր մարդկութեան երկու մեծ տնտեսական-սոցիալական տիպարների միջև—նստակեաց հողագործների և թափառական խաշնարածների, — մի անտագօնիզմ՝ որ իր յարուցած բաղխումներով և պատերազմներով լցրել է ամբողջ հին աշխարհը, Ատլանտեանից մինչև Խաղաղ Ովկիանոսը։ Դա պայքարն է՝ քաղաքակրթութեան և բարբարոսութեան։ Ժողովուրդները փոփոխում են միջավայրը, անցնում են դէպի

աւելի նպաստաւոր հօրիզոններ, քայց նախնական ցեղային յատկանիշները—նրանք, որոնք ժշակւել են ցեղի հաւաքական կեանքի արշալոյսին, գոյութեան կռւի յորձանքներում, բնական միջավայրի բոլոր խճողւած գործօնների ազդեցութեան տակ—այդ յատկանիշները յարատևում են դարեր ու դարեր, նրանք շա՛տ դանդաղ և շատ սակաւ են ենթարկւում նոր, ժեղմարար, քաղաքակրթիչ ազդեցութիւններին, երբեմն անգամ տրամադիր են յաւերժանալու, որպէս անէծք, ճակատագիր... Քիւրդը դարեր շարունակ զանգւածօրէն յամառեց նոյն նախնական, գրեթէ բ ն ա կ ա ն վ ի ճ ա կ ի մ է ջ (*état de nature*). Թիւրքը մի յայտնի չափով փոխւեց իր նոր աշխարհագրական միջավայրում, յարմարւեց նոտակեաց պարապմունքներին, այնուամենայնիւ նրա մէջ ևս ընդհանրապէս յարատևեցին — և այսօր տակաւին շեշտւած են—հին բարքերն ու առանձնայատկութիւնները, ասիական տեպների մէջ վաստակած հակումները. նա դեռ ճնում է էապէս նոյն պատերազմիկ, հրամայող ու հարստահարող տարրը իր այլացեղ, խայտաբղետ միջավայրում, նոյն բնազդական հակառակորդը շինարար, քաղաքակրթիչ աշխատանքի, գիւղարին և յարատև ճիգ պահանջող մարզանքների։

Ի՞նչ էր նա իր պատմութեան արշալոյսին։

Ամենապերճախօս վկայութիւնը տալիս են ցեղի լեգենդները, առասպելները։ Նրանցից մէկի համաձայն՝ թիւրքերի

„Նահապետ Օխուզը չի տւել իր զաւակներին ոչ գութան և ոչ գիրք, այլ միայն նետ և աղեղ“... Դրանով իսկ նահապետը որոշադրել է իր սերունդների ապագան։

Նոյն լեգենդան ներկայացնում է թիւրքերին, „որպէս ռազմիկ, աւերիչ և թալանչի մի ժողովուրդ... Երեք առանձնայատուկ գծեր, որ գտնում ենք և յետնորդների մէջ և որ հոգիս թէ մեղմացած են կատարած առաջադիմութեամբ" *):

Մարդած ձիարշաւի և ռազմական արուեստի մէջ, վարժուած դեռ մանուկ հասակից սրի, նետի և աղեղի գործածութեան, ծարաւ առնական թռիչքների և արկածների, ասպատակութեան ու աւարառութեան, անվախ և քաջասիրտ, արհամարհող կեանքի, պատուի ու սեփականութեան, արհամարհող անգամ իր սեփական գոյութեան, սակաւապէտ, ժուժկալ և ուժեղ ֆիզիկապէս, զինուած, մի խօսքով, աշխարհակալող ցեղերի բոլոր անհրաժեշտ առաքինութիւններով՝ թիւրքական նախկին կորիզը թաւալւել է Ասիայի անծայր դաշտավայրերում, Ստեպի մերթ ժպտուն, կանաչազարդ, մերթ գաժան և քաշուն անհունութեան մէջ, թաւալւել է՝ աստիճանաբար աճելով ու զօրանալով, նոր հողեր գրաւելով ու աւերելով, նոր ցեղեր ստորադրելով և իրեն հետ քարշ տալով, հասել է ի վերջոյ հնկայական չափերի, գրոհ է տւել—խոտի, արօտների ճանապարհով—միշտ հեռու, դէպի արեւմուտք, անցել է գահավիժուող մրրկի պէս, առանց որևէ հետք, յուշարձան թողնելու իր ետքից, առանց հիմնել կարողանալու այդ ահագին ճանապարհի վրայ մի տևական պետութիւն, մի շատ թէ քիչ հաստատուն քաղաքական կազմակերպութիւն։

Եւ, սակայն, նա չէր բնաւ ներկայացնում անկարգ,

*) Բառացի մի թիւրք գրողից. *H. Ganem, „Les Sultans Ottomans"*, էջ 8—9։

անբշխան, քաօսային մի խաժամուժ... Եղել են, անտա-
րակոյս, այդ ճարակող հօրդայի մէջ քաղաքական կազ-
մակերպութեան սաղմեր։ Ո՞վ էր ցեղի առաջնորդը...

Սօցիօլօգիան մի ընդհանուր և որոշ պատասխան ունի
բոլոր նման խաչնարած ու պտտերազմիկ ցեղերի հան-
դէպ։ Շատ վաղաժամ, զանգւածներից առաջ է գալիս
մի նշանաւոր անհատ, օժտւած արտակարգ յատկու-
թիւններով, մի կախարդ, աւելի յաճախ մի հերոս, մի
տարիքոտ, փորձւած, հեղինակաւոր կարիճ, մի յանդուգն,
արիասիրտ ռազմիկ, որ դիւրութեամբ ենթարկում է
մարդկային երամը իր հմայքին ու կամքին... Աշխարհա-
կալող ցեղի շէֆը — աշխարհակալող կ ա ր ա ւ ա ն ի
ա ռ ա ջ ն ո ր դ ն է, հրամանատարը։ Ամենից կտրիճը
և ամենից շրջահայեացը։ Միանգամայն ուղեցոյց,
„վալադ“ և զինւորական հրամանատար։

Նա կը մեծանայ և կը զօրանայ յաղթութիւնների
և նւաճումների հետ։ Նա կը խմբէ ժամանակով իր
շուրջը բազմաթիւ օգնականներ, ենթաշէֆեր, մի ամ-
բողջ զինւորական մարմին, դասակարգ, որից և կը բղխէ
հետզհետէ մի տեսակ կառավարութիւն, պետութիւն։
Նա կը յենւի այդ սպայակոյտ-դասակարգի վրայ (ապա-
գայի ե ն ի չ ե ր ի ն ե ր ի)՝ միանգամայն հնա-
զանդ պահելու համար զանգւածները, նիւթելու հա-
մար նորանոր պատերազմներ և նւաճումներ։ Նա կը
կենտրոնացնէ հետզհետէ իր անձի մէջ կառավարելու,
դատելու և պատժելու պաշտօնները։ Նա կը դառնայ
ապագայում բոլոր գրաւած հողերի և ցեղերի մի-
հնձան սեփականատէրը և միլիոնաւոր հօրդայի ճակա-
տագրի տնօրինող...

Ահեղեան մի զօրավար, բացարձակ լիազօրութիւններով սպառազինուած մի շէֆ, որի հանգէպ գանգուածները պարտաւոր են ցոյց տալու կոյր, անպայման, անժուռնչ հնազանդութիւն... Ապագայ սուլթանն է դա և ապագայ սուլթանական բռնապետութեան սաղմն է, որ դրուում է արշաւանքների մեծ ճամբու վրայ, նախքան հասնելը փոքր Ասիային և Բոսֆորին...

Եւ յայտնի է, հասարակական գիտութիւնը վկայում է, որ գոյութեան պայքարի մէջ այդ բացարձակ, աբսօլիւ բռնապետութիւնը եղել է աջողութեան, յաղթանակի ամենագլխաւոր պայմաններից մին։ „Հասարակութիւնների գոյութեան կռւում—ասում է Սպենսեր — հաւասար պայմանների մէջ յաղթանակող եղել են նրանք, որ ենթարկւել են ամենախիստ, ամենազօրաւոր հպատակութեան՝ իրենց շէֆերին, թագաւորներին... Քանի աւելի ուժեղ է եղել զուտ մեքենական դիսցիպլինը, կարգապահութիւնը, այնքան աւելի ուժեղ է եղել —այն հեռաւոր ժամանակներում—և յաղթելու շանսը։

Աւելին կայ։ Բացարձակ բռնապետութիւնը եղել է ոչ միայն սոցիալական անհրաժեշտութիւն, այլ և մի քայլ դէպի առաջ, պրօգրէսի, առաջադիմութեան մի հանգրուան. և նոյնիսկ, իրրև ժամանակաւոր մի հաստատութիւն, նա որոշ չափով խթանել է քաղաքակրթութիւնը։ Այդպէս է եղել ընդհանրապէս պատմութեան մէջ։ Մասնաւորապէս Թիւրքիոյ մասին—ինչպէս կը պարզենք—հարկ է խօսել փոքր ինչ վերապահութեամբ...

Պատերազմը դառնալով ժշտնջենական՝ առաջնորդն ևս, որ սկզբներում ընտրելի էր և փոփոխելի համայնքի կողմից, դառնում է հետզհետէ ժշտագոյ, անփոփոխելի։ Նրա իշխանութիւնը ի վերջոյ դառնում է ժառանգական։ Այդ հանգամանքին զօրաւորապէս նպաստում է կրօնը, նախնական հաւատալիքները, հերոսական ժեռելների, նախնիքների պաշտամունքը։

Նրա զօրութեամբ՝ իշխող առաջնորդը — իբրև յաջորդ մի հզօր ու պաշտուած հրամանատարի — հռչակւում է, որպէս հաղորդակից հօր աստուածային բնութեան և դրանով իսկ ստանում է անսահման լիազօրութիւններ... Սկզբներում ցեղի հրամանատարը հիմնում էր իր ազդեցութիւնը սոսկ իր անձնական արժանաւորութիւնների վրայ — արիութեան, հմտութեան, փորձառութեան, մտաւոր կամ ֆիզիկական կարողութիւնների վրայ։ Այժմ նա աւելացնում է այդ բնական առանձնայատկութիւններին՝ գերբնական յատկանիշներ։

Կրօնական հաւատալիքներն, այո՛, աւելի ևս ամրապնդեցին այդ անմռունչ հնազանդութիւնը շէֆերի հանդէպ։ Եւ դա անցաւ ժառանգաբար, սերնդէ սերունդ, գարձաւ սովորոյթ, աւանդութիւն։ Բոլոր նախնական համայնքների մէջ ահագին է սովորոյթի ուժը, նւիրւագործւած սրբազան հաւատալիքներով, ժեռել-աստւածների կամքով։ Սովորոյթը, աւանդը անգիր օրէնքն է այդ նախնական ցեղերի մէջ. ինքը ընդհանուր հրամանատարը — աւելի ուշ՝ թագաւորը — նոյն սովորոյթի և աւանդութեան օրգանն է, նրանց հաւա-

տարիմ կամակատարը. և եթէ խիզախէ դէմ գնալ նրանց՝ գահազուրկ կը լինի։

Այդպիսով իրօք մեռելներն են իշխողը և կառավարողը... Այդ տեսակ ներշնչումներով և այդ ոգով կըրթուեց ու դաստիարակուեց անյիշատակ դարերից ի վեր մեզ տիրապետող ցեղը։ Ոչ մի ուժ յետագայում, ոչ մի թարմարար, բարեխառնող հոսանք չ'եկաւ մեղմելու, փափկացնելու սովորոյթների այդ գրանիտիայ ապառաժը։ Իսլամը աւելի ևս քաջալերեց ժահաշունչ ոուտինը, աւելի ևս ուժ տուեց աւանդապաշտութեան այդ հսկայ ու ալլասեռող պատուհասին, որի առթիւ խօսել ենք արդէն։

Այժմ հետևենք ցեղի արշաւին։ Մեծ կարաւանը ուղղւում է Թուրքեստանի և Իրանի վրայով դէպի Հայաստան և Փոքր Ասիա։ Թարմ, կորովի և ռազմական ուժերի առջև, վին ժիւսի եռանից խռնարհւում են այդ հիւծւած և ուժասպառ երկիրները։ Ընկնում է արաբական խալիֆութիւնը, ընկնում է նւաստացած, առաջադէմ Պարսկաստանը, շառաչումով խորտակւում է և ալևոր Բիւզանդը, ներքուստ մշակւած անվերջ երկպառակութիւններով, տարրալուծւած, ապականւած... Անվեհեր ձիաւորները ամեն ինչ ոտնակոխ են անում իրենց յաղթական առաջխաղացութեան ժէջ, և... առաջին քայլերից իսկ ժառնում են իրենց բնութեան ճակատագրական արատը. նրանք իշխում են իրենց նւաճած ցեղերի վրայ, առանց կարենալ կառավարելու. ստորադրում են իրենցից բարձր, քաղաքակրթւած պարսիկներին, բայց ստիպւած են նրանց աջակցութեանը

դիմելու՝ երկրի մէջ կարգ ու կանոն սահմանելու հա-
մար։ Այդ գիծը յարատևեց նրանց ամբողջ պատմու-
թեան ընթացքում, երբէք նրանք չկարողացան կատա-
վարել հպատակներին, սերտ կապեր հաստատել նրանց
հետ, այլ մնացին միշտ օտարները, միշտ հիւրեր
իրենց գրաւած երկիրների մէջ...

Երիտասարդ բռնակը, յաղթանակներով քաջալերուած,
առաջ գնաց—միշտ դէպի Արևմուտք—կոյր, տարերային
մղումով, առանց նպատակի պարզ գիտակցութեան։

Մի նոր ուժ եկաւ արտակարգ թափ ու սլացք հա-
ղորդելու գահավիժուող հօրդաներին։ Այնտեղ, արաբ-
ների և պարսիկների միջավայրում, մահմեդականու-
թեան հռչակաւոր օրրանի մէջ, ասիական խաժամուժը
—մատնելով հանդերձ իր կատարեալ անկարողութիւնը
շինարար, կազմակերպիչ աշխատանքի ասպարէզում—վա-
տակեց մի նոր խթան, որդեգրեց մի մեծ, հզօր գա-
ղափար... նա գրկեց Իսլամը։

Եւ... մի նոր աշխարհ ծնունդ առաւ երկու կարող
ազդակների—ցեղի և կրօնի, թիւրքի և Իսլամի
—ամուսնութեամբ, դաշնակցութեամբ։ *L'alliance des turcs avec l'Islam enfanta un monde* *) — ճիշտ է
ասում Լավիս։ Այն ժամանակւայ ասիական և եւրո-
պական քաօսի ու հատատարած անիշխանութեան մէջ՝
դա մի ամեղ ու պատկառելի ուժ էր, որ բարձրանում
էր հորիզոնում։

Երկու ուժերն էլ—ցեղ և կրօն—համանման տրա-

*) Թիւրքերի դաշնակցութիւնը Իսլամի հետ մի նոր աշ-
խարհ ծնեց։

մագրութիւններով օժտուած՝ երկուսն էլ վառուած յարձակողական ախորժակներով, նուաճելու, իշխելու, յաղթելու անդիմադրելի տենչով։ Եւ միևը միւսին օժանդակեց, ուժեղացրեց։ Իսլամը տագնապի մէջ էր և գրեթէ արդէն մարելու վրայ. բազաքականապէս սպառւել էին նրան կրող ցեղերը, սպառւել էին ամենից առաջ՝ արաբները։ Նոր ցեղը թարմացրեց հին կրօնը, կեանք ու ոգի ներշնչեց և դարձրեց այն մի հզօր ու ծաւալուն պետութեան պաշտօնական հաւատամք։

Իր հերթին, Իսլամը աւելի ևս բորբոքեց նուաճողական տենդը թիւրքերի մէջ. նա ունեցաւ մի նոր, ահարկու և վրէժխնդիր ոգեկիր, յանձին Օսմանի..., այսօրւայ թիւրքական արքայատոհմի և կայսրութեան հիմնադրի։

Մի արիւնոտ ոգեկիրայ և մի արիւնոտ, աշխարհադղրդ վրիժառութիւն, ուրվա՜նշ։ Այդ անուան հետ կապւեց այնուհետև ասիական ստեպներից դուրս վիժած հրաբխային հեղեղը, որ գնում էր պատժելու քրիստոնէութիւնը, քաւել տալու այն բոլոր նւաստացումները ու արհաւիրքները, որ քրիստոնեայ մարդկութիւնը պատճառել էր Իսլամին՝ խաչակրաց արշաւանքների ժամանակ։

Ցեղը արդէն նուում էր աշխարհակալութեան տենդով — կրօնը եկաւ հրահրելու այդ տենդը, վառելու, հիպնոզելու մոլեգնած զանգւածները վրէժխնդրութեան երկնային պատգամներով։ Նա եկաւ ոգեւորելու այդ խոպան, նահապետական զանգւածներին, որ հաւատի համար կռւող ու նահատակւողները կարժանանան Մահմեդի երանաւէտ դրախտին, որ այդ գալոց հրապուրիչ

դրախտի հանգէպ՝ ներկայ կեանքը երկրորդական, արհամարհելի արժէք ունի, որ „ՋՀադը“, սրբազան պատերազմը յանուն կրօնի՝ գերագոյնն է փառքերից ու պարտքերից։

Եւ սկսեց մի նոր, աւելի շքեղ ու շառաչուն դիւցազնամարտի դարաշրջան։ Օսմանը — մի անվեհեր ռազմիկ-հրամանատար, մի յանդուգն ու խելացի կարաւանապետ։ Քայլ առ քայլ նա առաջացաւ իր հազարաւոր ձիաւորներով, առանց ուժեղ դիմադրութեան հանդիպելու նւաճեց Բիւզանդիայի հսկայ և փխրուն մարմնի բեկորները (XIII դարի վերջերում), հասաւ մինչև Բրուսսա։ Ցեխանորդները շարունակեցին արշաւանքը, միշտ նոյն աջող, բարեբաստիկ հանգամանքներում, գրեթէ առանց դիմադրութեան հանդիպելու... մինչև հասան, Մահմեդ II-ի օրով, Կ. պօլիս (1453 թ.)։ Ապա մի թռիչք դէպի Բալկանները — և ամբողջ արևելեան քրիստոնէութիւնը անցաւ Մահիկին։ Վերջապէս, նոյն ռազմական, անօրինակ կանոնավորութեամբ, Ալլա՛հ ու Ջհա՛դ ազաղակելով՝ նրանք հասան Վիեննայի դուռը... ուսկից, սակայն, հռասանքը մի յետադարձ ծփանքով նահանջեց վերստին դէպի Բալկանները։

Եւ հաստատուեց օսմանեան թագաւորութիւնը իր երկու կողերի վրայ, մի ճակատն ուղղած դէպի Ասիա, միւսը դէպի Եւրոպա։

Տիպար-պետութիւն նա եղաւ ցեղի հարազատ պատկերը, նրա ճշմարիտ հայելին, նրա մտայնութեան ու արտայայտիչը։ Նա թերևս

ասիական բռնապետութեան ամենամաքուր ձևն էր, ամենաանողարտ տիպը։ Գուցէ ոչ մի տեղ վեհապետի անձնիշխանութիւնը չէր հասել այնքան ահարկու չափերի, այն աստիճան սանձարձակութեան։

Մենք արդէն տւինք այդ տիպարի հիմնական առանձնայատկութիւնները և նրա ծագման պարագաները՝ վերը բերած ընկերաբանական մեր ընդհանուր խորհրդածութիւնների մէջ։

Զ է ն ք ի ո ւ ժ ո վ կազմակերպւած պետութիւնը ծայրէ ի ծայր զ ի ն ւ ո ր ա կ ա ն դրոշմ էր կրում։ Կրօն, մօրալ, բարոյագիտական սկզբունքներ — ամեն բան սպասաւորում է այդ զինւորական պետութեան. ամեն ինչ յարմարեցւած է նրա գերագոյն պահանջներին։ Ուրիշ օրէնք էլ չեն ճանաչում, բացի զինւորական, դաշտային դատ ու օրէնքից, որ գործադրել են դարեր շարունակ, իրենց մրրկոտ, պատերազմական գոյութեան ընթացքում Սուլթանը — նախկին զօրավարը — օժտւած է բացարձակ, անսահման իշխանութեամբ, թէ աշխարհիկ և թէ հոգևոր։ Միահեծան բռնապետութիւնը հասնում է կատարեալ պաշտութեան։ Վեհապետը մի երկրաւոր աստւած է, „Ամենաբարձրեալի ստւերն է“, Արեգակի և Լուսնի եղբայրը, բոլոր թագերի բաշխողը երկրի վրայ։ Նա բարձր է ամեն օրէնքից, նա կարող է յօրինել, ուղղել, ոչնչացնել օրէնքները։ Նա կարող է կոտորել, թալանել, աւերել միլիոնաւոր հպատակներին, նա տէր է բոլոր հողերի և կեանքերի։ Կոյր, բացարձակ հնազանդութիւնը այդ ծիրոջ վերաբերմամբ՝ կրօնական դօգմ է, հաւատոյ հանգանակ։

Զարմանալի չէ — ասում է Տուրնեֆոր — որ Թիւրքիոյ մէջ եղել է շատ կոչտ ու բիրտ կառավարութիւն, քանի որ նա ծնունդ է առել պատերազմի մէջ և առաջին օսմանցիները հօրից-զաւակ եղել են ամենատենդ աշխարհակալները... Զարմանալի չէ, որ նրանց իշխանութեան միակ սահմանը իրենց կամքն է։ Իշխանը պարտ էր իր մեծութիւնը՝ իր գէնքին... ուստի և չէր կարող հրաժարուել, գրկել իրեն հզօրագոյնի իրաւունքից... ի նպաստ իր սորուկների... Առաջին սուլթանները, բարբարացած լինելով իրենց սեփական արժանիքների շնորհիւ, լցուած լինելով պատերազմի նշանաբաններով, կամեցան բոլորին հնազանդեցնել իրենց կուրօրէն պատժել խստութեամբ և պահել իրենց հպատակներին մի այնպիսի վիճակում, որ նրանք անկարող լինին բմբոստանալու... Այդ սկզբունքների զօրութեամբ՝ սուլթանը բացարձակ տէր է կայսրութեան բոլոր հողերի, նա ունի իր ձեռքում և բոլոր ժողովուրդների կեանքի ու մահուան իրաւունքը... Հպատակները (խօսքը Թիւրք հպատակների մասին է. Մ. Վ.) այնպէս են համոզուած այդ բոլորի մէջ, որ բնաւ ձգտում չեն հանում, երբ սուլթանի առաջին իսկ հրամանի վրայ՝ խլում են նրանց կեանքը կամ գոյքը։ Եւ նոյնիսկ, օրօրոցից արդէն նկատում են նրանց, մի շատ նուրբ քաղաքականութեամբ, որ այդ ծայրայեղ հնազանդութիւնը ունենալի շատ կրօնական մի պարտաւորութիւն է, քան պետական մի նշանաբան *)...

"Ասիոյ արտապարար դաշտերը, Ծունաստանի, Թրակիայի էքնաղ հովիտները, Նեղոսի արգասաբեր ափունքը, Արաբիայի անոյշ համեմանքները, Պարսկաստանի, Վրաստանի, Ունգարիայի մեծագոյն մասի հարստութիւնները, ամբողջ Հայաստանը, Մօլդավիան, Բուլգարիան, Սերբիան, — նրանք բոլորը միանում են այսօր՝ որպէս զի գոհացումն տան մէկ հատիկ էակի — Սուլթանի — ցանկութիւններին"... Այս հակիրճ տողերով վարպետօրէն բնորոշում է հինաւուրց ճանապարհորդ

*) *Tournefort, Relation d'un Voyage au Levant, II հատ. էջ 2—3։*

Ռիկաֆտի օսմանեան բռնապետութեան տարաժերժ էութիւնը, մեզ արդէն ծանօթ աշխատութեան մէջ *):

Ռիկաֆտի „այսօրը“ 17-րդ դարու մէջ է։ Սակայն նոյն կացութիւնը յարատևեց և նոյն բնորոշումը ճնաց իր լիակատար ուժի մէջ մինչև 1908 թ. յուլիս ամիսը։ Բռնաւորիքմահճոյքը գերագոյն օրէնքն էր—*lex suprema*. „Եթէ անգամ—գրում է նոյն 17-րդ դարու ճանապարհորդ-հետազօտողը—եթէ անգամ նա հրաժայէ ամբողջ բանակների՝ ցած նետուիլ ժայռերից, կամուրջ շինել իրենց մարմիններից, մի գետ անցնելու համար, կամ թէ իրար կոտորել՝ տիրոջ գործաճցնելու համար,—նրանք պէտք է հնազանդուին... Եւ այս ժողովուրդները միանգամայն բնական են համարում միահեծան բռնակալութիւնը“...

Ազնւականութիւն չկար Սուլթանական միահեծանութեան գլխաւոր կռւանը—զինուորականութիւնն էր։ Եղե՞լ է արդեօք Թիւրքիոյ մէջ ֆէօդալական ազնւականութիւն։ Թւում է թէ այո։ Բայց յամենայն դէպս, ոչ արևմտեան կաղապարով։

„Հէնց որ ապահովեց երկրի նւաճումը—ասում է նոյն Ռիկաֆտը—սուլթանը (*le Grand Seigneur*) սկսեց բաժնել հողերը զինուորականների մէջ (*entre les gens de guerre*), իբրև հատուցումն նրանց արժանիքի և կատարած աշխատանքի։ Այդ հողաբաժիններն էին Թիւրքերի մօտ „Թիմար“։ Զինուորականները պարտաւորւում էին իրենց տրամադրութեան տակ պահպանելու որոշ թւով մարդիկ ու ձիեր, որպէս զի պատերազմի երթի ամեն անգամ,

*) *Histoire de l'état présent de l'Empire Ottoman*. 1670 թ.։

երբ սուլթանը կը հրամայէ... Այդպիսով, երկիրը գանուում էր գինուորների ձեռքում։ Այդ Թիմարը շատ նման է Անգլիոյ մէջ մեր ունեցած հողերին, որոնք պրուում են մէկ պայմանով՝ աջակցել վեհապետին պատերազմի ժամանակ. միայն թէ — ասելայնում է Ռիկաճա — Անգլիոյ մէջ այդ հողային շնորհումները հաստատուած են օրէնքով, մինչդեռ Թիւրքերը օգտուում են իրենց շնորհած հողերից ոչ իբրև սեփականատէր, այլ իբրև սակ արպիւնատու (*usufruitier*, արպիւնքը վայելող")։

Թիւրքիոյ ասատական կարգերի մասին կարդում ենք մի շատ ասելի հին աշխատութեան մէջ, հրատարակուած իտալերէն լեզուով, Վենետիկում, 1600 թուին *).

Առանց խոգուսրի համաձայնութեան՝ ոչ երբէք, ոչ մի սատրապ չէր կարող սեփականել որևէ հողաբաժին՝ ժառանգելու համար իր զաւակներին։ Բայց եթէ որևէ պրաւար կամ իշխան ցանկանայ տէր գառնալ մի հողային կալուածի, նրան կը վիճեն այդ, պայմանով՝ որ հողի արպիւնքի համաչափ գօրք պահէ իր հրամանատարութեան տակ, որպէս զի պատերազմի միջոցին օգնութեան երթայ թագաւորին... Եթէ նրա (գօրավարի կամ իշխանի) մահից յետոյ՝ ժառանգները կամենան յարգել գաշինքը, կընդունին իբրև հողի իրաւատէր. ապա թէ ոչ՝ հողը կըսան ուրիշին։

Իտալացի հեղինակը ասելացնում է, որ եթէ այդ բարօնների (վասսալ, ճորտատէր) որևէ մէկը գալիս է խօսելու թագաւորի հետ, աչքերը պէտք է գետնին յառի և չհա-

---

*) Այդ հազուագիւտ և սուրբ հատորը, որի մէջ գտնում ենք ուշագրաւ մանրամասնութիւններ այն ժամանակուայ Թիւրքիոյ ժողովուրդների մասին, կրում է մի նոյնքան ուշագրաւ խորագիր. „Տիեզերական պատմութիւն Թիւրքերի ծագման և իշխանութեան... հաւաքուած Ֆրանչեսկո Սանսովինօի ձեռքով... և բարեշրջուած իր բազմաթիւ մասերի մէջ Սրբազան Ինկվիզիցիայի (Հաւատաքննութեան) հրամանով" (*Historia Universale dell'Origine et Imperio dei Turchi... Raccolta da Francesco Sansovino... Et riformata in molte sue parti per ordine della Santa Inquisitione*)։

ժարձաչ/ւի նայել ուղիղ երեսին։ Այդ պարագան բնորոշ է օսմանեան ֆէոդալիզմի համար. վասալը նոյնպէս գրեթէ սորուկ է վեհապետի առջև... (էջ 37)։

Այդպիսով, սիւզէրէնը, վեհապետը Թիւրքիոյ մէջ այն չէր, ինչ որ Եւրոպայում։ Թիւրքական ֆէօդալիզմը (աւատապետական կարգուսարքը) շատ տարբեր էր արևմտեանից։ Արևմուտքում դա մի ահագին, լայնածաւալ դաշնակցութիւն էր մանր ու խոշոր բռնակալների, որոնցից իւրաքանչիւրը կատարելապէս անկախ էր իր սահմանների մէջ, ունէր բացարձակ իշխանութիւն իր հպատակների վրայ։ Այդ է ճշմարիտ ֆէօդալականութեան ամենաէական և ամենագարշելի, ոչնչանդուրժելի կողմը։ Դա ամենավատթար բռնակալութիւնն է, ասում է Գիզօ։ Բռնակալը, գաւառի տէրը, կարելի է ասել, ամեն վայրկեան կանգնած է քաղաքացու դրան առջև, հսկում է և դիտում նրա ամեն մի շարժուածքը։ Ամեն վայրկեան նա հաշւում է իր հպատակներին, տեսնում է իր գահից սեփական թագաւորութեան սահմանները... Մարդկային կամքի քմահաճոյքները այդ տեսակ պայմաններ իմէջ ծաւալում են իրենց ողբալի տարօրինականութեամբ, և պայմաններին, կացութիւնների անհաւասարութիւնը նմանօրինակ պայմաններում աւելի խիստ է, զգալի է... Մի կողմից փառաշուք դղեակներ, հսկայական հարստութիւններ, ուժ, պերճանք, անկախութիւն (իշխող աւատատէրերի մէջ), միւս կողմից՝ սոսկալի թշուառութիւն, տկարութիւն ու ստրկութիւն (ժողովրդային զանգւածների մէջ)։ բնակիչները՝ շարունակ զոհ

էին, բուռնթեան նոխազ աւատատէր իշխանների յաւիտենական վէճերի ու ընդհարումների և կեանքը յուսահատական էր, մշտապէս խանգարուած ու խռովուած... *):

Ըստ Գիզօի, „զուտ, անխառն բռնապետութիւնը“ (*monarchie pure, absolue*) ունի որոշ առաւելութիւններ՝ ֆէօդալական այդ հարիւրաւոր մանրանկար բռնակալութիւնների հանդէպ։ Այնտեղ միահեծան բռնաւորը սարեր ու ձորերով բաժանուած է իր հպատակներից, ուստի և վերջիններըը աւելի հանգիստ են, — ամենքն էլ հաւասար մի ևնոյն տարկական լծի տակ. կեանքը, հետևապէս, աւելի տանելի է։ Բռնակալութիւնը, այսպէս ասած, մեղմանում է տարածութեամբ, հեռաւորութեամբ...

Այգպիսի „զուտ բռնապետութիւն“ էր օսմանեանը։ Այդտեղ չկային բազմաթիւ անկախ իշխաններ, աւատատէրեր՝ իրենց յաւիտենական ու արիւնոտ մրցումներով. կար միայն մէկ ընդհանուր Արև-Արքայ, նախնի հզօր կարաւանապետը, նրա ժառանգը, աստուածային յատկանիշներով սպառազինուած սուլթանը, որ պահում էր ամբողջ ազգարնակութիւնը իր տիրական հմայքի, իր փառաշուք, անտեսանելի և անմատչելի գահոյքի և պալատների թովչութեան տակ։

Գիզօի ձևակերպութիւնը ընդհանուր առմամբ գուցէ ճիշտ է։ Գուցէ, յիրաւի, տարածութիւնը, հեռաւորութիւնը փոքր ինչ մեղմել է բռնակալութեան պատուհասները Ասիոյ մէջ։ Եղել են, հարկաւ, այնտեղ և մանր-մունր տեղական բռնակալներ — ամբողջ վոհմակը

*) *Guizot, Histoire de la France, I v.*

փաշաների, վալիների, գայմագամների... Բայց նրանց բռնակալութիւնը սահմանափակ էր, նրանք ֆէօդալ-իշխաններ չէին։

Սակայն միւս կողմից՝ օրպիսի տարբերութիւն։ Արևմուտքը, այնուամենայնիւ, իր ֆէօդալական քաոսով ու ընդհանուր անապահովութեամբ՝ շատ աւելի բարձր է, գերազասելի է մեր ասիական բթացուցիչ, անասնացնող բռնապետութիւնից։ Այդպէս է եզրակացնում և Կիզօ։

Այնտեղ, Արևմուտքում, տարածութիւնը փոքրիկ լինելով վեհապետի և իր սատրապրեալ վասսալների (ճորտատէրերի) միջև՝ վերջիններս չունէին ստրկական հպատակութեան ու հնազանդութեան զգացումներ դէպի վեհապետը։ Զարգանում էր նրանց մէջ—այդ աւատական, ազնուական դասակարգի մէջ—անկախութեան, անհատականութեան, մարդկային արժանապատուութեան զգացումը, որ այնպէս յատուկ է արևմտեան ա ս պ ե տ ա կ ա ն մ ի ջ ն ա դ ա ր ի ն և որը ժամանակով, ի շարս այլ գործօնների, պիտի բանար դռները ժողովրդական ազատութեան։

Փնտրեցէ՛ք այդ անկախութեան ու արժանապատուութեան զգացումը Արևելքում, Թիւրքիայում։ Սադրազամից մինչև յետին գիւղացին—ամենքը, բոլոր հպատակները անմռունչ, գեանատարած ստրուկներն են վեհապետի, անդադար քծնում են, շողոքորթում, երկրպագում։

„Այս կայսրութեան մէջ ստրուկներ մի՛այն կան—ասում է նոյն Ռիկաֆտ—և հրաշք կը լինէր, եթէ գտնուէր որևէ մէկը՝ ազատութեան սէր ունեցող“...

Հեգելի խօսքը արդարանում է մասամբ — այդտեղ, արևելեան բռնապետութեան մէջ՝ միայն „մէկն է ազատ“—միահեծան թագաւորը: Նրա ազատութիւնն էլ, սակայն, յարաբերական է... Ենթակայ պլատոնական մշտնջենաւոր գաւերի ու ցնցումների, պարբերական մահափորձերի...

Ըմբոստացումներ լինում էին նաև Թիւրքիայում — մանաւանդ հեռաւոր նահանգների մէջ. այդպէս է վկայում Ռիկաֆտ. բայց նրանք շուտով խեղդւում էին արեան հեղեղներում և սուլթանական ջախջախիչ գերիշխանութիւնը անփոփոխ կերպով յարատևում էր դարերի խոր ու միապաղաղ գիշերի մէջ... Շրջապատած փոքրաթիւ կամաբիլլայով, յենուած զինուորական նոյնպէս փոքրաթիւ լէգէօնի վրայ, նա կարողացաւ երկար դարեր կանգուն պահել ասիական „ջինջ բռնապետութեան“ պաշտամունքը տասնեակ միլիօնաւոր ազգաբնակութեան մէջ:

Ապստամբութիւնը, զանգւածային ըմբոստացումը գիւրին բան էլ չէր: Մենք արդէն խօսեցինք այդ մարդկային նախիրների քարացած, աւանդապաշտ բարքերի ու սովորոյթների մասին: Զուտ ցեղային-հոգեբանական պատճառներին աւելանում էր և տնտեսական պատճառը: Սարսափելի տուրքերը, որ դնում են մարդկանց աշխատանքի վրայ, հասցնելով նրանց ծայրագոյն աղքատութեան, անընդունակ են դարձնում այդ մարդկանց՝ ըմբոստանալու, որքան էլ շատ տանջւին նրանք.— ճիշտ է նկատում Բ ա կ օ ն իր „Փորձ“երից մէկի մէջ... „Անհնարին է, որ հարկերի ծանրութեան տակ տնքա-

ցող մի ժողովուրդ քաջ լինի, արիասիրտ. մի ազգ չի կարող միանգամայն լինել առիւծ և բեռի տակ նեծող էշ"...

Հռչակաւոր անգլիացու այդ իմաստուն խորհրդածութիւնը ճիշտ է մասնաւորապէս թիւրքահայ ժողովրդի կացութեան ու հոգեբանութեան նկատմամբ՝ մինչև 1890 թուականը, մեր շարժման արշալոյսը...

Աւատականութիւնը դեռ չփթթուած՝ մարեց. նա յաբտաւեց, կիսատ-պռատ, միայն Հայաստանում ու Քիւրդիստանում—քրդական դէրէբէյութեան ձևով—և մի քանի այլ գաւառներում։ Ռիկաֆոի վկայութիւնը այդ մասին ևս պարզորոշ է.

„Պէտք է նկատել, որ Քիւրդիստանը (la Curdie) նուաճելուց յետոյ՝ ամբողջ երկիրը բաժանուեց սանջակների, այն տարբերութեամբ, որ այդ սանջակների հողերը փոխանցւում էին ընտանիքներին ժառանգական իրաւունքով. զաւակները յաջորդում էին ծնողներին... մինչդեռ ուրիշ սանջակների մէջ աւատական հողատէրերը վճարում են որոշ տուրք թագաւորին և պահում ու մշակում են իրենց հողերը այն պայմանով միայն, որ ծառայեն այդ թագաւորին և ի հարկին հետևեն նրանց՝ պատերազմների ժամանակ"... Քրդերը, ասում է Ռիկաֆոն, բացարձակ տէրերը են իրենց հողերի ու դաշտերի։

Ինչո՞ւ մարեց ֆէօդալական սիստեմը, ինչո՞ւ չզարգացաւ ազնուականութիւնը՝ թէ տիրապետող և թէ գրեթէ բոլոր հպատակ ցեղերի մէջ... և այդպիսով դասակարգային շերտաւորումը իր անդրանիկ և էական շրջանի մէջ առանձնայատուկ ուղղութիւն առաւ, միանգամայն տարբեր արևմտեան էւօլիւսիօնի ընթացքից և օրէնքից...

Դա մի ուշագրաւ երեւոյթ է եւ դժուարալոյծ մի կնճիռ։ Մի երեւոյթ՝ որ, անտարակոյս, ունեցել է անդրադարձումներ թիւրք կայսրութեան, տպա ուրեմն եւ հպատակ ժողովուրդների ճակատագրի վրայ։ „Ջինջ“, բացարձակ միապետութիւնը կանգուն ճնաց, իբրեւ միակ տէր հրապարակի, առանց մրցակից եւ հակառակորդ դասակարգերի... Ջինւորականութիւնն անգամ ի վերջոյ նրա ձեռքով իսկ խորտակուեց... զուտ արեւելեան մեթոդով... կոտրած ոճով։ Ինչպէ՞ս բացատրել այդ տարաժերժ, ըստ երեւոյթին աննօրմալ կացութիւնը, կամ — ուրիշ խօսքով — ինչպէ՞ս խափանուեց նօրմալ, բնականոն էւօլիւտիօնը։

Եթէ կամենանք համառօտակի բանաձեւել, պիտի ասենք, որ ժամանակաւոր պատճառները տ ն տ ե ս ա կ ա ն են, իսկ հետեւորը՝ ց ե ղ ա յ ի ն-հ ո գ ե բ ա ն ա կ ա ն։

Ընդնականութիւնը զարգանում է տնտեսական խաթրիխների վրայ, իսկ նրանք վաղաժամ զարնուեցին եւ ոչնչացան նոյն միահեծան դեսպօտի ձեռքով։ Դա մ ի ա կ ս ե փ ա կ ա ն ա տ է ր ն էր կայսրութեան մէջ և չէր հանդուրժում որևէ ուրիշին։ Նա իրաւական և իրական տէրն էր երկրի անհուն գանձերի — և բոլոր հպատակները վայելում էին միայն նրա շ ն օ ր հ ն ե ր ը, կարող էին ստանալ որևէ գոյք, սեփականութիւն միմիայն նրա վեհանձն առատաձեռնութեամբ։ Նա չէր թոյլ տալիս անգամ զօրաւոր, իշխանազն ստորադրեալներին՝ կատակելու իրենց վայելած հողերն ու հարստութիւնները իրենց ժառանգներին։ Ռւնակալի կամքը միջամտում էր ամեն պարագայում և մեռնողի գոյքերը յաճախ պար-

զապէս գրավուում էին։ Առանց ճանաչելու Մակեավել-
լիին, սուլթանները հարազատութեամբ կիրառել են նրա
նշանաւոր հրահանգը։

Անհատների և խմբումների ամբարտաւանութիւնն ու
ըմբոստացումները զսպելու համար, ամենաապահով և ա ն-
ա պ ա ր ո ւ կ միջոցն է՝ փակել ճամբան, որով նրանք կարող
են ուժ ձեռք բերել և հասնել իշխանութեան...

Հարստութիւնը ուժի և իշխանութեան աղբիւրն է.
հարկ էր, ուրեմն, ցամաքեցնել այն։ Եւ սուլթանը չէր
տակուժ, որ իրենից զատ՝ որևէ մէկը ժառանգաբար
տէր գառնայ հարստութեան։

Դիմենք դարձեալ Ռիկաֆոին.

Համարելով ինքզինքը փաշաների աւազ եղբայր, սուլ-
թանը գրաւում էր այդ փաշաների ամբողջ գոյքը նրանց
մահից յետոյ. իր գէմքի համաձայն բաժին էր հանում մե-
ռածի զաւակներին, մնացածը իւրացնում էր... Այդ միջոցով
աւերւում էին մեծ գերդաստանները... Այդպէս լուծւեց
ժոլդաների աղնուականութիւնը. բազմաթիւ մեծ ընտանիք-
ներ զրկւեցին, քայքայւեցին... Սուլթանը կործանից
հին ազնուականութիւնը։

Թերևս չափազանցութիւն չէ Ռիկաֆոի վերջին փրազը։
Եթէ Արևմուտքում հզօր, ազդեցիկ բռնակալները
երբեմն—իրենց ահեղ անհատականութեան ու հեղի-
նակութեան ուժով—կարողացել են խորտակել ժամա-
նակաւորապէս, անդամալուծել ամբողջ դասակարգերի
բնականոն զարգացումը, ապա զարմանալի չէ, որ ստրուկ
ու տիրապաշտ Արևելքի մէջ նոյն դահճային պաշտօնը
աւելիևս յաջողութեամբ կատարել են սուլթանները...
Եւ նրանք կատարել են յենուած այն կոյր, բնազդային
պաշտամունքի, այն հլու, անանձնական հնազանդութեան

վրայ, որ տածում են ժահմեդական Արևելքի զանգ-
ւածները դէպի Խալիֆն ու Հրամանատարը... Մի հնա-
զանդութիւն, որ գալիս է նոյն ասիական սահպնեերից,
նոյն թափառական ու պատերազմիկ համակենցաղի օրե-
րից... Մի սոսկալի, մահաշունչ կ ր ա ւ ո ր ա կ ա ն ո ւ-
թ ի ւ ն, որ դարձել է ցեղի հոգեբանութեան տիրապե-
տող յատկանիշը...

Բռնաւորը ամեն ինչ էր... անգամ տէր, հրամանա-
տար տ ն տ ե ս ա կ ա ն գ ո ր ծ ո ն ե ր ի ։ Եւ նա ինց
այդպիսին ոչ միայն այն հեռաւոր դարաշրջանում, այլ և
նոր ժամանակներում, 19-րդ դարի վերջում, երբ նորա-
գոյն արդիւնաբերութեան և քաղաքակրթութեան Արևը
սկսել էր ճառագայթել դէպի բոլոր, անգամ հեռու-
ասիական հօրիզոնները։ Մենք տեսանք, թէ ինչպէս մի
Աբդիւլ Համիդ կարողացաւ իր դիւային, կործանարար
հանճարով իր կամքին ու քմահաճոյքին ենթարկել, հպա-
տակեցնել կայսրութեան ամբողջ կեանքի մեքանիզմը,
կարողացաւ խափանել, խեղաթիւրել, այլանդակել տնտե-
սական գործօնները, բովանդակ զարգացումն ու առա-
ջադիմութիւնը...

Փաշաները, ասում է Ուիկաֆ, կրթւում էին և
դաստիարակւում յայտնի ոգով, արքայական պալատի
մէջ, դառնում էին մի մի հզու սպասաւոր և ապա ղրկ-
ւում էին այլ և այլ ծայրեր կառավարելու։ Ամեն միջոց
ի գործ էր դրւում, որպէս զի նրանք չ ա փ ի ց ա ւ ե լ ի
բարձրանային և մանաւանդ հարստութիւն չ'ամբարէին։
Ուշագրաւ են են 17-րդ դարի անգլիացի ուղևորի

„տնտեսական – մատերիալիստական“ ժեկնութիւնները թիւրքիոյ կացութեան ծանրակշիռ իրողութիւններէ վերաբերմամբ։ Նա բացատրում է արհեստի և արդիւնաշահ աշխատանքների բացակայութիւնն ևս զուտ տնտեսական պատճառներով։

Եւ ինչո՞ւ թիւրքերը չեն զարգացնում արհեստ, վաճառականութիւն, երկրագործութիւն, ինչո՞ւ նրանք չեն շինում լաւ տներ... Որովհետև գիտեն, որ իրենց չի պատկանում գոյքը, չունին ապահով ժառանգներ։

Այդ „պատճառը“, տարաբախտաբար, երկրորդական է։ Նա վերացաւ յետագայում և այնուամենայնիւ տիրապետող ցեղը անզօր եղաւ—մինչև օրս էլ անզօր է—զարգացնելու արհեստ, ճարտարապետութիւն, վաճառականութիւն և այլն։ Աւելի խոր պատճառները կան, թագնուած ցեղային-ժառանգական խորարմատ բնազդների մէջ, որոնց հաւասար լուսաբանող իրողութիւններ դեռ պիտի բերենք։ „Թիւրքերը արհամարհում են արհեստները, գիտութիւնը և նոյնիսկ առևտուրը, նրանց մօտ յարգի է միմիայն զինուորական պետութիւնը“, ասում է նոյն Ռիկաֆթը։

Ոակայն, „զինուորական համայնքը“ չճնաց, հարկաւ, միանգամայն հօմօժէն, միապաղաղ։ Աշխատանքի բաժանում և դասային շերտաւորումներ յայտնի չափով առաջ եկան և այդտեղ։ Ծարաբախտաբար, այդ շերտաւորումները չառաջադիմեցին ոչ խորութեամբ և ոչ լայնութեամբ։ Նրանք ճնացին թերթև, մակերեսային։ Մասնաւորապէս վաճառականութիւնը, որ առաջին խոշոր փուլն է քաղաքակրթութեան էւօլիւսիօնի, որ ապրանքների փոխանակութեան հետ առաջ է բե-

րում ժողովուրդների մէջ նաև մտքերի փոխանակութիւնն ու շփում—վաճառականութիւնը միշտ մի տեսակ խորհ ու օտար զբաղմունք ճնաց թիւրք իշխող ցեղի համար. նա մինչև օրս էլ տակաւին իր խակ, նահապետական վիճակի մէջ է *)...

---

*) Գրողներ կան, թիւրք ու եւրոպացի, որ տրամադիր են ներկայացնել օսմանեան իրականութիւնը բոլորովին այլ լուսաւորութեամբ՝ նրանք սխրում են ներբողել և՛ կրօնը, և՛ ցեղը: Ինչպէս որ իսլամը ներկայանում է նրանց աչքին, իբրև գերազանց մի հաւատամք, ռամկավարական, համբերատար ու առաջադէմ, նոյնպէս և նրան կրող օսմանեան ցեղը յայտնւում է, որպէս միանգամայն օժտուած պրօգրէսի, քաղաքակրթութեան բոլոր գրաւականներով: Նրանց համար առհասարակ գոյութիւն չունին այդ ցեղի և կրօնի ստուերները... Ժանտւանդ, երբ հարկ է խարանել թիւրքահպատակ հային կամ յոյնին՝ նրանց „սարսափելի“, „կեղեքողական“ հակումների պատճառով:

Մի կողմը թողնենք տխրահռչակ Վամբերիին, Շօլէին և այլոց, ահա մէկը, ոմն Լակօրդէր, որ 1896-ի հայոց կոտորածներից յետոյ ճգնում էր պարիզեան *La Revue*-ի մէջ արդարացնել և պաշտպանել թիւրքերին ընդդէմ եւրոպայի հայասէր արշաւանքի: Եւ այդ նպատակով նա դուրս էր բերում թիւրք ընդհանրութիւնը, իբրև գերազանցապէս աշխատասէր ու արդիւնաբերող մի տարր, իսկ հային, իբրև սոսկ վաշխառու և շահագործող մի համայնք, որ յաճախ „անողորմաբար գրաւում է թիւրքի գոյքը և դուրս քշում նրա խեղճ զաւակներին իրենց հայրենական տնից“...

Մոլեռանդ թիւրքամոլները նոյնքան արգահատելի են, որքան մոլեռանդ հայամոլները: Առանց ծանրանալու

Դասակարգային շերտաւորումի ու խտրութիւնների դէմ-յանդիման կանգնած էր, վերջապէս, մի այլ ճնշող, կաշկանդիչ ուժ—կ ր օ ն ը։ Արդէն տեսանք մեր նախըն-

---

այդ թիւրքամոլ և հայատեաց պարոնների աչառոտ եղրակացութիւնների վրայ՝ հարկ է երբեմն ուշադրութեան առնել նրանց տեղեկութիւնները, որոնց մէջ լինում են շահեկան կէտեր։ Ուշագրաւ է Լակօրդէրի տեսութիւնը։ Հիմնւելով *Forthnithly Review*-ի տւած մի քանի տեղեկութիւնների վրայ՝ նա ձգտում է ապացուցանել, որ վազուց ի վեր թիւրք տարրը փայլել է ոչ միայն իբրև պինւորական, այլ և իբրև արդիւնաբերող, աշխատաւոր մի համայնք։ Միայն թէ, ասում է.. թիւրք ցեղը իր բնածին ծածկամտութեամբ չի դբսևորել այդ ձիրքերը, չի ցուցահանել աշխարհի առաջ...

Պօլիսը, նրա ասելով, կարող է բնաւ չնախանձել այնոր Եւրոպայի վարպետներին և արուեստապետների կազմակերպութիւններին... Եւրը են նրանք հիմնել—դժւար է որոշել... Կարծում են, սակայն, որ նրանց հիմնադիրը ինքը Մարգարէն է, որ դրել է այդ աշխատաւորական, համքարական քննակարկռւթիւնները այլ և այլ որբերի հովանաւորութեան տակ։ Աւրիշները վերագրում են այդ հիմնարկութիւը հռչակաւոր խալիֆ Հարուն Ալ Ռաշիդին, որը իբր թէ կամեցել է այդ միջոցով ճիշտ կանոնի ենթարկել իր իշխանութեան տակ գտնւող ռազմիկների թիւը։

Համքարները պարբերաբար թափօրներ էին կազմակերպում։ Մի օր տաժանապարտ յանգ-ւորների մի խումբ խնդրեց արձակել իրենց, որպէս զի մասնակցին թափօրին։ Զարմանալին այն է, որ այդ խնդիրը յարգւեց... Թողովի արարողութիւնը սկսւում էր երկար պօմպքով։ Խուռներամ գնում էին դէպի յատուկ մզկիթ, ուր իմամը օրհնում էր ցուցադրւած գործերը (աշխատանքի արդիւնքները)։

Վերջին մեծ հրապարակային ժողովը տեղի ունեցաւ 1769-ին... Այնուհետև, մի միջադէպի պատճառով, այդ արհեստակցական համախմբումներն ու թափօրները արգել-

թաց յօդուածների մէջ, թէ ինչպէս Ղուրանը ինքզինքը թշնամի էր յայտարարում դասակարգային տարբերումների և բարոզում էր հաւասարութիւն հաւատացեալ-

---

ւեցին... մինչև 1826-ը (եռիչերիների ջարդի տարին), երբ վերատին թօղլատուեցին: Ամեն անգամ, որ բանակը գնում էր պատերազմի, նախապէս դուժարուում էին հայբարները: Ահա թէ ինչպէս է նկարագրուում մի ժողով, որ տեղի է ունեցել 1634-ին...

Մօտ 46 բնկերակցութիւններ: Առաջինը քաղում էր, գլուխ ունենալով Ջավուշ բաշին. նրա շարքերը կազմում էին ատիկանական բոլոր պաշտօնեաները, դահիճները, մեռելատաղները, գերեզմանային արձանագործները, դագաղակիրները: Մի պարմանալի տարկանուութեամբ՝ բոլոր դողերը, իշապանները, խափտաւշրջիկ վագրօնները նոյնպէս մտնում էին այդ պատուաւոր ընկերակցութեան մէջ և... այդ պաշտօնական խափօրների միջոցին՝ թօղլ էին տալիս գողերին ազատօրէն գործադրել իրենց արհեստը...

Այդ խաժամուժից յետոյ գալիս էր ամենազօր ընկերակցութիւնը—ե ն ի չ ե ր ի ն ե ր ը: Հպարտ, խրոխտ քայլում էին նրանք Ազայի առաջնորդութեամբ: Ապա գալիս էր Ի մ ի ր ն ե ր ի ընկերակցութիւնը, խամաճների, շէյխերի, դերվիշների ու առաղաբաշխների: Դրանց հետևում էին օրէնագէտները, գրագիրները, վարժապետները: Ապա՝ դռնօրները, դեղաբոյսերի, թոյների, անուշահոտութիւնների վաճառողները, նրանց հետ՝ ապրուկավաճառները... և այդ դասերի ամենից մի մի նշանաւոր շարժուում էին ձեռքերում պահած պնակների մէջ: Առանձին հատուած էին կազմում յիմարանոցի ծառայողները... (*La Revue des Revues, 15 Déc. 1896. Les Etrangetés des corporations turques*):

Այնուհետև յիշատակուում են նաև գինավաճառները, դերձակները, հացթուխները... Ասացուում է մի խառնիճաղանճ, իր տեսակի մէջ եզակի պատկեր, որ յօդուածագիրը շարունակում է հռչակել ու ներբողել, ցոյց տալով թիւրքական այդ վաղեմի հայբարները, որպէս համերաշխութեան, աշխատասիրութեան և արգասաւորութեան կատարելատիպ:

ների մեծ գերդաստանում։ Իսլամը այդպիսով մի առանձին հակառակութիւն պիտի ցոյց տար ազնւականութեան եւ, անշուշտ, նա իր որոշ դերն ունեցաւ այդ ազնւական դասակարգի վաղաժամ անգամալուծման մէջ։ Նրա վրայ էր յենւում մասամբ բռնապետը, նրա տառի և հրահանգի համաձայն էր վարւում. երբ խորհւում էր այդ դասակարգի գոյութեան խարխխները։

Շատերին է ուրախացնում երևոյթը։ Մասնաւորապէս, թիւրք իդէօլօգները, իրենց կրօնի „համբերողութեան“ փաստի հետ՝ սիրում են յիշատակել և գրատել ազնւականութեան չգոյութիւնը թիւրք ցեղի մէջ։ Լա՞ւ էր, թէ վատ՝ այդ չգոյութիւնը։ Բարեբաղդ, թէ չարաբախտ հանգամանք՝ երկրի ընդհանուր, քաղաքական և սոցիալական զարգացման համար։ Ահա կնճիռ։ Բակօնն ասում է. „ամեն մի պետութիւն, ուր չկայ ազնւական դասակարգ, մի զուտ բռնակալութիւն է—ինչպէս թիւրքերինը — որովհետև ազնւականութիւնը չափաւորում է, բարեխառնում ինքնակալութիւնը“։

Բակօն լիովին իրաւացի է, եթէ ի նկատի ունի իր սեփական հայրենիքը։ Անգլիական ազնւականութիւնը, յիրաւի, շատ վաղաժամ, դեռ XIII դարի մէջ, կարողացաւ սանձ դնել միահեծան բռնապետութեանը, խլեց նրանից մի յայտնի սահմանադրութիւն ու ազատութիւն, որ չունէին եղաւ հեռաւոր և բախտաւոր սահմանադրական զարգացումի։

Նոյնը, սակայն, դժւար է ասել ռուսական, սպանիական, գերմանական, աւստրիական, ունգարական և մի

շարք ուրիշ երկիրների ազնւականութեան մասին, ուր նա (այդ ազնւականութիւնը) ժուռ պատւարն է միապետական գահի ու ռէժիմի։

Ազնւականութիւնը գրեթէ ամենուրեք հանդիսացել է և այսօր էլ դեռ հանդիսանում է էապէս ճնշող ու մակաբոյծ տարր։ Սակայն մի հանգամանք կայ։ Այդ դասակարգի մի խոշոր, պատմական ծառայութիւնը կայ, որ անկարելի է ժխտել։ Գրեթէ ամեն տեղ նա զօրաւոր խթան է եղել մտաւոր գործունէութեան, գրագիտութեան և գիտութեան, գեղարւեստի և փիլիսոփայութեան։ Մտաւոր մարզանքները շատ թէ քիչ բարգաւաճել են միմիայն այն երկիրների ու հասարակութիւնների մէջ, ուր եղել է բարեկեցիկ մի դասակարգ, ազատ առօրեայ նիւթական կեանքի մտահոգութիւններից։ Եւ այդ դասակարգը եղել է ազնւականութիւնը (նոյն պաշտօնը կատարել է մասամբ կղերը)։

Դժւար է պնդել, թէ հարկէ, որ թիւրքական ազնւականութիւնն էս — եթէ նա ձուղռպրեր սուլթանների անձնիշխանութեան ճիրաններից և կանգուն ճնար արևմտեանի պէս, իբրև անկախ ու բարեկեցիկ դասակարգ — դժւար է ասել, թէ նա կը նւիրէր իր ազատ ժամանակն ու միջոցները մտաւոր, գեղարւեստական, կուլտուրական մարզանքների, կըստեղծէր թիւրք իմացական քաղաքակրթութիւն, կը չափաւորէր նաև միահեծան իշխանութիւնը... Դժւար է ենթադրել այդ բոլորը, քանի որ այնքա՜ն ձախորդ, աննպաստ են ցեղի զարգացման ու առաջադիմութեան ընդհանուր պայմանները։ Որով, տո-

կունութիւն, յարատեւութիւն աշխատանքի մէջ,—ահա թէ որոնք են քաղաքակրթութեան ու առաջադիմութեան մեծագոյն խթանները։ Միջավայրը զօրաւոր է և ազդեցիկ, անտարակոյս, և ոչ մի ազգ չի քաղաքակրթուել ինքնիրեն, իր սոսկական ուժերով, առանց մղումն ստանալու շրջապատող միջավայրից։ Սակայն, մարդկային գիտակցական, նպատակաւոր ճիգն է, մարդկային ստեղծագործ ու յեղափոխիչ ուժն է, որ յարաճուն կոհակներով առաջ է մղում պատմութեան անիւը, փոփոխում է միջավայրը, հ ա կ ա զ գ ու մ է բնութեան կոյր ուժերի դէմ, շահագործում նիւթն ու ուժը, հում բերքերը, զարգացնում է գիտութիւնը և դրանով իսկ յաղթահարում տարերքները, աճեցնում, բազմապատկում նիւթական և իմացական գանձերը... Մինչդեռ բնական, տարերային ազդակները մնում են ընդհանրապէս անփոփոխ, միօրինակ։ Առանց այդ գիտակցական հակազդեցութեան, չկայ մշակոյթ, քաղաքակրթութիւն. իսկ այդ արգասաւոր հակազդեցութիւնը, այդ համբերատար և կանոնաւոր աշխատանքը, այդ տոկուն ու յարատեւ ճիգը, եռանգը չեն մտնում տիրապետող ազգի-ցեղի հիմնական առաքինութիւնների մէջ, չեն հաշուում այդ ցեղի իշխողական, հրամայողական խառնուածքի հետ։ Ահա թէ ինչու, դժուար թէ նա շատ թէ քիչ զգալի ոստիւններ անէր կուլտուրական արժէքների ասպարէզում — գրականութեան, փիլիսոփայութեան, արուեստի, ճարտարապետութեան և այլն — և թէ ա ն գ ա մ զարգանար քիւրքական ա ր ի ս տ օ կ ր ա տ ի ա, „բարեկեցիկ ազատների“ դասակարգ։ Խիստ տեղին ու բնորոշ է թուում

Ռիկափտի վերոյիշեալ յայտարարութիւնը. „Թիւրքերը արհամարհում են արուեստները, գիտութիւնը և նոյնիսկ առևտուրը. նրանց մօտ յարգի է միայն զինուորական պետութիւնը“...

Ցաւեցնայն դէպս, կարելի է ապահովաբար ասել այն՝ որ ազնւականութեան կաշկանդումը, ինչպէս նաև առհասարակ դասակարգային շերտաւորման թոյլ ու դանդաղ բնոյթը եղել են միշտ պերճախօս յ ա յ տ ա ր ա ր, որոշ չափով նոյնիսկ պ ա տ ճ ա ռ (աւելի ճիշտ՝ պ ա յ մ ա ն) իշխող ցեղի անշարժութեան, նրա ժառանգական, քաղաքակրթական անօրինակ յետամնացութեան։ Առանց այն էլ՝ ցեղը ամուլ էր թէ նիւթական և թէ իմացական արժէքների տեսակէտից. պետութիւնը և կրօնը եկան աւելի ուժ տալու այդ ամլութեան։

Ասացինք — „ա ն օ ր ի ն ա կ“։ Եւ դա հազիւ թէ չափազանցութիւն է։ Ինքնութիւնը, ինչպէս տեսանք իր բազմապիսի, խայտաբղէտ միջավայրով և ժանաւանդ բերրի, աշխուժ հողերով ուժգին խթան է եղել իր մէջ ապրող ժողովուրդների քաղաքակրթական առաջադիմութեան։ Ցայտնի է նաև, որ նոյն քաղաքակրթութեան առաջխաղացը հոսանքին մեծապէս նպաստում է բաստանների, ցեղերի խառնուրդը։ Թիւրքերը առատօրէն պարգևատուած էին միջավայրի այդ անհրաժեշտ բարիքներով, երկար դարեր նրանք ապրեցին աշխարհագրական խիստ նպաստաւոր գիրքերի մէջ. երկար դարեր նրանք խառնուեցին իրենց հպատակ ցեղերի հետ և նրանց նախնի բաստային-մարդաբանական տիպարը ահագին փոփոխութիւն կրեց... Այդքան բարեյաջող պայմաններում նրանց այսօր-

ւան յետաճնացութիւնը յիրաւի ապշեցուցիչ է, անօրինակ։

Ցեղական - ժառանգական դ է տ ե ր մ ի ն ի՞ զ մ... Անդիմադրելի *fatalité*, ճակատագրականութի՞ւն... Ընդունե՞լ արդեօք Վայսմանի հետ, որ ցեղի առաջին կորիզը, այն նախնական սաղմանիւթը, որ կազմւել է անդրագոյն, անյիշատակ դարերի մէջ, գոյամարտի յորձանուտ ալիքներում —ընդունե՞լ արդեօք՝ որ, յիրաւի, այդ խորհրդաւոր սաղմանիւթը մի ցեղի մէջ յաւերժօրէն փոխանցւում է սերնդէ-սերունդ, առանց կրելու էական, շօշափելի փոփոխութիւններ ժամանակի անծայրածիր հոսանքուժ, առանց մատնելու ցեղի սկզբնական և հիմնական բնոյթը, նկարագիրը նոր կացութեանց ու պայմանների խեղաթիւրիչ ազդեցութեան...

Ընդունե՞լ արդեօք Լեռւրնօի և մի շարք ուրիշ սոցիօլոգ-մարդաբանների հետ՝ որ ցեղային համախմբումները խորապէս անհաւասար են, որ կայ ցեղերի է ր ա ր խ ի ա (*hierarchie*), ոմանք օժտւած աւելի, ուրիշները նւազ չափով, ոմանք կոչւած բարձրանալու քաղաքակրթութեան սանդուխի աւելնավերին աստիճանները, ուրիշները դատապարտւած դեգերելու յետամնաց վիճակի մէջ, պիրամիդի ստորոտներում, առանց ուրոյն ստեղծագործող աշխատանք ցուցադրելու, առանց իսկ կարողանալու ընդօրինակել, մարսել աւելի բարձր ազգերի առաջադիմութեան արգասիքները...

Պատասխանել վճռականօրէն —անհնարին է, Ա յսպէս թէ այնպէս, սոցիօլօգիայի, ընկերաբանութեան աւելնաուշագրաւ նիւթերից մինն է այդ եզակի երեւոյթը,

թիւրքերի ու թաթարների այդ վիթխարի զանգուածները, որ հազարաւոր տարիների իրենց գոյութեան ու արշաւների ընթացքում ոչ մի անգամ, ոչ մի տեղ չկարողացան խարիսխ ձգել ճշմարիտ քաղաքակրթութեան, ընդհակառակը՝ ձիերի սմբակների տակ բնաջինջ արին քաղաքակրթական ամբողջ սիստեմներ, ցամաքեցրին ստեղծագործող աշխատանքի անհամար աղբիւրներ...

Ւ՛ր թւում է, թէ այսօր, օսմանեան սահմանադրութեան բառամեայ փորձից յետոյ, ընկերաբանական այդ կնճիռը աւելի ևս սուր ու ցաւոտ այժմէութիւն է ստանում... Հանդէպ այն յոռի, բացասական մտայնութեան, հանդէպ այն անդարմանելիօրէն անձուկ ոգու և իներտ ու ապիկար ընթացքի՝ որ ժամանում է տիրապետող ցեղի տիրապետող կուսակցութիւնը,—մի ժարժին, որ ներկայացնում է ցեղի ամբողջ, գրեթէ ամբողջ գաղափարական ու առաջադիմական հիւթը, որ եկել էր զարմացնելու աշխարհը արևմտեան գաղափարների ժեծաշունչ ցուցադրութեամբ, և որ սակայն... միշտ աւելի և աւելի խորացնում է անդունդը իր և այդ գաղափարների միջև, միշտ աւելի սուզւում է նոյն գօրշ, յետադէմ, ասիական ուտիճի մէջ, որ իր ծնող զանգուածի դարաւոր, անփառունակ սեփականութիւնն է...

Ազգերը քաղաքակրթւում են՝ ինքնուրոյնաբար ըստ ե ղ ծ ա գ ո ր ծ ե լ ո վ կամ թէ այլոց մտքի արդիւնքներն ը ն դ օ ր ի ն ա կ ե լ ո վ, ժարսելով։ Ա յ ս տ ե ղ—ոչ մէկը և ոչ միւսը։ Մինը իսպառ բացակայում է, միւսը կաղում է չարաչար։ Դիմենք դարձեալ հեղինակաւոր և օտար վկայութեանց։

„Գրեթէ բոլոր արեւտանները ժանկութեան մէջ են ներանց մօտ, կամ միանգամայն անձանօթ են“, — ասում է մի նշանաւոր ֆրանսիացի տուրիստ Օլիվիէ, որ ճանապարհորդել է եւրոպական Թիւրքիոյ մէջ, XIX դարի սկզբում։

Վաղուց ի վեր եւրոպացիք և մանաւանդ ֆրանսիացիք փորձել են սովորեցնել ներանց (Թիւրքերին) մի քանի օգտակար արեւտաներ. բայց արդիւնքը քիչ բան է եղել, վասն զի ազգային գոռոզութիւնը, ազիտութիւնն ու մոլեռանդութիւնը արգելք են լինում։ Ֆրանսիացիք են սովորեցրել ներանց՝ նաւեր, հրացաններ ու ւռինները շինել, երկաթի մշակել և ապան պատրաստել *)։

Եւ բնորոշ է, որ Թիւրք լեզուն—իրագեկների վկայութեամբ — չափազանց աղքատ է արեւտի և գիտութեան վերաբերեալ բառերով։

Մի այլ տեղ նոյն Օլիվիէն ասում է.

Թիւրքերը չեն սիրում նւիրել հոգագործութեան, իրենց նախնիքների պէս, ներանք գերապատում են գէնքի արհածաւոր արհեստը, աւազակութիւնը և շահավաճառը։ Հաստատ բան է, որ ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ ամենալաւ հողերի մեծագոյն մասը լքուած վիճակի մէջ է և յոյները, հայերն ու արաբներն են, որ մանաւանդ նւիրւում են երկրագործութեան, երբ ներանց չափից դուրս չեն նեղում կառավարական գործակալները կամ թալանչի և աւերիչ քրդերը **)։

Նպաստաւոր կարծիք չունի Թիւրքերի առեղծագործական եռանդի մասին նաև գերմանացի հռչակաւոր արեւելագէտը, Փօն Համմեր, որ 30 տարի ուսում-

---

*) *Olivier, Voyage dans l'Empire Ottoman*, 1801—1807 թ. I հատ. էջ. 26—27։

**) Հատ. I, էջ 92։

նասիրել է Թիւրքիան և որի անաչառ աշխատութիւնը դեռ այսօր ևս ամենահեղինակաւոր աղբիւրն է այդ նիւթի նկատմամբ։

Թաթարական ծագում ունենալով, նրանք (օսմանցիք) դեռ պահպանել են առեղների կեանքի հետքերը, որ հինգ դարու քաղաքակրթութիւնը չկարողացաւ ջնջել։ Բնութիւնը օժտել է նրանց խելքով և արուի, բայց մերժել է տալ ճաշակ և ընդունակութիւն արուեստի համար։ Մինչև իսկ արաբ ու պարսիկ բանաստեղծների լաւագոյն երկերը, ընկնելով թիւրքերի ձեռքը, խաչնում են կամ տալիս են օտարօտի վիժմունքներ։ Թիւրքերը պարզ են, ուղղամիտ, չափաւոր, հաւատարիմ, երախտագէտ, բայց բիրտ են, տգէտ, շահասէր և ծոյլ։ Նրանց մէջ նմանապէս յատկութիւնները միացած են կիսաքրիստոնէական կասկածելի արդիւնքների հետ։ Ընդհանրապէս, նրանք բարի են. վատ են միայն պաշտօնական շրջաններին պատկանող անձինք, որոնց փճացնում է կառավարութիւնը։

Ահա մի այլ հինաւուրց հեղինակութիւն — անգլիացի Համիլտոն — որ նոյնպէս երկար տարիներ պտտել և ուսումնասիրել է Արևելքը.

Ես կրկնում նրանց (թիւրքերի) լաւ յատկութիւններից։ Հիւրասէր են բառի ճշգրիտ իմաստով. առհասարակ կարեկցուտ են և յամառ վնասանձն։ Աւորին դասը բնդհանրապէս ազնիւ է և ես այդ նմանում եմ նրա մեծագոյն արժանիքը։ Բայց այդ առաքինութիւնը յատուկ չէ բարձր դասակարգին... Միւս կողմից նրանք բոլորը տգէտ են, կասկածոտ, ցուցամոլ և կեղծաւոր, հպարտ և առանց պատուի զգացման, շողոքորթող, առանց հաւասարութեան... Պետական ու մարշական գործերում՝ բռնակալ են, կրօնի մէջ՝ գոռոզ պաշտ և անհամբերող։ Իրենց սեփական պատմութեանը նոյնքան անծանօթ են, որքան և ուրիշ ազգերի պատմութեանը. այդ հանգամանքը նկատելի է անգամ լաւագոյն կրթութեան տէր անհատների մօտ։ Նրանց առաքինութիւնները — վայրենիի առաքինութիւններ են *)...

*) Քաղ. Լ ի տ լ-Բ օ յ ի ռուսերէն աշխատութիւնից. „Ուղևորութիւն եւրոպական և ասիական Թիւրքիոյ մէջ", 1878 թ. էջ 323—324։

Երկու անաչառ և իրազեկ գնահատողների շեշտած պակասութիւնները մեծ մասամբ դիտելի են նաև քրիստոնեայ ու այլ ցեղերի մէջ. մենք կուզէինք այդ հեղինակաւոր բնորոշումների մէջ վեր հանել միայն մի քանի կէտեր, որ խոշոր չափով յատուկ են թիւրքերին. „ծոյլ, անհոգ, անհամբերող, զինւած լոկ վայրենութեան առաքինութիւններով“. ահա թէ ինչ է ասում լաւատեղեակ, շիտակ, անկողմնապահ պատմագիրը. և նոյնը կրկնւում են բազմաթիւ այլ հեղինակաւոր քերթողներ, սկսած այն օրից, երբ „հիւանդ մարդը“ գարձել է արիւնոտ կռւախնճոյր միջազգային ախորժակների և մրցութիւնների կրկէսում...

„Նրանք ոչ հմուտ առևտրականներ են և ոչ էլ աջողակ մշակներ, ինչպէս հայերը և յոյները... այլ անշարժ գոյքերի սեփականատէրեր են կամ տէրութեան պաշտօնեաներ“,—ասում է վիտալ կինէ իր առաջին հատորի մէջ (*La Turquie d'Asie*), խօսելով Էրզրումի թիւրքերի մասին։

Ձափազանց յատկանշական են Օլիվիէի հետևեալ տողերը.

‘նրանք վայելում են ամենուրեք անկեցների, վարձակալների անփութութեամբ (*ils jouissent partout avec l'insouciance des locataires*). քանդում են ամեն ինչ և երբէք չեն շտկում։

„Քանդում են—չեն շտկում“... Այդպէս է վկայում և գերմանական մեծահամբաւ զօրավարը—Մ ո լ տ կ է, իր „Թիւրքական նամակներ“-ում (1835—1839 թ.)։

Վարձակալի հոգեբանութիւնը երևան է գալիս և

քաղաքներում, որոնք իրենց շէննալու և բարգաւաճելու՝ սաւայանում են ու խորասուզւում աւերակների փոշու մէջ... Գեներալ Մօլտկէն գրում է կօնիայի մէջ իր արած պտոյտի առթիւ.

Թիւրքական քաղաքները առհասարակ սաւայութեան կերպարանք ունին, բայց ոչ մէկը այնքան սաւալի չէ, ինչպէս կ'նիա: Աւերումներ կատարել է ոչ այնքան ժամանակը, որքան մարդկային ձեռքը... Մահմետականները վերածել են եկեղեցիները մզկիթների և հէնց այդ մզկիթները այսօր ընկած են աւերակների մէջ: Մի բարձր ու լայնարձակ պարիսպ հարիւրաւոր աշտարակներով ընդգրկում է սաւալի մի դաշտ, ուր թափւած են մի քանի փլատակներ... Թիւրքական մի խաշոր արձանագրութիւն իւրաքանչիւր աշտարակի վրայ վկայում է այցելուին, թէ ովքեր են այդ աւերածը նիւթող բարբարոսները *)...

Աւելի փայլուն և նախանձելի վիճակի մէջ չէ և մայրաքաղաք—Պօլիսը՝ XX դարում: Բաւական է մի փոքրիկ պտոյտ, մի թեթև ակնարկ՝ տեսնելու համար աւերածի և անշարժութեան այդ աւանդական ոգին...

Ահա թէ ինչպես է նկարագրում Օլիվիէ՝ իշխող ցեղի աւերիչ աշխատանքը՝ Կրետէի մէջ, անցեալ դարու սկզբներում.

Նրանց (քրիստոնեաների) հունձքը շարունակ յափշտակում է պատն (Թիւրքը կառավարիչը), անփականութիւնը գրաւում է փաշան, մինչդեռ ենիչէրիները մշտապէս անարգում են ու ծեծում գաղանակով... Եւ այդ բոլորը շարունակ տեսնելով ու ապրելով յոյն երկրագործները բնականաբար չունին եռանդ, յանկութիւն՝ զարկ տալու արդիւնագործութեան, հողը մշակելու... քանի որ արդիւնքը պիտի անցնէ իրենց տեսչի տարրի ձեռքը... Նրանց դաշտերը աւերւում են օրէցօր, ձիթենին փճանում է, խաղողը կործանւում... Ցոյները վհատւած, չեն էլ աշխատում շտկել բարւոքել

*) *Moltke, Briefe aus der Türkei*, 7-րդ հրատ., էջ 336:

ձարտարապետը գրեթե գերօ է ազաների հակողութեանը ևնթակայ յոյն գիւղերի մէջ։ Դողալով, ներանք հազիւ կարողանում են գործել մի քանի կոշտ պատուաներ... Երբ կանայք նոր զգեստ են հագնում, սովորաբար խոյս են տալիս վատ գոյներից, վախենալով, թէ ոսոիկանապետը կամ մի այլ թիւրք կը խլէ և նոյնիսկ կ'անարգէ կնոջ։

Թիւրք գիւղերի մէջ... մշակոյները ապահով են, երկիւղ չունին, տուրքերն էլ աւելի թեթև են... Եւ այնուամենայնիւ, ոչ երկրագործութիւնը, ոչ էլ ձարտարապետը չեն զարգանում ներանց (թիւրք շինականների) մօտ։

Կարծես թէ ծոյլ ու անկուշտ ձիապիծակների պէս, ներանք եկել հաստատել են օտար հողի վրայ, որպէս զի միայն ուտեն, ապտանն — տանից ճիգի և հոգսի — այն բարիքները, որ ուրիշներ իրենց աշխատանքով վաստակում են հողից կամ թէ իրենց ճարտարապետով տանում են դրսից։

Այդ օտարականների (թիւրքերի) բնաւորութիւնը այն աստիճան շեշտած է, որ ներանք նոյնն են կայսրութեան բոլոր կողմերում... Սակայն Պօլսի և ծովեզերայ գլխաւոր քաղաքների մէջ ներանք բնդհանրապէս փոքր ինչ աւելի մեղմ են, փոքր ինչ աւելի կրթուած, քան ներքին նահանգներում։

Վերին աստիճանի աննպաստ կարծիքներ եթէ այդպէս էր կացութիւնը եւրոպական Թիւրքիոյ մէջ, ուր իշխող տարրի բարքերը համեմատաբար մեղմ էին, ապա կարելի է ժամանակով երևակայել Անատոլուի, Հայաստանի վիճակը...

Եւ այդ ժամայր, յոռետես կարծիքների արձագանքն էր Գրիգոր Արծրունին, երբ նա Թիֆլիսի իր նշանաւոր հրապարակային գասախոսութեան մէջ (1879 թ.) յայտարարում էր, փոքր ինչ աւելի խտացնելով գոյները.

„Թիւրքը մի պարապ, անհոգ և անօգուտ կերպով ապրող էակ է... Նա ապրում է հայերի հաշւին"... „Հայր — այդ ասիաբնակ եւրոպացին — չի վճռացնում բնական հարստութիւնները, ի ն չ պ է ս ա ն ո ւ մ ե ն մ ի ւ ս ա ս ի ա

ց ի ք (թիւրքը, քիւրդը), այլ նորագոյմ է բնութեան ու ժեղը" *)...

Այդ նոյն կարծիքն է (թիւրքերի տնտեսական յետամնացութեան և աւերիչ հակումների մասին), որ այսօր խտացել է մի ընդհանուր ու ծանօթ բառի մէջ — „Paschawirtschaft" (փաշայական տնտեսութիւն) — մի անարգական բառ, որով արևմտեան ժամանակակից տնտեսագիտութիւնը բնորոշում է քաղաքական և սոցիալական ամեն մի սիստեմ, որ հիմնուած է կամայականութեան, թալանի և աւերածի վրայ...

Այդ աղէտաւոր սիստեմն է, որ միացած կրօնական խորունկ անհամբերողութեան և բարոյական սոսկալի հարուածների ու անարգանքների հետ՝ առաջ բերեց XIX դարի ընթացքում թիւրքահպատակ քրիստոնեայ ազգերի մէջ ապստամբական շարժումների երկայնաձիգ և արիւնոտ շարանը...

---

*) Քաղում ենք գերմ. թարգմանութիւնից. „Die ökonomische Lage der Armenier in Türkei".

IV

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Պատմափիլիսոփայական ակնարկ.—Հակօրինութիւններ.—Հայաստան եւ Եւրոպա. — Կուլտուրական նմանութիւն. — Բնական միջավայրը, իբրեւ ցեղի պահպանութեան գրաւական. — Թուրանը եւ կարաւանը, իբրեւ նոր խթաններ նայկական բաղամակրթութեան. — Բնութիւն եւ ազատասիրութիւն.—«Միջնորդ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ».—«Յարմարելու» անսովոր ուժը եւ նրա ստեղծ կողմերը. — Հայ առեւտուրը միջին դարում. — Հայ վաճառականը՝ որպէս կալտուրայի նախակարապետ. — Օտար վկայութիւններ. — Տուրնեֆօր, Ժօբեր, Կարլ Ռիտտեր, Օլիվիէ, Լանգլուա, Համսհաուզէն, Ռեկլիւ եւ ուրիշներ. — Հայ ազգը միջին դարում. — Փոթորկումի նշանները. — Անհատների թատերամուտը. — Մխիթար Աբբա եւ Իսրայէլ Օրի. —

Պատմութեան փիլիսոփայութիւնը մեկից աւելի հակօրինութիւններ (antinomie) պիտի գտնէ հայկական ճակատագրի բազմադարեայ էւօլիւտիօնի մէջ։

Մի կեանք, որ թաւալել է անդուլ հալածանքի ու բնաջնջման ալիքներում — և սակայն, յարատևել է... մի անօրինակ, առեղծուածային կենսունակութեամբ։

Մի ժողովուրդ՝ այնքա՜ն քչւոր իր թւով, մի միջավայր՝ այնքա՜ն յաճախ ենթակայ աշխարհաւեր հեղեղ-

ներբի, մի բնութիւն՝ այնքա՜ն դաժան, անհիւրընկալ կլիմայական պայմաններով, կտրւած քաղաքակիրթ Արևմուտքից ահագին անջրպետներով, — և սակայն մենք տեսնում ենք այդ ամեհի և բքաշունչ բնութեան մէջ, այդ անհամբոյր և դժնդակ միջավայրում գեռ ամենահին ժամանակից պրօգրէսի, յառաջխաղացութեան զօրաւոր ցոլքեր, նիւթական և իմացական քաղաքակրթութեան բողբոջներ, որոնք տասնեակ դարերի արիւնակուռ ու արտասւացօղ տարաժամութեան վրայ աստիճանաբար շեշտւելով ու փոխանցւելով սերունդներին, մղել են այդ ուշագրաւ ցեղը — տանջանքի և անդադրում մաքառումի ճանապարհով—դէպի ազգային ինքնաճանաչութիւն և դէպի ազգային-ազատագրական շարժումներ...

Հակօրինութիւնները շեշտւում են, աւա՛ղ, նաև բացասական, աղէտաւոր կերպարանքով:

Մի ժողովուրդ՝ որ ասիական խաւար ու միապաղաղ անշարժութեան հօրիզոններում, հնուց ի վեր եղել է միակ անկեղծ և խանդավառ բարեկամն ու կողմնակիցը եւրոպական աշխարհահայեացքի, որ եղել է—վ.իկտօր Ֆերարի ազգակ արտայայտութեամբ — „եւրոպականացած ասիացիների մի համայնք“, *un peuple d'asiatiques européanisés*, մի ժողովուրդ՝ որ իր յօրդ արիւնով իսկ, գեռ խաչակրաց արշաւանքների ժամանակից, փաստել է իր հզօր, բնազդային համակրութիւնը արևմտեան քաղաքակրթութեան հանար,—այդ ժողովուրդը, սակայն, իր անլուր և անվախճան նահատակութեան շրջաններում, մահմեդական բարբարոսութեան մշտաճարակ

դժոխքի մէջ, քնաւ երբէք չվայելեց քաղաքակիրթ Եւրոպայի առատաբուխ պարգեւները, քնաւ երբէք չ'արժանացաւ նրա կենդանի և իրական ազդեցութեան, թէպէտ և շա՜տ անգամ դիմեց նրան աղիողորմ գանգատներով ու աղերսանքներով, թէպէտ և շատ անգամ տեղացին արևմտեան հրամանատարների դահլիճներից վարդագոյն խոստումներ ու ոգևորիչ խրախուսանք... սկսած Իսրայէլ Օրիի առաքելութեան օրերից մինչև 1908 թուականը...

Ինչո՞վ էր նա այնքան ժօտ Եւրոպային. ինչո՞վ էր հայութիւնը այնքան սերտ շաղկապուած եւրոպական աշխարհայեացքի հետ։

Քրիստոնէութիւնը, անտարակոյս, իր տեղն ունի այդ մտային և հոգեկան նմանութեան մէջ, բայց այդ տեղը չպէտք է շատ չափազանցնել։

Հայ ժողովրդի քրիստոնեայ լինելու հանգամանքը մեծապէս, այո՛, նպաստել է նրա դարաւոր շփումներին եւրոպական ազգերի հետ. և միանգամայն ուշագրաւ ու հասկանալի է միջնադարեան կրօնասէր ու ջերմեռանդ Եւրոպայի հետաքրքրութիւնը այդ ժողովրդի ճակատագրով, միսիոնարների և այլ բարեպաշտ, հետազօտող ճամբորդների տենդային վազքը դէպի Արարատ և Էջմիածին, դէպի Ճորոխի և Արաքսի հովիտները, ուսկից նրանց հրապուրում էին բիբլիական յուշերը, „երկրաւոր դրախտի" թովիչ առասպելները և „առաջին քրիստոնեայ ժողովրդի" կենցաղն ու պատմութիւնը։

Սակայն, այդ ժողովուրդը ուրիշ տեսակ յատկանիշ-

ներ, ձիրքեր ուներ, որոնք նրան կապում էին — աւելի սերտ ու յարատեւ կապերով — քաղաքակիրթ Արեւմուտքի հետ... Ճիշտ այն յատկանիշները՝ որոնք, տարաբախտաբար, բացակայել են զինքը նուաճող և տիրապետող ցեղերի մէջ։ Այդ նուաստ և հեռաւոր ասիացին „եւրոպականացած էր“ այն պատճառով որ իր պատմական գոյութեան առաջին դարերից իվեր գրկել էր ճշմարիտ քաղաքակրթութենան, արդիւնարար, ստեղծագործող աշխատանքի դրօշը, զարգացրել էր համեստ չափով իր սառցապատ միջավայրում, իր խուժադուժ և բարբարոս դրացիների միջնորտում, քաղաքակրթութեան աւենաէական ճիւղերը — երկրագործութիւն, առևտուր, արհեստ և արուեստ, գիր ու դպրութիւն — և այդ թանկագին ստացուածքներով օժտուած, այդ նիւթական և իմացական բազաժը շալակած, նա քայլել է դարերի խոր գիշերի մէջ, անցել է թոյլ, վհերոտ շարժուձեերով թշնամիների լարած բիւրաւոր թակարդներից, մերթ ընդ մերթ ծածկւել է իր ժրկոտ ծովի ալիքների տակ, մերթ ընդ մերթ անէացել բարբարոսութեան գահավիժուղ յորձանքներում, անդամալուծել իր թափը, սպառել իր կորովը, ապա վերստին դուրս նետւել դէպի մեծ ճանապարհը, սահել է խարխափելով միշտ դէպի վեր, դէպի առաջ, իր կարող և անվրէպ բնազդի թելադրութեամբ, մինչև որ հասել է, XIX դարու մէջ, այն փըրկարար և մարտական ինքնագիտակցութեան, առանց որի չկայ ազգ այս աշխարհում։

Երկրագործութիւն և առևտուր — նախ և առաջ ներկուսն էլ քաղաքակրթութեան էւօլիւսիօնի

մեծ հանգրւաններն են։ Մենք վեր հանեցինք նախորդ գլխի մէջ այն համատարած անտագոնիզմը, այն անհաշտ հակամարտութիւնը, որ եղել է հնագոյն ժամանակներից ի վեր սոցիալական երկու խոշոր տիպերի միջև—թափառական խաշնարածների և նստակեաց երկրագործների—մինը էապէս ռազմիկ ու յափշտակող, միւսը՝ խաղաղ, աշխատասէր և աշխարհաշէն։ Մինը կործանում է, միւսը շինում. մինը թարգման է վայրենութեան, միւսը թարգման է քաղաքակրթութեան։

Եւ մենք տեսնում ենք բազում դարերից ի վեր այդ երկու հակամարտ բնազդների չարաշուք ու յաւիտենական խաղը, տեսնում ենք երկու թշնամի հոսանքների անգուլ բաղխումները մեր դժբախտ օրիզոններում... Մի կողմից՝ նոմադ և պատերազմիկ ցեղերի արշաւն է, որ գնում է ամենուրեք թափով ու շառաչով, աւերելով քաղաքներ, փճացնելով արդիւնագործութիւն ու առևտուր և ջնջելով մարդկային անհամար կեանքեր. միւս կողմից՝ դրա հետ զուգակցաբար—մի զարմանալի և հրաշագործ համբերողութեամբ ու տոկունութեամբ—ընթանում էր խաղաղ նստակեաց հայրենի մրջունային աշխատանքը, նրա համեստ, քրթնաջան և շինարար ճիգը, որ շինում էր յաւերժօրէն առաջինների աւերածը, վերակենդանացնում հողը իր անխոնջ գութանով, վերաշինում քաղաքները իր հմուտ ճարտարարուեստով և իր խաղաղ ու լրիւ առևտրական կարաւաններով...

Գութան և կարաւան—երկու հզօր խթաններն են հայկական քաղաքակրթութեան, երկու ցայ-

տուն ու պերճախօս յայտարարները ցեղի յաւառ, ստեղծագործող և անպարտելի բնազդի։

Նրանք են, որ մոցրել են աշխատանքի լայն բաժանում հայկեան համայնքի մէջ — որպիսին մենք չգտանք օսմանեան ու այլ թաթար զանգւածներում — նրանք են, որ հնուց շերտաւորել են համայնքը դասակարգային բեղմնաւոր անջրպետներով և նետել են հայ ցեղը բարդ, այլատարբ, քաղաքակիրթ հասարակութիւնների շարքը, զատելով այն՝ իրեն շրջապատող պարզ, համատարբ և օրդային զանգւածներից։

Երկրագործութիւնը, հողի մշակոյթը (*culture*), այնքան նուրբ թելերով է հիւսւած քաղաքակրթութեան էութեան հետ, որ առաջադէմ ազգերի լեզուներում երկու բառերը գրեթէ հոմանիշ են։ Երկրագործութիւնը, մարդկային օգտակար գործունէութեան ամենահին և ամենագլխաւոր ճիւղերից մինը, այն աստիճան կարևոր, ծանրակշիռ է, այն աստիճան սուրբ ու նիւրական, որ հնագոյն աւանդութիւնները տալիս են նրան աստուածային ծագում... Որովհետև հողի մէջ է, որ մարդկութիւնը գտնում է աղբիւրն իսկ իր գոյութեան, որովհետև հողն է, որ ժամտկարարում է ազգերի անունդի ու կենցաղի համար առաջնագոյն անհրաժեշտութեան պէտքերը. հողն է, որ գարձնում, կերպարանափոխում է անօրգան զանգւածները, ստեղծելով նրանցից — մարդկութեան ու անասնութեան համար — օրգանաւոր նիւթեր, կրկնապատկելով ու բազմապատկելով անդադար. որովհետև, վերջապէս, հողի մշակու-

թեամբ էն, որ մի ցեղ գառնում է նստակեաց, ըստեղծում է աստիճանաբար Հայրենիք։

Ահա թէ ինչու երկրի ժշկոյթը գասւում է սովորաբար այնքան բարձր ու պատւաւոր աստիճանի վրայ, աւելի բարձր, քան շատ ուրիշ արւեստներ, աւելի բարձր, քան մարդկային աշխատանքի զարգացման մի քանի այլ հանգրւանները—խաշնարածութիւն, որսորդութիւն և այլն։

Մի նւիրական արւեստ, որ ձեռք է բերւել հսկայական ճիգերով, անդուլ, յարատեւ աշխատասիրութեամբ, շարունակական դիտողութիւններով ու գիւտերով, որոնք փոխանցւել են ցեղի մէջ սերնդէ-սերունդ, կազմելով նրա մեծագոյն արժէքներից, ստացւածքներից մինը։

Մինչդեռ տիրապետող իսլամական ցեղերը—թիւրքը, քիւրդը—գեռ այսօր ևս տակաւին գանգւածօրէն չեն վարժւած, ընտելացած այդ թանկագին, անհրաժեշտագոյն արւեստին, հայութիւնը մղել է այն՝ անյիշատակ դարերից ի վեր։ Հայկական երկրագործութիւնը, ինչպէս և առևտուրը, կորչում են Հնութեան գիշերի մէջ...

Տարաբախտաբար, մեր պատմագիրները շատ ժլատ են տեղեկութիւններով Հայաստանի երկրագործութեան վիճակի մասին, սակայն, կցկտուր վկայութիւններն էլ բաւական են հաւաստելու, որ աշխատանքի այդ ճիւղը աւանդօրէն յարգւած է եղել մեր ցեղի մէջ, որ հայութիւնը եղել է էապէս երկրագործ մի ժողովուրդ։ Դեռ Խորենացին վկայում է — փոքր ինչ թերևս չափազանցնելով — որ Հայոց Արտաշէս թագաւորի օրով էէր կարելի գտնել անմշակ հողեր, ոչ դաշտային և ոչ լեռնային մասերում.

... ի ժամանակս Արտաշէսի՝ ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային *)...

„Ղարսի նահանգում — ասում է Սիմ. Զաւարեան իր գիտական աշխատութեան մէջ — Թէշ-Քիլիսէի վանքի մօտիկ ժայռի վրայ ես գիտեցի 1894-ին հացահատիկներ ծեծելու մի գործիք, 12—14 սաժէն տրամագծով, շինուած կոկ, տաշուած քարի լաստերից, որ պահպանւում է XIII—XIV դարից ի վեր և որ պարզ վկայում է, թէ որքան խորունկ ուշագրութիւն է ընծայել երբեմն հայ ազգաբնակութիւնը՝ երկրագործութեան։ Ծարակոյս չկայ, որ այժմեան հայերի նախնիքների երկրագործական արուեստը չէր կարող ժառանգաբար չփոխանցել նրանց՝ մի քանի յատուկ գծեր, յատուկ բնազդ, ընդունակութիւն այդ տեսակի արդիւնագործութեան համար“ **)

Նոյն խորհնացին հաւաստում է, որ „մերոնք յաճախ պտոյտներ էին գործում յունական (Միջերկրական) և կասպից ծովերի շուրջը“... անտարակոյս առևտրական նպատակներով։ Նոյնը վկայում է Ստրաբոն, վկայում են և շատ ուրիշ յոյն ու հռոմայեցի գրողներ։ Հայաստանը եղել է առևտրական յարաբերութիւնների մի տեսակ կենտրոն Արևելքի և Արևմուտքի միջև։ Հերոդոտի ասելով, հայերը շինում էին նաւեր և յողում Եփրատի վրայից.

Հայերը օգտւում էին այդ երկու գետերից (Եփրատ

*) Հրատ. Ամստերդամ 1695 թ.։

**) Ս. Զաւարեան. Գիւղատնտեսութեան հետազօտութեան փորձ Երևանի և Ղարսի շրջանում (ռուսերէն) 1899 թ. էջ 241։

և Տիգրիս), պարսիկների հետ առևտուր մղելու համար։ Եփրատով նրանք գնում էին Բաբելոն պղնձէ կոլոր և թեմեւ նաւերի մէջ... Կասպից ծովը և Պոնտոսը մատակարարում էին հայերին ապրանքները, որ նրանք վաճառում էին պարսիկներին։ Այդ ճանապարհով ոչ միայն Հիւսիսի առևտուրն էր մղւում Պարսկաստանի մէջ, այլ և Հնդկաստանինն ու Չինաստանինը, որոնց ապրանքները Օքսուս գետով իջնում էին դէպի Կասպից ծով, այնտեղից Քուր վրայով տարւում էին դէպի Սև ծով, ուսկից նրանք տարածւում էին ամբողջ Եւրոպայում *)։

Երկրագործութեան հետ—առևտուր։ Մի այլ կարևոր ճիւղ մարդկային գործունէութեան, որի հետ կապւած է ժողովրդական տնտեսութեան մի յատուկ ձև, մի յատուկ կազմակերպութիւն, միանգամայն տարբեր խաշնարած և գինւորական համայնքների տնտեսութիւնից։

Առևտուրը, վաճառականութիւնը, թէև ինքնին չի արտադրում, արդիւնաբերում, բայց խթանում է արդիւնաբերութիւնը, փոխադրում ու բաշխում է արդիւնքները ժողովուրդների միջև, կատարում է նոյն դերը, ինչ որ արիւնատար անօթները մարգկային, կենդանական օրգանիզմի մէջ։

Անհագին է, մանաւանդ, նրա ազդակի դերը քաղաքակրթութեան տարածման ու առաջխաղացութեան տեսակէտից։ Առևտրականն է, որ զարկ է տալիս ժողովուրդների շփման, նա է, որ միշտ արտահանութեան վայրեր փնտրելով, ճանաչում է իւրաքանչիւրի պահանջները, կենդանացնում է ազգերի հաղորդակցութիւնն ու փոխադարձ ծանօթութիւնը և ապրանք-

*) *Huet, Histoire du Commerce et de la Navigation des anciens*, Հրատ. 1716 թ. էջ 52—53։

ներբ փոխանակութեան հետ առաջ է ժղում գաղա-
փարների փոխանակութիւն, մարդկանց և ազգերի
շարունակական փոխադրուածներ, ներգաղթ ու արտա-
գաղթ... Առևտրի հետ կապուած է, վերջապէս, քա-
ղաքների ծագումը, — և հայոց „քաղաքակրթու-
թիւն“ բառը միանգամայն թարգմանում է առևտրի,
վաճառականութեան այդ առաջնակարգ պատմական
կարևորութիւնը, իբրև էապէս կուլտուրասաեզծ, քաղա-
քակրթիչ ազդակի։

Եւ այդ ազդակը մշտնջենապէս շեշտուեց հայ ճակա-
տագրի գլխաւոր յեղյեղուածների մէջ։ Նա ունեցաւ
ահագին ներգործութիւն հայոց պատմութեան, հայկա-
կան պրօգրէսի և հայ-ազգային ինքնաճանաչու-
թեան վրայ։ Առևտրական հակումը, միացած երկրագոր-
ծական, մշակոյթական բնազդի հետ, վաղուց ի վեր ամ-
րապէս պատուաստուեցին հայ արիւնի մէջ, դարձան նրա
նիւթական և անքաժան սեփականութիւն։

Ինչպէ՞ս „դարձան“... Ո՞վ է պատասխանողը։ Ինչո՞ւ
այդ երկու մեծագործ բնազդները չպատուաստուեցին միւս,
դրացի ցեղերի մէջ. և ինչո՞ւ նրանք այնքան զօրեղ
սլացք առան հայութեան մէջ...

Բ ն ա կ ա ն մ ի ջ ա վ ա յ ր ն է, որ կռում է ցե-
ղային նկարագիրը—փաստեցինք արդէն նախորդ գլխում։

Բնութիւնն է, մանաւորապէս կլիման է, Մօն-
տեսկիօի, Հերդերի և այլոց հռչակած կլիման՝ որ միա-
ցած հողի գծագրութեան, ապրուստի, անունդի միջոց-
ների հետ, որոշում է մի ցեղի առանձնայատուկ պատ-
կերը։ Ո՞ր բնութիւնն է, որ կռել է հայութեան „ցե-

ղային դէմքը", նրա կորովի, քաղաքակրթիչ, մշակողական եռանդը... Այժմե՞նն է արդեօք, թէ նախկինը,— ա՞յն, որի մէջ ապրել է ցեղը երկար դարեր, նախ քան իր չուն դէպի Հայաստան...

Հասարակական պրօգրէսը, ինչպէս ամեն բան բնութեան մէջ, ընթանում է նւազագոյն դիմադրութեան ճանապարհով. և այդ օրէնքի զօրութեամբ, քաղաքակրթութիւնը ծլում ու զարգանում է սովորաբար այն երկրներում, այն բնական միջավայրերում, ուր աշխատելու և արտադրելու պայմանները համեմատարար դիւրին են, ուր գոյութեան պայքարը տանելի է, ուր մարդիկ համեմատաբար սակաւ են ճիգ թափում՝ յաղթահարելու բնութեան խոչընդոտները և հայթայթելու իրենց նիւթական գոյութեան միջոցները

Հայոց բնութիւնը, Հայաստանի կլիմայական պայմանները դժւար են յարմարւում սօցիօլօգիայի այդ հիմնական պահանջներին Այդ բնութիւնը, այդ կլիման, այդ վիթխարի ձիւնային և սառցային զանգւածները, այդ քքաշունչ լեռներն ու խորանդունդ ձորերը, որ կտրատում, բաժանում են երկիրը անթիւ կանաւոնների, ձգելով նրանց միջև անանցանելի խրամատներ—թւում է, թէ այդ բոլորը չէր կարող այն հեռաւոր ժամանակներում նպաստաւորել, խթանել Հայոց լեռնադաշտի ազգաբնակութեան կուլտուրական ճիգը, քաղաքակրթական ինիցիատիվը, մշակողական և ստեւտրական եռանդը։

„Հայկական Ալպերի հսկայ լաբիրինթը — ասում է մեծ աշխարհագէտ Էլիզէ Ռէկլիւ—որ ձգւում է քուր

աւազանից մինչև Սև ծովն ու Բարձր Եփրատը, մինչև Վանայ լիճն ու պարսկական սահմանները... իր բարձրաբերձ կատարներով, լերկ, չորացած զառիվայրերով, կիրճերով ու խորխորատաններով... մի վայրենի, գրեթէ սարսափելի տեսք է ընդունում իր մենութեան մէջ“ *)..

Ա՛հ, անշուշտ, այդ վիթխարի լեռնագաշտը, ուր թաւալւել է հայոց տխուր, մրրկածուփ պատմութիւնը անյիշատակ օրերից ի վեր, ուր խաղացել է և մեր անմոռանալի, ողբերգական դիւցազնամարտը վերջին քառորդ դարու ընթացքում—այդ հայկական լեռնագաշտը ունի և իր դիւթիչ հրապոյրները, իր վայրենի և խօլական գեղեցկութիւնը, իր վեհափառ, հսկայաբերձ գագաթները, իր յստակ, եզերական ջրերը, իր պայծառ և լայնարձակ հորիզոնները, որոնք զմայլում և պաշտամունքի խօսքեր են պոկել օտար ճամբորդների շրթներից, որոնք ստիպում են մի անգլիացի Լինչի՝ հեռևեալ գովքն արտասանել, Հայաստանի մեծագոյն զաւակներից մէկի—Խրիմեանի—դիմագծերը բնորոշելիս.

„Իր գեմքով, կազմուածքով և բնաւորութեամբ, նա անձնաւորումն էր իր երկրի բարձրադագաթ լեռնային զանգուածների, լայնածաւալ հեռապատկերների և վճիտ ու յստակ ջրերի, որոնց ոգին յաւիտենօրէն պիտի թրթռայ քնքոյշ և վեհափառ մեղեդիների պէս այն բոլոր ճամբորդների յիշողութեան մէջ, որ պատել են Հայաստանում“...

կան ուրիշ հրապոյրներ ևս. կայ բերրի, արգասաւոր

*) *E. Reclus, Asie Antérieure.*

հողը, որ վիտալ կինէի ասելով, բացնում է աշխարհի լաւագոյն ցորենը, որ չնայեած անտառների բացակայութեան, տալիս է առատօրէն նաև անթիւ ուրիշ բերքեր, 1500 —2000 մետր բարձրութեան վրայ,—այդ հողը, որ Քսենոֆոնի և այլոց հիացմունքն է շարժել իր անսովոր բեղունութեամբ... Կան գետերը, ջրառատ, յորդահոս, որ աղբրում են Բարձր Հայքի լեռնագաշտից, ողողելով պատկառելի տարածութիւններ. կայ հարաւային Հայաստանը, նրա մեծագոյն մասը, որ չնայեած պօնտոսեան Ալպերի հսկայական պատնէշին, ենթակայ է անձրևային հոսանքների՝ հոսանքներ, որ գալիս են ծովից, ուղղելով դէպի Սեբաստիոյ լեռնավայրը և հասնելով մինչև Էրզրումի դաշտը: Կայ այն բարեբախտ հանգամանքը, որ անգամ Վանի շրջակայքում 1400 մետր բարձրութեան վրայ, կարող են բանել ֆրանսիական *Côte d'Asure*-ի սքանչելի պտուղները՝ կիտրօնը և նարինջը *)... Կան բազմաթիւ այլ բարիքներ ու առաւելութիւններ, — և այնուամենայնիւ, Հայաստանի բնութիւնը ընդհանուր առմամբ չի կարելի դասել, քաղաքակրթութեան տեսակէտից, „միջավայրային“ նպաստաւոր, բարելաջող կատեգօրիայի մէջ:

Ութ ամիս ձմեռ: Ձիւնը թափւում է հսկայական առատութեամբ և իր թանձր շերտերի տակ ծածկում ամբողջ երկիրը: Ճամբաները փակւում էին այն վազեմի ժամանակներում, հաղորդակցութիւնը կտրւում էր, „կարաւանները յաճախ կորչում էին ձիւնի զանգւած-

*) *E. Reclus, Asie Antérieure.*

ներբ տակ“ — այսպէս են վկայում 17-րդ դարում Հայաստան պտտող տուրիստները։ Ձիւնը թափ. ւում էր այնպիսի քանակութեամբ — ասում է Վիտալ կինէ — որ Էրզրումի մէջ տունէ-տուն անգամ կտրւում էր հաղորդակցութիւնը։ Ջերմաչափը իջնում է մինչև 30 աստիճան զէրօից ցած։ Ձիւնը և բուքը — երբեմն նոյնիսկ յունիս ամսի մէջ։ Ձիւնը տեսել են Էրզրումի մէջ — անգամ յուլիսին“ — յարում է Էմիգէ Ուէկլիւ... „Պարուն չկայ այնտեղ, աւելացնում է աշխարհահռչակ գիտնականը. կան կլիմայի ծայր-բևեռներ, մերթ կատաղի սառնամանիք, մերթ կիզիչ, տրօպիկական շոգ... և Թիւրքաց Հայաստանի ազգաբնակութիւնը յատնաւորապէս շատ է տառապել այդ սոսկալի կլիմայական ծայրայեղութիւններից...

Այդ բոլորը կայ, եղել է միշտ։ Եւ սակայն... ճիգը չի մարել այդ բնութեան զարմանալի բնակիչների մէջ, ընդհակառակը. յամառ ու տոկուն աշխատասիրութեամբ՝ ցեղը մշտապէս հակազդել է իր գարհուրելի միջավայրի տարկանոնութիւնների դէմ։ Նա ցոյց է տւել յարմարումի (adaptation) մի արտակարգ կարողութիւն։ Մերկ, սառնաշունչ բնութիւնը մէկէն ի մէկ, ճակատագրապէս չի դժբախտացնում մարդկային ցեղերը, ինչպէս որ ձոխ, փարթամ բնութիւնն էլ միանգամայն չի երջանկացնում նրանց։ Օրինակը տեսանք արդէն նախորդ գլխում։ Շարունակական և բեղմնաւոր ճիգերով հայութիւնը աջողել է գէթ մասամբ յաղթահարել բնութեան այդ խոչերն ու սարսափները, աջողել է իր անառիկ, անանցանելի լեռներում իսկ՝ մի յայտնի չափով

տալ քաղաքակրթութեան գործին։ Նրա դաշտերը չորացել են երաշտից—նա առուներ է փոխադրել հեռաւոր վայրերից հազար ու մի դժւարութիւններով և ջրել է, արգասաւորել։ Նրա կարաւանները թաղւել են ձիւնի ու բուրանների մէջ — նա վերստին և անվհատ նորերն է կազմակերպել ու նետել ձիւնապատ անգունդների վրայից դէպի Պարսկաստան ու Միջերկրական։ Եւ այդ բոլորը ի՛նչ ահաւոր ռիսկերով, ի՛նչ սոսկալի քաղաքական ռէժիմների տակ, ի՛նչ դաժան անապահովութեան պայմաններում... Բ ն ո ւ թ ի ւ ն ը և բ ռ ն ո ւ թ ի ւ ն ը սեղմել են, կաշկանդել նրա թափը, բայց նրա յաժառ, քրտնաջան աշխատանքը ի վերջոյ յաղթող է հանդիսացել։

Բ ն ո ւ թ ի ւ ն և աշ խ ա տ ա ն ք... Թերևս սխալ չէր լինի ասել, որ մէկի շնորհիւ (գլխաւորապէս) հայ ցեղը ապրել է, յարատևել, միւսի շնորհիւ քաղաքակրթւել է ու առաջադիմել։ Ո՞վ գիտէ... Ձլինէր հայկական բքաշունչ լեռնաստանը, չլինէր այդ վիթխարի ու անառիկ „Լեռ-Կղզին“—ինչպէ՞ս անւանում է մի այլ մեծանուն աշխարհագէտ, Կարլ Ռիտտէր—գուցէ հայոստանն էլ վաղուց արդէն փոշիանար, իբրև ազգ ու հայրենիք, ինչպէս որ փոշիացել են ուրիշ, հասակակից, աւելի ևս քաղաքակիրթ ժողովուրդներ, որոնք մի մի հսկաների պէս անյիշատակ հնութեան մէջ հաստատւել էին ոչ հեռու նրա սահմաններից և իրենց շքեղ քաղաքակրթութեամբ շլացրել էին աշխարհը... Բաբելոն, Ասորեստան, Փիւնիկիա և այլն։

Կարլ Ռիտտէր առանձնապէս շեշտում է, որ ամե-

նահին ժամանակից ի վեր հայ ցեղը, դրած լինելով անդուլ արշաւանքների թատերավայրում, կարողացել է այնուամենայնիւ պահպանել իր ազգութիւնը... Ւ.ւ բացատրում է այդ հանգամանքը երկրի դիրքով: „Բնականապէս պաշտպանուած հայ երկիրը—ասում է նա—իր հարիւրաւոր բարձրաբերձ հովիտներով.. ապաստան է եղել շատ հալածեալների“ *)...

Այո, այդ ահաւոր բնութիւնը, որ իր անբաւ հարուստութիւններով և աշխարհագրական իր դիրքով Արևելքի և Արևմուտքի միջև, հրապուրել է միշտ թշնամիների բնաջնջող հօրդաները, որ իր դաժան կլիմայով, իր անհամբոյր պատկերով, աշխատանքի ու վաստակի իր դրժուարին պայմաններով, միացած քաղաքական անտանելի հանգամանքներին, դարեր շարունակ խորթ մոր պէս քշել է իր սահմաններից իր հարազատ զաւակներին, որոնք գնացել, բուն են դրել աշխարհի չորս կողմերում, առանալով հրէութեան պէս թափառական ցեղի հրաշակ—այդ աղէտաւոր բնութիւնը, միւս կողմից, պայման է եղել ցեղի անսահման ֆիզիկական յարատեւութեան, նա պահպանել է ազգութեան կորիզը, սուբստանցը: Երբ նա փորձել է դիմադրել թշնամու յորձանքներին, մրցման մանել նրանց հետ, նրան կոբուստով յետ են քշել, բայց չեն կարողացել բնաջինջ անել կամ յետ մղել, որովհետև նա միշտ ամուր ապաստան է գտել իր անառիկ լեռնավայրում.. Հայոց ձմեռը, ասում են պատմագիրները, յաճախ է սարսափեցրել և նահանջի հարկադրել աշխարհակալող թշնամիներին,

*) *Carl Ritter, Erdkunde, X* հատ. էջ 584։

Այլ դրական հանգամանք՝ գտնելով հաղորդակցութեան մեծ ճամբու վրայ, Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, հայ երկիրը եղել է միշտ շարժման, փոխադրութեան թատերավայր ոչ միայն զրահապատ ու գիշատիչ լեգէօններուն համար, այլ եւ ա պ ր ա ն ք ն ե ր ի՝ որոնք շարժուել են Ասորեստանէն, Պարսկաստանէն, արդիւնաբերութեան այլ վայրերէն դէպի Սեւ ծով եւ այնտեղէն դէպի Արեւմուտք... Շարժուել են Հայաստանի վրայով ապրանքներուն հետ՝ եւ մտքերը, գաղափարները, շարժուել է, կարող ենք ասենք, ամբողջ հնադարեան կուլտուրան, քաղաքակրթութիւնը... Եթէ Հայաստանը փուած չը լինէր հին աշխարհի միջազգային հաղորդակցութեան այդ մեծ ճամբու վրայ, դժուար թէ նա ունենար արդէն երրորդ, չորրորդ դարում՝ պատկառելի քաղաքակրթութիւն. հայ տարրը դժուար թէ կարողանար ստանձնել որեւէ կուլտուրական նախաձեռնութիւն եւ Մեսրոբների ու Սահակների, եղիշէների ու էզնիկների հ ա յ ր ե ն ի ք ը դժուար թէ կազմակերպէր...

Քանի՛ դարեր Մ իջ ե ր կ ր ա կ ա ն ը առևտրի ամենախոշոր զարկերակն էր, հաղորդակցութեան մեծ ուղին արևմտեան, արևելեան և հարաւային ազգերի համար. Արևմուտքից, մշակուած ապրանքները հասնում էին ասիական եզերքներին, ապա այնտեղից շարունակւում էին կ ա ր ա ւ ա ն ա յ ի ն գ ծ ե ր ո վ Կովկասի, Հայաստանի վրայով դէպի Պարսից ծոց, Հնդկաստան ու Չինաստան. Միջին դարերում, ասում է Ռէկլիւ, ջենովացի վաճառականները անցնում էին Սեւ ծովի եզերքներից, մտնում էին Անդրկովկասի խորքերը, հասնում

էին մինչև կասպից ծով։ Եւ միաժամանակ եւրոպացի ճամբորդները, յատնաւորապէս իտալացիք, երթևեկում էին փոքր Ասիոյ գծերով։

Այդպիսով բնութեան արհաւրալի և ընդհանրապէս աննպաստ պայմանների հանդէպ—պրօգրէսի ու քաղաքակրթութեան տեսակէտից—մի անգնահատելի հատուցումն էր երկրի աշխարհագրական դիրքը... Հայ ժողովուրդը, Հայաստանը, դեռ հին դարերում գտնելով կարաւանային զարկերակ-ճանապարհի վրայ, ծառայելով իբրև մի տեսակ մթերանոց, ուսկից անցել են հին աշխարհի ապրանքային հարստութիւնները, ինքն էս նեռւել է, իբրև գործօն, հրահրող, արգասաւոր մի ազդակ, այդ նիւթական և միանգամայն իդէական շարժման յորձանքի մէջ. յանձին իր զանգւածային ընդհանրութեան՝ նա անձնատուել է երկրագործական աշխատանքներին, փարել է մի սրբազան աւիւնով ու գորովանքով իր ժաճին ու արօրին, իր նիւրական, թէկուզ և յաճախ ողբալի, տնտեսութեան շուրջը, իսկ ի դէմս իր խիզախ ու ձեռնարկու փոքրամասնութեան՝ գրկել է առևտրի և արկածալի թափառումների ցուպը, դարձել է ժամանակի ընթացքում այն կարևոր և ազդեցիկ ուժը, որին աշխարհը տւել է մի նախանձելի, պատւաւոր տիտղոս—„միջնորդ Ասիոյ և Եւրոպայի միջև“...

Ծանր էր այդ ցուպը, սարսափելի արհաւիրքների միջից էր նա հարթում ճանապարհը, բայց քաղաքակրթութեան դրօշակակիր կարաւանը ընթանում էր անխռով և անվհատ, հայ վաճառականի առաջնորդութեամբ, չէզոքացնելով — կրաւորական, համբերատար

գիմադրութեամբ — թէ բնութեան և թէ մարդկանց անհաշիւ խոչընդոտները... Քայլում էր „դայեան“, հաւատացական և տրորուած ամենուրեք, հանդիպելով շարունակ հարուածներ ու անարգանքներ, բայց „կլլելով“ ու ու մարսելով անմռունչ, ստրկային համակերպութեամբ։

Զափազանց բնորոշ են Ժ ո ւ բ ե ր ի այս խօսքերը, որ վերաբերում են միջնադարեան հայ վաճառականների մասնութեան ու բարոյականին.

Նրանք առնում են ամենուրեք կարգի ու հնազանդութեան մի ոգի, որը սովորաբար տալիս է նրանց վարկ ու հարստութիւն։ Ուշադրութեան առնելով հոգսերը, յոգնութիւնը և անգամ սրբացուցիչ ու նախատինքը (humiliation et outrage), նրանք հաւաքում են պատկառելի հարստութիւններ, առանց մտածելու ամէն տեսակ վտանգների մասին, որոնք նրանց պաշարում են այդ երկիրներում)...*

Ա յ ո՛ — գերազանցապէս „յարմարուող“ մի ցեղ... Գոյութեան կռիւի մէջ յ ա ր մ ա ր ո ւ ո ղ ն ե ր ն ու յարատեւողները անպատճառ միայն ճիրանաւոր գիշատիչները չեն։ Բնութիւնը ամենուրեք չի գատապարտել ո չ ո ւ զ մ ա ս է ր ժողովուրդներին։ Նայած միջավայրին՝ նա զարգացրել է որոշ, խաղաղ համայնքների մէջ, բռնակալական ազդեցութիւններով շրջապատուած ժողովուրդների — հայերի, հրէաների մէջ — ուրիշ կարգի բ ն ա հ ա կ ո ւ մ ն ե ր, սրել է նրանց միտքն ու հոտառութիւնը, զարգացրել է նրանց մէջ հնարագիտութիւն, խորամանկութիւն, յամառ ու կուռ դիմացկունութիւն, զարգացրել է, մի խօսքով „յարմարելու“ այլազան բնազդներն ու ընդունակութիւնները... Բնազդ-

*) *Jaubert, Voyage en Arménie*, էջ 110։

ներ և ընդունակութիւններ՝ որոնք, աւա՛ղ, միշտ չեն ուղղել դէպի ազնիւը, դէպի բարձրն ու առաքինին, այլ յաճախ ստորացրել են ցեղը, կաշկանդելով, անդամալուծելով դրական, ազնիւ ժղուճները, արծարծելով սիրապաշտութեան, սարկամտութեան, մարդկային անարգ սերվիլիզմի յատկութիւնները, որոնց մասին ակնարկեցինք Բայրընի բերնով մեր առաջին յօդուածի մէջ և որոնք այնքան դանդաղութեամբ ու դժւարութեամբ են արմատախիլւում, տարաբախտաբար, այդ ցեղերի գիտակցութիւնից ..

Որքա՜ն դժւար է դատապարտողի և խարանողի դեր ստանձնել հանդէպ այդ բացասական յատկանիշների, այդ արատաւոր բնազդների, որ հայութիւնը վաստակել է իր պատմութեան երկարատև ու դժոխային պրօցէսի մէջ... Ինչպէս անհատի, այնպէս և ցեղի այս կամ այն յատկութիւնը՝ պէտք է քննադատել և գնահատել, կանգնելով այն ժամանակի տեսակէտի վրայ, ի նկատի առնելով այն գործերի ոգին ու բնոյթը, երբ առաջացել են այդ յատկութիւնները—մի տեսակ երկաթէ, ճակատագրական անհրաժեշտութեամբ...

Այդ մռայլ ու երկարաձիգ գարերի ընթացքում, փոքրիկ ցեղը սրել է այն՝ ինչ որ սրել են և կ'անեն միշտ բոլոր թոյլ ու իմացական հաւասարքները բռնակալութեան անագորոյն խարազանի տակ. գիտակցելով իր անել, հոգեվարքային վիճակը, չունենալով ոչ մի տեղից փրկութեան գրաւական, յաւտոյ նշոյլ՝ նա խառնարհութեամբ ճկել է պարանոցը, քայլել է կորագլուխ ու անմռունչ՝ հալածանքների ու անարգանքներից միջից,

քայլել է, առանց իրեն հաշիւ տալու, դէպի աւելի բարձր հանգրուաններ, դէպի աւելի յուսալի ժամանակներ, երբ ըմբոստացումի կայծերը պէտք է դուրս ցայտէին ազգային ինքնագիտակցութեան մեծ վառարանից...

Ցեղը „ապրել է“... Բացասական հակումներով բեռնաւորուած՝ նա կարողացել է քարշ տալ իր գոյութիւնը ժամանակի խոլ արկածների միջից. նա ապրել է... Եւ ապրելու այդ սիրական և անողոք հրամայականի, պօստուլատի առջև՝ յաճախ նաեւ մեր ժամանակներում է—հաւաքական ժարժիններըի, ազգերի աչքում—ամեն ուրիշ մտահոգութիւն... Նրա առաւել՝ որ բարոյականութիւնը հանդիսանում է առաձգական մի հասկացողութիւն, որ նրա պահանջները տարբեր են եղել հասարակական զարգացման տարբեր աստիճանների վրայ, որ այն պատմական հեռաւոր ժամանակներում բարոյական է համարւել ամեն բան, որ նպաստել է ցեղի պահպանման և ամեն բան, որ արգելք է եղել նրա բնաջնջման *):

Ձը մոռանանք և այն՝ որ որոշ յատկութիւններ հանդիսանում են յաճախ մի տեսակ երկսայրի սրեր, որ

---

*) Հայ պահպանողականները չեն կարող կարդալ այս տողերի մէջ արդարացումը իրենց վաղեմի հակայեղափոխական քարոզչութեան, Նուբեանների և Աշըգեաններին բռնած տակտիկի, „Ազգային պահպանութեան“ գաղափարն էլ առաձգական է... Հայ յեղափոխականի համար ևս ազգի պահպանումը—միջազգային համերաշխութեան դաւանանքով միասին—դերագոյն հրամայականն է։ Միայն թէ... Նա ձգտել է միշտ պահպանել ազգը, աստիճանաբար բարձրացնելով, աղնւացնելով այն։ Հակայեղափոխականների գեանաքարշ, սուլթանահաճոյ քաղաքականութիւնը

բացասական ժամանակի ու տարածության ուրիշ ծայրերում՝ զարնում է յաճախ, իր հակոտնիայի, դրական մէջ... Այդպէս, օրինակ, ծայրայեղ համբերատարութիւնը բռնակալական-փաշայական ոէժիմի հանդէպ, դարաւոր ու անմռունչ համակերպումը մարդկի ու կախաղանի հարւածների տակ՝ մի կողմից մեղկացրել և ստրկացրել է հայութեան լայն զանգւածները, որոնք մինչև օրս էլ վերջնականապէս չեն թօթափել այդ ստրկական մղձաւանջը. բայց միւս կողմից, նոյն չարաբաստիկ յատկութիւնների մէջ կուռել-կոփւել են այդ զանգւածները, վաստակել են պազ, անխռով, ստոյիկեան անտարբերութեան այն ջիղը, որով ազգը արհամարհել է ճակատագրի անօրինակ փորձութիւնները և իր ծով տառապանքի միջից՝ միշտ յուսավառ, նշմարել է բնազդօրէն գալոց փրկութեան արշալոյսները...

Ի՜նչ փոյթ, թէ հայ առևտրականը հին ու միջին դարերի մէջ արծարծել է ամեն տեսակ արատներ, կեղծիք, վաշխառութիւն, սարբաֆութիւն ու անսանձ շահագործումներ—որոնք այսօր էլ տակաւին ծանրացած են անէծքի պէս ցեղի հոգւոյ վրայ... Առևտրականն, այնուամենայնիւ, հանդիսացել է ասիական խորշերի մէջ՝ բաշ ու անխոնջ նախապետը եւրոպական քաղաքակրթութեան:

19-րդ դարի վերջերում՝ ազգապահպան չէր, այլ ազգակործանն նա տանում էր դէպի վերջնական այլասերումն, բնաւ չ՝ապահովելով հանդերձ ժողովուրդը փիղիկական բնաջնջումից — ինչպէս բազմիցս փաստուած է յեղափոխական գրականութեան մէջ:

Տեսէ՛ք թէ ինչպիսի ոգևորութեամբ է խօսում 17-րդ դարու ճամբորդը—հռչակաւոր Պիտտօն դը Տուրնը ֆօր — կուլտուրայի այդ անվկանդ ռահվիրաների և ամբողջ ցեղի մասին... չնայեած որ էջմիածինը սաստիկ վշտացրել էր նրան՝ իր ժլատ և գձուձ հիւրընկալութեամբ.

Հայերը աշխարհի լաւագոյն մարդիկն են, ազնիւ, քաղաքավարի և չափազանց ողջամիտ: Եա նրանց երջանիկ կր համարէի ղէնքի անվարժ լինելու համար, եթէ անհրաժեշտ չլինէր արբեցնապէս ղէնք գործածել. որովհետև զա միակ միջոցն է խուսափելու մարդկանց անգթութիւնից...

Հայերը միմիայն իրենց առևտրով են զբաղւած և նախրւում են նրան այն բոլոր ուշադրութեամբ՝ որին ընդունակ են: Ոչ միայն նրանք աէր են Արևելքի առևտրի, այլ և մեծ մասնակցութիւն ունին եւրոպական ամենամեծ քաղաքների առևտրական յարաբերութիւնների մէջ: Նրանք գալիս են Պարսկաստանից մինչև Լիվօրնօ: Շատ ժամանակ չէ, որ նրանք հաստատւել են և Մարսէլի մէջ. իսկ քանի՞սը կան Հոլլանդիայում և Անգլիայում: Նրանք անցնում են և մօնգօլների մօտ, դէպի Սիամ, Ջավա, ամբողջ Արևելք, բայի Զինաստանից: Ջուլֆան — հայ վաճառականների կենտրոնատեղին՝...

Պատմենք Տուրնըֆօրի խօսքերով իսկ՝ Շահ-Աբբասի և հայերի փոխադարձաբար արած նշանաւոր ծառայութիւնները.

Կամենալով հարստացնել իր պետութիւնը և համոզւած, որ այդ կարելի է անել միայն առևտրով, նա ուղղեց իր ուշադրութիւնը մ ե տ ք ս ի վրայ — որպէս ամենաթանկ ապրանքի — և քանի որ իր միւս հպատակները շատ քիչ ձիրք ունէին առևտրի մէջ, նա գրաւեց հայերին՝ վերջինների պարզ ու չափաւոր կեանքը, խնայողութիւնը, շիտակութիւնը, ձեռնարկելու ուժը, մեծ ճամբորդութիւններ տանելու կարողութիւնները, — այդ բոլորը միանգամայն յարմար էր դարձնում հայերին՝ առևտուր մղելու համար... Իսկ նրանց

քրիստոնեայ լինելը՝ դիւրացնում էր նրանց յարաբերութիւնը Եւրոպայի բոլոր ազգերի հետ... Մի խօսքով, երկրագործ վիճակից՝ հայերին նա դարձրեց (Շահ-Աբբասը) վաճառականներ — և նրանք դարձան երկրագործից ամենահռչակաւոր առևտրականները (*et ces marchands sont devenus les plus celèbres commerçants de la Terre*)... Արևելքի բոլոր ապրանքները յայտնի եղան Արևմուտքում, և արևմտեան արդիւնքները նոր զարդ եղան Արևելքի համար։

Ամեն տեսակ գործակալներ ուղեկցում էին կարաւաններին գեպի հեռու երկիրները. նրանք էլ հայեր էին...

Աշխատեն իրենց համար, կամ՝ աշխատեն Ջուլֆայի վաճառականների համար — նրանք, այդ գործակալները, անխոնջ են ճամբորդութեան մէջ, արհամարհում են եղանակների խստութիւնները։ Մենք տեսել ենք նրանցից շատերին և ամենահարուստներին, թէ ինչպէս ոտքով անցնում էին մեծ գետերը, մինչև վիզը խրուած ջրի մէջ, ոտքէս գլի վեր բարձրացնելին բռնած ձիաներին և ապատէին իրենց ապրանքի հակերը կամ թէ իրենց բարեկամներինը։ Որովհետև, թիւրք ոսլտպաններն շատ էլ չեն հոգում իրենց կրած ապրանքների մասին և ոչ մի պատասխանատուութիւն չեն ստանձնում... Գետերն անցնելու միջոցին, հայերը ոտքով ուղեկցում են իրենց ձիերին և չափազանց հրահանգիչ է տեսնել, թէ որպիսի զգուշութեամբ օգնում են նրանք փոխադարձաբար, կարաւանների մէջ, օգնում են և ուրիշ ազգերի ուղևորներին" *)...

Մի այլ տեղ Տուրնըֆոր, խօսելով Թիֆլիսի մասին.

Երկրի, ինչպէս նաև Շամախիի ու Գանջայի ապրանքը չի անցնում Թիֆլիսով... Հայերը գնում են առնելու տեղն ու տեղը և փոխադրում են Ջմիւռնիա կամ Մինգրելիայի այլ նաւահանգիստներ, ֆրանկներին (եւրոպացոց) վաճառելու համար... Ամեն տարի դրկում են աւելի քան 2000 ուղտի բեռ, Թիֆլիսի շրջակայքից և մեզնից վրաստա-

---

*) *Tournefort, Relation d'un voyage au Levant*, 1730 թ. II հատ. էջ 389—393։

Նից—դէպի Էրզրում, ուսկից փոխադրւում է դէպի Դիարբէկիր", եւայլն *):

Մի այլ տեղ, վերջապէս, նշանաւոր գիտնական-ճամբորդը, նկարագրում է հիացմունքով Երևանի և դաշտի մշակութիւնը հայերի ձեռքով.

Երևանը, պարսկական Հայաստանի մայրաքաղաքը, լեցուն է խաղողի և այլ այգիներով. մարգագետինները խճողւած են պտղատու ծառերով և խաղողով... չնայեած որ ցրտի պատճառով վերջինի մշակութիւնն ու զարգացումը հանդիպում է սահմին դժւարութիւնների... Դաշտը ոռոգւած է գեղեցիկ ադբիւրներով և գիւղական տները գրեթէ նոյնքան բազմաթիւ են, ինչպէս Մարսելի շրջակայքում: Լաւագոյն հողերը ծածկւած են հացահատիկներով, բամբակով, բրինձով. վերջինը փոխադրւում է գլխաւորապէս Էրզրում...

Մի ուրիշ շատ հին ճանապարհորդ, միսիոնար Վիլլետ, որ ուղևորւել է դէպի Թիւրքիա և Հայաստան 1668 թւին, հետևեալն է գրում.

Առևտուրը, գլխաւորապէս մետաքսի առևտուրը մղւում է կարաւաններով դէպի Զմիւռնիա, այնտեղից դէպի Հալէպ, ապա դէպի Levant, ուսկից՝ դէպի Եւրոպա: Հայ խոշոր վաճառականները դարձրել են մետաքսը իրենց առևտրի մեծագոյն բաժիններից մինը: Կան, որ ամբողջ կարաւաններ են բարձում մետաքսի հակերով **)...

Այդ միսիոնարի վկայութեամբ՝ կային միլիոնատէրեր՝ հայ վաճառականների մէջ:

Միւս հինաւուրց ճանապարհորդը, Ամէդէ Թեվենոն նոյնպէս հիացմունքով է խօսում վաղեմի հայերի

---

*) Նոյն հատորը, էջ 315:

**) *Villette, Voyage d'un missionnaire en Turquie, en Arménie.* Հրատ. 1730 թ. էջ 531:

ժշկողական և առևտրական ընդունակութիւնների մասին։ Դա նկարագրում է Վանի շրջակայքը...

Դաշտը պատած է այդիներով, ուր բարձրանում են գեղեցիկ վրաններ։ Ձկայ ոչինչ աւելի կախարդիչ, քան այդ մրգաստանների տեսարանը, ուռղուած անհաշիւ առուներով և շրջապատուած պարիսպներով։

Առևտուրը մղւում է լճի վրայով, կարաւանները գնում են Բաղդադից, Մօսուլից, Մարդինից և Դիարբեկիրից դէպի Թիֆլիս և Տիւսիսային Պարսկաստանը...

Հայերը դոյց են տալիս մեծ խելք և ազնուութիւն առևտրի մէջ։ Ինչպես յոյները եւրոպական Թիւրքիայ մէջ, նրանք իրենց ձեռքն են առած բոլոր հանրային եկամուտների գանձումները սահական Թիւրքիայում... Նրանք տարածուած են Ասիայի գրեթէ ամբողջ մակերևոյթի վրայ, ուր ժողովում են պատկառելի հարստութիւններ *)...

Կարլ Ռիտտէր, խօսելով Հնդկաստանի հինաւուրց գաղութների մասին, յիշատակում է և հայերին.

Հայերը մտել ու հաստատուել են Դեկանի մէջ, իբրև առևտրականներ. նրանք շարունակական յարաբերութեան մէջ են հրէաների և սիրիական քրիստոնեաների հետ։

Տիբետի Սինդինդ քաղաքի մէջ, 18-րդ դարի սկզբում եղել են հայ մուշտակավաճառներ... Լամա գերդաստանի հովանաւորութեան տակ՝ այլ և այլ համայնքներ գոնում էին խաղաղ հաղորդակցութեան մէջ... Հ. Ութդիս գտել է Ցօպա վաճառանոցում Զինաստանի և արտաստհմանի բոլոր ապրանքները... Առևտրականների մէջ, այդտեղ, նա գտել է նաև հայ կաթոլիկներ, որոնք ունեցել են մի վաճառատուն ամենագեղեցիկ մուշտակներով **)։

Հարիւր տարի առաջ—ասում է Ռիտտէր—Արևելքի քաղաքանօթի մէկը, ֆրանսիացի *De la Croix* այսպէս

*) *A. Jaubert, Voyage en Arménie et en Perse,* 1807 թ. էջ 110, 138.

**) *C. Ritter, Die Erdkunde, t.* 2, էջ 177։

էր ներկայացնում իր տեսած՝ Պօլսի և առաջաւոր Ասիոյ հայերին.

Նրանք շատ խելացի ու հաւակացող են, ժուժկալ, խաղաղասէր, քաղցրաբարոյ, շատ աշխատասէր, տնտեսող և անխնջ։ Առևտրի մէջ այնքան խելօք են, որ հրէաներին անգամ կը պերազանցեն։ Պօլսից և Զմիւռնիայից մինչև արևմտեան Եւրոպայի ամենահեռաւոր ծայրերը՝ նրանք ամենուրեք տանում են իրենց արժէքաւոր ապրանքները և ծախում են մի այնպիսի փորամանկութեամբ, որ գրեթէ անհնարին է չհաւատալ նրանցից *)։

Նոյն ձևով է նկարագրում մի ուրիշ արևելագէտ.

Հայերը առաւելում են թիւրք լեզուն աւելի կատարելութեամբ, քան որևէ այլ ժողովուրդ. ջանասիրութիւն, գիմացկանութիւն, չափաւորութիւն — հայկական բնաւորութեան գծերն են։ Բայց դրա հետ կայ և կոպտութիւն, անձկասրտութիւն և այլն։

Նման գնահատութիւն անում է և Շարդէն **)։ Դրական գծերի հետ նա յիշատակում է մանաւանդ պէս հայ հարուստների առատաձեռնութիւնները, խաբէութիւնները, հլու սպասաւորութիւնը փաշաների հանդէպ և այլն։

Ուրգլքնները — անհաւատ։ Ընակեած առատ կաշառքներին և ընծաներին, որոնցով հայ առևտրականը ձգտել է միշտ սիրաշահել փաշաների ու վալիների սիրտը—նա, այնուամենայնիւ, եղել է գրեթէ միշտ կաշկանդւած իր շարժուձևերի մէջ։ կաշկանդւած—անգամ Պօլսում, Եւրոպայի դրան մօտ։ Թւում է թէ պերայի մէջ միայն նրանք վայելել են մի յայտնի ազատութիւն։

---

*) *Erdkunde, X հատ., էջ 634։*

**) *Chardin, Voyage en Perse.*

Հարուստ հայերը, ասում է Օլիվիէ, եկան հաստատուեցին Պերսիի թագում, որպէս զի աւելի սակաւ ենթարկուին թիւրքերի կեղեքումներին ու անարգանքներին և որպէս զի մի քիչ աւելի ազատութիւն վայելեն եւրոպացիների ներկայութեան շնորհիւ։

Եւ ապա շարունակում է Օլիվիէ (խօսելով եւրոպական թիւրքիոյ և մասնաւորապէս Պօլսի մասին).

Հայերը ամենքն էլ վաճառական են։ Նրանք են, որ մղում են ամենալայն առևտուրը և մղում են ամենամեծ իմացականութեամբ։ Նրանք համբերատար են, տնտեսող, անխոնջ։ Նրանք ճամբորդում են Ասիայ ներսում և Հնդկաստանում։ Ունին վաճառատներ և թղթակիցներ՝ ամենուրեք։ Մեծամասնութիւնը կիրառում է մեքանիկ արուեստներ։ Բանկիրներ են, մատակարարներ, փաշաների ու այլ մեծերի գործակալներ։ Նրանց մեղադրում են այն բանի մէջ, որ անխտիր ամեն միջոց գործ են դնում, հարստանալու համար և որ խաբում ու կեղծում են ապրանքները, երբ կարող են։ Այսուհանդերձ, ձգտելով ըստ կարելւոյն շատ վաստակել, նրանք սակաւ են գանցառու լինում իրենց յանձնառութիւնների նկատմամբ և առհասարակ ճշտապահ են իրենց խոստումները կատարելու մէջ։ Խստաբարոյ և տգէտ ու նախապաշարուած՝ նրանք պէտք ունին միայն կրթուելու և փոքր ինչ արդար կառավարութեան, որպէս զի դառնան անտահմանօրէն յարգելի մի ժողովուրդ *) (*un peuple infiniment estimable*)...

Տգէտ և նախապաշարուած—անշուշտ։ Բայց և այնպէս, Արևելքի ժողովուրդների մէջ ամենից աւելի աշքաբացը, ամենից աւելի կրթուածը։

Դիմենք դարձեալ օտար վկայութիւնների, որոնք աւելի անաչառ և օբ'եկտիվ լինելու հանգամանք ունին։ Ահա թէ ինչ է ասում նոյն, 1730 թուին Հայաստանի մէջ ճամբորդած միսիոնարը.

Արևելքի բոլոր ազգերի մէջ հայերը այն ազգն են, որ

*) *Olivier, Voyage dans l'Empire Ottoman.* էջ 15, 28։

ամենից քիչ են հեռու եղել եւրոպացիներից և որ ամենից աւելի են ունեցել եռանդ՝ կրթելու, առաջադիմելու *)...

Վիկտոր Լանգլուա նկարագրում է միւս կողմից այն լայն առևտրական յարաբերութիւնները, որ ունեցել է Կիլիկիոյ Հայութիւնը Արևմուտքի հետ, Ռուբինեանների ժամանակ.

Կիլիկեան վենետիկցիների համար մի ժամանակաւոր օթևան էր, ուր ներանք ունէին իրենց շահմարանները... Իսկ Ջենովայիների համար Հայաստանը գաղթականութեան մի երկիր էր, ուր հանրապետութեան վաճառականները ունէին իրենց առևտրական տները...

Կիլիկիոյ Հայոց վաճառականութիւնը կայանում էր տեղական արդիւնքների և մի քանի օտար ապրանքների վաճառելու մէջ, որոնք կամ բերւում էին Հնդկաստանի ու Պարսկաստանի կարաւաններով, կամ թէ արևմտեան վաճառականների նաւերով... Հայերը փայտ առևտուր էլ էին անում, որ կտրում էին Տաւրոսի անտառներից, և մետաղների առևտուր, որ հանում էին լեռան հանքերից. վերջապէս ապի, հացի, իւղի, բամբակի առևտուր։ Ապա և թմբենու մշակութիւն, շերամապահութիւն։ Բայց ներանց ապրուստի գլխաւոր աղբիւրներից մինն էլ՝ արևմտեան ապրանքների տարածումն էր Ալեպի խորքերում։ Լինելով գործունեայ, աշխատասէր և խելացի մարդիկ՝ ներանք յանձն էին առնում եւրոպացոց հաշւին տանելու արևմտեան բերքերը կարաւաններով մինչև Պարսկաստան և Թաւրիզստանի ու Հնդկաստանի սահմանները **)...

XIX-րդ դարու վերջերում, Էլիզէ Ռէկլիւ կրկնում է

---

*) *Villette, Voyage d'un missionnaire*, էջ 44։

**) *V. Langlois, Le trésor des Chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens.* Քազ. „Փորձ" 1876 թ. *No* 1-ի մէջ Սաեփ. Պալասանեանի մի յօդուածում։

նոյն հինաւուրց նպաստաւոր կարծիքները հայ տարրի բազմակողմանի կուլտուրական հակումների մասին.

Թէ Էրզրում և թէ Պօլիս՝ հայերը տարբերւում են թիւրքերից աւելի բաց, հաղորդասէր և ազատ մտքով կրթուելու, աւելի մեծ սիրով, աւելի մեծ նախաձեռնութեամբ առևտրի ու արդիւնագործութեան մէջ։ Վանի վիլայէթում չկայ մի հատիկ տուն՝ որ շինուած չլինի նրանց ձեռքով, չկայ տեղական մի պաստառ, որ նրանց մատների արդիւնք չլինի. հազիւ թէ գտնւի մի պատուղ, որ բաած չլինի նրանց պղինձներում *)։

Վերջապէս, ահա և Հաքստհաուզէն, խաչատուր Աբովեանի հոչակաւոր բարեկամը, որ այնքան խղճամիտ կերպով հետազօտել է Անդրկովկասը։

Նա խօսում է հայերի կոչմանն մասին՝ ասիական ժողովուրդների մէջ.

Կարելի է ասել, որ նրանք կազմում են մի տեսակ թթուաւլիճ (*Sauerteig*), որ նետւել է Ասիայ խմորւող տարերքների մէջ, որպէս զի վերսին արթնացնէ և նորոգէ մոռաւոր կեանքի գրեթէ արդէն մեռած սաղմերը **)... (*um die fast erstorbenen Keime des geistigen Lebens wieder zu erwecken*)։

Մխիթարակա՞ն, կազդուրիչ, ազգային հպարտութիւնը շոյող ու խթանող յայտարարութիւններ...

Որքա՞ն, սակայն, գորշ ու անփառ էր հայ-ազգային իրականութիւնը միջնադարեան այդ ահագին ժամանակաշրջանում...

Դարերը յաջորդում և նմանում էին իրար։ Կեանքը —մի հակայ, անօրինակ տարտարոս, հիւսւած արիւնի

*) *Asie Antérieure.* էջ 341։

**) *August F. V. Haxthausen, Transkaukasia,* հրատ. 1856. Լայպցիգ, հատ. *I* էջ 292։

և աւերածի անվերջ տեսարաններից։ Աշխատանքի պայմանները էլ չէին փոխուում. երկրագործութիւնն ու առևտուրն էլ ենթակայ էին արևելեան քար անշարժութեան օրէնքին։ Կիւրոսից մինչև Զինգիզ և Թիմուր, մինչև նոր ժամանակները — ասիական ցեղերի արդիւնագործութիւնն ու ներքին հաղորդակցութիւնը՝ գրեթէ նոյնն էր։ Քաղաքական արիւնապանգ փոթորիկները ու վերիվայրումները չէին ժոցնում էական փոփոխութիւն աշխատանքի և միջցեղային արդիւնաբերութեան ու առևտրի մեթօդների մէջ։ Նման էին և այդ քաղաքական փոթորիկները։ Հրաբխային ճակատագրականութեամբ պայթում էին նրանք, ցիկլօնի պէս արարչաւ պատրաստներ գործում և ծածկում ընդարձակ տարածութիւններ աւերակների կոյտերի տակ։ Ապա նորէն վերածնւում էին չէն, բարգաւաճ քաղաքները բարբարոսութեան մոխիրներից...

Ազգային ինքնաճանաչութեան մասին խօսք չէր կարող լինել։ Ազգը համարեա չկար։ Նա յօշոտւել էր, անդամալուծւել։ Պահին նրա մի շարք հիմնական տարերքները։ Կար ընդհանուր հողը և ընդհանուր, արիւնակցական ծագումը։ Կար տանջանքի ընդհանրութիւնը՝ բանութեան ռէժիմի տակ։ Կար աւանդութիւնների և առասպելների համեստ շտեմարանը։ Կար հաւաքական ստեղծագործող աշխատանքը, որ մեզմում էր անհիւրընկալ բնութեան արհաւիրքները և ապրեցնում համայնքը։ Կար ցեղի ուրոյն հանճարը, նրա յատուկ և շինարար ոգին, նրա յամառ և անվհատ առաջխաղացութեան տենչը։ Կար, վերջապէս

եկեղեցին, որ իր տգէտ ու ողբալի կղերով հանդերձ, գոլիօրէն նպաստել է ցեղի պահպանութեան, իր ձեռքն առնելով նրա ճակատագրի ղեկը, քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ...

Չկար այդ բոլորը միացնող, ամբողջացնող ստեղծագործութիւնն ու ազդակը։ Չկար հաւաքական ժառանգութեան անհրաժեշտ մթերանոցը։ Չկար ազգային գրականութիւն, լեզու — նոր լեզու — և պատմութիւն։ Արդիւնաբերող աշխատանքը ստեղծում է ազգի նիւթական քաղաքակրթութիւնը, իսկ լեզուն և գրականութիւնը ստեղծում են իմացականը։ Երկուսն էլ անհրաժեշտ են, նիւթական են։

Անգամ Էջմիածնում — հայութեան ժառանգ ու բարոյական կենտրոնավայրում — Տուրնըֆոր չի լսում հայկական բառբառ։ Տիրապետում էր թերևս պարսկերէնը։ Հայը շատ տեղեր օտարախօս էր։ Նա սիրով ու դիւրութեամբ հոլովում էր տաճկերէն, պարսկերէն։ Կարաւանների հայ վաճառականները խօսում էին իտալերէն — ասում է Տուրնըֆոր։

Անգամ Իտալերէն... 17-րդ դարում։ Ու ի՞նչ զարմանք։ Մի ճարպիկ, հաղորդական, ընդունակ ցեղ, որ առևտրական կենդանի յարաբերութեան մէջ է Եւրոպայի, Իտալիայի վաճառաշահ կենտրոնների հետ՝ շտապում է իւրացնել նախ և առաջ հաղորդակցութեան անհրաժեշտ գործիքը...

Ու դարձեալ — ուշագրաւ իրողութիւն — այդ կօսմոպոլիտ, օտարախօս դասակարգն էր, որ պիտի վառէր օտարութեան մէջ մի քանի աղօտ ճրագներ հայրենիքի

վերածնութեան։ Այդ վերածնութեան սերմերը պիտի գային դրսից, քանի որ բուն Հայրենիքը մի ցուրտ ու մռայլ դժոխք էր...

Գոյութեան այդ դարևոր կռիւի մէջ հայերը, հարկադրուած լինելով շարունակ իրենց ուշք ու միտքը և բոլոր բարոյական ու նիւթական զօրութիւնները կենտրօնացնել ինքնապահպանութեան՝ ազգերի այս ամենաթանկ սեփականութեան մէջ, ժամանակ չեն ունեցել, ի հարկէ, մտածելու մտաւոր և հոգևոր զարգացման վրայ, այսինքն առհասարակ կրթութեան և արուեստների բարգաւաճման վրայ...

Ճիշտ էապես պալասանեան *)։ Հայ վաճառականները են, որ հիմնում են համեմատաբար ազատ Եւրոպայում տպարաններ, հրատարակում են հայերէն լեզուով մի շարք գրքեր, փորձում են նոյնիսկ խզել կրօնական մարզանքների—աղօթագրքերի, սաղմոսների—աւանդութիւնը և աշխարհական ուղղութիւն ու աշխարհիկ լեզու տալ նորաբողբոջ գրականութեան։

Տպագրութիւնը—ասում է Լէօ—XVII դարի երկրորդ կիսում անընդհատ զարգանում է թէ արուեստի և թէ տպած գրքերի ներքին արժանաւորութիւնների կողմից։ Այդ առաջադիմութիւնը ամբողջովին հայ գաղթականութիւնների գործն է և վաճառական դասակարգի ջանքերով է պահպանւում... Հայ տպարանը դարձեալ թափառական է. ինչպէս նախորդ դարում, դարձեալ հեռու է մայր-հայրենիքից։ Նրա հետ թափառում է և հայ գրականութիւնը, որ կամ Ամստերդամ է լոյս ընկնում, կամ Մարսէյում, կամ թէ Լիվոռնօի ու Վենետիկի մէջ։ Այս թափառական դրութիւնը մեր գրականութեան մի ժշտական յատկութիւնն է դառնում։ Մինչև այդ՝ գրագիտութեան և դպրութեան տեղերը Հայաստանի վանքերն էին. բայց տպարանը հանում է գրականութիւնը մայր-երկրից և տանում է իր հետ գաղա-

*) „Փորձ", 1876 No II։

զան տեղեր, ուր կան հայ գաղթականութիւններ և ուր երկար կամ կարճ միջոցով վաճառում է գրական լոյսը *)։

***

Հասարակութիւնները այնտեղ են միայն համեմատաբար արագ զարգանում և դառնում կուլտուրատիպ ազգութիւններ, ուր նիւթական և գաղափարային աշխատանքի լայնարձակ ասպարէզի մէջ շեշտուում է ա ն հ ա տ ա կ ա ն ի ն ի ց ի ա տ ի վ ը, ձեռներեցութեան ոգին։ Իւրաքանչիւր ազգ — եթէ նա ազգ է բառի ճշմարիտ իմաստով և ոչ երամական ու մեքենական մի զանգուած — իւրաքանչիւր ազգ ունի իր մեծ անհատները, ունի իր խոշոր ինիցիատօրները՝ թէ մտաւոր-հոգեկան և թէ քաղաքական վերածնութեան աշխարհում։ Հայ ժողովուրդն էլ, իր յօշոտուած, անդամալոյծ վիճակում իսկ, իր արիւնոտ փլատակների, լացի ու հեծեծանքների մէջ, չմոռացաւ իր պատկառելի տուրքը ազգայնութեան և քաղաքակրթութեան այդ պահանջին։ Դարերի անդուլ շփումը արևմտեան համեմատաբար լուսաւոր կենտրօններին հետ — շփում տնտեսական, առևտրական, մտաւոր ու հոգեկան — և այդ շփման հետ կապուած հայկական ազօտ տենչանքները դուրս կոչեցին ցեղի մռայլ ու պատառոտուած ծոցից մի շարք կորովի և ձեռնարկու անհատներ, որոնք, այսպէս ասած, խրատեցին հայութեան միջնադարեան կեանքի պարիսպը, և որոնցից երկուսը, հրապարակ գալով 17-րդ դարու

*) Հայկական Տպագրութիւն, հատ I, էջ 356։

վերջում և 18-րդի սկզբում, վաստակեցին որոշ հռչակ, նոյնիսկ Եւրոպայում։

Մինը ժառւոր վերածնութեան ռահվիրայ էր, միւսը—քաղաքական։ Մինը գնաց տնկելու Ադրիատիկեան ջրերի մէջ հայոց լեզւի, գրագիտութեան ու քաղաքակրթութեան դրօշը, ծանօթացնելու Եւրոպան հին ազգի կուլտուրական ժառանգութեանը և դարքնելու գաղափարային աղգակցութիւնը արևմտեան ժառւորականութեան հետ։ Միւսը գնաց բաղխելու Եւրոպայի իշխողների դռները, ազդարարելու, որ կայ այնտեղ, հեռուն, Արարատի շուրջը, „եւրոպականացած ասիացիների“ ժողովուրդը, ենթակայ ժահվեգական այլասեռող լծերի, որ այդ ժողովուրդն արժանի է քաղաքական ազատութեան, ժարդավայել կենցաղի, որ նա իրաւունք ունի կոչ անելու քաղաքակիրթ աշխարհի աջակցութեան ու հովանաւորութեան, որ „Հայկական Խնդիրը“ գրւած է այն օրից իսկ, երբ այդ մի բուռն առաջագէմ հաժայնքը, իր „Կղզի-Լեռ“ հայրենիքում, արիւնարբու հօրդաներով շրջապատւած, հռչակել է քրիստոնէութիւնը և նրա հետ գրկել է արևմտեան քաղաքակրթութեան ջահը...

Երկու նշանաւոր ռահվիրաներն էին—Ա խ թ ա ր Ա բ բա և Ի ս ր ա յ է լ Օ ր ի։

V

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐԻ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒՄԸ

ՀԱՑՈՑ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁ

—

Թագի եւ Մանիկի յարաբերութիւնները Կ. Պոլսի ցնծութիւնից ի վեր. — Կապիտալիզմի թաւերումն եւ պատօնական Եւրոպայի իրաւախոհութիւնները.—Ողբ Հիսոնեայ նաւատացեալների մէջ.—Հայր Սաճուսօ եւ նայները.—Կապիտիւլասիօնների ձագումը.—Անգլիոյ առաջին հայերը Արեւելքում.—Սկզբից իսկ՝ թիւրմոլոյ.—Սուլթանը եւ Եւրոպական դեսպանները.—Անգարական վերաբերում.—Ռուսաստանը՝ բացատրութիւն.—«Մոսկովեան վտանգը» եւ նրա անդրադարձումները նայերի մէջ. — Ղարաբաղը՝ իբրեւ օվազիս ստրութեան անապատում. — Իսրայէլ Օրիի առաքելութիւնը. — Հայ խոչակրաց արշաւանքի ծրագիր. — Օրիի անձնաւորութիւնը. — Գերմանական դատախազը եւ նրա կասկածների ու մեղադրանքների արժէքը.—Ֆինկ եւ Հայկէլ.—Հայկական ազգասպանութիւնը՝ նախաձեռնող նայ առաջին յեղափոխական շարժման. — Իսրայէլ Օրին Եւրոպայում ու Ռուսաստանում. — Պետրոս մեծը եւ նայոց ազատութեան խնդիրը.—Օրիի մահը եւ իր ծրագրի վիժումը. —

—

Որքա՜ն ուշագրաւ է արեւելեան այդ ցաւատանջ խնդրի էւոլիւսիօնը, որի ընդարձակ աւազանի մէջ ծնունդ է առել և զարգացել է մեր հայկական խնդիրը։

Պօլիսը գրավելուց յետոյ, քրիստոնեայ և մահմեդա-

կան աշխարհները, խաչը և կիսալուսինը ճնացին մի ու-ժամանակ կղզիացած, պատկառելի տարածութեան վրայ, լի փոխադարձ ատելութեամբ, իւրաքանչիւրը մի տեսակ վհատական և արհամարհոտ մեկուսացման մէջ՝ հանդէպ իր հակառակորդի, իր կրօնական երգեհոլ ոսոխի։

Անդունդը թուում էր անանցանելի։ Հակամարտութիւնը երկու տարբեր կրօնների ներկայացուցիչ՝ Արևմուտքի և Արևելքի միջև՝ թուում էր անհաշտ, յաւիտենական։ Կաթոլիկ պապերը շարունակում էին քարոզել նոր խաչակրաց արշաւանքներ, քարոզում էին աւանդական մոլեռանդութեամբ՝ դուրս քշել օսմանեան հօրդան—այդ „տարտափելի կենդանի փոշին“, „*Cette effroyable poussière vivante*“, պիտի ասէր յետոյ Միշլէ — դուրս քշել այն՝ իր նորանուաճ հողերից և վերադարձնել իր նախկին լնակավայրը՝ կենտրօնական Ասիա...

Սակայն, անգօր էին քրիստոնէական այդ պաղատագին յորդորները, նրանք այլևս լայն արձագանք չէին գտնում ոչ իշխողների և ոչ զանգուածների մէջ... Չկար այլ ևս այդ մասսային արշաւանքների առանձնայատուկ միջավայրը, միջնադարեան արկածախնդիր և ասպետական ոգին, չկար վաղեմի յափշտակութիւնը, չկար, վերջապէս, համերաշխութիւն իշխողների միջև *)։ Կապի-

*) Միւս կողմից՝ անցեալ խաչակրաց արշաւանքների ձախողութիւնները, նրանց վերջնական և ողէտալի վիժումը յուսահատ էր արել շատերին, և նոյնիսկ կղերի բանակից յաճախ այդ տեսիլը լսում էին դժգոհութեան ու բողոքի ձայներ... ընդդէմ Աստուծոյ և Յիսուսի։ Եթէ քրիստոնէութիւնը չկարողացաւ յաղթահարել անհաւատներին և փրկել Յիսուսի գերեզմանը, — ասել է Աստուած չկամեցաւ այդ,

տ ա լ ի զ մ ը իր սկզբնական շրջանի մէջ կատարել էր արդէն իր հանդիսաւոր թատերամուտը. առևտուրը, վաճառականութիւնը սկսել էին տիրապետող դեր խաղալ արևմտեան հասարակութիւնների կեանքում, Եւրոպան գարձել էր ասելի ռէալիստ, ասելի իրապաշտ և նիւթապաշտ... կրօնը, անշուշտ, դեռ պահպանում էր իր մեծ ուժը, բայց ասելիևս մեծ էին անտեսական մտահոգութիւնները, ասելի ուժեղ ու հրամայական էին կեանքի „գոհհիկ“ պահանջները—և նրանք ի վերջոյ

Ասել է՝ ինքը Ասուածը հովանաւորում էր անհաւատներին։ XIII դարու մի կաթոլիկ կղերական հարուստին Ֆրանսիոյ մէջ յաւափինօրէն ողբում էր խաչի անկումը և անարգումը. „զարմանալի չէ, բայսկանշում էր նա, որ թիւրքերը եկան նուաճեցին Ֆրանկներին, հայերին և այլն, Քրիստոս, անշուշտ, թոյլատրել էր այդ նուաճումը... Ասուած, որ երբեմն կը հակէր, այժմ քնած է... Եւ Մահմեդն է, որ գործի վրայ է“...

Նոյն յաւափին գանգատները մանաւորապէս հայ-քրիստոնեաների նուաճման առթիւ, հնչեցնում էր XIV-րդ դարու սկզբում վենետիկցի հայր Մարին Սանուտո իր „Secreta fidelium Crucis“-ի մէջ։ „Ո՛վ վիշտ—ազազակում էր նա, բոլորն էլ մրսիել են, ի տեղի հակելու մեծ, արքայան դատի վրայ“... Եւ վհատուած, յուսաբեկ՝ նա գնայ, այնուամենայնիւ, խնդրելու Աւետարանի իշխաններից 6—7 նաւ՝ Փ ո ք ր Հ ա յ ք ր պ ա շ տ պ ա ն ե լ ո ւ համար, բայց շուտով մեռաւ (1329 թ.)։

Սանուտո շատ լաւ էր ըմբռնել Տաւրոսեան Հայաստանի կարևորութիւնը՝ արևելեան նոր հօրիզոնների համար, դէպ և պատահագին յորդորում էր՝ միջոցներ ձեռք առնել փրկելու դեթ Կիլիկիան։ (S. *Saint Marc Girardin, Origines de la Question d'Orient, Revue des Deux Mondes, 1 Mai 1864*)։

ժղեցին Եւրոպայի վարիչներին դէպի կօժպրօմիս, իրա-
ւախոհութիւն, դէպի մի որոշ կ ե ն ց ա ղ ա կ ե ր պ,
modus vivendi... „Անհաւատի“ հետ։

Արևմուտքը կամաց-կամաց թողեց անհաշտ հակա-
ժարտութեան իր դիրքը, հարթեց բոլոր խրամատները
և դիւանագիտական ժպիտը բերնին՝ մօտեցաւ Բօսֆօրի
գոռոզ Խալիֆին, սիրաշահեց, կապեց նրա հետ դաշինք-
ներ՝ իր առևտուրը, տնտեսական ձեռնարկները արևե-
լեան ջրերի մէջ ապահովէն ժղելու համար։

Թեմ եկան յաջորդաբար՝ վենետիկեան հանրապե-
տութիւնը, Ֆրանսիան, Անգլիան և ուրիշ պետութիւն-
ներ, որոնցից իւրաքանչիւրը ձգտում էր նւաճել խաղաղ
ճանապարհով արտօնութիւն և ազդեցութիւն։

Եւրոպան՝ բաժան-բաժան և հակամարտ՝ մեծ պա-
հանջներ չէր դնում քրիստոնէութեան թշնամիներին,
նրա մեծագոյն բաղձանքն էր — ապահովութիւն իր լը-
վանտեան առևտրի համար։ Եւ նա յամառ, աստիճա-
նաբար առաջ բալլեց դէպի նորագոյն կատիտալիզմի այդ
գերագոյն նպատակակէտը... առանց, սակայն, հրաժար-
ւելու իր գազանի տենչանքից՝ մի օր խստիւ պատժելու
„անհաւատ բարբարոսներին“, հարւածելու և տարա-
գրելու։

Քրիստոնեայ պետութիւններից մէկը միայն բացառու-
թիւն կազմեց, պահպանելով XVI-րդ դարու մէջ իր
անհաշտ և վրիժառու դիրքը Իսլամի հանդէպ։ Ս պ ա-
ն ի ա ն էր, կաթօլիկ մոլեռանդութեան ամենավառ
օճախը հռչակաւոր Փիլիպպոս II-ի օրով։ Խաչակրաց ար-
շաւանքների յիշողութիւնները այդտեղ մշտապէս թարմ

էին մնում, ասպետական աւանդութիւնները — նմանապէս Սպանեան քնաւ չդիմեց իրաւախոհութեան „անհաւատի“ հետ, ընդհակառակը, ձգտեց միշտ կազմակերպել նրա դէմ մի տեսակ „սուրբ դաշնակցութիւն“, և 1517-ին, Վենետիկի ու մասամբ պապի աջակցութեամբ, ջարդ տուեց օսմանեան նաւատորմին — մի ջարդ, որ ահագին շահաչուին ունեցաւ ամբողջ քրիստոնեայ աշխարհում։ Պօլիսը, անպարիսպ, անպաշտպան, գրեթէ ապրէն գտնւում էր յաղթական Արմադայի ձեռքում, 40,000 քրիստոնեաները պատրաստ էին ոտքի կանգնել Թերապում և սպասում էին ազդանշանի, մինչեռ ուրիշները պէտք է հետևէին նրանց օրինակին. Թիւրքիան մահուան տագնապի մէջ էր։ Յանկարծ հազարաւոր մարդ կոտորուեց պատերազմում, ուր մասնակցում էր, իբրև ռազմիկ, նաև Սերվանտէս, „Դոնքիշոտի“ աշխարհահռչակ հեղինակը։

Սակայն, Կիսալուսնի բախտից՝ սպանիական և վենետիկեան դաշնակից նաւատորմերը չշարունակեցին յարձակողական իրենց ընթացքը։ Աւարի ճակատագրական խնդիրը գժտութիւն յարուցեց երկուսի միջև՝ այդ փայլուն յաղթանակի հետևեալ օրն իսկ։ Իսկ Թիւրքիան շուտով նորէն կազդուրուեց, վերակազմեց նաւերը և իր հերթին փառաւոր ջարդ տուեց քրիստոնեայ դաշնակիցներին։

Մի նշանաւոր դրւագն էր դա այն մեծ կռւի, որ սկսւած էր գեռ շատ վաղուց — Մարաթօնի յոյն-պարսկական ճակատամարտի օրերից իվեր — Արևմուտքի և Արևելքի միջև և որ պիտի շարունակւէր այնուհետև անվերջօրէն։

Առևտրական առաջին դաշինքը Թիւրքիոյ հետ կապողն էր Վենետիկեան մեծ, առաջադէմ հաւայնքը, որ դարերից ի վեր առևտրի աշխարհակալող դրօշն ունէր իր ձեռքում և որի 3,000 առևտրական նաւերը լողում էին Միջերկրականում և հասցնում ապրանքները Բիւզանդի, Կիպրոսի, Փոքր Հայքի, Սիրիայի, Եգիպտոսի նաւահանգիստները։

Այդ հաւաձայնութիւնը տեղի ունեցաւ մի արիւնալի պատերազմից յետոյ, 1479 թուին, երկար ու դժւարին բանակցութիւնների միջոցով, որոնց ուշագրաւ պատմութեան մէջ յիշատակւում են, ի միջի այլոց, երկու մեծանուն Վլօրենտինեան նկարիչները՝ Միքէլ Անջելօ և Լէօնարդօ դա Վինչի։ Վենետիկը ձեռք բերեց նպաստաւոր պայմաններ իր լեվանտեան գրասենեակների համար և կապեց առաջին հաւաձայնագիրը, որ խորհուրդ եղաւ ապագայում ուրիշ պետութիւնների ձեռքով նւաճելիք հռչակաւոր կապիտիւլասիօնների (*capitulations*), որոնք դարեր շարունակ պիտի կառավարէին օսմանեան պետութեան յարաբերութիւնները եւրոպական ազգերի հետ։

Ֆրանսիան աւելի ևս առաջ գնաց, 1536-ի իր կարևոր դաշինքով։ Ուղղափառ կաթոլիկ պետութիւնը ոչ միայն առևտրական յարաբերութիւններ էր սահմանում „մեծ Անարգանքի“ հետ (*le Grand Opprobre Turc* —այսպէս էին անւանում այն ժամանակ օսմանեան բռնապետութիւնը Եւրոպայում), այլ և հռչակում էր Թիւրքիան, իբրև եւրոպական հաւասարակշռութեան մի անհրաժեշտ տարր... Մի բան, որ զլուխք ու ցաւում

յարուցեց Եւրոպայում։ Մշակում են լաւ, սիրալիր յարաբերութիւններ սուլթանների հետ, և այդ իրողութիւնը դառնում է այնուհետև Ֆրանսիոյ քաղաքական սիստեմի էական կէտերից մինը, աւանդելով սերնդէսերունդ, շարունակելով Ֆրանսուա I-ից մինչև Լուդովիկոս XVI-ը, մինչև Մեծ Յեղափոխութիւնը։ 1536-ի դաշինքը կոչեց կապիտուլասիօն։ Նա „շնորհում էր“ սուլթանի կողմից և ոչ տրւում։ Այսպէս թէ այնպէս, մի ահագին երևոյթ էր այդ „շնորհը“։ Ֆրանսիական հպատակները այդ իրաւախոհութեան զօրութեամբ կարող էին ազատօրէն շրջագայել Թիւրքիոյ բոլոր նաւահանգիստներում, ազատօրէն գնել, ծախել ու փոխադրել ամեն տեսակ թոյլատրւած ապրանքներ, վճարելով համապատասխան մաքսը։ Ֆրանսիան կարող էր իր հիւպատոսներն ունենալ Թիւրքիոյ այլ և այլ կենտրոններում, և այդ հիւպատոսները, ինչպէս նաև Ֆրանսիական բոլոր հպատակները այլ և այլ քաղաքացիական ու քրէական վէճերի առթիւ պիտի դատւէին Ֆրանսիական հիւպատոսի կամ նրա թարգմանի ներկայութեամբ։

Կապիտիւլասիօնների իմաստը հետզհետէ ընդլայնւելով Ֆրանսիան կամաց-կամաց տարածեց իր հովանաւորութիւնը ոչ միայն Թիւրքիոյ մէջ հաստատւած իր հպատակների, այլ և Թիւրքահպատակ բոլոր կաթոլիկ քրիստոնեաների վրայ *)։

XVI-րդ դարու մէջ արդէն Ֆրանսիան վայելում էր ընդարձակ արտօնութիւններ Արևելքում։ Ֆրանսիական

*) *Rev. Edw. Munsell Bliss, Turkey und the Armenian Atrocities.*

անունն ու դրօշը հովանաւորում էին բոլոր արևմտեան քրիստոնեայ պետութիւններին և նրանք բոլորն էլ կռւում էին օսմանեան Արևելքի մէջ մի ընդհանուր անունով—Ֆրանկ։ Բացի վենետիկից, բոլոր քրիստոնեայ խաշոր ու մանր պետութիւնները—անգամ Անգլիան—ստիպւած էին ֆրանսիական գոյներով դրօշակ պարզել, եթէ կուզէին առևտուր մղել թիւրքական ջրերում *)։

Անգամ Անգլիան... Նա բեմ եկաւ, իրրև ուրոյն ոյժ Արևելքի մէջ, XVI դարի վերջերում և... իր առաջին քայլերից իսկ յայտնեց ամենաթիւրքամոլ պետութիւնը—որպիսին տեսնում ենք XIX դարի վերջերում, լօրդ Բիկօնսֆիլդի օրով, սուլթանները, քան սուլթանները, պատրաստ դիմելու—իր ծրագիրների իրագործման համար—այն բոլոր նաստատուցիչ հնարքներին ու սադրանքներին, որոնք կազմում են եւրոպական դիւանագիտութեան տխուր փառքը։ Հաստատուեցին դեսպանները Բօսֆօրի եղերքներում (անգլիականը—1583 թ.ին) և սկսուեց տենդային մրցութիւն, որ պիտի շարունակուէր ամբողջ դարեր, արտադրելով պարբերական ընդհարումներ ու արիւնհեղութիւններ։

Բրիտանական կառավարութիւնը, ձգտելով դուրս մղել իր մրցակից կաթոլիկ պետութիւնները և մանաւանդ Սպանիան, սկզբից իսկ ամեն միջոց ի գործ դրեց մերձանալու սուլթանի հետ, ներշնչեց նրան, որ ոչ միայն շահերի, այլ և նոյնիսկ կրօնների համանմանութիւն կայ Մեծ Բրիտանիայի և օսմանեան կայսրութեան միջև,

*) *J. Klaczko, Les Evolutions du Problème Oriental, Revue des Deux Mondes, 15 Octobre 1878.*

քանի որ երկուսն էլ ունին ընդհանուր թշնամի—կաթոլիկ կամ „հեթանոս“ եւրոպան 1587-ին, բրիտանական դեսպան Հարբուն, փորձելով ոտքի հանել Թիւրքիան Սպանիոյ և պապութեան դէմ, հետևեալն էր գրում Մուրատ III փառիշահին, իր թագուհու, Էլիզաբեթի անունից.

„Ձեռքից մի՛ թող նպաստաւոր վայրկեանը... Աստուած քեզ արել է իշխաններից ամենաարժանաւորը և ամենահզօրը՝ կռապաշտներին ջնջելու համար. եթե քոյդ Բարձրութիւնը կամենայ անյապաղ պատերազմ յայտարարել իմ թագուհու հետ ձեռ ձեռքի տուած, զօրագ Սպանիան և խաբեբա պապը չպիտի խոյս տան իրենց յանդգնութեան պատժից, որովհետև Աստուածը, որ հովանաւորում միմիայն իրայիններին, չպիտի զլանայ խաստօրէն պատժելու այդ կռապաշտները... որպէս զի չարգից ազատուողները դառնան իւրկատկան հաւատին, որպէս զի նրանք դառնան մեզ պէս ճշմարիտ Աստուծուն“ *)...

Սա մի չափազանց պերճախօս նամուշ է այն „ներքնի“ դիւանագիտութեան, որով Մեծ Բրիտանիան այն վաղեմի օրերից ի վեր պարբերաբար զարմացրել է քաղաքակրթ մարդկութիւնը...

Այո՛, „ռէալիզմը“ իր ամենաբիրտ պատկերով, ստոր, գեռևաքարշ քաղաքականութիւնը առաջին օրերից իսկ տիրապետող գիծն է եղել արևմտեան դիւանագիտութեան՝ հանգէպ Թիւրքիոյ եւ սուլթանները, առևտրական արտօնութիւններ զիջելով հանդերձ, ընդհանրապէս „արժանաւոր“ ընդունելութիւն են արել այդ դիւրաթեք դիւանագիտութեան ներկայացուցիչներին... ընդունել են նրանց սովորաբար, որպէս իրենց ամենայետին սպասա-

*) *Revue des Deux Mondes, 15 Oct. 1878.*

ւորներին, արհամարհանքով ու անարգանքով։ Եւրոպայի պաշտօնական ներկայացուցիչները, նախ քան սուլթանական պալատ մտնելը, խուզարկւում էին, ապա—պատժագրի արտայայտութեամբ—նրանց (դեսպաններին ու այլ պատուիրակներին) համարեա քարշ տալով տանում էին (*plutôt trainés que conduits*) մինչև գահի պատուանդանը, ուր ստիպում էին ծունկ չոքել, երբեմն նոյնիսկ տարածւել գետնի վրայ, համբուրել գետինը։ Պալատից ելնելիս, նրանց սովորաբար ուղեկցում էին ծառաների, խուժանի անարգական սուլոցները։ Ենիչէրիները երբեմն հրում էին նրանց, ոռնում էին շների պէս նրանց եռևից և ժահւան սպառնալիքներ էին ուղղում նրանց։

Եւրոպան համբերում, տանում էր այդ ամենը... Նոյնքան վիրաւորական և անարգիչ էր ընդունելութիւնը սադրազամի կողմից, որ թիւրք կայսրութեան բարձրագոյն պաշտօնեան էր, սուլթանի երկրորդ եսը, „Աստուծոյ ստուերի ստուերը“ (*l'ombre de l'Ombre de Dieu*)։ Դեսպաններին ընդունելիս կամ արձակելիս՝ նա չէր իսկ բարեհաճում տեղից շարժւել. քիչ էր պատահում, որ նա այս կամ այն դեսպանին սպառնում էր ծեծել, *fustiger comme un âne*, նոյնիսկ սպանել այս կամ այն անպատշաճ վարմունքի համար։ Մշտնջենական և ամենախոստ հսկողութեան տակ էին դեսպանները, խստիւ արգելւած էր նրանց փոխադարձ այցելութիւն տալ, զրուցել եւայլն։ Փորձում էին նոյնիսկ արգելել նրանց... գինիի գործածութիւնը։

Նոյն արհամարհանքը—ամենայետին թիւրք պաշտօ-

նիայի կողմից։ Մեծ Ցեղափոխութեան նախօրեակին, 1788-ին, երբ Թիւրքիոյ ջերմ պաշտպան Ֆրանսիական դեսպանը իր բնակարանն էր մտնում, իր վարձած թիւրք դռնապանն անգամ ճնում էր անշարժ և հպարտ նստած իր տեղում։ Մի ողորմելի ենիչերի վայել չէր սեպի նոյն դեսպանի հետ փողոցի մէջ կողք կողքի քայլել, այլ գնում էր միշտ առջևից... Հասկացնելու համար, որ ամենաստորին մահմեդականը աւելի բարձր է, քան ամենաբարձր գիաւուրը։

Այդպէս էր այն վաղեմի ժամանակներում թիւրքիոյ վերաբերումը դէպի քրիստոնեայ Եւրոպան, մի վերաբերում՝ որ թելադրւած էր նոյն տարաժեր Ղուրանից, սրբագործւած նրա անագորոյն պատգամներով... Ոչ մի դիմում, ոչ մի հաւաքական խնդիրք կամ պահանջ չէր կարողանում փոփոխել, ժեղմել, դարձնել փոքր ինչ մարդավայել՝ այդ յարաբերութիւնները։ Այն մի շարք առևտրական արտօնութիւններն էլ... սուլթաններն շնորհում էին, աւելի ճիշտ՝ շպրտում էին Եւրոպային նոյն գոռոզ արհամարհանքով, շպրտում էին այն գիտակցութեամբ, որ առևտուրը, ինչպէս և աշխատանքի միւս արդիւնաւոր ձևերը ստորադաս է, անարժան զբաղմունք, ոչ-վայել ազնւական մուսուլմանին, արժանի միմիայն գիաւուրին։ Ժողովանանք, վերջապէս, որ եւրոպացիների բերած առևտուրը մատակարարում էր սուլթաններին, փաշաներին և բոլոր իշխողներին պերճանքի հազարաւոր առարկաներ և ամեն տեսակ յարմարութիւններ, որ նրանք երբեք չէին կարող երազել՝ այլ ճանապարհով ստանալու։

Սակայն, ոչ բոլոր քրիստոնեայ պետութիւնները ենթակայ էին Թիւրքերի այդ գոռոզ արհամարհանքին։ Ոչ բոլոր քրիստոնեայ դեսպանները ընդունւում էին վերը յիշած նւաստացուցիչ եղանակով։ Կար մի խոշոր բացառութիւն, որ չէր ուզում ճկել իր պարանոցը, չէր ընդունում Ղուրանի թելադրած և արևմտեան դիւանագիտութեան կողմից ճանաչւած ունիւրագործւած էտիկետները, կարգուձևերը։ Կար մի ոյժ, որ վաղաժամ կարողացաւ ներշնչել Խալիֆին երկիւղ ու ակնածութիւն և պարտադրել վերջինին ու իր սատրապներին՝ աւելի վայելուչ և յարգալի վերաբերմունք դէպի քրիստոնեայ պետութեան պաշտօնական ներկայացուցիչը։

Դա Ռուսաստանն էր — այն ժամանակ Մոսկովեան մեծ իշխանութիւնը։ Շատ վաղուց չէր, որ նա ազատւել էր թաթարական դարաւոր լծից և գեռ, անշուշտ, եռւում էր ատելութեամբ դէպի ասիական ստեպները։ Ծնունդ՝ աշխարհաւեր հօրդաները։ XV-րդ դարի վերջերումն էր, որ Մեծ Իշխան Իվան III ժառաւ սուլթանի հետ յարաբերութեան մէջ, ղրկեց Պօլիս (1499-ին) յատուկ պատւիրակութիւն, որի գլուխ էր կանգնած Միխայիլ Պլեշչեեվ։ Մեծ եղաւ բոլորի զարմանքը, երբ վերջինը սուլթանանիստ մայրաքաղաքը ոտք դնելիս, յայտարարեց, որ չպիտի ենթարկւի պալատի մէջ ընդունւած էտիկետին, չպիտի հագնի փաշայական զգեստ, չպիտի չոքի սուլթանի առաջ, այլ պիտի խօսի նրա հետ կանգնած. այդպէս էր հրամայել Մոսկովի Մեծ Իշխանը և... սուլթանը համակերպում էր։

Այդպէս էր Ռուսաստանի առաջին թատերամուտը

կ. Պոլսում, Արևելեան Խնդրի հսկայական բեմի վրայ, և Պլեշչէեվի այդ առաջին խրոխտ ժեստի մէջ ծայր էին տալիս այն հեռաւոր և ահաւոր որոտները, որ պիտի գային երկրաձայն ոտքի, „Մոսկովի“ կողմից՝ սասանեցնելու Մահմեդների ու Սուլիմանների մեծաշուք գահը...

Նոյն հպարտ և խրոխտ ընթացքին հաւատարմօրէն հետևեցին Մոսկովի իշխանները XVI-րդ դարու մէջ։ Նրանք չունէին մշտական ներկայացուցչութիւն կ. Պոլսում (այդպիսին հաստատուեց միայն Պետրոս Մեծի օրով), այլ միայն պարբերաբար, այս կամ այն առթիւ ուղարկում էին արտակարգ պատուիրակութիւն, ամեն անգամ խստիւ պատուիրելով նրանց՝ չձգել Մոսկովի արժանապատուութիւնը նւաստացուցիչ արարողութիւններով, „ողջունել սուլթանին՝ ձեռքերը խաչաձև և ոչ գետնատարած և հարցնել սուլթանի առողջութիւնը միայն այն ժամանակ, երբ նա ինքը կը հարցնէ Մեծ Իշխանինը“։

Այս. ժամեդական բռնակալութիւնը իր անվրէպ բնազդով այն օրերից արդէն զգաց „Մոսկովի վտանգը“։ Ովքա՜ն դեռ փոքրիկ էր այդ Մոսկովեան իշխանութիւնը... Եւ, սակայն, թիւրքական երկիւղն ունէր իր շատ հիմնաւոր պատճառները։ Արևմտեան պետութիւնները, բաժանուած ու իրարու մրցակից... նրանցից վախ չունէր փատիշահը։ Այլ բան էր այս նորակազմ, փոքրիկ „Մոսկովը“, որի պետը իր տիտղոսների շարքում կրում էր և „Բուլգարիոյ իշխան“ մականունը և որ արդէն ջերմ ժողովուրդ էր ցոյց տալիս դէպի թիւրքական լծին ենթարկուած իր դաւանակից քրիստոնեայ ժողովուրդ-

ներըս... Ձգտում էր — յամառաբար, տոկունութեամբ — միշտ աւելի և աւելի մօտենալու այդ սարկացած քրիստոնեայ „հայեաններին“, կապւելու նրանց հետ, շահելու նրանց բնական, ցեղակցական համակրութիւնը։

Եւ այդ յամառ ձգտումը շարունակւեց մինչև պետրոս Մեծի օրերը, երբ նա մշակւեց ու վերածւեց մի հոյակապ սիստեմի, երբ ծրագրւեց ընդարձակել Մոսկովի տիրապետութիւնը բոլոր ուղղութիւններով և մանաւանդ դէպի հարաւ ու արևելք, ի հաշիւ մահմեդական պետութիւնների, Թիւրքիոյ, Պարսկաստանի...

Թիւրքիոյ դէմ ծրագրած իր արշաւի մէջ՝ Ռուսաստանը որոշեց յենւել սլաւեանների և յոյների վրայ. պարսկական արշաւի մէջ—հ ա յ ե ր ի վ ր ա յ։

***

Խաչակիրները այլևս չկային։ Կային, սակայն, եւրոպական քրիստոնէութեան մէջ, Արևմուտքում ու Ռուսաստանում գաղտնի և յայտնի „ծրագիրներ“, ուղղւած իսլամ ոտխի դէմ, ծրագիրներ՝ մերթ խաղաղ, անարիւն թափանցումի — առևտրական արտօնութեանց ու կապիտուլասիօնների ճանապարհով — մերթ գալոց արիւնահեղ բաղխումների և հողային նւաճումների։

Եւ այնտեղ, հեռուն, մահմեդական լծերի տակ բառաչող ժողովուրդները, որ երկար դարերից ի վեր անձկութեամբ նայել էին դէպի Արևմուտք, ակնկալելով այնտեղից իրենց վերջնական ազատագրումը իսլամական անհանդուրժելի տիրապետութիւնից—այդ ժողովուրդ-

ներըը չէին կարող, բնականաբար, էյուզիվիլ, էքաջալեր-
ւիլ արևմտեան և հիւսիսային այդ սպառնագին որոտում-
ներից։ Նրանց գիտակից տարրերը նշմարում էին արդէն
մօտալուտ արշալոյսները և շտապում էին օգուտել ժա-
մանակի այդ փրկարար հոսանքներից։

Հ ա յ ո ւ թ ի ւ ն ը, բաժանուած երկու իսլամ բռնա-
պետութեանց միջև, հաւասարապէս ճնշուած ու ստրկաց-
ուած երկուսի էլ, հաւասարապէս ենթակայ ֆիզի-
կական ու հոգեկան այլասերման,—հայութիւնը մաս-
նաւորապէս ցոյց էր տալիս այն հեռաւոր ժամանակում,
ի դէմս իր լաւագոյն տարրերի, մի նեարդային ու մար-
տական տրամադրութիւն, որպիսին զուր կը փնտրէք
այնուհետև, ամբողջ երկու դար տարածութեան վրայ,
մինչև մեր վերջին քառապարեակի ազատագրական շար-
ժումները թիւրքահայաստանում ու Կովկասում։

Պ ա ր ս կ ա կ ա ն հ ա յ ա ս տ ա ն ո ւ մ էր, որ ծայր
առեց այդ առաջին լոյն, ազատական խմորումը. այն-
տեղ էր, որ ցեղի առաջապահ տարրը իր նուրբ հոտա-
ռութեամբ զգաց ժամանակի ազատաբեր հողմերի օգին
և աճապարեց օգտուելու նրանցից։ Բայց... օգտուելու՝ ոչ
իբրև իններորդ, կրաւորական համայնք, այլ իբրև ըմբոստ,
յեղափոխական մի ժողովուրդ։ Որովհետև այնտեղ,
պարսկական հատուածի մէջ էր հերոսապաշտ լեռնաս-
տանը—Ղ ա ր ա բ ա ղ ը—որ իր անառիկ բարձունքների
և կուսական անտառների մէջ միշտ վառ էր պահել
ըմբոստութեան ջահը, հանդիսանալով մէկը, թերևս
խոշորագոյնը այն փոքրաթիւ օվաղխաներից — Սասուն,
Մոգք, Շատախ, Զէյթուն և այլն — որոնք ստրկութեան

դարաւոր ու միապաղաղ անապատի մէջ մի յայտնի չափով փրկել, բարձրացրել են ցեղի տրօրւած արժանապատուութիւնը, առաջնորդել նրան դէպի մարդկայնութիւն ու ազատութիւն։

Իսրայէլ Օրին գնում էր Եւրոպա 17-րդ դարի վերջերում—օգնութիւն հայցելու զօրաւորներից, բայց գնում էր ոչ թէ 19-րդ դարավերջի Բրուսալիների ու Շերազների պէս, իբրև սոսկ աղերսող, նօտերով ու յիշատակագիրներով բեռնաւորւած, այլ իբրև մի ըմբռստ ու լայնածաւալ հայագաւառի ներկայացուցիչ, որ պատրաստ էր իր արիւնով իսկ հոլթելու ճանապարհը՝ հայրենիքի անկախութեան համար։ Բայց նա գիտէր, այդ քայլարի լեռնաստանը, որ սոսկ իր ուժերով չպիտի կարողանար տապալել թշնամի բռնապետութիւնը, ուստի և դիմում էր արևմտեան իշխանների աջակցութեան։

Իսրայէլ Օրիի առաքելութիւնը...

Շատ է արդէն գրւել մեր մամուլի ու գրականութեան մէջ այդ առեղծւածային մարդու մասին—և այսօր տակաւին շատ բան մթութեան մէջ է։ Տարաբախտաբար, շօշափելի հետքեր չեն մնացել հայոց ազատութեան այդ նշանաւոր առաքեալից, որ մօտ 20 տարի ապրել է Եւրոպայում, եղել է 6 տարի զինւորական ծառայութեան մէջ Գրանսիայում, ունեցել է ընտանիք գերմանական Դիւսէլդօրֆում։ Ոչ իսկ մի հատիկ ինքնագիր... Պատմական վաւերագրերի մի մասը անհետացել է։ Այնուամենայնիւ, մի շարք ուշագրաւ դօկումենտներ պահւել են,—գլխաւորապէս Միւնխէնի պետական արշիւներում.

մի քանիսն էլ՝ Մօսկուայի ու Վիէննայի պետական մատեաններուն մէջ։

Օրիի անձնաւորութեան և միսսիոնի շուրջը շատ է գրուել նաև եւրոպական գրականութեան մէջ։ Ընդարձակ է ենթադրութիւնների, հիպոթեզների դաշտը և նա պատ ասպարէզ է տալիս ամեն տեսակ, յաճախ ամենահակասական մեկնութիւնների։ Ամանց կարծիքով, Հայոց անկախութեան այդ ռահվիրան մի չափազանց յանդուգն ու հերոսական դէմք է, ուրիշների ասելով՝ մի սոսկ արկածախնդիր։ „Ես չափազանց մեծ անվստահութիւն եմ տածում դէպի այդ հայը“—*Ich hege das allergrösste Misstrauen gegen diesen Armenier*—ասում է Միւնխէնի պրօֆէսօր Հայգել, 1893 թ.ի իր ուշագրաւ զեկուցման մէջ, ներկայացուած Կ. Բաւար. գիտական ճեմարանի փիլիսոփայա-լեզուագիտական և պատմական բաժանմունքին *)։ Մինչդեռ նրա հայրենակից Ֆինկը հիացմունքով ու ոգևորութեամբ է խօսել Օրիի ծրագրի համարձակութեան ու հանճարեղութեան մասին (*Kühnheit und Genialität seines Kriegsplanes*)։

Համեմատաբար նպաստաւոր կարծիք է յայտնում—Հայգելի ծայրայեղ թերահաւատութիւնը մերժելով—նաև Մօրիս Միւրէ, որ զեռեղել է մի յօդուած

*) *Karl Theodor Heigel.* — Զեկուցում-դասախօսութեան վերնագիրն է. „Պֆալցի իշխան Յօհանն Վիլհելմի ծրագիրը՝ Հայ արքայական թագը ձեռք բերելու համար“, տե՛ս *Sitzungsberichte der philosophisch-philologischen und historischen Classe der K. B. Akademie der wissenschaften zu München, 1893, Bd. II, Heft III.*

1898-ին Լօզանի նշանաւոր հանդէսի մէջ, հետեւեալ վերնագրով.

„Հայ խաչակրաց արշաւանքի մի նախագիծ 1700 թուին“ *):

Հայգել գաւառմ է բացարձակապէս *à la légère*, նրա զեկուցման մէջ, տարաբախտաբար, չենք գտնում ոչ ա-չառութիւն, որ առաջին պայմանն է պատմական լուրջ հետազօտութեան: Այդ ընդարձակ զեկուցման մէջ հեղինակը, հեգնելով հանդերձ պֆայցի իշխանի անապատ և յախուռն տենչանքները, հեգնում է և նրա հովանաւորեալ Օրիին, դուրս է բերում նրա ամբողջ ծրագիրը, որպէս մի պարզ, արկածախնդիր և փառամոլ շանտաժիստի յղացում, անարժան որևէ ուշադրութեան: Օրին—մի խարդախ առևտրական, ինչպէս բոլոր արևելցիք... „*Es ist ja eine bekannte Thatsache dass die Handelsleute Armeniens allen anderen Orientalen, auch Griechen und Juden an Schlauheit und Findigkeit überlegen waren*“... „Յայտնի իրողութիւն է—ասում է Օրիի գերմանացի գատախազը — որ Հայաստանի վաճառականները խորամանկութեան և հնարագիտութեան մէջ գերազանցում էին բոլոր արևելցիներին, անգամ յոյներին ու հրէաներին“...

Եւ այդպիսի հապճեպ, թեթևամիտ ընդհանրացումներով, այդպիսի շաբլօն ֆրազների վրայ Մխիթարեանների պրօֆէսօրը համարձակ կառուցանում է իր ծանր եզրակացութիւնների շէնքը, ցոյց տալով մի զարմանալի անլրջութիւն և մի անսովոր... *Schlagfertigkeit*,

*) *Un projet de Croisade Arménienne en 1700. Bibliotèque Universelle et Revue Suisse, Mai 1898.*

Բայց Հայգել „փաստեր“ ունի Օրին, ասում է նա, պարտքեր էր թողել Կրօյցնախի մէջ, որ չէր կարող գանձել (իրեն էին պարտ)... Ի վերջոյ փոխանակում է գրաւաթղթերը 500 տալէրի հետ, որպիսի մի գումար ստանալիք ուներ Պֆալցի իշխանական պալատից Դիւսէլդօրֆի մի գիներվաճառ: Վերջինը խնդրում է իշխանին հրահանգել՝ այդ գումարը վճարելու, որպէս զի Օրին դրամ ունենայ իր մեծ ուղևորութեան համար...

Եւ այդ „փաստը“ առիթ է տալիս պարոն Հայգէլին՝ կասկածելու Օրիին շահախնդրութեան մէջ և արտասանելու մի այսպիսի ֆրազ. „Օրին չի գիմել իր գործին այնպիսի կատարեալ անշահախնդրութեամբ, ինչպէս ինքն է նկարագրում իր նամակների մէջ“ („*So gänzlich uneigennützig ist Ory nich zu Werke gegangen*“):

Այլ „փաստ“: Իսրայէլ Օրին, յանձնարարականներ ստանալով Տօսկանայի մեծ իշխանին ներկայանալու համար, ամեն կերպ աշխատում է, որ Իտալիայում հաստատած իր հայ հայրենակիցները չտեղեկանան իր ծրագրի ու նպատակների մասին...

Այդ ևս խիստ „կասկածելի“ է թւում Միւնխէնի դատախազին... „Ինչո՞ւ էր թագցնում“... Ասել է՝ „շահախնդիր դիտաւորութիւններ ունէր, որ վախենում էր, թէ իր հայրենակիցները մերկացնէին ու վտանգէին“:

Բայց Իսրայէլ Օրին թագցնում էր բոլորովին տարբեր մտահոգութեամբ: Նա նոյնիսկ մօտ 20 տարուայ բացակայութիւնից յետոյ Կովկաս վերադառնալով և գիշերելով իր հայրենական յարկի տակ, նոյնիսկ այդտեղ

խնամքով թագցրել է իր ով լինելը՝ հարազատ քրոջից ու եղբօրից։ Օրին ապրել էր Պարիզի մէջ Լուդովիկոս XIV-ի օրով և լաւ էր իւրացրել „Արև-Արքայի“ մինիստրների յայտնի նշանաբանը. „*le secret est l'âme des grandes entreprises*“. (գաղտնապահութիւնը հոգին է մեծ ձեռնարկների)։ Եւ որքա՜ն աւելի անհրաժեշտ էր այդ գաղտնապահութիւնը հայկական միջավայրում, ուր—ինչպէս միշտ—այն ժամանակ ևս վրխտում էին լրտեսներն ու մատնիչները։

Ակնարկում են և խորհել Օրիի ծագման վրայ, կասկածի տակ են դնում նրա մէլիքական ծագումը և այդ էլ մի նոր զէնք է դառնում՝ նրան տապալելու, վարկաբեկելու համար։

Վերջապէս, ահա ջախջախիչ կասկած-մեղադրանքը.

Օրին ուզում էր „անուն հանել“, դիրք ու հռչակ վաստակել... պրօպագանդ անելով Հայաստանի ազատութեան համար իր գլխու, առանց իր հայրենակիցների գիտութեան...

Ա՛հ, „փառասիրութիւնը“... Վաղուց միջակ ու աչառոտ հոգիները ծառայեցրել են այն, իբրև զէնք նշանաւոր գործիչներին վարկաբեկելու, նսեմացնելու համար։ Նա կայ, սակայն, ամեն տեղ—այդ ճակատագրական բնազդը... Հռչակի և փառքի—ազնիւ փառքի—այդ տենդային ժտահոգութիւնը իր դերն է ունեցել մարդկային ամենավեհ յղացումների ու գործերի մէջ, առանց ստուեր ձգելու նրանց մեծ հեղինակների վրայ։ Երանի՛ բոլոր փառասէրները լինէին Օրիի պէս, նրա չափ առաւած և մտածած, նրա չափ զրկանք ու զո-

հողուբիւն ճաշակած... Երբ նպատակը այնքան վեհ է, հետապնդումը՝ այնքան ծանր ու զոհառատ, ճանապարհները այնքան ռիսկոտ ու վտանգալի—փառասիրութիւնը և այլ նման նկատումներն ու ժեղադրանքները իրենք իրենց էքանում են ողջմիտ քննադատութեան առջև։ Փառամոլներ կան,—մանր, գձուձ կարիէրիստներ—որ զուրկ լինելով մտաւոր ու բարոյական առաքինութիւններից, երևակայում են իրենք իրենց, որպէս կենտրօն աշխարհի կամ շրջապատող միջավայրի, որ ձգտում են դեր խաղալ ամեն գնով, շեշտել իրենց փոքրիկ եսը ամենաչնչին պարագաներում, շրջապատել այդ եսը արուեստական հմայքով, ծառայեցնել կարիէրին ընդհանրութեան շահերը և բոլոր իդէալները... Նրանք միշտ էլ ճնում են փոքրիկ ու անաչողակ, անփայլ ու արգահատելի, անընդունակ բարձր, ազնիւ թռիչքների և վաղ թէ ուշ մատնւում են հանրային ծաղրութեան։

Եթէ Օրին փառասէր էր,—յամենայն դէպս, այդ ոչ իպի փառասէրներից չէր։ Թո՞ղ անւանեն նրան խենթ, զառանցող, ուտօպիստ... Բայց այն ածականները, որ տալիս են նրան մի շարք անշնորհք գատախազներ՝ պատմութիւնն ու արդարադատութիւնը յետ կը ժղեն արգահատանքով։

Ո՞րտեղից է ստացել Միւնխէնի պրօֆէսօրը իր հակօրիական ներշնչումները։ Նա ինքը պարզում է այդ իր զեկուցման մէջ։ Ազդւած է նա լեհ եզուիտ, պատեր Պրոսինսկիից, որը ականատես է եղել Օրիի պարսկական պատմին 1708 թւին և որի տգեղ աչառութեան շարժառիթները պարզել է Ներսէս իր

պատկառելի աշխատութեան մէջ *)։ Ազդած է փոքր ինչ նաև Մխիթարեան հայրերից, որոնք ընդունելով հանդերձ Օրիի անշահախնդրութիւնը, պնդում են (ըստ Հայգէլի), որ հայ առաքեալը, իր մեծ գաղը առաջ մղելու համար, խաբեբայօրէն ընդունել է իր վրայ իշխանական անուն, առանց որի նա երբէք չէր աջողի յարաբերութեան մէջ մանել թագաւորների հետ **)։

***

Հայ յեղափոխական շարժման նախաձեռնութիւնը 17-րդ դարու վերջում և 18-րդի սկզբներում գալիս էր հայկական լղարիկ աշնւակութիւնից,—Ղ ա ր ա բ ա ղ ի հ ա յ մ է լ ի ք ն ե ր ի ց։ Կղերն էս, յանձին իր մի քանի համակրելի ներկայացուցիչների, մանաւանդ էր—թոյլ, երկչոտ մանաւանդ—այդ պատմական ձեռնարկին։ 1678-ին Էջմիածնում Յակոբ կաթողիկոսի նախագահութեամբ կայացած մի ժողովի որոշումով էր, որ հայկական մի պատգամաւորութիւն, նոյն կաթողիկոսի առաջնորդութեամբ, ուղարկուեց Եւրոպա՝ հայցելու պապի և քրիստոնեայ վեհապետների աջակցութիւնը պարսկահայերի ազատութեան համար։ Երեքական ներկայացուցիչներ հոգևոր և աշխարհական դասերից։ Նրանց

---

*) „Պետրոս Մեծի յարաբերութիւնները Հայ ժողովրդի հետ“։

**) Այդ իմաստով Հայգել մի նամակ է տպագրել 1893 թ. յունիսին, Ս. Պետերբուրգի գրադարանապետ Հայր Գարեգինից։

ժէջ էր ժէլիք Իսրայէլի որդի՝ Օրի *)։ Պօլիս հասնելով, կաթողիկոսը մեռաւ և պատգամաւորութիւնը ցրուեց, բոլորը վերադարձան իրենց երկիրը։

Ձվերադարձաւ միայն Օրին։ Նա որոշեց մեն-մինակ շարունակել ծանր առաքելութիւնը, իր սեփական ուժերով, իր անձնական ռիսկով։ Պէ՞տք էր—ինչ գնով էլ որ լինի—հետաքրքրել վեհապետներին հայկական գաղթով, ուղղել նրանց ուշադրութիւնը իր թշուառ հայրենիքի վրայ։ Դժուարին գործ։ „Ցնորական“, անկայուն ծրագիր։ Այսօր իսկ, երկու ամբողջ դար յետոյ, քաղաքակիրթ և ռամկավար աշխարհի մէջ անհնարին է լինում շահագրգռել իշխողներին ներօնեան հալածանքների ենթակայ մի ամբողջ ժողովրդի վիճակով։ Եւ սակայն... 18-րդ դարի սկզբում այդ մի հատիկ մարդը, Ղարաբաղի հայ ազնուականութեան այդ զարմանալի „դեսպանը“, Իսրայէլ Օրին, կարողացաւ այն աստիճան առաջ գնալ իր դեսպանական

---

*) Ի՞նչպէս է առաջացել Իսրայէլ Օրի անունը (Եւրոպայում—Ory)... Հիպօթեզները այստեղ և յոյն աստղերէզ ունին։ Ամենը ենթադրում են, թէ գա նշանակում է „Իսրայէլի որդի Եաուրի“, թէ „Եաուրի“ բառը յարմարելով եւրոպական այլ և այլ երկրների հնչուններին, աստիճանաբար ձևափոխել է և դարձել ի վերջոյ Օրի (*Jauri—Jori—Ori—Ory*)։ Որոշ հաւանականութիւն ունի այդ ենթադրութիւնը, ի նկատի ունենալով, որ Օրին, յիրաւի պիտէր յարմարեցնել իր անունը այլ և այլ երկրների աստուածանունների։ Ուսումնասիրելով, նա տալիս էր ուսական վերջաւորութիւն։ Ցամենայն դէպս, այս կէտն ևս մնում է և կը մնայ միշտ առեղծուած։

միսիոնի մէջ, կարողացաւ իրագործել այնպիսի քայլեր, որոնց մասին երազել անգամ չի կարող ժամանակակից հայ հայրենասէրը։

Մեն-ժենակ... նա փորձեց բոլոր ճանապարհները, սպառեց բոլոր միջոցները։ Առաջին երկիրը, որի հովանին ապաւինեց նա — Ֆրանսիան էր։ Առաջին վեհապետը, որի վրայ դարձաւ նրա յուսավառ հայեացքը,— Լուդովիկոս XIV-ն էր, այն ժամանակ ամենահզօր քրիստոնեայ արքան։ Եւ նա վճռեց մօտենալ „Արև-Արքայի“ փառաշուք պալատին, հաստատուեց մօտիկ, Վերսալ կամ Պարիզ և սկսեց առևտուր։ Պերճանքի իրերէնների վաճառքը դրեց նրան յարաբերութեան մէջ թագաւորի շրջապատի, պալատականների հետ։ Եւ Օրին նրանց միջոցով շատ աշխատեց տեսակցութիւն ունենալու թագաւորի հետ։ Բոլոր փորձերը վիժեցին։ Պատճա՞ռը։ Ասում են՝ որ կաթոլիկ արքան չէր համակրում „հերետիկոս“ հայերին, յամենայն դէպս, չէր սիրում, որ հայեր հաստատուէին ֆրանսիական հողի վրայ, և այդ իսկ պատճառով քշել տուեց մի խումբ հայերի, որ եկել տպարան էին հաստատել Ֆրանսիայում և որ այնուհետև անցան դէպի տաճկական Համբերատոր Հօլլանդիա։

Օրին չ՚արտաքսեցին, նրան նոյնիսկ ընդունեցին զինուորական ծառայութեան մէջ, ուր ծառայեց ամբողջ 6 տարի։ Բայց նրան չ՚ունկնդրեցին։ Ցուսախաբուած, անցաւ Գերմանիա։ Հաստատուեց Դիւսսէլդօրֆում և ձեռնարկեց գինու խոշոր առևտուր։ Նպատակը նոյնն էր՝ մօտենալ երկրի վեհապետին, որ սերտ, ազգակցական կապեր ունէր մի շարք ուրիշ արևմտեան թագաւորների ու իշխան-

ներբ հետ։ Պֆալցի իշխանը գուցէ աւելի ուշադիր գտնուէր դէպի այն մեծ, ցաւոտ խնդիրը, որ ճարակում էր Օրիին։

Եւ իշխանը աւելի քան ուշադիր գտնուեց։ Հայ առաքեալը մօտեցաւ նրան և կարճ միջոցում հմայեց։ Օգնում էր նրան այդ աջողութիւնների մէջ՝ գերմաներէնի ու լատիներէնի իր ծանօթութիւնը, ապա թերևս ամենից աւելի՝ իր ծագումը՝ իշխանական տիտղոսը *)։ Պատմեց Օրին մոլեռանդ և պապական իշխանին՝ Հայաստանի հալածանքներն ու բռնութիւնները, նկարագրեց վառ գոյներով հայ քրիստոնեայ ժողովրդի տառապանքը մահմեդական ուժիմի տակ։ Գոյները խտացնելու պէտք չկար. հայրենիքի կացութիւնը իրօք դժոխային էր։ Բայց միւս կողմից՝ քաւարական իշխանին ապահովաբար սիրաշահելու համար, Օրին զարնեց նրա սրտի ամենափափուկ, ամենազգայուն լարերին, վարպետ կերպով նկարագրեց հրապուրիչ հեռապատկերը նոր խաչակրաց արշաւանքի, որ պիտի սկսէր Պֆալցի իշխանը իր անձնական առաջնորդութեամբ և պիտի նւաճէր Հայաստանի թագը... „Հայաստանի՝ որ աշխարհի ամենաօրհնւած վայ-

*) Հայ մելիքները յետագայում իրենց ուած հաւատարմաթղթերի մէջ դրում էին Օրիի մասին, որ նա ծագում է Պ ռ օ շ իշխանական տոհմից (*Israëlis Ory, qui ducit originem ex familia principum Broschensium*), չեշտում էին, որ այդ տոհմը մեծամեծ ծառայութիւններ է մատուցել երկրին, որ նրա մի քանի անդամները չարաչար նահատակուել են իրենց դաւանած հաւատի համար, գրում էին նաև Օրիի կատարեալ անշահախնդրութեան և օրինակելի անձնուրացութեան մասին։

բերից է, ուր կլիման աննման է, օդը զմայլելի, ուր հարուրամեայ ծերուներները հազագիւտ չեն" ևլն ևլն։ Այդ հմայիչ պատմութիւնների մէջ պակաս չէր, անշուշտ, ճշմարտութեան բաժինը, բայց այդտեղ առատօրէն ի գործ դրւեց նաև արևելցու վառ ու բեղուն երևակայութիւնը, շաղոքորթութեան բնազդը և խորամանկութեան հնարքները։ Սակայն... ժոլեռանդ երկրպագու իր դատի և խորապէս համոզւած, որ բոլոր միջոցները լաւ են հայրենիքը մահմեդական արիւնոտ տարտարոսից փրկելու համար,—Օրին գնում էր իր ճանապարհը առանց վարանելու և խղճի ըմբոստացումներ ղգալու։

Վերջին խոշոր արգելքն էր մնում—հայերի „հերձւածը"... Նրա առաջ ևս կանգ չառաւ Օրին. նա յայտարարեց, որ հայ ժողովուրդը, իր անել վիճակից ազատւելու համար, պատրաստ է գրկելու պապականութիւն։ Հայ քարոզիչը ինքն, անտարակոյս, մտածում էր, որ հայկական անկախութիւնն իրագործելու համար վատ չէր լինի և մի այդպիսի թռիչք անել, համոզւած լինելով, մանաւանդ, որ էական տարբերութիւններ չկան քրիստոնէութեան երկու դօգմապաշտ եկեղեցիների միջև։ Բայց խարայել Օրին գիտէ՞ր արդեօք, որ հայ ժողովուրդը զանգւածօրէն ու յօժարակամ դժւար կ'ենթարկւէր հաւատափոխութեան... Թէ՞ գուցէ նա համոզւած էր հակառակի մէջ։ Հ ն ա՞ր էր արդեօք, որ գործ էր դնում հայկական դատի պրօպագանդիստը՝ իր իշխանական ունկնդրին վերջնականապէս գրաւելու համար, թէ՞ գուցէ կարծում էր շիտակօրէն, թէ հնարաւոր էր դաւանափոխութիւնը... Ո՞վ կարող է կռահել։

Յամենայն դէպս, „հնարքը“ ներգործեց։ „Ճշմարիտ հաւատի բերել արևելեան հինաւուրց և խելացի մի ժողովուրդ“ — դա այն ժամանակւայ մի ժողեռանդ վեհապետի համար ամենահրապուրիչ երազներից մինն էր։ Սակայն, Պֆալցի կուրֆիւրստին հաւանականօրէն, ամենից աւելի կախարգել էր Հայաստանի թագը (այս կէտի վերաբերմամբ Հայդել թերևս չի սխալւում իր գնահատութեան մէջ), և նա յափշտակեց Օրլի ծրագրով, աւեց իր փուխիկոտ համաձայնութիւնը, խոստացաւ կանգնել ազատարար բանակի գլուխ և ճամբեց Օրլին դէպի Հայաստան (1698 թ.) իր յանձնարարական նամակներով ուղղւած հայոց կաթողիկոսին, մէլիքներին և Վրաստանի թագաւորին։ Այնտեղ Օրլին պիտի խորհրդակցէր հայ երևելիների հետ և պիտի ժշակէին ա ր շ ա ւ ա ն ք ի ծրագիրը։

Երկար է խրայէլ Օրլի արկածների շարանը, — մեր նպատակից դուրս է՝ պատմել նրանց մանրամասնօրէն։ Ղարաբաղ գալով, նա անյապաղ ժողով է գումարում Գանձասարի վանքի մէջ, տեղական հայրենասէր կաթողիկոսի մօտ, մի քանի կղերականների և մի տասնեակ մէլիքների մասնակցութեամբ։ Եւ Օրլին պատմում է իր եւրոպական քաղաքագանդի արդիւնքը, հաղորդում է Պֆալցի իշխանի խոստումները, կարդում է նրա նամակը... Անօրինակ խանդավառութիւն տաւանափոխութեան կէտը միայն պաղ ջուր է ցանում հոգևորականութեան ներկայացուցիչների վրայ. նրանք հեռանում են և ժողովը պատակւում է։ Օրլին մի վայրկեան թւում է, թէ բոլոր յոյսերը խորտակւեցին...

Առանց կղերի մասնակցութեան նրա ծրագիրը չուրն էր ընկնում։ Այնուամենայնիւ նա չվհատեց։ Մէլիքները— ժողովրդի աշխարհական պարագլուխները — պատրաստ էին մանելու Հռօմի եկեղեցու գիրկը, միայն թէ—ասում էին նրանք — թող ազատարար իշխանը փութացնէ իր արշաւանքը։

Մի նոր ժողով—Սիսեան գաւառի Անգեղակոթ գիւղի մէջ։ Մէլիքներն են միայն։ Օրին նորէն կարդում է քաւարարական իշխանի նամակը և լրացնում իր անձնական բացատրութիւններով։ Որոշում են պատասխանել իշխանին.

„Փառք Աստուծոյ—գրում էին մէլիքները—մեզ ոչինչ չի պակսում՝ իրագործելու համար ծրագրուած արշաւանքը, ոչ խանդավառութիւն, ոչ գրաժ, ոչ էլ զինավարժ մարդիկ. մեզ պակսում է միայն մի առաջնորդ, հրամանատար“...

Եւ ահա, զինուած մէլիքների վստահութեամբ, նրանց նամակով, Օրին գիմեց նորէն Եւրոպա, 1699-ին։ Տանում էր նա մէլիքների ուրիշ նամակներ էլ՝ պապին և Պետրոս Մեծին։ Նորէն—Դիւսէլդօրֆ։ Օրին յանձնեց պֆալցի իշխանին մէլիքների նամակը, ուրուագծեց արշաւանքի ծրագիրը։ Իշխանը պէտք է անձամբ առաջնորդեր նոր խաչակրաց արշաւանքը, բայց հարկ էր գտնել ուրիշ դաշնակիցներ. հարկ էր գիմել պապին, գերմանական կայսրին, Տօսկանայի մեծ իշխանին, նաև Լեհաստանի թագաւորին ու ցարին, քանի որ վերջիններիի հողերով է, որ պիտի անցնէր ազատարար բանակը։ 1700-ի մայիսին այդ բանակը պիտի կտրէր Բօհեմիան,

Լեհաստանը, Ռուսաստանը մինչև Մոսկուա, ապա Վոլգայով ու Կասպից ծովով պիտի սահէր նաւերի մէջ մինչև Պարսկաստանի սահմանները. ներթագրաբար տեղ պիտի հասներ հոկտեմբերին։ Առաջին պարսկական քաղաքը—Շամախին—դիւրութեամբ պիտի գրաւէր. խաչակիրները երեւալուն պէս, 10,000 հայ մարտիկներ սպառազէն ոտքի պիտի կանգնէին ու միանային նրանց։ Ապա ազատարար բանակը, չորս գունդերի բաժանուած պիտի նետուէր այլ քաղաքների ու ամրոցների վրայ և կարճ միջոցում պիտի տիրանար երկրին... քանի որ հայերը պիտի կարենային առատօրէն մատակարարել մարդ, դրամ, զէնք ու ռազմամթերք, քանի որ մես կողմից, Վրաստանի թագաւորն ևս պիտի տար օժանդակ զօրք, քանի որ, վերջապէս, ինքը թշնամին ուներ միայն հաւաստաքար չնչին բանակ իր տրամադրութեան տակ։

Կուրփիւրստի յանձնարարականներով Օրին նորէն սկսեց պտոյտ—այս անգամ Եւրոպայում։ Իտալիայում—սիրալիր ընդունելութիւն և օգնութեան խոստումներ պապի ց, որին շլացնում էր հայ ժողովուրդը կաթոլիկութեան գիրկը բերելու հեռանկարը. ապա մի մի այց Ծօսկանայի մեծ իշխանին, գերմանական ու լեհական իշխաններին։ Գերմանիոյ կայսրը նոյնպէս խոստացաւ նպաստել հայերի ազատութեան, բայց հասկացրեց, որ առանց Ռուսիոյ ցարի համաձայնութեան՝ գործը չի կարող գլուխ գալ։ Եւ ահա Լէօպօլդ կայսրի ու պֆալցի իշխանի յանձնարարականներով „Հայոց գեսպանը“—*Armenus ex principum Broschensium* (ինչպէս գրում էր Լէօպօլդ կայսրը պետրոս Մեծին)—գնաց Մոսկուա։

Ո՛վ զարմանք։ Ցարը հրահանգում է փառահեղ ընդունելութիւն անել Օրիին։ Զինուորական մի պահակախումբ հետևում է նրան ամենուրեք և ոսկեզօծ կառքերը սպասում են նրան դռան առջև։ Պետրոսը ամենայն ուշադրութեամբ ուկնդրում է իր հիւրին, որի առաջարկած ծրագիրը ոգևորում է նրան, քանի որ միանգամայն համապատասխանում է ցարական աշխարհակալութեան տենչանքներին մօտիկ Արևելքում։ Խանդավառութիւնը այնքան մեծ է, որ Պետրոսը շուտով գրում է իր դրական պատասխանը Պֆալցի իշխանին, շնորհում է Օրիին գնդապետի աստիճան և հրահանգում է անյապաղ պատրաստութիւններ տեսնել արշաւանքի համար։

Սակայն... Հայութեան բախտից՝ պատահարներն ու արգելքները անպակաս էին և այն օրերում, ինչպէս նորագոյն ժամանակներում. բորբոքած էր ռուս-շվետական պատերազմը, որ վերջ չունէր։ „Հայկական արշաւանքը“ պիտի կազմակերպէր խաղաղութիւնը հաստատելուց յետոյ,—այդպէս էր ծանուցել Պետրոս Մեծը։ Եւ Օրին սպասեց, սպասեց։ Մինչ այս, մինչ այն՝ տրամադրութիւնները փոխուեցին Պֆալցի արքունիքում։ Նոր պատերազմներ ծագեցին Արևմուտքում և Պֆալցի իշխանը խորասուզուեց այլ կարգի մտահոգութիւնների մէջ։ Մոռացաւ Հայաստանն ու Օրին։ Ո՞վ գիտէ, գուցէ իշխանը մտածում էր նաև, որ „Մօսկովը“ հայ խաչակրաց արշաւանքի մէջ մտնելուց յետոյ՝ Հայաստանի թագը այլ ևս չպիտի հասնէր իրեն, իշխանին, այլ աւելի հաւանականօրէն... Պետրոսին։

Ցուսախաբութիւն յուսախաբութեան վրայ... Հարուածները անողոք էին, բայց Իսրայէլ Օրին վհատել չգիտէր։ Նա թողեց բոլոր արևմտեան միապետներին և իր դիմումները կենտրօնացրեց Ռուսաստանի մէջ։ Ցարը, կաշկանդուած լինելով հիւսիսային պատերազմով, կամեցաւ en attendant որոշ „խաղաղ ցոյց“ սարքել ի նպաստ հայերի և հայկական առաքելի միջոցով նա ղրկեց „գնդապետ“ Օրիին „դեսպանական միսիօնով“ պարսից Շահի մօտ՝ պարսաւելու վերջինիս՝ բռնութիւնների ու հարստահարութիւնների համար, որ կրում էր հայ ժողովուրդը։ Դոյն Շահին ցարական դեսպանը տանում էր ցուցաբար նամակներ պֆալից իշխանից, Լէօպօլդ կայսրից և Հռօմի պապից։

Լիհ եզուիտ Կրուսինսկի պատմում է մանրամասները Օրիի այդ ուշագրաւ „դեսպանութեան“։ Երկու հարիւրի չափ ռուս ու հայ պահակների շքախումբով՝ ցարի պատւիրակը մուտք է գործում Սպահան։ Եւ խօսում է Շահի հետ գրեթէ սպառնական տոնով. յորդորում է թողնել հայահալած քաղաքականութիւնը, որի հազարաւոր զոհերը ապաստանում են Եւրոպայում։ Այդ յանկարծակի յայտնութիւնը, խօսելու այդ տոնը սարսափ են ազդում Սպահանի ապարանքի վրայ։ Օրիի առաջնորդած այդ ռուսական վաշտի մէջ պարսիկները տեսնում են մի տեսակ դիտազօրներ, որոնց պէտք է հետևէր նաև ճողոպրական մեծ բանակը։ Ինքը խորհրդաւոր դեսպանը նիւթ է դառնում սարսափեցուցիչ մեկնութիւնների։ Հայաստանից եկած մի ֆրանսիացի հաւատացնում է Շահի շրջապատին, թէ լուր է տարածուած, որ իբր շուտով պիտի

վերականգնի Հայկական թագաւորութիւնը, ցարի հովանիի տակ, որ խորհրդաւոր դեսպանը պիտի կարգւի թագաւոր, որ նրա անուան ֆրանսերէն անդրադարձը հէնց այդ է նշանակում.

Israel Ory —Il sera roy!

Անհաբեկւած շահը չհնազանդեց դեսպանին պատիւ ու մեծարանք, ընդառաջ գնաց կիսասպառնական նրա յորդորներին ու պահանջներին, խոստացաւ նրանց իրագործել. և Օրին մեկնեց դէպի Ռուսաստան, ուր շարունակեց մնալ նախկին սպասողական վիճակում։ Ապարդի՛ւն։ Խաչակրաց արշաւանքը չ'եկաւ։ Պատերազմի հրդեհը բորբոքւել էր Եւրոպայի այլ և այլ ծայրերում և վեհապետները ժամանակ չունէին մտածելու արևելեան հեռաւոր նահատակ ժողովրդի մասին։ Ինքը Օրին շատ չ'ապրեց այնուհետև... չկարողանալով, թերևս, դիմանալ այնքան անողոք հիասթափութիւնների, խորտակւելով, թերևս, երկար տարիների անդուլ, յարատև, ճիգուտ աշխատանքի բեռի տակ... 1711 թ. նոյեմբեր 7-ին կազանի նահանգապետը հաղորդագրում էր Պետրոս Մեծին

«Ներկայ տարւայ սեպտեմբերին Աստրախանի գերագոյն-հրամանատարը գրում էր, որ Հռօմի պապի դեսպան Իսրայէլ Օրին ժամանել է նաւով ծովի այն կողմից և մօտ մի ամիս ապրելուց յետոյ, վախճանւել է օգոստոս ամսին և թաղւել իրենց օրէնքով, Աստրախանի Հայոց եկեղեցու մօտ"...

Finis Armeniae?...

Մեռաւ Իսրայէլ Օրին, գերեզման տանելով իր հոյակապ ծրագիրը և իր էքնաղ երազները։ Ընտունակող

այլևս չ'եղաւ։ Օրինները շատ չեն ծնւում։ Սրբազան դատի զինակիցները արին դարձեալ մի քանի քայլեր և գիմուժ-ներ նոյն նպատակով։ Բայց Օրիին ներանք չէին հասնի... Ոչ իսկ ամենաեռանդուն, գաղափարական զինա-կիցը, Խարբերդցի Մ ի ն ա ս վ ա ր դ ա պ ե տ ը։ Մի խո-շոր ստեր իջաւ հայկական հողի վրայ մեծ հայրենասէրի անակնկալ, վաղաժամ մահով. եթէ անգամ նրա տեսչանք-ները երբեմնապէս սահում էին դէպի ուտոպիայի, ցնորա-կանութեան աշխարհը,—յամենայն դէպս նա իր անօրինակ եռանդով և իր անշէջ հաւատով ջերմութիւն ու ոգևո-րութիւն էր հաղորդում հայկական կիսամեռ միջավայ-րին և նրա հմայքի ու տենդային գործունէութեան ցոլքերը պիտի երևային շուտով Սիւնեաց աշխարհի արիւ-նահեղ կռիւների, Դաւիթ բէկի հերոսական թռիչք-ների մէջ...

Ա յո՛, քոլո՛ր միջոցները սպառեց, քոլո՛ր անկիւնները պրպտեց իր յուսավառ և անհանգիստ, դիւանագիտա-կան հայեացքով, բախեց բոլոր դռները, թափեց անքա-ճիգ ու եռանդ, երկինք, երկիր իրար անցրեց՝ իր լքուած ու բազմատանջ հայրենիքին ազատութիւն բերելու համար։

Ո՞ւր է „խարբերան", „շանտաժիստը"։ Ո՞ւր են ՃՈՒՄ Հայգէնների անարգական, երևակայական ածականները...

Եթէ „հայոց դեսպանը" 17-րդ դարի վերջերում կարողացաւ այն աստիճան առաջ գնալ իր քաղաքական կարիէրի մէջ, կարողացաւ այնպիսի պաշտօններ ստանձ-նել ու կատարել և այնքան վստահութիւն ու համա-կրութիւն շահել թէ եւրոպական շրջաններում և թէ

իր ազգակիցների ժօտ,—այդ ահագին առաջխաղացութիւնը նա, անտարակոյս, պարտ էր ոչ միայն իր „արևելեան խարդախութեան“ հնարքներին և ոչ միայն „արտաքին պայմաններին“, պատժական նպաստաւոր միջավայրին, այլ և իր ներքին, անհատական գծերին, իր ժառաւոր, քաղաքագիտական պատրաստութեան, իր ընդարձակ ծանօթութեան հայրենիքի անցուդարձերին, պատմութեան ու պետութիւնների միջազգային յարաբերութիւններին, իր լեզւական հմտութիւններին և, վերջապէս, իր բարոյական յատկութիւններին, իր զգայուն սրտին և խանդավառ ու ճարակող հայրենասիրութեան.

Մեն-մենակ՝ Իսրայէլ Օրին ցոյց տւեց յետագայ սերունդներին, թէ ի՞նչ կարող է անել մի հատիկ մարդ, գաղափարական, կամքոտ և իգէալով տոգորւած մի անհատ, ինչ գործաւոր խոչընդոտներ կարող է նա յաղթահարել, ինչ հրաշալի ուժ ու եռանդ կարող է նա ծաւալել ստրկութեան ու անտարբերութեան անապատի մէջ՝ մի ազնիւ դատ վարելու համար:

Սերունդները երախտագէտ կը մնան յաւէտ—և „Ղարաբաղի արկածախնդիրը“, էնայեոծ մի երկու մակերեսային դատախազների բացասական գնահատումներին, կը մնայ միշտ հայկական սգաւոր պանթէօնի գարդերից մինը:

VI

ՀԱՑՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ ԵՒ XIX-ՐԴ-Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՑԵՐԸ

Ազատագրական բռնչմներ դարաւոր մռափից յետոյ. — Ղարաբաղ եւ Սիւնիք.—Բաջերի բոյլը եւ դաւանաճանութեան ճիդրաճ.—Արեւելեան եւ Արեւմտեան հայութիւն.—Ուշագրաւ զուգաճեռակ.—Ռուսաստանը եւ մեր պատմական ճակատագիրը.—„*Between devil and the deep sea*“. — Յարակաց ծրագիրներ, խոսռումներ եւ ճանռանջ. — Հայ-վրացական դաշնակցութիւն. — Յուսախաբութիւնների շարք. — Ինքնօգնութիւն. — Գաւիթ բէկի բաստառմուտը. — Օամանցի հօրդաների դէմ. — Սիւնիքի դիւցազնամարտը.—Պարսիզանական կռիւներ եւ «ակն լցեղ ականն». — Յոյսը՝ արտաքին միջամտութեան վրայ.—Վիժում.—Հայոց հարցը Եկատերինա II-ի օրով.—Նորէն խոսռումներ եւ ձգձգումներ.—Նորէն մահմեդական վրէժխնդրութեան բռնկումներ հայերի դէմ.—Ռուսաց տիրապետութեան հաստատումը. — Հայկական պատրաճիներր խորտակում են. — Կնուտը՝ եաթաղանի տեղ.—Մի ինքնաւուց վկայութիւն.—Հայ ժողովրդի կացութիւնը Էրիսռնեայ ռէժիմի տակ. — «Կթան կովի» միզիկական ապահովութեան «պլիւսը». — 1826-28 թուականները եւ «Հայոց աշխարհ»ի ճնռնումը. — Ներսէս Աշտարակեցի.—Հայ զօրագնդեր եւ մասնային ապստամբութիւն. — Ներսէսի պատրաճիները. — Պարձեալ ինքնաքափութիւն.—Գաղթականների հարցը.—Գաւէր Ներսէսի եւ հայ Եկեղեցու ինքնօրինութեան դէմ.—Ռուսական «սիստեմի» յաղթանակը. — Ներսէս ամսոռի մէջ. Ճեստպառն ակնարկ.—*Tempora non mutantur.*—

Մինչ արեւմտեան Հայութիւնը ի գէմս իր սակաւաթիւ մտաւոր առաջնորդների մշակում էր եռանդով—գլխա-

ւորապէս Վենետիկում — հայկական գրականութիւնն ու լեզուն, մինչ ղարաբաղցի Օրին, դիւանագիտական մի ծանր ու հայակապ առաքելութիւն ստանձնած, բանակցում էր Եւրոպայի ու Ռուսաստանի միահեծան պետերի հետ՝ կովկասեան հայութիւնը պարսից տիրապետութիւնից ազատելու նպատակով, անդին, հայկական լեռնաստանում, Ղարաբաղի և Սիւնիքի մէջ, պատրաստւում էր մի հզօր, զանգւածային շարժում, որ պիտի գար սատարելու Օրիի դիւանագիտական ձեռնարկները, արեան դաշտում նւիրագործելու հայոց մեծ քարոզչի և ամբողջ հայ ժողովրդի քաղաքական տենչանքները։

Խորին հիացումով է, որ այսօր անդրադառնում ենք այդ հինաւուրց կռիւների վրայ, իրաւացի հպարտութեամբ է, որ արձանագրում ենք արիութեան ու անձնւիրութեան այդ յիշատակելի գործերը, որ կատարել են, 200 տարի առաջ, մեր հերոս-նախորդները Սիւնեաց աշխարհի անդնդախոր ձորերի մէջ, Խաչէնի ու Վարանդայի կուսական անտառներում։

Քանի՛ դարեր սահել էին սարկութեան մրափի մէջ, քրիստոնէական սրտաշարժ խոնարհութեան ազօթքներով... Սերունդները յաջորդել էին բուռն, որոճող հօտերի պէս, առանց նոյնիսկ գիտակցելու իրենց կրած արհաւիրքի պատճառները, առանց բնաւ ճաշակելու ըմբոստութեան հմայքը։

Ա՛յժմ ինչպէ՛ս փոխւել էր պատկերը։ Հայրենիքի մի ընդարձակ հատւածը դարձել էր թատերաբեմ գիւցազնական արշաւների, պարտիզանական անդադրում ու արիւնահեղ կռիւների, որոնց միջից կարմրագոյն ժա-

պաւէնով ձգուում էր կտրիճների յաղթական շարանը— Դաւիթ բէկ և Մխիթար սպարապետ, Բայինդուր ու Թորոս իշխան, Տէր Աւետիք և անթիւ ժողովրդական հերոսներ, Թիւրի-Արզումաններ և Դալի Մահրաստաններ, որոնց շուրջը յօրինուած ոգևորիչ առասպելները մինչև օրս էլ դեռ անցնում են բերնէ-բերան Ղարաբաղի և Սիւնիքի նահապետական ու հերոսապաշտ ժողովրդի մէջ։

Անխառն չէ, աւա՛զ, մեր հիացմունքի ու երախտագիտութեան զգացումը հայոց պատմութեան այդ դիւցազնաշունչ դրւագների առջև... Հերոսների պայծառ ու հմայիչ շարանի հանդէպ՝ պատեղ ևս ցցւել է ներքին հազարաճիրան հիդրան, մատնիչների ու դաւաճանների օձաբարոյ լեգէօնը, որ ամեն մի բայլափոխում եկել է վիժեցնելու ազգաշէն ծրագիրներ ու ձեռնարկներ վաստակների, Մեհրուժաններըի նզովելի սերունդը շարունակեց 18-րդ դարու մէջ, իբրև Մէլիք-Շահնազարների, Մէլիք-Մուսինների և Մէլիք-Ֆռանգիւլների...

Սև շարանը կ'երկարանայ ու կ'անցնի 19-րդ և 20-րդ դարերի սահմաններն ևս, արտադրելով նման տիպեր յանձին ծանօթ Մամբրէների, Աւէնների ու Ազրայիլների, որոնց ասես ճակատագիրը դիտմամբ աշխարհ է բերել— տիեզերական հակադրութեան օրէնքով—որպէս զի աւելի ևս շեշտած լինի նրանց հակամարտ ախոյեանների, բուն ռազմիկ-հերոսների գաղափարական մեծութիւնը և թովքը...

Այո՛, Վարդանանց պատերազմից սկսած մինչև Վափանի ու Հալիձորի յաղթական կռիւները, մինչև նորագոյն ժամանակի „Դաշնակցութեան“ ճակատամարտ-

ները — հայոց մուսալ երկնակամարի տակուտքին աստղերը պսպղում են մի առանձին պայծառութեամբ ու յստակութեամբ, ներկայանում են առանձնապէս հրապուրիչ և պաշտելի... Դաւաճանութեան վիթխարի սուերն անգամ չեն կարող մթնացնել 18-րդ դարի հայ քաջերի այդ պլեադը, որ իրենց փայլուն սխրագործութիւններով, առնական և սրբազան վրիժառութեամբ դարագլուխ բաց արին սարկամիտ ու բազմատանջ ցեղի կեանքում և որոնց հեռաւոր ու արժանաւոր ժառանգները պիտի տային — XX-րդ դարի արշալոյսին — հայապատասխան արձագանքը նոյն սարերում ու ձորերում, թաթարական զանգւածային պօգրօմների միջոցին...

Ընդհիւ բնական նպաստաւոր դիրքերի և կիսանկախ, միլիքական կարգերի (աւելի ուշ՝ նաև ռուսական ռէժիմի յարաբերական մեղմութեան), կովկասեան հայութիւնը համեմատաբար վաղաժամ ու աջողութեամբ մարզւեց քաղաքական-մարտական անհրաժեշտութեանց դպրոցի մէջ, մինչդեռ արևմտեանը, թիւրքահպատակ հայութիւնը գրեթէ բացառապէս անձնատուբեցաւ գրչի աշխատանքին, հայրենի պատմագիտութեան ու քանասիրութեան։ Երկու արիւնակից հատւածների այդ ուշագրաւ զուգահեռակը և տարբերութիւնը այսօր ևս ընդհանուր առմամբ գեռ ճնում է իր ուժի մէջ, և այդ հանգամանքը ցայտուն կերպով շեշտւեց հայ ազգային շարժման նորագոյն շրջաններում։ Օսմանեան Հայաստանը, տալով հանգերձ հերոսութեան բազմաթիւ ու հոյակապ տիպարներ, գրեթէ երբէք չ'արտադրեց ընդհանուր, ամբողջ երկիրը կամ թէ նրա մի խոշոր հատ-

ւածը ընդգրկող զանգւածային շարժում (ապստամբական կամ դիմադրական), որպիսին տեսանք կովկասեան Հայաստանի մէջ, 1903 և մանաւանդ 1905—1906 պատմական թւականներուն։

***

Հայկական երկարատև ըմբոստացումները Կովկասի մէջ 18-րդ դարի ընթացքում սերտ կերպով կապւած են Ռուսաստանի ծրագրած „արևելեան առաջխաղացութեան“ հետ, կապւած են այն խանդավառ և վարդագոյն յոյսերի հետ, որ կովկասահայ, պարսկահպատակ ժողովուրդը դրել էր հիւսիսի մեծ, „քրիստոնեայ, ազատարար պետութեան“ վրայ։

Մեր պատմական ճակատագրին հաճելի էր որոնել տալ մեր փրկութեան խորհուրդը քրիստոնեայ պետութիւններից վառթարագոյնի դրօշի մէջ, որին թէև վիճակւած էր յետագայում — „ի հատուցումն“ այնքան շռայլ և զոհառատ հայկական ծառայութիւնների — ստեղծել իր հպատակ Հայաստանում համեմատաբար թեթև, հանդուրժելի մի կացութիւն բայց դրա հետ և վիճակւած էր պատճառել նոյն հ. յութեան անասելի աղէտները, շնորհիւ իր յաւիտենաւրէն վարանոտ, ձգձգող, յաճախ նենգ, դաւաճան քաղաքականութեան։

Մեծադղորդ խոստումներին, քաջալերող յորդորներին գրեթէ միշտ հետևել է նահանջ և լքում... և այդ տխուր նահանջների ընթացքում ժամանակական վարիչներն ու խուժանները նետել են միշտ գազանային

վրէժխնդրութեամբ իրենց քրիստոնեայ գոհերի վրայ և չարաչար պատժել են խիզախ „գիավուրին“, որ յանդգնում էր ոգևորել ռուսական առաջխաղացութեամբ, օգնութեան կոչել իսլամատեաց „Մոսկովը“... Անզուսպ խանդավառութեան բարձրացող ալիքը — հաւատակից պետութեան „ազատարար“ դրօշի հանդէպ — այնքա՜ն յաճախ տեղի է տուել անողոք հիասթափութեան և հայ ժողովրդի մաւուր առաջնորդները, ի տես այդ անհաշիւ ազգակործան աղէտների, երբեմն հարց են տուել իրենք իրենց. ո՞րն էր արդեօք գերադասելի—քրիստոնեայ տիրապետութեան հաստատո՞ւմը, թէ՞ մահմեդականի յարատեւումը...

Մերթ ակամայ, մերթ էլ ասես գիտակցաբար՝ այդ քրիստոնեայ պետութեան միջամտութիւնը հասել է միշտ չափազանց ուշ, երբ հայ զոհը մահմեդական գիշատիչների ճիրաններում եղել է գրեթէ խպատ արիւնաքամ, հոգեվարքում վիճակի մէջ... Եւ ապա, միջամտելուց ու իր ուժիմը հաստատելուց յետոյ էլ ցոյց է տուել—ինչպէս կը տեսնենք — քարասիրտ անտարբերութիւն դէպի իր հպատակ հայութեան արիւնահոս վէրքերը. Չկամութեան, յաճախ և բացարձակ հայատեացութեան մի չարաշուք ոգի գրեթէ միշտ ղեկավարել է Ռուսաստանի վարիչներին մեր ժողովրդի ազատութեան խնդրի հանդէպ, — մի ժողովրդի՝ որ սկզբից իսկ հրճւանքով փարել էր ռուսական դրօշակին, որ անքաւ զոհողութիւններով աջակցել ու առաջնորդել էր Ռուսաստանին, սրա առաջին քայլերի մէջ՝ դէպի Հեռու Անդրկովկասը, դէպի անծանօթ, իսլամական

Արևելքը, եղել է միշտ, գրեթե ամբողջ երկու դար, մի տեսակ առաջապահ ռուսական առևտրի, կուլտուրայի, քաղաքական ազդեցութեան, որ տուել է իր արիւնը, իր մտաւոր հանճարը, իր լաւագոյն գիտնական ատեղանդները՝ ցարիզմի աշխարհակալութիւնը գիւրացնելու նպատակով, որ տարել է իր խաչ ու խաչվառները ռուսական բանակի առաջ, կանգնեցրել է այդ բանակում իր ալէգարդ, հոգևոր առաջնորդներին, որ վերջապէս, փայլել է իր հլու, ծայրայեղօրէն լոյեալ հպատակութեան զգացումներով...

Դժուար է ասել, թէ ցարիզմը բռնել է այդ դժբախտ քաղաքականութեան գիծը իր կենսական շահերից դրդուած... Ռուսաստանի, նոյնիսկ ցարական, բռնապետական Ռուսաստանի շահերը չէին կարող թելադրել այդպիսի մի քաղաքականութիւն, որ գրեթէ սկզբից ի վեր եղաւ մութ, կասկածոտ, խոստումնադրուժ՝ հայկական ինքնօրինութեան — անգամ պարզ կուլտուրական ավտոնոմիայի — ամենահամեստ իղձերի հանդէպ և որ հասաւ իր նենգութեան ու տմարդութեան գագաթնակէտին՝ Լօքանովի օրով... պատմական մի անօրինակ ճգնաժամի մէջ, երբ հայ ժողովուրդը տասնեակ հազարներով մորթոտուում էր իր հայրենիքում... „Հայաստանը պէ՞տք էր ռուսներին՝ առանց հայերի“,— և պետերբուրգը հրճուում էր թիւրքաց հայութեան հոգեվարքի գալարումներով *).

*) Այսօր դարձեալ միամիտները, թիւրքահայոց ճգնաժամի առթիւ, նոյն „հայասէր“ Ռուսաստանն են օգնութեան կոչում... Ունայն ազերսանք՝ որ երբէք չի լսել քրիստոնեայ հովանաւորը“... Նա ինքը գիտէ իր գալու ժամանակը...

Այո, նշովեալ ճակատագիր՝ որ ուրիշ ոչինչ չի թո-
ղել մեզ, բայց եթէ ընտրել, ըստ անգլիական առածի,
„սատանայի և խորունկ ծովի միջև“, „*between devil
and the deep sea*“...

1722 թուականն է։ Շվէդական պատերազմը վերջա-
ցել է Ռուսաստանի յաղթանակով և հասել է, ուրեմն,
ժամանակը, երբ Պետրոս Մեծ պիտի արշաւէ դէպի
Արևելք՝ ազատելու քրիստոնեայ ժողովուրդները Թի-
ւմուճների կրկնուեցին ցարի ժօտ, Հայկական պատգամա-
ւորութեան միջոցով։ Թիւմուճներ՝ և վրացիների կողմից,
որոնք նոյնպէս հեծում էին մահմեդական լծի տակ։

Վերջապէս Ռուսաստանը շարժուեց։ Պարսկաստանը ձեռքից գնում
էր. աւազաններ, օսմանցիներ խուժել էին բռնատիրական
ախորժակներով։

Վրացիների լեզգիներն ևս, կովկասեան լեռնաշղթայի
արևելեան լանջերից սանձարձակ արշաւանքներ էին
գործում դէպի Շիրվանի դաշտավայրը, օգտւելով Պարս-
կաստանի թուլութիւնից, քայքայումից։ Նրանք յարձակ-
ւել էին ի միջի այլոց Շամախիի վրայ, կոտորել ամբողջ
ազգաբնակութիւնը, որի մէջ և 300 ռուս հպատակ-
ներ, գրաւել էին նրանց ահագին հարստութիւնը։ Լեզ-
գիների աւերիչ յորձանքը հասաւ մինչև Ղարաբաղ,
անցաւ ճարակող լուսյի պէս Դիզակի, Վարանդայի,
Խաչէնի վրայից... Մի նոր պատուհաս հայ թշուառ ազ-
գաբնակութեան համար։

Հարկ էր շտապել՝ թէ պատժելու լեզգիներին ռուս-

սահպատակ վաճառականներին ընտելու համար և թե ձեռք ձգելու Պարսկաստանից ապրի իր տուրքա-բաժինը։ Այդ էր, որ մղում էր Պետրոսին և ոչ որևէ „պատարար“ ու սանտիմենտալ ցնորք։ Մարդասիրական դրդումներից շատ ավելի ուժեղ էր ռուս կառավարութեան մէջ՝ Արևելքի նուաճման ու առևտրի ծարաւը...

Ցարի հրահանգով կազմակերպեց հայ-վրացական մի բանակ, որ պիտի օգնէր ռուսաց զօրքի ժամանելուն՝ ապստամբութեան դիմելու համար։ Ընտրեց կայան գանձակի մօտ և սպասեց ռուսներին, Պատկառելի բանակ էր, թուով աւելի քան 50,000։ Հայոց զօրքի առաջնորդն էր Դաւիթ բէկ։ Նա գնացել էր Ղարաբաղ, գինուորագրել կամաւորների մի բանի տասնեակ հազարներ, նշանակել էր նրանց վրայ երկու կարող զօրապետներ՝ Մէլիք եգան և Աւան Իւզբաշի Ինքը — ընդհանուր հրամանատար։ Հայկական բանակի մէջ է գանձասարի եպսկ կաթողիկոսը, շարժման հոգևոր պարագլուխը։ Իսկ հիւսիսից ռուսաց զօրքի հետ գալիս էր մի այլ հազւագիւտ հայ հոգևորական, նոյն Խարբերդի Մինաս վարդապետը, որ Օրիի ժողովին էր, գործակիցը։

Խի՞նդ ու բերկրանք մի ազգեալ բանակում։ Անօրինակ խանդավառութիւն ամբողջ հայ ժողովրդի մէջ։ Եկե՞լ էր, վերջապէս, հատուցման ժամը։ Սարսափը տիրում է մահմեդական աշխարհին։ Օսմանցիք զգում են փոթորիկը և շտապում են գրաւել պարսկական սահմանակից երկրները, Երևանից մինչև Հին Նախիջևան և Թաւրիզ։ Բայց ոչինչ այլ ևս չի վախեցնում հայերին։ Ասէը

գալիս էր Հիսիսից սպառազէն և ահաւոր — գալիս էր պատժելու, յետ մղելու Մահիկը: Ցնծում են Ղարաբաղի մելիքները: Իսրայէլ Օրին սասանւում է գերեզմանի մէջ... պատարւում էր նրա վսեմ բաղձանքը, հասնում էր նրա քսանամեայ տանջալի թափառումների նպատակակէտը...

Եւ յանկարծ... լուր է հասնում, թէ պետրոսը էլ չի գալիս: Նա եկել էր իր զօրքերով մինչև Դեբբենտ և այնտեղից վերադարձել էր Աստրախան, ուսկից՝ դէպի Ռուսաստան: Ռուսաց զօրքը գրաւել էր կասպից ծովի հարաւային եզերքի մի շարք գաւառներ, Գիլան, Մազանդարան, Աստրաբադ և այլն: Առաջին անգամը լսել էր կովկասում ռուսական թնդանօթի ահաւոր որոտը. բայց և շուտով յետ էր նահանջել, առանց ոտք դնելու հայկական հողի վրայ... Աներևակայելի վիշտ ու լքումն երկու փոքրիկ ժողովուրդների դաշնակից բանակի մէջ: Անտանելի ուրախութիւն մահմեդական աշխարհում: Նա տեսնում է, որ „Մոսկովի“ վտանգը լոկ պատրանք է... Եւ բռնաւորները վերսկսում են իրենց նախճիրը կրկնակի մոլեգնութեամբ...

Հայերին ու վրացիներին ինում էր դիմել ինքնօգնութեան. դաւիթ բէկը, հիասթափուած, քաշւում է Սիւնեաց աշխարհ, ամրացնում է իր դիրքերը կուռ ու դիմադրութեան համար: Կացութիւնը սոսկալի է. օսմանցիք էլ խուժել էին պարսկական հողը, հասել էին մինչև Ղարաբաղ: Մի նոր ոսոխ, աւելի ուժեղ, քան թէ պարսից քայքայուղ բռնակալութիւնը:

Բայց հայոց ինքնօգնութիւնը հրաշքներ գործեց,

Հայկական սպատամբութիւնը պայթեց միաժամանակ, 1722-ի յիշատակելի թուականին, Ղարաբաղում և Սիւնիքում, Ղարաբաղի մէջ, մէլիքների ղեկավարութեամբ, հայերը առժամապէս հանգիստ թողնելով պարսիկներին, նիւթում են օսմանցիների դէմ ճշմարիտ քարդուպիմէոսեան գիշերներ, կոտորում են մասսայօրէն, մաքրում են երկիրը նորեկ բարբարոսներից, որոնց գլխաւոր հրամանատար Սարի-Մուստաֆա փաշան հազիւ հազ ազատում է հայերի ձեռքից, փախչում է Էրևան։

Իսկ Սիւնիքի կռիւները դառնում են մի կատաղեալ դիւցազնամարտ Դաւիթ բէկի և իր փայլուն սպայակոյտի սխրագործութիւնները յայտնի են և մենք երկար կանգ չենք առնի նրանց վրայ։ Ղափանի, Հալիձորի կռիւները մեր պատմութեան ամենափառաշուք և ամենայուզիչ դրւագներից են և նրանց գնացող մանրամասները գծել է Րաֆֆին իր „Դաւիթ-բէկ“ վէպի մէջ։

Մահմետական տիրապետողների բերդերը միևնոյն միւսից յետոյ բնկնում էին նրա ահեղ զօրութեան առջև։ Հալիձորի բերդի պաշարման ժամանակ մի բուռն քաջերով ցրեց նա օսմանցիների աւելի քան քսան հազար զօրքը *)։ Ղափանը,

*) Ճամչեան տալիս է շատ աւելի խոշոր թիւ — 70,000։ Ահա պատմագիրը այսպէս է նկարագրում այդ անմոռանալի դրւագը.

„Ժողովեցան ապա ամենայն զօրք այլազգեաց, որք կային ի պատրաստի... և եղև թիւ ամենայնի նոցա իբր եօթանասուն հազար արանց, ամենեքին զինու վառեալք, ամենեքին զօրաւորք...

„Եւ եկեալ շուրջ պաշարեցին զփոքրիկ ամրոցն Դաւթի և կանգնեցին զնովաւ բարձր պատնէշ, և ուղղեցին զմնգազանման մեծամեծս և սկսան որձակել զաւուրս, և կարգ եդեալ

Բարգիշատը, Ջաւնտուրը, Գենուազը և Գողթանը բոլոր-
բովին ժաքրեց օսմանցիներից, իսկ նրանցից Մեղրի և Օր-
դուբատ քաղաքները... Ցանկարծակի մահը թոյլ չտուեց այդ
հերոսին երկար վայելելու իր յաղթութիւնների փառքը...
1728 թուին դաւաճանի թոյնը նրան դերեզման տարաւ" *):

շուրջանակի պատերազմին հրացանիւ և պարսաքարիւ զա-
ւուրս վեց... Այլ գօրք Դաւթի սրով հարեալ զնոսա և զրա-
զուժս միջակտուր արարեալ ի վայր թօթափէին, և այնչափ
եղեն թօթափեալ դիակունքն, մինչև բլուրս գործել առա՛ջի
ամրոցին...

„Ի հասանել ապա ութերորդ ժամու աւուրն և ի սաստ-
կանալ վտանգին, Աւետիք և Մխիթար ձայն ետուն Դաւթի՝
պահել առ վայր մի սակաւուք զամրոցն. և ինքեանք աճա-
պարեալ ելին արտաքս ընդ գաղտնի դուռն ամրոցին, և
երեք հարիւր վառեալք զկնի նոցա. և յանկարծակուս յար-
ձակեալ առիւծաբար ի վերայ առաջնոյ խմբի՝ սկսան հար-
կանել զնոսա կատարի սաստկութեամբ. յորոց խռովեալ և
և խուճապեալ բազմութեան նոցա՝ անկան յերկրորդ և յեր-
րորդ խումբսն, և աղաղակեցին մեծաձայն, թէ հասին հայք
և կատորեն զմեզ։ Եւ նոցա յահ մեծ ըմբռնեալ՝ ափշեցան
և շփոթեցան խափա. և թողեալ անդ զամենայն զկայ և
զկարասի իւրեանց՝ ոչխր և ցան փախեան անտի։ Դիմեցին
զկնի նոցա զօրքն Դաւթի, և հարին զբազումս, ընդ ամե-
նայն՝ երեքտասան հազար այր, և առին հարիւր քառասուն
և ութն դրօշակս, և զայլ ամենայն ապիս նոցա և գարձան
ի Հալիձոր"։

Միքայէլ Չամչեան, Պատմութիւն Հայոց, էջ 795։

*) Ռաֆֆի, „Խամսայի մելիքութիւնները"։

Ինչպե՞ս է մեռել Հայոցզի մեծ հրամանատարը... ժամա-
նակը այնքան էլ հին չէ, բայց այդ կարևոր կէտի մէջ ևս
մեր պատմագիրները տարակարծիք են։ Մինչ „Սամուէլի"
հեղինակը վերագրում է այդ մահը հայ դաւաճանի ձա-

„Մօտ տասը տարուայ բնթացքում սիւնեցի հայը անընդհատ պատերազմներով իրագործեց տարուկ հայութեան կատարեալ ազատագրութիւնը և երկար դարերի մեր անպատիւ, ողբալի պատմութեան մէջ բաց արեց մի հերոսական, պանծալի շրջան, որին պէտք է յատկացնել „Ղ ա փ ա ն յ ի ն ե ր ի շրջան“ անունը... Հայաստանի բազմահին գերդաստանների մէկում իր անխոնջ ա խտութեամբ, իր անվեհեր քաջութեամբ և—գլխաւորը—հերոսական հայրենասիրութեամբ, Դաւիթ բէկը մի այնպիսի մեծագործութիւն կատարեց, որի հետեւանքները անգամ անյայտ է հայոց պատմութեան այն արիւնաներկ էջերին, որոնք գալիս են Թուրքիանեան իշխանութեան ոչնչացումից յետոյ“ *):

Կուի նշանաբանը նոյնն էր, ինչ որ Ղարաբաղում Հանգիստ թողնել առժամապէս պարսիկներին և հարուածել աւելի վտանգաւոր հակառակորդին — օսմանցի եկեւորներին։ Կուելու պարտիզանական ձևն էր տիրապետում։ Գաղտնի դարաններից փոքրիկ խմբերով նետւել յանկարծ թշնամու վրայ, կայծակի պէս զարնել և անհետանալ... Ինքը Դաւիթ բէկ—„ի ցեղէ սիւնեաց հայկազանց, այր հզօր և քաջաբազուկ“—ասից այդ ձևի առաջին փայլուն և յաղթական օրինակը Իշ Թափալարի դաշտավայրում, ուէկէն իմէկ յարձակուելով ղօշաղու թիւրք ցեղի վրայ և բնաջինջ անելով։ Կուի մեթօդն էր՝ ա կ ն ը ն դ ա կ ա ն։ Մովսէսի գաժան օրէնքը յաճախ է եղել փրկութեան միջոց հալածական

ուցած թոյնին, Զամչեանը հաւատում է, որ Դաւիթ բէկ վախճանել է խաղաղ ու նօրմալ մահով... „Եւ ինքն գարձ արարեալ ի Հալիձոր՝ յետ աւուրց ինչ հիւանդացաւ և մեռաւ ի տան իւրում խաղաղութեամբ“... Լէօն յարում է Զամչեանի հիպօթեզին։

*) Լէօ, Հայկ. Տպագր. Հատ. II։

ժողովուրդների համար... Եւ նրա ընդարձակ կիրառուժ-
ները մենք պիտի տեսնենք հայկական կուի նորագոյն
շրջաններուժ, մասնաւորապէս նոյն կովկասեան հակա-
թաթար արշաւների մէջ։

Յենուած գինուորական իր հմայքի և ընտիր սպայա-
կոյտի վրայ, Սիւնեաց հերոսը չորս տարի շարունակ
պահեց երկիրը անկախ վիճակուժ, ահաբեկելով տեղա-
կան և շրջակայ մահմեդական ազգաբնակութիւնը։

Ապա... նորէն շուռ եկաւ բախտի անիւը, խորտակեց
այդ գեղեցիկ շարժուժը, չկարողանալով աւելի հեռուն
տարածել, չգտնելով լայն արձագանք կովկասեան կըտ-
րատուած, բաժան-բաժան հայութեան մէջ, պառակտ-
ելով ներսուժ, զարնելով անյաղթելի խոչընդոտների և
ամենից առաջ՝ ներքին, հայկական դաւաճանութեան։

Դաւիթ բէկի և իր աջ բազուկ Մէլիք Փարսադանի
մահից յետոյ—Հայաստանը նորէն ստրուկ էր։ Ի՞նչ
փոյթ սակայն, թէ այդ հերոսական գլուխգործոցն ևս մնաց
ապարդիւն, առանց չջնջելի վաստակի... Բնական է,
որ նա այնքան գեղեցկացնուժ է, գէթ վայրկենական
փայլ ու հմայք հաղորդուժ մի զարհուրելի պատմու-
թեան, որ գրեթէ ծայրէ ի ծայր արցունք է, նահա-
տակութիւն։ Եւ ե՞րբ է, ո՞րտեղ է ապարդիւն թափել
հերոսների, նահատակների արիւնը...

Հայաստանը նորէն ստրուկ էր։ Հայ կտրիճները որ-
քան էլ ճիգ ու եռանդ թափէին, որքան էլ փայլէին
հերոսութեամբ ու անձնազոհութեամբ, այնուամենայնիւ
չպիտի կարենային տևականօրէն յաղթանակել և իշխա-
նութիւն հաստատել աշխարհագրական մի միջավայրուժ,

ուր շուրջը ամենուրեք վխտում էր ժահվեզական ոսոխը, բազմաբանակ ու բազմազան, պարսիկ, Թաթար, լեզգի, տաճիկ, և ուր ի լրումն աղէտալի կացութեան՝ հայոց կեանքը ծնում էր առատօրէն վատակաբիւղ հրէշներ, հայրենավաճառ, ազգադաւ չարագործներ, որոնք յաճախ առաջնորդում էին բռնաւորներին ինքնապաշտպան ամրոցների դէմը...

Ինչպէս վերջին երեսնամեակի հայ ազատագրական շարժման միջոցին, այն ժամանակ ևս անձնուրացների սակաւաթիւ լեգէօնը կռւում էր, յոյսը դրած արտաքին մի ջամտութեան վրայ... Ռուսական դրօշը, չնայեած գառն յուսախաբութիւններին, շարունակում էր ոգևորել Սիւնեաց քաջերին։ Դիմումները հայերի կողմից շարունակում էին տեղալ Պետերբուրգ, թագաւորի մօտ։ Սակայն, վերջինը այլ ևս չէր տալիս նախկին արձագանքը։ Նա չէր իսկ այլ ևս յուսադրում ու քաջալերում, չէր իսկ արտասանում վազեմի „սպասեցէ՛ք“-ը։ Հայոց անկախութեան, անգամ հաւեստ ինքնօրինութեան գաղափարը չէր զբաղեցնում ցարին և երբէք էլ, անտարակոյս, չէր զբաղեցրել։ Նա այժմ մտածում էր մի խոշոր „բարիք“ անել հայերին. — գաղթեցնել նրանց կոստիւկան նորանուաճ ծովեզերեայ նահանգները, ուր նրանք, իբրև գերազանցապէս առևտրական ու աշխատասէր տարր, պիտի զարկ տային առևտրին և շէնցնէին քաղաքները։

Հայրենիքի ազատութեան տեղ—գաղթ... Եւ ցարն արդէն դաշինքով կապել, հաշտել էր հայոց երդ-

ւեալ ոսոխի, պարսից կառավարութեան հետ, որով կրկին խորտակուում էին հայկական պատրանքները...

Այնուամենայնիւ, հայոց ազատութեան յոյսը չմեռաւ։ Հայկական ախորժակները վերստին բորբոքեցին 35 տարի յետոյ, Եկատերինա II-ի օրով։ Սա ևս — նոյն վազեմի դրդումներով, հայերին գործիք դարձնելու իր նւաճողական քաղաքականութեան — բարեհաճեց իր սիրալիր ուշադրութեանն արժանացնել կովկասեան հայութիւնը։ Այդ հանգամանքը նորէն թևաւեց հայոց յոյսերին, և հրապարակ եկաւ մի նոր հոգևորական—Ռուսաստանի հայոց առաջնորդ Յովսէփ Արղութեան — որ ունէր մօտիկ յարաբերութիւններ ռուս արքունիքի և ամենազօր Պոտեմկինի հետ և որ խանդավառ կրօղն էր հայոց անկախութեան գաղափարի։

Դարձեալ վարդագոյն լաւատեսութիւն, դարձեալ միամիտ զառանցանք... „Ազատ Հայաստանը շուտով ոչ կը վերականգնի ռուսական հովանիի տակ, և Պոտեմկինը—նրա ապագայ իշխանը“...

Խանդավառութեան ալիքը հասաւ մինչև Հնդկաստանի հայ գաղութները և — ուշագրաւ մի կուրիօզ՝ յատուկ միայն մեր տարօրինակ իրականութեան — երևան եկան հնդկահայ հարուստների մէջ անհատներ, որ հայրենասիրական մի ինքնատիպ գինովութեան մէջ առաջարկեցին փողով գնել Հայաստանը Թիւրքիոյ և Պարսկաստանի ձեռքից.

Այս անգամ ևս երկար տևեցին քաղաքական քա-

նակցութիւնները հայ ժէլիքների և ռուսական արքունիքի միջև։ Այս անգամ ևս հայ ազգի պատգամաւորները խոստանում էին ցարի կառավարութեան՝ ամեն կերպ հարթել ճանապարհը Ռուսաստանի առաջխաղացութեան համար, մատակարարել ռուս զօրքի ամբողջ պաշարը, ժխանալ նրան հայ կամաւորաց վաշտերով և դարձեալ պետերբուրգից—խոստումներ ու խոստումներ։ Պատերազմը նշանակւում է 1784-ի ամառը։ Ռուս-հայկական միացեալ ուժերը դուրս պիտի քշէին պարսիկներին, պիտի ջնջէին Շուշւայ խանութիւնը։ Այսպէս էր ծրագրել պետերբուրգը։

Զուր եղան բոլոր ակնկալութիւնները։ Ռուսները էլի չ'եկան։ Նրանց անվերջ պատրաստութիւններն ու բանակցութիւնները հայերի հետ՝ գրգռում էին միայն հայոց դահիճների մոլեռանդութիւնն ու վրէժխնդրութիւնը։ Բարբարոսութեան թափը միշտ աւելի սաստկանում է, հայ ժողովուրդը ըմբոստանում է պարբերաբար, ակն ընդ ականով հարւածում է, ուր կարող է, բազմանում են ժողովրդական հերոսները, Թիւլի Ւրզումանի, Դալի Մահրասայի, Զարգար Գրիգորի և բազմաթիւ նմանների անունները սարսափ են ազդում ամբողջ գաւառների մահմեդական ազգաբնակութեան վրայ... Բայց բոլո՛րը ապարդիւն։ Դրսից չի հասնում օգնութիւն, ազատարար և խաչակիր պետութիւնը միշտ ուշանում է, երբէք չի անում վճռական մի քայլ, թեև շարունակ յուսադրում է։

Օգնութեան ճիչերն ու աղերսանքները աւելի ուժով վերսկսուեցին—հայերի ու վրացիների կողմից—1791

թ. ականին, երբ Պարսկաստանից լանկթամուրեան մի շառաւիղ, Ագա Մամադ խանը, իր անդադրում արշաւանքներով օրհասի մէջ էր ձգել Արարատեան հայութիւնը և վտանգել նաև Վրաստանը։ Պետերբուրգը պատասխանում էր. „համբերեցէ՛ք, շուտով կը գանք“։ Ի վերջոյ, 1796-ին մի մանիֆեստ հրամանագրում էր գեներալ Զուբովին՝ „օգնութեան հասնել Ընդրկովկասի քրիստոնեաներին“։ Արքայական մանիֆեստը ծանուցանում էր, որ Ռուսաստանը զէնք է բարձրացնում „յանուն ճնշուած ազգերի ազատութեան“։ Գալիս են ռուսները և մինը միւսիետևից գրաւում են մի շարք քաղաքներ, առանց պատերազմի, հայ ազգաբնակութեան ամենագործօն աջակցութեամբ.—Դերբենտ, Ղուբա, Շամախի և այլն։ Ապա ռուսական արշաւանքը դիմում է դէպի Գանձակ ու Ղարաբաղ։ Բայց դարձեալ բախտը գուաճանում է հայերին։ Վրայ է հասնում կայսրուհու մահը և Զուբով հրաման է ստանում վերադառնալու Ռուսաստան։ Եւ 1797-ին ռուսաց զօրքը նորէն քաշուեց Ընդրկովկասից, մատնելով հայութիւնը դառն հիասթափութեան և թշնամու վրէժխնդիր հարուածներին...

Դերբենտի և Ղուբաի հայերը, որ սեփական ձեռքով քաց էին արել ռուսների առաջ այդ քաղաքների դռները, որ բռնել ու յանձնել էին տեղական խանին ռուսների ձեռքը — այնուհետև այլ ևս չէին կարող ճնալ այդ քաղաքներում և ստիպուած եղան գաղթել դէպի Ռուսաստան... Հայերի դէմ կատաղի արշաւանք սկսուեց և Շամախիում, ուր նրանց խանդավառ ռուսա-

սիրութիւնը պատժեց ի միջի այլոց հայ հոգևոր առաջնորդի սպանութեամբ։

Դաղթի դժբախտ, կործանարար հոսանքը ծայր տուեց և հայաշատ Ղարաբաղուժ...

Վերջապես, 1805 թուին—դարձեալ հայ զօրավարների և հայկական կռմաւոր բանակի աջակցութեամբ—Ռուսաստանը գրաւեց առանց արիւնհեղութեան նաև Գանձակի ու Շուշւայ բերդերը։ Ռուսական դրօշը տնկուեց վերջնականապէս նաև այդ վայրերուժ։

***

Ըստ չ'անցաւ և հայութիւնը գտաց, թէ որքան վիաժիտ ու ցնորական են եղել իր երբեմնի ակնկալութիւնները քրիստոնեայ աշխարհակալողից։ Վերջինը ոչ միայն չվերականգնեց հայ ժէլիքութիւնը, այլ և մահացու հարուած տուեց ավտոնոմիայի, ինքնօրինութեան այդ շնչին բեկորներին, որ կանգուն էին մնացել մահմեդական բռնակալութեանց դարաւոր յեղյեղուժների մէջ։ Ոչնչացրեց այդ բեկորները· և մատնեց հայ աշխատաւոր գիւղացիութեան հոծ զանգուածներ մահմեդական խաների, բէկերի, աղալարների կեղեքումներին։

Ռուսները Ղարաբաղի մէլիքների ջանքերով տիրելով Ղարաբաղին, նոյն մէլիքների վաղեմի թշնամի Իբրահիմ-խանին թողեցին որպէս այդ երկրի գլխաւոր կառավարիչ։ Իբրահիմ-խանը դաւաճանեց ռուսներին և սպանեցաւ։ Նրա տեղը նշանակեցին դաւաճանի մեծ որդուն՝ Մէհտի-խանին, տալի բնդարձակ իրաւունքներով. դա ևս տալի մեծ դաւաճանութիւն գործեց. 1822 թուին Ղարաբաղից փոխաւ Պարսկաստանն և պարսից զօրքերի հետ վերադառնալով, սկսեց պա-

տերազմել ռուսների հետ։ Անհատականալի է, թե նոյն ժամանակուայ ռուսայ պաշտօնակալներն, ի՞նչ էին գտնում այդ ննդգաւոր խաների մէջ, որ նրանց գերադասում էին հայոց մելիքներից, որոնք ամենայն զոհաբերութեամբ անձնատուր էին եղած Ռուսաստանին։ (Րաֆֆի, „Խամսայի մելիքութիւնները", եր. 212)։

Անհատականալի չէ։ Ռուս „քաղաքական սիստեմի" պատուիրաններից մինն էր այդ, որ մինչև օրս էլ շարունակւում է։ Միահեծան և կոզմակերպուած բռնակալութեան սիստեմը պահանջում էր, որ առաջադէմ, մտաւորապէս համեմատաբար բարձր տարրերը չմիրեն հրապարակին, ընդհակառակը, ըստ կարելւոյն դուրս մղւին, նսեմանան և դեգերեն ամենանուաստ հպատակութեան մէջ։ Ինչպէս որ նա անողոք ու հալածող է առաջադէմ ու աչքի ընկնող անհատ-քաղաքացիների վերաբերմամբ, նոյնպէս և անողոք է դէպի առաջադէմ ազգերը։ Այդ դիրքիտիվին ընդհանրապէս հաւատարիմ է մնացել ռուսական միապետութիւնը սկզբից մինչև այսօր։ Հայերին տալ ասպարէզ այն չափով միայն, որ չափով դա անհրաժեշտ է երկրի առևտրին ու արդիւնագործութեանը մի յայտնի զարկ տալու համար *), ապա նաև նւաճողական պատերազմները դիւրացնելու նպատակով... Բայց անգամ հայ զօրավարները, որ իրենց անսովոր քաջութեամբ, ռազմագիտական տաղանդով և երկրի պայմանների ընդարձակ ծա-

*) Ասում ենք՝ „մի յայտնի"... որովհետև անգամ այդ առպարէզում պակաս չեն եղել—և չեն այսօր էլ — սահմանափակումներն ու կաշկանդումները, թէ ընդհանուր բնոյթ ունեցող, և թէ մասնաւոր, ազգայնական։

նօթուԹիւններով անգնահատելի ծառայուԹիւններ են մատուցել ռուսաց Թագին ու աշխարհակալուԹեան, անգամ նրանք միշտ չեն գտել խրախուսանք կենտրոնական ու տեղական վարչուԹեան կողմից, և պատահել է, որ նրանք իրենց ամենափայլուն յաղԹանակներից յետոյ, իրենց կարիերի սրարշաւ վերելքի միջոցին յետ են կոչւել և փոխարինւել ռուս, վրացի զինուորականներով, կամ փոխադրւել են հետաւոր վայրեր... Իսկ Թէ ինչպիսի վերաբերմունք է ցոյց տալիս ռուս պաշտօնական պատմագրուԹիւնը դէպի այդ հայ զօրավարները, ինչպիսի գձուձ ժլատուԹեամբ է նա գնահատում նրանց դերերը և որոշադրում նրանց տեղը կովկասեան գոռ պատերազմների Թատերաբեմում,—այդ էլ գիտե իւրաքանչիւրը մեզնից, որ դժբախտուԹիւն է ունեցել անցնելու ռուս պետական դպրոցի բովից, ունկնդրելու բիրտ ու չօվէն ուսուցիչներին, անգիր անելու այդ պաշտօնական պատմագրուԹեան կեղծ ու փքուն շարադրուԹիւնները, ուր յաղԹական դափնիներ և նապոլէօնեան գծեր են յատկացուած աննշան միջադէպերին, մինչդեռ իսկական դերակատարները նետուած են գիտակցաբար սուների մէջ...

Նոյն ողբալի խորհրդական ոգին հայ տարրի հանդէպ՝ աւելի ևս շեշտել է քաղաքական-հասարակական կեանքի այլ ասպարէզներում, դպրոցների, քաղաքային ինքնավարուԹիւնների մէջ, բարձր ու ստորին պաշտօնեաների ընտրուԹեան մէջ և այլն։ Արգելքներ հայկական ամեն մի ուրոյն ու առաջխաղաց ինիցիատիվի ու հոսանքի դէմ, հալածանք լեզուի, դպրոցի և անգամ եկեղեցու

դէմ. կամայական միջամտութիւններ կաթողիկոսական ընտրութեան մէջ, յօշոտուած հինաւուրց կրօնական ինքնօրինութեան, ոտնահարուած բազմադարեայ ազգային աւանդութիւնների, — այդ բոլորը աւելի յստակ կը տեսնենք յետագայում։ Ցնաեսական հարստահարութիւնների մասին խօսելն իսկ աւելորդ է։ Հայ աշխատաւորի ձեռքից յափշտակեցին նրա լաւագոյն հողերը և սակաւահողութեան պատուհասը ընդմիշտ ծանրացաւ ամբողջ կովկասեան հայութեան վրայ, խաթարելով նրա նորմալ աճելութեան պրօցէսը, թուլացնելով և նրա կուլտուրական առաջադիմութեան թափը... Չինօվնիկական պարազիտիզմը տարածեց աւեներեք իր ցանցերը և ծծեց ու ստրկացրեց „օբէնքի“ անունով։

Հասքերողութեան դէպքեր ու շրջաններ եղան, այո, այդ ճնշող ու հալածական քաղաքականութեան ընթացքում, բայց լոկ իբրև աննշան ու կարճատև բացառութիւններ. „սիստեմը“ ընդհանուր առմամբ նոյնը մնաց, բռնութեան և ուսացման մեթօդը շարունակեց իր ճանապարհը վաղանցուկ ընդմիջումներով, հայը մնաց կրկնոկի ու եռակի ճնշուած, հարստահարուած — թէ՛ իբրև ազգ, թէ իբրև հպատակ-քաղաքացի և թէ՛ իբրև անդամ ուրոյն կրօնական դաւանութեան... Ամեն ինչ ենթարկուեց հետզհետէ գինուորական երկաթակուռ սիստեմին։ Չինօվնիկի բիրտ բազուկը իր դաժան օբէնքի տառով փոխարինեց մահմեդական քաօսին. կնուռը եկաւ, իբրև մեղմացում եաթաղանի։

Անգլիացի Ուրկվարտ, որ ըստ երևոյթին այն ժամանակուայ հետախոյզ ճանապարհորդներից է, նկա-

գագթելով հայ հպատակների կացութիւնը ռուսական տիրապետութեան սկզբներում; մօտ 100 տարի սրանից առաջ, խօսելով հարկահանութեան նահապետական և ուերիչ ձևերի մասին, վեր հանելով գինուորականների բիրտ ու վայրագ գծերը, արձանագրելով պաշտօնեաների ագիտութիւնը, կաշառակերութիւնը, նրանց արհամարհոտ ու անարգական վերաբերումը դէպի հպատակը,—հարց է տալիս.

„Ո՞ր ժողովուրդը կարող էր հանգիստ ու գոհ լինել այդ տեսակ պաշտօնեաների աշխարհում“ *):

Ո՞ր ժողովուրդը...

— Հ ա յ ը:

Այո, հայ ժողովուրդը, այնուամենայնիւ, գոհ էր ռէժիմի այդ փոփոխութիւնից, ռուսական տիրապետութեան հաստատումից: Նա այնքան սարսափ ու արհաւիրք էր կրել մահմեդական տիրապետութեան տակ, որ կնուտի ու նագայկայի հարուածներն անգամ կարող էին շատ զգալի չթուալ նրա կարծրացած մէջքին: Նա տեսել էր այնպիսի անյոյս գժոխքներ իր բազմադարեայ գոյութեան ծոցում, որոնց հանդէպ իր ներկայ վիճակը կարող էր թուալ երբեմն ճշմարիտ փրկութիւն:

Եթէ կամենայինք մի վայրկեան տալ հասարակագիտական ընդհանրացումով, կը համեմատէինք հայոց կեանքի այդ փոխանցման շրջանը մարդկային պատմութեան, ուելի ճիշտ, նախապատմութեան այն հեռաւոր

*) *D. Urquart. Progrès et position actuelle de la Russie en Orient, trad. fr. Paris.* Հրատ. 1836 թ. էջ 105:

շրջանի հետ, երբ աշխատաւոր զանգւածները ազատ-
ւում էին մարդակերութեան, կաննիբալիզմի ճիրաննե-
րից և մանում էին տարկութեան կամ ճորտութեան
մէջ։ Հայոց վիճակը նոր ռուսական ռէժիմի տակ շատ
տարբեր չէր միջնադարեան ճորտութիւնից։ Նա նոյն
նիւթն էր անսահման կեղեքման, նոյն զոհն էր բռնու-
թեան ու անարգանքի։ Բայց և այնպէս նա գոհ էր,
քանի որ այլ ևս չէր մորթուում քմահաճօրէն բռնա-
կալների ձեռքով, պահպանում էր իր ֆիզիկական գոյու-
թիւնը — թէկուզ տրորւած, հիւծւած, աննախանձելի
վիճակում — պահպանում էր, որովհետև այդպէս էր
պահանջում նոր, աւելի գործնական պետու-
թեան շահը, որովհետև հայ տարրը, չնայեած իր
„վտանգաւոր“ հակումներին, մի գերազանց „կթան կով“
էր, թէ մտաւոր-գիւղատնտեսական և թէ մանաւանդ առև-
տրական ու արդիւնաբերող աշխատանքի տեսակէտից։
Վերջապէս, քրիստոնեայ պետութիւնը փոքր ինչ աւելի
„քաղաքակիրթ“ էր, ճշտագոյն արտայայտութեամբ՝ փոքր
ինչ նւազ բարբարոս... Նա կուզէր ճնշել, ապրիլ, իբրև
Եւրոպական պետութիւն, նրա գերագոյն հրամա-
նատարը, կայսրուհին, „խոնարհւում էր“ արևմտեան
վերանորոգիչ հանճարների առջև և մինչև իսկ թղթակ-
ցում էր վոլտէրի հետ։

Ահա այդ „պլիւսն“ էր շնորհում մեզ քրիստոնեայ
կառավարութիւնը, իբրև մի տեսակ ողորմութիւն, այդ
էր նա պարգևում մեզ — զարգացման մի քանի թոյլ
հնարաւորութիւններով — և այդքանն էլ բաւական էր,

որպէս զի ռուսահպատակ հայութիւնը, 100 տարի սրա-
նից առաջ, գոհունակութեամբ խոնարհւէր ռուսական
դրօշակի առջև, այդքանն էլ բաւական է լինում, որպէս
զի այսօր ևս—երբ Ռուսաստանը ճնում է էապէս նոյն
հնաւանդ, ազգահալած բռնապետութիւնը—հայ մտա-
ւորականութեան որոշ տարրեր երախտագիտութեան
ցոյցեր անեն նրա հասցէին... Ցեղի տարաժերժ և հի-
ւանդոտ հոգեբանութիւնն է դա, որ գիտէ այդքանով
ոչ միայն գոհանալ, այլ և յափշտակիլ ու խանդավառ-
ւիլ—մի հոգեբանութիւն՝ որի գոյութեան պատճառ-
ներից մէկն է միայն թիւրքահայոց անապահով ու
երերուն կացութեան մէջ, միւս պատճառը... հայկական
մշտադալար սերվիլիզմն է։

***

Որքա՜ն աւելի ուշագրաւ են քաղաքական էւօլիւ-
սիօնի յետագայ շրջանները։ Քանի աւելի է շեշտւում
հայի անկեղծ և անձնւէր հաւատարմութիւնը դէպի
հաւատակից թագաւորն ու ռէժիմը, քանի աւելի են
բազմանում հայ ժողովրդի երախտիքները, նրա մատու-
ցած ծառայութիւնները թագին ու պետութեան, այն-
քան աւելս աւելի է խտանում վարչական մթնոլորտի
մէջ կասկածի, չկամութեան ու ատելութեան ամպերը
դէպի հայ հպատակը։

Ահա և 1826—28 թուականները, մեր պատմութեան
փոթորկայոյզ, նշանակալի փուլերից մինը։ Արարատեան
Հայութիւնը, ոտքի է կանգնել և ռուսական զօրքերի

հետ կուռում է պարսից բռնակալութեան դէմ, կոտորում է, կոտորուում է։ Ներսէս Աշտարակեցին *) անզուգական հոգին է այդ գեղեցիկ ապստամբութեան, նա ինքն անձամբ նախագահում է հայկական զինուորակոչին և պատերազմի գործողութիւններին, նա ինքն անձամբ հրատարակում է մանիֆեստներ, հրովարտակներ „առ հայոց ազգ“։

Հազւագիւտ և գիւթիչ վայրկեաններ են...

„Ցիշեցէ՛ք — գրում է Ներսէս իր պատերազմական շրջաբերականի մէջ, ուղղուած հայ ժողովրդին — յիշեցէ՛ք ձեր հարց մեծամեծ սխրագործութիւնները... Դուք նոցա որդիքն էք, նոցա արիւնը եւ է դալի ձեր երակներում։ Նման ձեր հարց և նախնեաց՝ հաւատարմութիւնը առ Աստուած, առ քրիստոնէութիւն և առ բարեբարն մեր — Աստուածապահ կայսրն Ռուսիոյ, — դերազանց դասեցէք քան զկեանքն ձեր և նմանիսկ կեանքն...

„Ցայտնի է ձեզ նաև Ռուսիոյ օգոստափառ պետութեան նպատակը։ Նա իր հզօր բազուկը տարածեց մեր հայրենեաց վրայ ոչ այնքան իւր սեփական օգտի համար, որքան մեր անդորրութեան և բարօրութեան համար...

„Արիացէ՛ք, մի վախիք։ Ահա ժամանակ, երբ ամենեքեանքդ վերածնելով ձեր մէջ ձեր նախնեաց սխրագործութիւնները, միաբանութեամբ պիտի քաջալերէք միմեանց ասելով. „մեռնե՛նք քաջութեամբ և առանց հայրենեացդ դաւաճանելու և այգպիսով ժառանգենք մեր նախնեաց պանծալի անունն ու փառքը“... Խոյակատուեցէ՛ք արիութեամբ և դիմագրեցէք մեր թշնամեաց բոլոր խորամանկութեանցը և աւազակութեանցը... դիմադրեցէք կամ ուսոց զօրքերի հետ միասին և կամ թէ մի ուրիշ կերպ... Իսկ թէ հարկ լինի, մի՛ խնայէք ձեր արեան վերջին կաթիլը... Աստուածային շնորհը և Ռուսիոյ օգոստափառ ինքնակալի աղօրմած ուշադրութիւնը պատկներ կը հիւանն թէ ձեզ և թէ բոլոր ձեր համազգեաց“։

---

*) 1770 թ.—1857 թ.։

Ի... մէկ ձեռքին խաչ, միւսին դրօշակ՝ ինքը քաջարի հովւապետը սլացաւ պատերազմի դաշտ։

Երկար կը լինէր գծել այստեղ հայոց կուիւների, զրկանքների ու չարչարանքների շարանը։ Ահա „Դէլի-Քէշիշը“ (Մանուչարեան Գրիգոր եպիսկոպոս), որ վեզարն ու փարաջան ծալած, շինականի պարզ չուխայով, ոտից ցգլուխ զինուած, սպիտակ նժոյգի վրայ թռչում է իր քաջերով պարսից հեծելազօրքի դէմ։ Ահա նոյն եպիսկոպոսը Շամշադինի, Ղազախի և Ալեանայ կողմերում, 500 զինուորներով մի շարք չարչարանքներ է տալիս տպատամբ թիւրքերի դէմ, որի համար հիացմունքի ու երախտագիտութեան խօսքեր է լսում երկրի կառավարչապետ Երմոլովից։ Ահա հայազգի զօրավար Մադաթով, իբրև մի աւազանին զօրաբաժնի հրամանատար, իր 2000 հոգի բանակով, միացած Դէլի-Քէշիշի և հայկական զօրագնդի հետ, Շամքոր գետակի ժօտ ջարդ է տալիս 10—12 հազար պարսիկ զօրքերին, որոնք թողնելով կուի դաշտում 2000 դիակ, փախչում են ահաբեկուած։ Իւ Մադաթով հանդիսաւոր ու չարչարական մուտք է գործում Գանձակի մէջ, ուր նրան ցնծութեամբ, խաչ ու խաչվառով դիմաւորում է հայ ժողովուրդն ու հոգևորականութիւնը։

Հայ գեներալի այդ գահավէժ, չանթահարող ընթացքը, նրա փառքի դափնիները սկսում են անհանգիստ անել ռուսական բիւրօկրատիային,—և այն վայրկեանին, երբ Մադաթով պատրաստւում էր վերջնական ու վճռական հարուածը տալ պարսիկներին, յանկարծ հրաման է գալիս, որ զօրաբաժնի հրամանատարութիւնը

առնւի նրա ձեռքից և յանձնւի ռուս գեներալ-մայոր Պանկրատիէվին...

Խանգավառութիւնը ընդհանուր է կովկասեան Հայաստանի մէջ. „Հայոց ազգային պատերազմը“ ելեքտրականացրել է բոլորին. ցուն-տեղ թողած, գրեթէ ամբողջ հայութիւնը Քուր ափերից մինչև Արաքսի եզերքը, մեծ ու փոքր, աշխարհական և կղերական, ոտքի էին կանգնել՝ դիւրացնելու Ռուսաստանի յաղթանակը և թօթափելու մահմեդական բռնապետութիւնը:

„Ինչ որ պարսից կուսի ժամանակին հայը արին, Աստուծոյ է յայտնի — ասում է „Ազդարք Հայաստանի“ի անմահ հեղինակը—թէ մարդ չ'իմանայ, քարերը վկայութիւն կը տան: Հալքաթի որ մէկ արդար և անաչառ մարդ Վրաստանու պատմութիւնը կը գրի, էն ժամանակը կ'երևի, թէ հայը ինչ արին, ինչ հաւատարմութիւն են ցոյց տւել տէրութեանը, ինչ արիւն են վեր ածել“...

Պատերազմը շարունակւում է—շարունակւում են և հայ զօրագնդի քաջագործութիւնները: Իսկ ներսէս Աշտարակեցին—մի նոր Վարդան Մամիկոնեան, հայ ազատագրական վիպերգութեան ամենագրաւիչ դէմքերից մինը—շնփորում է անդադար իր մտաւոր ու բարոյական հեղինակութեան բարձրութիւնից, յորդորում է ազգին՝ չխնայել ճիգ ու արիւն քրիստոնեայ պետութեան համար և նետւում է քանիցս անձամբ պատերազմի արկածների մէջ, վտանգի ենթարկելով իր կեանքը:

„Հասա՛ ժամը — գրում էր նա դարձեալ 1827-ի ձմեռը իր բարեկամներին — երբ աչքով պիտի տեսնենք Արտրատեան աշխարհի և հայոց ազգի ազատութիւնը. հասաւ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերա-

կանգնէ իր վաղեմի անկախութիւնը. ոտքի՛ կանգնէք, հայոց քաջեր, թօթափեցէ՛ք պարսից լուծը, ուրախացրէք ալեզարդ Մասիսին, մի անգամ արիւնով ներկեցէք հայրենի հո՛ղը և ապա ապրեցէք ազատ... ժամ է արդէն... Օ՛ն անդր... Հիմա—կամ երբէ՛ք"...

Ձայնը հնչում էր հազարաւոր արձագանքներով հայ գժբախտ հայրենիքի բոլոր անկիւններում և հասնում էր մինչև Հնդկաստանի հայ գաղութները...

Մօտենում են վճռական վայրկեանները, հայք և ներսէս կրկնապատկում են իրենց ճիգը. ահա ազատարար բանակը Էջմիածնի ժէջ, Աշտարակեցու առաջնորդութեամբ. այնտեղից պիտի գրոհ տար Երևանի, Սարդար Արագի բերդերի վրայ. ուրախ, ցնծագին զօդանջում են հինաւուրց վանքի զանգակները, Մխաքանութիւնը խաչ ու խաչվառով հանդէպ է գալիս բանակին, — և հայոց ներսէսը այդտեղ ևս բացականչում է ի լուր ամբողջ հայութեան.

„Ահա հասաւ ազատութեան պանծալի օրը, երբ Հայաստանի դարևոր փառքը աշխարհիս վրայ նորից պիտի վերականգնի խաչի զօրութեամբ"...

Պիտի վերականգնի՛...

Այդպէս էր ներշնչել հայ առաջնորդին Պետերբուրգի Մակեավէլլին կամ նրա Ներվկասեան սպասաւորը — Պասկեվիչ...

Ձենք երկարում. ցեղի ուներցան մի շարք արիւնահեղ ճակատամարտներ, ուր Արարատեան հայութիւնը զոհաբերեց առատօրէն իր կեանքն ու ստացուածքը. Պասկեվիչը վերջացաւ Ռուսաստանի լիակատար յաղթանակով, նրա ձեռքն անցան Երևանի ու Նախիջևանի

ընդարձակ խանութները, որ Նիկոլայ | անուանեց „Հայկական աշխարհ", „Արժեանսկայա Օբլաստ":

Վերջացաւ Հայոց ժառանգութեան ու լայնալայն գոհաբերութեան լուրերը հասան ամեն տեղ, նաև ռուսական արքունիքին. իսկ Ներսէսի անձնաւորութիւնը, պատած առաքեալի և Հերոսի լուսապսակով, գարձաւ ամենուրեք, նոյնիսկ կայսրի անմիջական շրջապատում, ջերմ ու պաակառոտ ուշագրութեան առարկայ. շարժեց ոմանց անվերապահ հիացմունքը, այլոց Թունոտ նախանձն ու շարաշուք կասկածը...

Պատերազմը վերջացաւ—և իբրև առաջին „շնորհ" Հայոց ազգին կայսերական կառավարութեան կողմից՝ կովկասեան կառավարչապետը առաջարկեց Ներսէսին, որ հայերը ի նշան երախտագիտութեան, կազմեն իրենցից 2000 հոգու չափ մի մշտական զօրք, հսկելու հաժայր նուաճած երկիրների բերդերի մէջ... որպէս զի ռուսաց զօրքը ստիպուած չլինի ձեալ ամառուայ ամիսներին Արարատեան գաշտի վրայ:

Ռուսական վեհանձնութեան մի այլ խոշոր արտայայտութիւնն էր կովկասեան իշխանութիւնների վերաբերումը դէպի Հայ գաղթականները. փառասուն հազար հայ մարդիկ ձմրան արհաւիրքների մէջ հեռանում էին Պարսկաստանից ռուսաց զօրքին, թողնելով մշակուած հողեր, տուն, գոյք, հարստութիւն, շտապում էին անցնել Արաքսը, երևակայելով գտնել այնտեղ գրկաբաց ընդունելութիւն: Բայց նրանց իրօք սպասում էր ռուսական պաշտօնէութեան ցուրտ ու անհիւրընկալ գիրկը, սպասում էին անվերջ զրկանքներ,

քաղց, տանջանք, նւաստացում և ողբերգական թշւառութիւն, ինչպէս 1878-ի Թիւրքահայ գաղթականութեան օրերում։ Թողնենք, որ խօսէ այդ առիթով ռուսական դրօշի անկեղծ ու լոյեալ երկրպագուներից մինը *).

Գաղթականների զոհաբերութիւնը անօրինակելի էր։ Նոքա թողնում էին իւրեանց տունն ու տեղը, պատւական այգիքը, ցանած դաշտերը, հացով լի ամբարները և ձմրան ցրտին, մեծ մասը ոտքով, շտապում դէպի Արաքս։ Ծերունիքը ուսերի վրայ կրում էին երեխայոց, կանայք — ճանապարհի երկու երեք օրւայ պաշարը։ Եւ այն հոլուստ հայ գիւղականը, որ երեկեան օրը փարթամացած էր Աստուծոյ շնորհած ամեն բարիքով, այսօր յետին չքաւորի պէս ոտքով առնում էր իւր բազմաթիւ զերդաստանը յուսալով թէ Արաքսի ձախ ափում եդեմական դրախտը պիտի մնի։ Ուսուցչ իշխանութիւնը դրդելով հայոց գաղթելու, ոչինչ նախապատրաստութիւն չէր տեսած նոցա օգնելու։ Պատկեիչը մի 25 հազար ռուբլի տալով Լազարեանին, բոլորը խաղեց որա վրայ և ինքը գնաց Թիֆլիզ։ Լազարեանը ստիպւած էր դրամ չունեցող զերդաստաններին բաժանել 5—6 ռուբլիով, որպէս ողքուտի—ողորմութիւն։ Բայց երբ այդ գրամն էլ հատաւ, Լազարեանը ստիպւած էր թիֆլիզեցի հայ վաճառականներից, իւր պատասխանատուութեամբ, երկու հազար ռուբլի փոխ առնել։

Գաղթականները խումբ-խումբ ճանապարհ բնկան 1828 թւի փետրուարի վերջերից սկսած։ Առաջին շարժուողներն էին Թաւրիզի հայք։ Այս քաղաքի բանի մի հարիւր զերդաստանները բոլորն էլ դուրս եկան և տեղը մնացին միայն վեց տուն։ Նոցա հետևեցին և շրջակայքը ու ապա՝ այնտեղի բնակիչները, որտեղից հետզհետէ դուրս էին գալիս ռուսաց զօրքերը։ Անցնելով Արաքսը՝ գաղթականները չսպասած թշւառութեանց հանդիպեցին։ Ուսուցչ սահմաններում նոցա համար ոչինչ պատրաստութիւն չէր տեսնւած։ Նախիջևանի ամայի դաշտերում նոքա մնացին քաց օդի տակ՝ առանց բնակարանի և առանց հացի։ Երևանում կազմած „գաղթա-

*) Ա. Երիցեան, „Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX-րդ դարում։

կանութեան յանձնաժողովը" տեղեկացրեց Լազարեանին, որ հայ չճաբուելու պատճառով ոչինչ օգնութիւն չէ կարող տալ թշուառներին և թէ նոքա ուսուց սահմաններում սովամահ կարող են լինել, և այդ պատճառով խնդրում էր յետ պահել նոցա մինչև նոր հայի հունձքն։ Բայց արդէն ուշ էր. ժողովրդի մեծ մասը անցել էր Ախալքալաք, միւսներն էլ անցնում էին։

Սակայն ճանապարհին կրած նեղութիւնները ոչինչ էին համեմատութեամբ այն թշուառութեանց, որոնց ենթարկեցին գաղթականները նոյն իսկ ուսուց սահմաններում — իւրեանց նոր բնակավայրում։ Եւ այդ թշուառութիւնները դժբաղդաբար տարիներ տևեցին ու, չյիշելով բազմաթիւ մեռածներին, կենդանի մնացորդներն էլ վերջին յուսահատութեան հասան։

Թէ ինչ տանջանքներ կրեցին նոքա մինչև որ կարգեցին ու տարբեցին և որքան շատ մեռնողներ ունեցան, այդ կտրելի է իմանալ երկու տարուանից յետոյ (1829—1831 թ.) կատարած վիճակագրից։ Տէրութեան կատարած այս մարդահամարը ցոյց տուեց, որ կարճ միջոցում 8,249 տնից մնացել էր 6,946 տուն և պակասել էր 1,303 ծերդատուն։ 45 հազար հոգուց մնացել էր 35 հազար հոգի և պակասել մօտ 10 հազարը։ Ուսս տաճկանատար Ջուբարէվը, որ պաշտօնով ուղարկուած էր Ղարաբաղ, 1830 թուի ապրիլի 20-ին, գրում է Պասկևիչին՝ Անցեալ պարսկական պատերազմի ամենամեծ քաջագործութեանց կարգում մնչուշա շատ նշանաւոր տեղ է բռնում հայոց Պարսկաստանից մեր երկիր գաղթելը։ Հայերը մի ժողովուրդ են, որ այս երկրում ամենից շատ են հատատարիմ մեր տէրութեանը և, կարելի է ասել, նոքա ամենապնդին են գոնէ հատարակ ժողովուրդի մէջ։ Պարսկաստանից գաղթած հայք նշանաւոր են օրինակելի աշխատասիրութեամբ. նոցա մեծ մասը արհեստաւոր են, շատ օգտաւէտ և շատ հազուագիւտ կովկասում։ Դժբաղդաբար այս օգտաւէտ ժողովուրդը չափից դուրս ճնշւում է Ղարաբաղում։ Մի կողմ թողնելով բնիկ հայերին, որոնք կեղեքւում են թուրք բէկերից, կը յիշեմ միայն գաղթականների մասին։ Ղարաբաղի տեղական (ռուս) իշխանութիւնը հայոց դէմ մի ինչ որ նախապաշարմունք ունենալով, անընդհատ կերպիւ նեղացնում է նոցա և մինչև հիմա նոքա չունին հաստատ բնակութիւն։ Նոցա տուել են շատ անգերդի

հողեր, իսկ Մեղրի Գեւունէյի մահալում ուած հողերն էլ շատ քիչ են"։

„Առհասարակ գաղթական հայը այստեղ վերին աստիճանի նեղուում են թէ իւրեանց թիւրք նայիբներից և թէ տեղական իշխանութիւնից։ Եւ եթէ մէկը այս խշտառներից դաւիս էր Շուշի խնդրամատոյց լինելու, նրան պատասխանում էին չարաչար գանակոծութեամբ"... Սորանից աւելի վատթար դէպքերով էին նկարագրում ռուս պաշտօնեայը Երևանի և Նախիջևանի կողմը բնակուած գաղթականութիւնների դրութիւնը։ Տեղական իշխանութիւնը ոչ միջոց ունէր նոցա օգնելու, ոչ բնդունակ պաշտօնեայք։ Լիազօր դեսպանի պաշտօնով Թեհրան գնացող նշանաւոր Գրիբօեդովը, 1828 թւի աեպտեմբերին այս երկիրներով անցնելիս, իր աչքով տեսաւ գաղթականաց թշուառութիւնը և պաշտօնեաների գեղծումները և անբնդունակութիւնը։ Գրելով այդ բոլորը պատկեփչին, Գրիբօեդովը խնդրում է նրանից, որ քանի մի պաշտօնեաներ ուղարկէ՝ „գնէ, ասում է Թիֆլիսի Հայոց (Ներսիսեան) ուսումնարանի աշակերտներից" *)։

---

*) Նոյն թշուառութիւնները կրեցին և թիւրքահայ գաղթականները 1828-ի ռուս-տաճկական պատերազմից յետոյ

Այնտեղ, Թիւրքահայաստանի հողի վրայ ևս—Էրզրումի, Բայազէդ—հայ ժողովուրդը ջերմագին խանդավառութեամբ դիմաւորել էր ռուսներին, և իր ազատութիւնը մօտ ղգալով՝ ապստամբել էր թիւրքերի դէմ ու մի սակաւի ջարդ տալ։ Միմիայն Բայազէդում 2000 հայ մնաննակցել էին ռուս-տաճկական պատերազմին։ Ապա... երբ Ռուսաստանը վերադարձրեց Ղարսը, Էրզրումն ու Բայազէդը թիւրքերին—հայ տարրը այդ վայրերում ևս ստիպուած եղաւ թողնել ամեն ամեն ինչ և դիմել արհաւրալի գաղթի...

Ինչքան սարսափելի էր գաղթականների վիճակը, որ այն ժամանակւայ կացութեան ուսումնասիրողներից մինը, անգլիայի Վ ի լ բ ր ա հ ա մ, մեզամաղձօրէն գրում էր.

„կասկածելի է, թէ արդեօք հայերը բաւելաւեցին իրենց պայմանները՝ աէրերի այդ փոփոխութեամբ" (*Whether the Armenians bettered their condition by this change of masters, may be doubted*). — *Travels in the Trans-Caucasian Provinces of Russia, by Cap. Richard Wilbraham, London 1839. էջ 315։*

Այդպես վարեց ռուս կառավարութիւնը այն ժողովրդի հետ, որ իր անհաշիւ զոհաբերութիւններից յետոյ պիտի գար թափելու առատօրէն իր աշխատանքի արդիւնքները արքունի գանձարանի մէջ, ծաղկեցնելու առևտուրն ու արհեստները, զարկ տալու քամքակի մշակութեան, Կողբայ ազի առևտրին և հարիւրաւոր այլ օգտակար ձեռնարկների։

Այդ խորթ վերաբերումի հետ զուգընթացաբար նկատուեց շուտով կառավարական շրջանների մէջ ձգտումն՝ նպաստաւորելու մահմեդական տարրը ի վնաս հայի։ Երբ, պատերազմը դեռ նոր վերջացած, ձեռնարկեցին „Հայկական Աշխարհի“ վարչական կազմակերպութեան և երբ Պետերբուրգ սկսեցին թափել այդ առիթով զեկուցումներ, այլ և այլ կարծիքներով,— գեներալ Վելիամինով հետևեալն էր տեղեկագրում բարձր կառավարութեան, իբրև իսկական չինովնիկ.

Առաջուց կարելի է դուշակել, որ հայը սրպէս մի խրամատ, սղուէսորթոյ և ննդաւորտզգ, դրգռած իրենց բնածին առելութեամբը դէպի մահմեդականները, ոչ միայն կը հրաժարուին կալուածատրոջը հարկ տալուց, այլ բոլորովին չեն ուզիլ ճանաչել նորան։ Այդ բոլորը պիտի վիրաւորէ խաներին, բէկերին և միւս մահմեդական կալուածատէրերին, որոնք պիտի կարծեն, թէ տէրութիւնը դիտումնաւոր բնարել է այդ միջոցը նոցա վնասելու։ Մահմեդականները, շարունակում է Վելիամինովը, կովկասում շատ ուժեղ տարր են և բնակչաց երեք քառորդ մասն են կազմում, վասն որոյ չպէտք է նոցա վշտացնել հայոց պատճառաւ, մանաւանդ որ դորանից օգուտ կը քաղեն օսմանեան և պարսից տէրութիւնները։ Այս հիմանց վրայ գեներալը օգտաւէտ է համարում, որ մահմեդականաց հայաբնակ կալուածներում նայիբները կամ վերակացուք լինին մահմեդականք։

Արդէն իսկ, ինչպէս տեսանք, Ղարաբաղի մահմեդական նայիբները ընդարձակօրէն գործադրում էին հայ գիւղացիութեան վրայ իրենց աւատական „խնամակալութիւնը“...

Վերջապէս, ահա և կասկածների ու „դօնոսների“ սկզբնաւորումը հայ ականաւոր գործիչների դէմ: Ինքը կովկասեան կառավարչապետը անձամբ, եռանդով „խօզ“ է տալիս այդ զազրելի շահատակութիւններին և կարճ միջոցում Էջմիածնի ու հայ լօյալ, ծայրայեղօրէն „հաւատարիմ“ ու „բարեմիտ“ հոգևորականութեան շուրջը ստեղծւում է դօնոսի, մատնութեան ճարակող մթնոլորտը, որ այնուհետև շարունակւեց անընդհատ մինչև Գօլիցինեան և Դուշկովեան օրերը: Մի ճշմարիտ հակահայկական արշաւանք էր, որ նիւթեց կառավարչապետ Պասկեվիչ, պատերազմը վերջանալուց յետոյ: Եւ նրա առաջին հարուածները ուղղեցին Էջմիածնի դէմ: Նրա առաջին գործն եղաւ՝ տապալել ժամանակի ամենահեղինակաւոր և լուսամիտ հային, որ այնքան վեհ, գաղափարական հայրենասիրութեամբ նիւթւել էր իր բազմատանջ ժողովրդի դատին: Ալևոր Հովսէփեանը—որին խոր ցաւ էր պատճառել պատերազմի բացատական հետևանքը իր փայփայած յոյսերի տեսակէտից, կառավարութեան խստատրամադրուած ընթացքը, հայկական ինքնավարութեան պատրանքների խորտակումը — ալևոր Հովսէփեանը նեղո՞ւմ էր արդեօք կառավարչապետին իր յամառ յիշեցումներով ու պահանջներով... Ա՞յդ է արդեօք վկայում Կովկասի մէջ մինչև օրս էլ պտտող զրոյցը այն խորհրդաւոր թղթի մասին, որ ներսէս մի շատ խնամքով պա-

հելիս է եղել իր ձախ ծոցի գրպանում, որից նա չէր բաժանւել գիշեր ու ցերեկ և որի զօրութեամբ իրը թէ „կաշկանդւած“ է եղել Պասկեվիչը... Ապագայ հայ պատմագրին կը հնայ լուսաւորել մեր նորագոյն պատմութեան այդ մթին ու առեղծւածային խորշը...

Այսպէս, թէ այնպէս, գաւերն սկսւեցին։ Պասկեվիչ գրեց շուտով Պետերբուրգ իր „կարծիքները“ ներսէս արքեպիսկոպոսի մասին։ Դա մի անխիղճ մեղադրական էր, հիւսւած հրէշաւոր զրպարտութիւններից։ Այդ ազգադաւ սադրանքների մէջ եռանդով աջակցեցին ներսէսի բոլոր անձնական թշնամիները, հայ տիրապաշտ և խաւարապաշտ վեղարաւորներ ու իշխաններ, Ներսէսներ, Կարբեցիներ ու Բէհբուտեաններ, որոնց դէմ անհաշտ կռիւ էր յայտարարել ռամկավարական հովերով տարւած ներսէսը։ Բոլոր զազիր հայերը, որ անձնական այս կամ այն հաշիւն ունէին հեղինակաւոր առաջնորդի հետ, համախմբւեցին կառավարչապետի շուրջը, որը արդէն սկսել էր ժեներւրեք, հայկական շրջաններում *sélection*-ի քստմնելի աշխատանքը, „ընտրում էր“ և ժռռեցնում բոլոր նրանց, որոնք առանձնապէս փայլում էին իրենց հաւատարմութեամբ, աւելի ճիշտ՝ սարկաւութեամբ, բոլոր նրանց, որ ոխերիմ հակառակորդ էին հայ ազգի ճշմարիտ առաջադիմութեան ու վերածնութեան։ Կառավարչապետը որսում էր եռանդով „իր մարդկանց“ և նրանց հետ նիւթում այն հսկայական դաւադրութիւնը, որից մենք ժառանգեցինք տխրահռչակ „պոլօժենիէ“ն և սահմանափակումների ու կաշկանդումների մի ամբողջ շարք... ընդդէմ մի փոքրիկ,

եապէս խաղաղ, գերազանցապէս հաւատարիմ հայ-ժայնքի, նրա հինաւուրց եկեղեցու, նրա հինաւուրց լեզւի և ինքնատիպ կուլտուրայի... Հաստատեց էջմիածնում իր չինօվնիկ-պրօկուրօրին, առանց որի հաւանութեան կաթողիկոս և սինօդ չեն կարող մի քայլ անել. նշանակեց հըսկողութիւն հայոց հոգևորականութեան վրայ, էջմիածինն ու ազգային-հասարակական հիմնարկութիւնները պաշարեց իր լրտեսներով ու „դօնօսչիկ"-ներով, պատակաուում ցանեց Մայր Աթոռի մէջ, լարեց սինօդականներին իրարու դէմ և հասաւ այնտեղ, որ քմահաճօրէն, գրեթէ *manu militari* հաստատեց իր ուզած կաթողիկոսին, ընտրել տւեց Ներսէսից յետոյ կարգեցի անունով մի ոչնչութիւն, իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս...


Ռուսական միջամտութիւնները այնքան յաճախ, սիստեմատիկ, մշտնջենաւոր բնոյթ առան, որ նոյն անգլիացի ճանապարհորդ Վիլբրահամ անցեալ դարու երեսնական թւերին էջմիածինն այցելելուց յետոյ, կարող էր գրել, թէ ա մ ե ն ա յ ն հ ա յ ո ց եկեղեցու պետը իրօք այլ և ս կաթողիկոսը չէ, այլ ցարը *) (*the Emperor is virtually the head of the Armenian church throughout the world*):

Բայց կառավարչապետական ժանիքները ամենից աւելի կատաղութեամբ կրճատում էին Ներսէսի դէմ. Ներսէսը անձնաւորումն էր հայոց ուրոյն տենչանքների. Ներսէսը—հարազատ ծնունդ ցեղի տանջած և որոնող հանճարի. Ներսէսը, վերջապէս, „գաղտնի, խորհրդաւոր

*) *Richard Wilbraham, Travels in the Transcaucasian Provinces*, էջ 98։

դիտաւորութիւններ ունէր հայկական նորանուաճ նահանգների վերաբերմամբ"... պէ՞ք էր նրան տապալել...

Մութ երեսներ շատ ունի ռուսական բռնակալութեան պատմութիւնը—այս մէկը ամենամութ, ամենաախուր երեսներից է։



Ներսէս Աշտարակեցի

Դաւը հասաւ իր նպատակին։ Կառավարչապետը, հակառերսիսեան բանակը իր եռանդուն գործակալներն ունէր Պետերբուրգում, մինիստրները, ինքը ցարը „այո՛" ասացին Պասկեվիչի բոլոր յուշագրութիւններին։ Միայն կը լինէր վերագրել Ներսէսի տապալումը

պասկեվիչի և նրա անձնական թշնամութեան պատճառները աւելի խոր էին — զուտ ռուսական „սիստեմի“ մէջ։

Հարուածն իջաւ 1828-ի օգոստոսին, երբ դեռ այնքան թարմ էին յուշերը Ներսէսի հերոսական և անձնւէր թռիչքներից, եւ ահա մեր վեղարաւոր Գարիբալդին — աքսորի մէջ... Ռուսաստանի պաշտօնի սին պատրուակով խուլ ու օտար Բեսսարաբիայի մի անկիւնում — Կիշինև... Բոլոր սև ուժերը միացան այդ մեծ հայի, մեծ մարդու գէմ, եւ նա մենակ, գրեթէ մենակ, հայ ժողովրդի զսպւած բարկութեան և թշնամիների ցնծութեան ոռնոցների մէջ գնաց ամբողջ 15 տարի թաղւելու այդ օտար, անհիւրընկալ անապատում։ Պուշկէ նոյն լեգենդական „սև կատքն“ էր տանում նրան, որ պիտի տաներ Աբովեանին դէպի խորհրդաւոր անյայտութիւն և Միքայէլ Նալբանդեանին՝ դէպի դաժան պետրօպավլօվսկ, իսկ այնտեղից դէպի գերեզման...

Գնաց Ներսէսը։ Ռռնակալութիւնը աքսորի մէջ ևս լրտեսներով շրջապատեց նրան, մշտնջենաւոր հսկողութիւն նշանակեց նրա վրայ, գրած ու ստացած նամակների, նրա բոլոր յարաբերութիւնների վրայ։ Պետական ծանր յանցաւոր էր նա հրատարակւած, „գաւառաճան“ ընդդէմ պետութեան։ Մի քանի անգամ ուժով բողոքեց, կամեցաւ տեսնել պասկեվիչին, մինիստրին, թագաւորին՝ բացատրելու, արդարանալու նպատակով։ Բոլո՛րը ապարդիւն եւ հպարտ հոգին համակերպեց ճակատագրին, լռութեան մէջ որոճալով իր մի տխուր ու շեշտակի

փրապը, որ գրել էր աքսորի ճանապարհից ժի թիֆլիսեան քաբեկամի.

„... Քանզի որչափ և ժամածեմ, համարիմ առուգիս գինուորութիւն առանց յայի իձեռն իւրոյ որբանեկաց յարուցեալ ընդդէմ մերում հոգևորական կառավարութեանց, քան որոյ հարկաւորի զգուշանալ, մինչև ցայն պատահարն չարին խորտակեսցէ ինքն ՏԷր՝...

Ողբաց հեռուից իր „որբացեալ հօտը“, ժերթ ընդ ժերթ համարձակ շանթեր նետեց ամենակարող Պատկեվիչին, ժերթ ընդ ժերթ լուդքներ գրեց Պետերբուրգ՝ ընդդէմ այն անարգ ոտնձգութիւնների, որ կատարում էր քրիստոնեայ պետութիւնը հայ եկեղեցու և կուլտուրայի ինքնօրինութեան դէմ. Ո՛չ մի արձագանք...

Tempora non mutantur!... Հայի տխուր իրականութեան մէջ պատմութիւնը յաճախ է կրկնւում, ժամանակները չեն փոփոխւում դիւրութեամբ. 75 տարի յետոյ՝ պատկերը տարբեր չէր հայ սգաւոր հովւապետի շուրջը. 75 տարի յետոյ՝ մենք տեսնում ենք մեզ ըմբոստ ու հոյակապ վեղարաւորին, „Վատպուրականի Արծուին“ նոյն դառն մորմոքի և անողորմ հիասթափութեան մէջ, երբ նա տարածւած էջմիածնի բակում, սրտի անհուն կսկիծով տեսնում էր, թէ ինչպէս ցարի ոստիկանները իրենց կոպիտ սանդալներով խուժում էին հինաւուրց սրբավայրը և խորտակում բիրտ ձեռքերով էջմիածնի դրամարկղը...

Ա՛հ, երբ մի քանի ինտելիգենտ հայ մորդիկ գիտակցաբար, աւելի ճիշտ, մանկական անգիտակցութեամբ փառաբանում են կնուտի և ռուսացման ռէժիմը

կովկասեան Հայաստանում, երբ նրանք մուրացկանի սա-
կաւագոյն հոգեբանութեամբ ճառում են իշխող տարրի
„լաւնարձակ ու վեհանձն սրտի“ մասին (ասես, յիրաւի,
մի հսկայական ողորմութիւն է արել ցարիզմը
աշխատաւոր ու բազմերախտ հայութեանը), երբ նրանք
յանգուցալոր թեթևամտութեամբ վերագրում են այդ
ռէժիմի հայատեաց բռնկումները հայ յեղափոխական
կուսակցութիւնների գոյութեան ու գործունէութեան,
երբ ուրիշ ասպետներ, միանգամայն զրկուած մարդ-
կային կերպարանքից և չափազանց քաջալերուած տիրող
ռէակցիայից, իրենց հլու երկրպագութեան մէջ հաս-
նում են այնտեղ՝ որ հրապարակով ներբողում են
Պարսկաստանում հայ լմբոստ երիտասարդների դէմ
տնկուած ցարական կախաղանները, — այդ աքան-
չելի պարոնները „մոռանում են“ և կուզէին ուրիշ-
ներին էլ մոռցնել տալ արիւնոտ իրողութիւնների
այն անվերջ շարանը, որ ամփոփուած է հայ ժողովրդի
հարուստ դատապրակում, նրանք կուզէին իրենց գեա-
նաքարշ ստրկամտութիւնը հաղորդել և հայ նորածիլ
սերունդներին, վարագուրելով դարաւոր ազազակող
ոճիրները, մեղմացուցիչ պարագաներ գտնելով նրանց
համար, երախտագիտութեան անտեղի զոյներ տա-
լով. նրանք գիտութեամբ մոռանում են և կուզէին
մոռցնել տալ, որ հայ յեղափոխականի, սերբօրիատի
սուերն անգամ դեռ չկար 1830-ին, երբ նիւթ-
ւում էր դաւադրութիւնը հայ եկեղեցու հնաւանդ
կարգերի դէմ, կամ թէ երբ, 1884-ին, փակւում էին
դպրոցները և վարագօրէն փողոց նետւում հազարաւոր

ժանուկները, կամ թէ երբ 1903-ին, սւրինաւոր լէգէօն-
ներով թալանում էին հայ ազգային-եկեղեցական գոյ-
քերը, ժառանելով հայ ժողովրդին և նրա զառամեալ
հայրապետին հոգեկան ամենածանր տագնապների.
նրանք կուզէին ժոռցնել ու մարսել տալ հայ ժողովրդին
և ամբողջ գիտակից հայութեանը Օքսանօվեան Ռու-
սաստանի աղէտաւոր դերը թիւրքահայոց ջարդերի
մէջ—հայոց հարցի լուծման յաւիտենական ձգձգում-
ների և վախճանական վիժուժի մէջ, — մի դեր, որի
հեղինակները նշաւակւած են, անարգ սիւնին բևեռւած
քաղաքակիրթ աշխարհի ձեռքով. նրանք, վերջապէս,
ժռռանում են և կուզէին ժռռցնել տալ, որ ապահովու-
թեան ու բարեկեցութեան այն խղճուկ փշրանքները
կովկասահայը վայելում է ոչ իբրև ողորմութիւն, ոչ իբրև
ռուսական վեհանձնութեան և գթութեան արգասիք,
այլ իբրև մի վիրաւոր ու հաշմանդամ իրաւունք, վաս-
տակւած հայ արեան հեղեղների և դարաւոր զոհողու-
թիւնների ու զրկանքների գնով...

VII

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

III.

ԱՄԻՐԱՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ռուսահայ եւ թիւրմահայ. — Ազգային գիտակցութիւնը այստեղ եւ այնտեղ.—Զգտումն դէպի միութիւն. — Եւրոպան եւ հայութիւնը. — Պօլիսը եւ Հայաստանը. — Թռռակարգեր. — Հայ ամիրայութեան օգիալական պատկերը. — Տնտեսական անհրաժեշտութիւն եւ հայրենասիրական բնազդ —Ազգային հպարտութիւնը կովկասահայ եւ թիւրմահայ աղայութեան մէջ. — Ամիրայութիւնը՝ Թիւրիոյ տարրալուծման պրօցէսի հանդէպ.—Հայ կղերը. — Լուսաւորչականներ. — Մօրից Վազճէրի վկայութիւնը. — Մխիթարեան միաբանութեան էութիւնը եւ դերը. — Թանգիմար.—Նրա անդրագարձումները հայկական պրօգրէսի վրայ. — Դասակարգային կռիւը Կ. Պօլսոյ հայութեան մէջ, 10-ական թուականներում. — Ամիրայութիւն, կղեր եւ ժողովուրդ. — Գում Քափուի ևկեղեցու անդրանիկ ցոյցը. — Ժողովուրդը յաղթող. — «Սահմանադրութեան» մարտակոչը. —

Անցնենք արեւմտեան Հայութեան

Ծարբեր է ընդհանուր պատկերը ցեղի երկու հատուածների մէջ. Մինչդեռ կովկասեան Հայաստանը, Դարի բեկի օրերից սկսած մինչև ներեաս Աշտարակեցի, պարբերաբար ալէկոծւում էր ռազմի որոտումներով ու Հայ

տարբի լմբռստացումով, — օսմանեան Հայաստանի մէջ յարատեւում էր ստրկութեան միապաղաղ գիշերը, տիրում էր խոր, գերեզմանային լռութիւն։

Սակայն, երեսնական թուականներից ի վեր, այնտեղ ևս խզւում է այդ մոհաբեր լռութիւնը, թոյլ, վհհերոտ բախումներով սկսում է գործել հայոց կեանքի զարկերակը,—և այնուհետև ազգային ինքնաճանաչութեան ու վ՛րացնութեան հոսանքը ընթանում է թիւրքիոյ մէջ աւելի արագ տեմպով, քան կովկասեան հայութեան մէջ։

Իրրև աւելի նպաստաւորուած աշխարհագրական ու պատմական պայմաններից՝ ռուսահայերը, ճիշտ է, համեմատաբար աւելի ուժեղ էին իրենց ազգային կորովով և լմբռստութեան թռիչքներով ընդդէմ իսլամ տիրապետութեան, բայց և միւս կողմից՝ նրանց մէջ անհամեմատ աւելի թոյլ էր ազգային իմացական կուլտուրան, լեզւի, պատմութեան, գրականութեան ժչկութիւնը, անհամեմատ աւելի թոյլ ու ծանծաղ էր ազգային ինքնագիտակցութեան ոգին, վերջինը, ընդհակառակը, շատ աւելի շեշտուած էր արեւմտեան հայերի մէջ, շնորհիւ այն հանգամանքի, որ նրանք էլ օգտւելով հաղորդակցութեան դիւրութիւններից, մտան վաղաժամ շփման մէջ եւրոպական լուսաւորութեան մի քանի մեծ օճախների հետ, կենտրօնացրին վաղաժամ իրենց ձիգը մտաւոր վերածնութեան աշխատանքի վրայ, արծարծեցին մայրենի ու գրական լեզւի սէրը, արծարծեցին հայրենիքի գաղափարը, մշակեցին, մի խօսքով, ազգայնութեան անհրաժեշտագոյն գործօնները... Մենք

քաշում ենք զուգահեռակը մինչև 60-ական թվերը, մինչև այն խոշոր. նշանակալի շրջանը, որ, կարելի է ասել, նոր դարագլուխ կազմեց երկու ազգային հատուածների քաղաքակրթական գոյութեան մէջ։ Մինչդեռ արևմտեան հայութիւնը անցեալ դարու 50-ական թվականների վերջերում ունէր արդէն բաւական ճոխ գրականութիւն ու մամուլ, որ լինելով հանդերձ ծանծաղամիտ, մակերեսային, կրճատում էր սերունդները ազգայնութեան նշանակի տակ, դաստիարակում էր սերունդները իրենց մայրենի բառապաշարով — այդ միևնոյն ժամանակաշրջանում ռուսահայոց մամուլն ու գրականութիւնը նոր էր միայն սաղմնաւորում, նոր, կենդանի, աշխարհաբար լեզուի հետ։

Երկու հատուածների պատմական էւոլիւսիոնի օրէնքը այսօր ևս նոյնն է մնում։ Մեր օրերի թիւրքահայը (թիւրքահայը առհասարակ, մի քին թիւրքահայը) անհամեմատ աւելի ուժեղ է իր հայրենական մշակոյթով, հայ լեզուի, պատմութեան, գրականութեան ծանօթութեամբ, աւելի ուժեղ է ազգային կուլտուրայի նախանձախնդրութեամբ, քան թէ միջին ռուսահայը։ Սակայն երբ վրայ է հասնում տագնապը, երբ օտար բռնաւորի դիշատիչ հարուածների տակ վտանգում է այդ ազգային հաւաքական տաճարը, — ռուսահայը աւելի ուժով ու վճռականութեամբ է ըմբոստանում ազգայնաջինջ հարուածների դէմ, ունենալով իր դիմաց աւելի ահեղ բռնապետութիւն...

Անտագոնիստներ, հակառակներ չեն, սակայն, երկու արիւնակից հատուածները։ Ընթանալով իւրաքանչիւրը իր

յատուկ աւազանով, նրանք երկար ժամանակից ի վեր աստիճանաբար ու փոխադարձաբար լրացրել են, իւրաքանչիւրը ձգտելով փոխ առնել միւսից այն՝ ինչ որ իրեն պակասում է, ինչ որ միւսի սեփականութիւնն է։ Իւրաքանչիւրը կամաց-կամաց մարզեց քաղաքական պայքարի մէջ, ուղիղական դպրոցում, ուսուցիչը կամաց-կամաց մարզեց հայրենագիտութեան, մայրենի լեզուի և այլ ազգային առաքինութիւնների մէջ,—և այդպիսով հայութեան կեանքի անիւը աստիճանաբար հարթաչափելով (*niveler*) տարբերութիւնները, առաջնորդում է ճակատագրօրէն դէպի լաւագոյն մի ապագայ, ուր երկու մեծ հայկական հատուածները, արևելեանն ու արևմտեանը, դարերով զատուած ու խորթացած, պիտի միանան ի վերջոյ մէկ ընդհանուր աւազանի և մէկ ընդհանուր ազգայնաշէն հոսանքի մէջ...

***

XIX-րդ դարու սկզբում, չնայած Ախլաթուրեանների երկարատև ու վաստակաւոր գործունէութեան, չնայած և Տուրնըֆորների ու Ժօբերների մեծահատոր գրուածքներին ու ներքողալի վկայութիւններին հայ ցեղի վերաբերմամբ, — հայութիւնը իբրև ազգ տակաւին անծանօթ էր Եւրոպային։

Եւրոպան ճանաչում էր հայերին ո. Պօլսից, ճանաչում էր, իբրև ցիր-ցան վաճառականների մի հրէատիպ համայնք,—վաճառականների՝ որոնց համար ուրիշ ոչինչ գոյութիւն չունէր, բացի իրենց նեղ-եսական շահերից,

Հրէաների պէս հայրենազուրկ, ազգայնազերծ — և նրանց պէս՝ տարագիր, թափառական...

„*Gli Armeni, nazione proscritta e ragabonda, senza patria e senza asilo*“ *)...

„Հայերը — մի վտարանդի և թափառիկ ազգ, անհայրենիք և անապաստան“:

Իտալացի պատեր Դամասի այս յոռետես յայտարարութիւնը գուցէ ճշմարիտն թարգմանում է այն ժամանակներում տիրող կարծիքը հայ ազգի մասին... Այդ խօսքերը արտասանւում էին դեռ 1861-ին, երբ հայ տարրը պատկառելի առաջադիմութիւն էր արել Թիւրքիոյ ու Լովկասի մէջ։

Հայ ժողովուրդը գոյութիւն չունէր եւրոպական աշխարհի աչքում, Հայաստանը Ս. Պօլսում էր, Զմիւռնիայում, վաճառաշահ քաղաքներում։

Պօլիսը թիւրքահայ ժողովրդի կենտրօն-„ուզեղն“ էր, ինչպէս և շարունակում է համարւել տակաւին այսօր։

Գաւառը — լուռ, խաւար, անկենդան. Պօլիսը — եռուն, աշխոյժ, կենսալի։ Այնտեղ ուժգին բախում էր առևտրական կեանքի զարկերակը և հայ տարրը յոյնի հետ գործօն ջիղն էր այդ առևտրի։ Այնտեղ ամուր հաստատուած էր իր շքեղ ապարանքներում „ազգի ազը“, էֆէնտիական դասակարգը — ամիրայութիւնը։ Հայ հինաւուրց ազնւականութեան անփառունակ մի բեկորն էր դա։ Իչխան Տատեան այս-

*) *P. Damas, Relazione intorno allo stato religioso degli Armeni, Milano 1861.* (Հակուցագիր հայոց կրօնական վիճակի շուրջը)։

պէս է նկարագրում նրա ծագումն ու էութիւնը 60-ական թուականների „*Revue des Deux Mondes*“-ի մի ուշագրաւ յօդուածի մէջ, „ժամանակակից Հայ հասարակութիւնը“ խորագրով.

„Հայկական այդ արիստոկրատիայի անդամները գրեթէ բոլորն էլ պատկանում են ազնուական ներդաստանների, որոնք Բագրատունեաց արքայատոհմի անկումից և մայրաքաղաք Անիի գրաւումից յետոյ (1169 թ.), իրենց 70,000 ազգակիցների գլուխ անցած, եկել են ապաստանել Կ. Պոլսում։ Այդ ընտանիքների մեծ մասը կամաց-կամաց մարեց յին, բայց նրանց կողքին բարձրացան ուրիշները, որոնք նման վէնետիկեան պատրիկներին, վաստակել էին իրենց հարստութիւնը առևտրի և բանկի մէջ...

„Այդ դաստակարգը կազմեց իր միջից մի տեսակ գերագոյն Ազգային Խորհուրդ... Պատրիարքը ազգի օրինական պետն էր ամանեան նահանգից ի վեր. սակայն ազգային ժողովը կամայականօրէն, բռնի կերպով իր ձեռքն էր առնում պատրիարքի իշխանութիւնը և հետզհետէ նուազեցնում ու նսեմացնում նրա արժանապատուութիւնն ու հմայքը... Դա մի քմահաճ օլիգարխի էր... Եւ Ազգային Խորհուրդը մշտնջենական օճախ էր երկպառակութիւնների ու դաւերի“ *)...

Այդպէս էին Հայ ամիրաները: Իբրև հմուտ սեզոնաւորներ և մանաւանդ սարդոփներ, փաշաների ու այլ մեծերի ամենախոնարհ յանձնակատարներ՝ նրանք կարողացել էին ձեռք բերել ահագին հարստութիւն և դրա շնորհիւ՝ դիրք ու ազդեցութիւն, անգամ պալատում թիւրք մեծերի մօտ՝ խոնարհ սպասաւոր, իրենց հարազատ միջավայրում — գոռոզ ու հրամայող... Հայոց պատրիարքները խաղալիք էին նրանց ձեռքում: Նրանք

*) *La Revue des Deux Mondes, 15 Juin 1867. La Société Arménienne Contemporaine. Par le Prince Mek. Dadian.*

կարող էին քաղաքին ընտրել և հրաժարեցնել պատրիարքին։ Ոչ մի յարգանք դէպի ժողովրդի, մեր դասերի իրաւունքները. ժողովուրդը առհասարակ հաշիւ չէր այդ դաժան ժամանակներում...

Եւ, սակայն, հայ ամիրայութեան սոցիալական պատկերը չի ներկայանում մեզ իբրև միանգամայն սեւ, յոռի, բացասական։ Իր լուսաւոր և արատաւոր յատկութիւնների հետ՝ նա ունեցել է և մի քանի դրական գծեր, կատարել է յայտնի չափով կուլտուրական, ազգօգուտ դեր։ Եղել են լաւ ամիրաներ, որ աչքի են ընկել իրենց շինարար գործունէութեամբ, խրախուսել են գրագիտութիւնն ու ազգային կրթութիւնը հայերի մէջ, գոնե ծագրել են այդ նպատակով իրենց կարող ազդեցութիւնը կառավարութեան մօտ։

Դպրոցներն ու գրագիտութիւնը արդէն իսկ մի տեսակ տնտեսական անհրաժեշտութիւն էին եւրոպական նորածիլ մեծ քաղաքային արդիւնագործութիւնը ուժգին զարկ էր հաղորդել մերձաւոր արևելքի առևտրին ու փոխանակութեան և հայը, ինչպես ասացինք, ամենամեծ դերակատարներից մէկն էր ապրանքային այդ ընդարձակ փոխանակութեան մէջ։ Հարկ էր տաճկերէնի ու եւրոպական լեզուների հետ տարածել և հայերէնի ուսուցումը։

Եւ հիմնւում են կամաց-կամաց հայ դպրոցներ, մէկը նոյնիսկ ճեմարանական ծրագրով, Ակիւտարում (1838 թ.), ամիրայական հովանիի տակ։ Հաստատւում են տպարաններ ու գրադարաններ, հրատարակւում են գրքեր ու հանդէսներ։ Մի ժամանակ բազմաթիւ հայ երիտա-

աարդները — գլխաւորապէս մեծատան զաւակներից — զրկուում են Եւրոպայի համալսարանները՝ գործնական գիտելիքներ ձեռք բերելու և հայրենի միջավայրը ներմուծելու նպատակով։

Այդ շինարար ճիգերի մէջ, մի յայտնի գեր ունէր, անտարակոյս, և հայրենասիրական բնազդը։ Հայ ամիրան չէր կարող չզգալ, չտեսնել իշխող տարրի լեզուական ու կուլտուրական յետամնացութեան հանդէպ՝ իր սեփական լեզուի ու պատմութեան, իր ազգային դարաւոր կուլտուրայի գերազանցութիւնը *)։

*) Ուշագրաւ է այդ „ազգային նախանձախնդրութիւնը" ադրբեջանական գաւառակարգի մէջ։ Կովկասահայ աղայութիւնը գրեթէ բոլորովին զուրկ մնաց այդ առաքինութիւնից, որը թիւրքահայ իրականութեան մէջ չի կարող վերածուել ամբողջապէս ամիրայութեան „գաւառակարգային մտահոգութիւններին"։ Կովկասահայ ազայութիւնը գրեթէ en bloc, հազուագիւտ բացառութեամբ, մնաց միշտ օտարացած և օտարասիրտ մի տարր, անտարբեր գէպի ազգ, լեզու, պատմութիւն ու գրականութիւն։ Այդպէս էր նոյն Կովկասում և հայ փոդատէր դասակարգը, բուրժուազիան, իր տհպին մեծամասնութեամբ։ Այդ դասակարգը, սակայն, ժամանակի ընթացքում ենթարկուեց մի յայտնի էւոլիւցիայի։ Վաննաւորապէս վերջին ժամանակներում, ռէժիմի սիստեմատիկ ոտնձգութիւնների և մանաւանդ թաթար ու վրացական պրովոկատօրների ու յարձակումների շնորհիւ, մեր փոդային արիստոկրատիայի մէջ շեշտուում է—երբեմն ուժով—այդ ազգային նախանձախնդրութիւնը։ Նախանձախնդրութիւնը, որի մասին դեռ կը խօսուի ստորև, անգամ այնպիսի անհատների մէջ, որոնց միանգամայն օտար է հայ լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը։ Կովկասահայ բուրժուազիան՝ թէ անտեսական մրցման կրկէսում, նաեւ թաթարին մայրաքաղաքի մէջ (նաև ուրիշ

Բացի այդ, կար մի ուրիշ հանգամանք, մի այլ գործօն, որ խթանում էր հայ ամիրայութեան, „ազգային նախանձախնդրութիւնը“։ Դա թիւրքիոյ քաղաքական վիճակն էր, նրա մէջ ծայր առող ճակատագրական տարբա-

լուծմանն պրօցէսը... Համեմատաբար կրթուած և աչքաբաց հայ դասակարգը չէր կարող չխորհիլ իր ազգի ապագայ վերելքի մասին մի այնպիսի ատգնապալի ժամանակաշրջանում, երբ իսլամական աիրապետութեան

կենտրօններում) և թէ քաղաքային Դումաների, Ուպրավաների մէջ, այսօր աւելի քան երբ և իցէ հպարտ գիտակցութեամբ շեշտում է իր ազգութիւնն ու ազգային իրաւունքները միւս ցեղերի հակամարտ տարրերի հանդէպ... Եւ այդ խրախուսող գիտակցութիւնը—ո՛վ բախտի հեգնանք—նա պարտ է երէկուայ յաղթական կուսակցութիւններին վայրենաբարոյ հօրդաների դէմ, պարտ է այն յեղափոխական կազմակերպութեան, որին նոյն այդ բուրժուազիայի անուղեղ իդէօլօգները շարունակում են հալածել իրենց ապերախտ ու փսքրոտի չարութեամբ...

Արևմտեան հայութեան մէջ այդ ազգային նախանձախնդրութիւնը գրեթէ ընդհանուր ու ժշանջնաւոր երևոյթ է, նրանով համակուած է թէ արհեստաւորն ու մշակը, թէ բուրժուան և ամիրան։ Եւ անգամ հեռաւոր դիւղաքօրանների, գաղութների մէջ, ազգութեան այն աննշան բեկորների մէջ, որ պատմական աւերիչ յորձանքներով դուրս են նետուել հայրենի երկրից հազարաւոր մղոններ հեռու,—անգամ այնտեղ՝ պահպանել են յայտնի չափով այդ հայրենական ու ազգայնական ոգին, այդ իրաւացի հպարտութիւնը հարազատ ցեղի բազմադարեայ կուլտուրայով, նրա հինաւուրց լեզուով ու գրականութեամբ, նրա հինաւուրց հերոսներով ու նահատակներով...

վէրքերը բացել էին լայնաբերան՝ թէ օսմանեան և թէ պարսկական աշխարհուժ, երբ կովկասեան հայութիւնը հերոսաբար կռւում էր պարսից լռնակալութեան դէմ ներսէս Աշտարակեցու առաջնորդութեամբ, երբ հիւսիսից ու արևմուտքից, հզօր, քրիստոնեայ պետութիւններից գրեթէ անընդհատ տեղում էին սպառնալիքներն ու հարուածները „Հիւանդ մարդու“ պարանոցին, երբ վերջապէս, իր աչքի առաջ, իր դարաւոր գրացին, յոյնը, մի շարք առնական ըմբոստացումներով թօթափում էր միանգամ ընդմիշտ օսմանեան լռնապետութեան լուծը...

Նոյն հայրենասէր ոգին ու շարժուժը դանդաղ և երկչոտ քայլերով ճանապարհ էր հարթում հայկական հօրիզոններում հայ կղերի թևերի վրայ։

Ւ՛ւ „հայ կղեր“ ասելով պիտի հասկանանք գլխաւորապէս Մխիթար աբբայի հոգևոր գերդաստանը։ Եւ թօպալում հաստատուելով և ճիւղեր արձակելով դէպի հայրենիքի այլ և այլ կողմեր, Մխիթարեան շարժուժը, կարելի է ասել, փոթորկեց հայ կղերի բորբոսնած ճահիճը, ազդեց, անտարակոյս, և լուսաւորչական կղերի վրայ, խթանեց նրան ևս կամաց-կամաց դէպի գործ, դէպի ազգաշէն աշխատանք։

Ովքա՞ն սև էր և արտասւելի հայ կղերական անապատը՝ Մխիթարեան այդ կենսարար օվազիսի շուրջը։ Դարեր շարունակ աղօթքի և ապաշխարհութեան դասակարգը իր ձևով և յաւասհատ մաքառել էր բռնատիրող հօրդաների դէմ, ապրել էր և ապրեցրել իր

հօտը կրաւորական դիմադրութեամբ, ձգտել էր միշտ
վառ պահել իր վանքերի լքեալները միջնադարում հայ
լեզուի ու դպրութեան կէթ ազօտ ու դողդոջուն ճրագը,
ձգտել էր այդ ճրագով գէթ մասամբ փարատել շրջա-
պատի անաւուր և սրտաճաք խաւարը, յաղթահարել սև
ուժերի համատարած ու ոճրանիւթ քաօսը և իվերջոյ...
հիւծուել էր, ուժասպառուել այդ դաժան ճիգերի տակ,
ընկել էր բարոյապէս, խորասուզուել մի անարգ ու գռեհիկ
մատերիալիզմի, մի նիւթապաշտ ու անդորրապաշտ,
էպիկուրեան ճահճի մէջ...

Ահա թէ ինչպէս է նկարագրում հայ Վրիգորեան
հոգևորականութեան վիճակը մի նշանաւոր գերմանացի
ճանապարհորդ, Մօրից Վագներ, որ անցեալ դարու
40-ական թուականներին մի քանի անգամ պտտել է
Հայաստանում (օսմանեան, ռուսական, պարսկական
Հայաստանում) և ուշի ուշով ուսումնասիրել է մեր
ժողովրդի ու հոգևորականութեան կենցաղը.

„Իշ-Քիլիսէի աբեղաները—ինչպէս որ դիտողը կը նկատէ
առաջին իսկ հայեացքից—նոյնքան փճացած ու բթացած
են բարոյապէս, որքան առհասարակ գրեթէ ամբողջ հայ
լուսաւորչական կղերը: Թանձրամած ապիրատութիւն, բթա-
մտութիւն, կասկածոտ վերաբերմունք գէպի եւրոպացին,
շահասիրութիւն ու անբարոյականութիւն—դրանք են աչքի
զարնող գծերը Գիտութեան խնամքը, երաժշտութիւնը, ար-
ուեստը, որոնք արևմտեան երկրների մէջ ուրախացնում ու
գեղեցկացնում են վանական կեանքը—այդ ոլորը անծանօթ
է նրանց: Իրենց ապրելքի ղրքերը անգիր գիտեն, բայց—
ոչ մի ուրիշ ընթերցանութիւն: Վանքի գրադարանը—100-ի
չափ ղրքեր, փոշու մէջ կորած՝ ձեռք են առանց գործա-
ծութեան: Ինքը վանահայրը հայոց գրաբարն անգամ չգիտէ:

„Գեղանաքարշ, ապուշ ու մուրացիկ՝ եւրոպացի կարևոր
ճամբորդների հանդէպ—հայ աբեղաները ամբարտաւան են,

բռնակալ, քարաւիրտ և ժլատ՝ հանդէպ իրենց հօտի, մասնաւորապէս չքաւոր հաւատակիցներուն։ Արտաքուստ՝ սիրով նրանք բնդունում են առաքինի և ժուժկալ կերպարանք, մինչ ծածուկ ոյլի, արատաւոր կեանք են վարում. այդպէս են հաւատացնում մեզ մարդիկ, որոնք երկար ապրել են հայ կղերի հետ։ «Նախանձը սիրում է վանականների աշխարհում. բարեկամութեան, քրիստոնէական սէրն եան մասին հեռաւոր գաղափար անգամ չունին» *)...

Այդպէս էր գաւառի մէջ, այդպէս էր կենտրոնում — կ. Պօլսում և Երզիճածնում։ Եւ ի՞նչ զարմանք որ այդ կղերը յետագայում, սակաւաթիւ անհատական բացառութիւններով, միանգամայն բացասական դիրք բռնեց դէպի հայոց ազատութեան կռիւը, տալով միայն առատօրէն լրտեսներ և մատնիչներ...

Տարբեր էր Մխիթարեան կղերի պատկերն ու ուղղութիւնը։ Սուերներ կան այդտեղ ևս, անտարակոյս կրօնական, գաւանական սին ու ամուլ մարզանքներով տարուեցին Մխիթարեան հայրերն ևս և շատ ուժեր վատնեցին. սքօլաստիկ չոր ու ցամաք հրատարակութիւններով հեղեղեցին հրապարակը, նիւթական պատկառելի միջոցները չգործադրեցին միշտ համաձայն իրականութեան պահանջների, խաւարի մէջ դեգերող ազգութեան ճշմարիտ կարիքների։

Բայց արդիւնքը, այնուամենայնիւ, ահագին էր։ Այդ դարաւոր գործունէութեան տենդենցը, ձգտումը համակրելի էր, նպատակայարմար և արգասաւոր։ Այդ

*) *M. Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden.* էջ 284—85։

տենդենցը նեղ իմաստով կղերական-դաւանական չէր, այլ աւելի՝ ազգային-քաղաքակրթական։ Այն մեծ աբեղան, որ 1717 թուին փոթորկալի արկածներից ճողոպրելով, գնաց անկելու իր դրօշը վենետիկեան ջրերի մէջ, նա եկել էր Եւրոպա՝ սպասաւորելու ոչ միայն Հռոմի ու կաթոլիկութեան գաղափարին, այլ և իր լքուած ու տառապող ժողովրդին։ Ս. Ղազարի դրօշը գերազանցապէս ազգային էր, հայկական։ Այդպէս եղաւ և նրա միւս ճիւղաւորութիւնը — Վիեննայինը։ Աւելի գրական՝ քան կրօնական ընկերակցութիւն։ Ազօթքի ու ժամասացութեան հետ — զուտ գիտական, ժամափոփ գործունէութիւն, հետազօտող, ուսումնասիրող աշխատանք՝ միջնադարի գերանդորր առանձնութեան մէջ։ Թէ ինքնուրոյն ու թարգմանական երկերով, թէ մանաւանդ հայկական կլասսիկների բազմաթիւ հրատարակութիւններով՝ Միաբանութիւնը արժարժում էր սերունդների մէջ հայ լեզուի սէրը, հայոց պատմութեան ու գրականութեան ճաշակը և հարթում էր ճանապարհը ազգային վերածնութեան։

Եւրոպացի նշանաւոր ճամբորդները վաղուց իվեր շեշտել են Մխիթարեան միաբանութեան այդ ազգային ու հայրենասիրական բնոյթը։ Նոյն վկայները պատկառանքով է խօսում Մխիթարեան աշխատանքի մասին՝ հայկական կուլտուրայի արժարժման տեսակէտից։ Համակրական խօսքեր ունի և „ժենուեթեան երգիչը“, լօրդ Բայրն, „ճնշուած և ազնիւ ժողովրդի այդ քահանաների“ մասին („*This men are the priesthood of an oppressed and a noble nation*“)—ժողովրդի, որ „կծորդ

է եղել հրէաների ու յոյների առաւպանաց ու հարբատահարութեանց, առանց սակայն առաջինների խըստասրտութեան և վերջիններիի սարկամութեան" *)...

***

Քաղաքական մի նշանաւոր անցք երեսնական թուականներին եկաւ ուժգին զարկ տալու հայկական առաջադիմութեան։ Դա թանզիմաթի հրատարակութիւն էր, որ ազատութիւն էր աւետում թիւրքահպատակ քրիստոնեայ հաւատներին։

Ինչ եկաւ, իրրև քաղաքական մի անխուսափելի անհրաժեշտութիւն։ Թիւրքիան կործանուում էր և փրկելու մէկ միջոց միայն կար—բարենորոգում, ուէ փօրմ։ Քրիստոնեայ ժողովուրդները պոկուում էին նրա կիսամեռ օրդանիզմից և պահելու մէկ միջոց միայն կար—հաւասարութիւն, իսլամի ու քրիստոնեայի իրաւական հաւասարութիւն։ Այդպիսով միայն՝ իշխող մահմեդականութիւնը կարող էր թերևս պատնէշ կանգնել արտաքին արշաւանքների դէմ, որ գալիս էին յարաճուն յորձանքներով խարխլելու սուլթանների դարաւոր տիրապետութիւնը։

Անհրաժեշտ էր մի պետրոս Մեծ, որ բռնութեամբ խզէր հինաւուրց ու կաշկանդող աւանդութիւնները և ուղղէր պետութիւնը դէպի արևմտեան քաղաքակրթութիւն ու վերածնութիւն։ Սուլթան Մահմուդ գուցէ

---

*) *From the Letters of Lord Byron*, (2 January 1817).

ամենից աւելի գգաց այդ տիրական անհրաժեշտութիւնը, քանի որ նրա օրով էին պայթել ամենաճանր տագնապները, նրա աչքի առաջ էր հալւում ահագին կայսրութիւնը... Նա տեսաւ Յունաստանի ապստամբութիւնը, որ անհնարին եղաւ ճնշել հարիւր հազար յոյների կոտորածով ու երկրի աւերումով, նա տեսաւ նավարինի ճակատամարտը, ուր երեք քրիստոնեայ պետութիւններ — Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան — միահամուռ գրոհ տւին Մահիկի դէմ, երեք ժամում խորտակեցին օսմանեան նաւատորմը, ազատելով ընդմիշտ Յունաստանը թիւրքաց լծից. նա տեսաւ Ռուսաստանի յաղթական գրոհը հաւատակից Պարսկաստանի դէմ, տեսաւ նոյն Ռուսաստանի արշաւանքը դէպի Էրզրում... Թիւրքիոյ վիճակը դառնում էր կրիտիկական և Մահմուդ որոշեց ինքն անձամբ ստանձնել վերանորոգչի, Ազատարարի պաշտօնը... Տարւեց լիբերալ, ազատամիտ հովերով, մտցրեց Թիւրքիան պաշտօնապէս Ռէֆօրմի ճանապարհը.. Մտցրեց մի ահարկու ժեստով — ե ն ի չ ե ր ի ն ե ր ի խմբական կոտորածով *) (1826 թ):

Պետրոս Մեծ չ'եղաւ, սակայն, Մահմուդը նա գգում

---

*) 6—7,000 հոգի ջարդւեցին կ. Պոլսում (1826, յունիս 15-ին), մօտ 16,000 աքսորւեցին։ Այդպէս աչնչացաւ զինուորական այն բարբարոս կաստան, որ անհաշտ հակառակորդ էր ամեն մի նորմուծութեան, որ պատուհաս էր դարերից ի վեր երկրի բոլոր ժողովուրդների, մանաւանդ քրիստոնեաների համար և որ յաճախ իր քմահաճ ու վայրագ միջամտութիւններով անդամալուծում էր կենտրոնական իշխանութեան կամքը։

էր Եւրոպայի գերազանցութիւնը, բայց չէր ըմբռնում այդ գերազանցութեան գաղտնիքը։ Ընդօրինակում, ներմուծում էր լոկ արտաքին ձևերը, զգեստները, էտիկետը. թոյլատրում էր „ռայաներին“՝ պահպանելու իրենց ազգային գլեստը, թոյլատրում էր վինիտարներին և ուլեմաներին՝ նստել իր, սուլթանի, ներկայութեամբ և այլն։ Բուն արևմտեան քաղաքակրթութեան ոգին հեռու էր նրանից, ցեղի ու կրօնի բռնաւոր ազդեցութիւնը կաշկանդում էր խալիֆի առանց այն էլ սահմանափակ միտքը. նա անընդունակ էր շատ թէ քիչ բարձր թռիչքների, նա կամենում էր եւրոպացի լինել, բայց թիւրք էր ճնում իր ամբողջ էութեամբ, թիւրք բռնաւոր ու միահնծան պետ։

Սկեպտիկ էին Եւրոպայի մէջ՝ թիւրքական վերածնութեան այդ առաջին փորձերի հանդէպ։ „Որքան աւելի եմ դիտում թիւրքերին, այնքան աւելի եմ համոզւում, որ շուտով նրանք պիտի մեռնին իրենց անկարողութեան բեռի տակ“ — ասում էր այն ժամանակ կոմս Օրլօվ։ Իսկ Աւստրիան 1839-ին առաջարկում էր արդէն Ռուսաստանին՝ բաժանել եւրոպական Թիւրքիան...

82 տարի պէտք եղաւ սպասել այդ բաժանումն իրագործելու համար — արդէն ոչ թէ Աւստրիայի ու Ռուսաստանի միջև, այլ մի բոլորովին նոր պետական համաստեղութեան՝ բալկանեան երիտասարդ դաշնակիցների մէջ... Եւ դարձեալ նոյն թիւրքական անկարողութիւնն էր, նրանց վարելու և վերածնելու անկարողութիւնը՝ որ ի վերջոյ շղթայազերծեց այս անօրինակ համաբալկանեան փոթորիկը, որի մէջ ընդմիշտ խոր-

տակուում է կիսալուսնի եւրոպական տիրապետութիւնը...

Ենիչերիների կոտորածը եղաւ առաջին ու վերջին ժեստը սուլթան Մահմուդ մեռաւ, առանց լուրջ հետեւանքի հասցնելու վերանորոգչական իր փորձերը։ Նրա որդին Աբդիւլ Ազիզ, շարունակեց հօր աշխատանքը և, վերջապէս, 1839-ին հրատարակեց հռչակաւոր Թանզիմաթը, խատը Շէրիֆը։

„Այսուհետև պզտիկ հաստատութիւնները պէտք է երաշխաւորեն մեր հպատակների լիակատար ապահովութիւնը՝ կեանքի, պատւի և գոյքի։ Այդ արտօնութիւնները պիտի վայելեն ամենքը, ինչ կրօնի և աղանդի էլ պատկանին նրանք“ *)։

Այդպէս էր հռչակում սուլթանական մանիֆեստը. և այդ յայտարարութիւնը ինքնին արդէն մի յեղափոխութիւն էր։ Նա գալիս էր հիմնականապէս յեղաշրջելու Իսլամի աւանդական դօքտրինը, խախտելու սրբազնագոյն Շէրին, այդ քարացած կրօնական օրինագիրքը, որի մասին խօսել ենք արդէն և որի լծքերունեմով քրիստոնեան „անմաքուր“ է, ստոր ցեղ է, որ չի կարող վայելել մահմեդականի հետ հաւասար իրաւունքներ ու արտօնութիւններ...

Ռէֆօրմը սկզբից իսկ պարունակում էր վիժման սաղմը։ Եւ ապագան ցոյց տուեց, թէ որքան երեւոյթ էր էր ռէֆօրմային այդ կառուցուածքը... Հաւասարութեան գաղափարները օգ ցնդեցին, զարնելով Իսլամի գրանիտեայ ապառաժին...

---

*) *Ed. Engelhardt, La Turquie et le Tanzimat. I v. p. 36.*

Այնուամենայնիւ, այդ վաղանցուկ ու վարդագոյն ցնորքները, որ ժամանակ հովերի այդ կարճատև տիրապետութիւնը ապարդիւն չ'անցաւ թիւրքահպատակ քրիստոնեայ ազգերի համար. նա խրախուսեց վերջիններուն գիտակից տարրերին, թևաւորեց նրանց յոյսերն ու երազները։

Հաւասարութեան գաղափարի նշանակի տակ ծայր առաւ թիւրքաց հայութեան մէջ դասակարգային կռիւ։ Հրապարակ եկան „էնաֆները“ *)։ Հայ արհեստաւոր դասակարգն էր, որ ծառանում էր ամիրայութեան դէմ։ Ժողովուրդն էր, որ բեմ էր նետում առաջին անգամ, իր դիրքի ու իրաւունքների գիտակցութեամբ։ Դա մեր փոքրիկ *tiers état*-ն էր, երրորդ դասակարգը, որ գալիս էր թօթափելու ամիրաների ճնշող խնամակալութիւնը և իր ձեռքն առնելու ազգային գործերի դեկը։ Կռիւը, որ նոյնպէս տատապում էր այդ քահանայ աղայութեան ճնշումներից՝ միացաւ սկզբնեբում պայքարող էնաֆներին, փաստաբանեց ռամկավարական դատը, ժողովրդային ներկայացուցչութեան սկզբունքը։ Մաթէոս պատրիարքը (յետոյ կաթողիկոս) ժողովրդի հետ համերաշխ ժղեց պայքարը և իր վերջոյ աջողեց ժողովել էնաֆների 14 ներկայացուցիչներին Ազգային Ժողով (ընդդէմ 16 ամիրայական երեսփոխանների)։ Ընտրովի չէին էնաֆական այդ 14 ներկայացուցիչները, այլ ինքը պատրիարքն էր նշանակում.

---

*) „Էնաֆ“ ասել է՝ արհեստաւորների, արդիւնաբերողների ընկերակցութիւն։

բայց և այնպէս, դա մի յուսալի սկզբնաւորութիւն էր։ 1844-ից արդէն կազմւում են պատրիարքարանին կցուրդ երկու ժողով, կրօնական և քաղաքական. վերջինը կազմւած 20 անդամից, որ ընտրւում էին ուղղակի էանաֆներից։ Սակայն, դա դեռ ժողովրդական սկզբունքի լիակատար յաղթանակը չէր, քանի որ ամիրաները կաշառքով, ազդեցութեամբ կարողանում էին իրենց ուզած երեսփոխաններին առաջ տանել։

1848 թւին—անսովոր դէպք։ Էջէնտիական կաստը չէր ներում Մաթէոս պատրիարքին, որ նա մտցրել էր էանաֆները Ազգային ժողովի մէջ։ Եւ հզօր իրենց դասակարգային առանձնաշնորհութիւններով ու ազդեցութեամբ՝ ազգի խնամակալները շարունակեցին իրենց դաւերը ժողովրդական պատրիարքի ու նրա հօտի դէմ։ Այդ ազգադաւ պայքարի մէջ նրանք սաստիկ գիմում էին անմաքուր, անթոյլատրելի միջոցներին։ Մեծն տեղ—այդպէս... Ժողովրդային հոսանքը կանխելու և իրենց դիրքը փրկելու համար՝ առանձնաշնորհեալ դասակարգերը խտրութիւն չեն դրել միջոցների մէջ...

Յոգնած ու զզւած այդ շարունակական դաւերից՝ Մաթէոս պատրիարքը որոշում է հրաժարական տալ։ Ամիրաները հասնում էին իրենց նպատակին։ Բայց ահա—անակնկալ։ Ժողովուրդը—հա՛յ ժողովուրդը—ոտքի է կանգնում և հաւաքական ցոյցեր է սարքում։ 1848 թիւն էր... Փետրուարեան Յեղափոխութեան արձագա՞նքն էր արդեօք, որ ամբողջ Եւրոպան սասանեցնելով, հասել էր մինչև Բոսֆորի ափերը... Յամենայն դէպս, առաջին անգամն էր դարերից ի վեր, որ թիւր-

քահայ ժողովուրդը ըմբոստացումի հաւաքական ժեստ էր անում, թէկուզ և Հայաստանից դուրս, կ. Պոլսում, թէկուզ և Հարազատ, արիւնակից բռնակալութեան դէմ...

Ցոյցի վայրն է գում Գափուի մայր եկեղեցին։ Այնտեղ են պատրիարքի հետ երկու ժողովները, այնտեղ է և ժողովրդի խուռն բազմութիւն, յուզուած, ելեքտրականացած։ Եւ հէնց որ պատրիարքը յայտարարում է ամբիոնից իր հրաժարականը, լսւում է ամբոխի ժէջ ցասման որոտ։ Բողոքի ձիչեր՝ ամեն կողմից։ Բազմութեան միջից առաջ են նետւում հռետորներ և ուժգին յորդորում են պատրիարքին՝ չհրաժարւել, շարունակել կռիւը։ Եւ երբ վերջինը անդառնալի կերպով պնդում է իր հրաժարականի վրայ, ժէկը հանդիսականներից յայտարարում է, որ միակ արժանաւոր յաջորդն է նախկին Ցակոբ պատրիարքը։ Միահամուռ ու որոտագին հաւանութիւն... Ցակոբը կը շարունակէ Մաթէոսին և կը նւաճէ „սահմանադրութիւն“ ու իրաւունք։

Ամիրայութիւնը տագնապի ժէջ էր։ Ժողովրդական այդ անդրանիկ ու անակնկալ ցոյցի առջև՝ նրան ճնում էր համակերպիլ։

Ճանապարհը հարթւած էր։ Կռիւը կ'երթայ այնուհետև յարաճուն թափով, մինչև կը յանգի 60-ական թւականների Սահմանադրութեան։ Այդ հրապուրիչ բառը շրջան էր անում ամենուրեք։ Նա նշանաբան էր և մարտակոչ։ Նա գալիս էր Մեծ Ցեղափոխութեան հայրենիքից, գալիս էր շարժելու ասիական մեծ ճահիճը, ուղղութիւն տալու հայկական *Self government*-ի, ինքնավարութեան ձգտումներին։ „Սահ-

ժանադրութիւնը" դեռ սկզբունք էր, ծրագիր էր. նրա գործնական կիրառութիւնը դեռ կը պահանջէ երկար տարիներ։

***

Մինչ կեանքի մէջ կատարուում էին այդ ուշագրաւ վերիվայրումները քառասնոկան թուականների ազատաշունչ մթնոլորտում — հեռուն, Սէնի մրրկակոծ ափերին, մի խումբ հայ ժառանգականներ, համալսարանական նատարանի շուրջ, որոճում էին նոյն Սահմանադրութեան գաղափարը, երկնում էին հայրենաշէն ծրագրներ, ականջ դնելով թէ ֆրանսիական և արևմտեան ահեղագոռ անցքերին և թէ հայրենի հօրիզոններից հնչող ձայներին։ Նրանք կը դառնան յետագայում թիւրքահայոց առաջնակարգ գործիչներ և Ազգային Սահմանադրութեան գաղափարական կերտողներ։ Ովքե՞ր էին դրանք...

VIII

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՁԱՐԺՈՒՄԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Ը·

ՊԱԼԵԱՆ, ՌՈՒՍԻՆԵԱՆ, ԱԼԻՇԱՆ

Թիւրմահայ ուսանողութիւնը 40-ական թուականներուն.—Ազդեցութիւններ. — Պատմական ակնարկ եւ պարիզեան մթնոլորտը. — Յեղափոխութիւն եւ հայրենասիրութիւն —Լամարտինի ճառը Մուրադեան վարժարանի բացումին.—Թիւրմահայ նամալսարանականի եւ հանրային գործիչի տիպը.—Գրիգոր Օտեան՝ վաղեմի հայ ուսանողութեան մասին. — Ռուսիեան եւ Պալեան. — Ազգային Սահմանադրութեան յղացումը. — Հայ մամուլը Թիւրքիոյ մէջ. — Հայրենասիրական ճնարը. — Հայր Ալիշան, իր դէմքը եւ իր գործը. — Հայկական ընթրոսացման ջեփորոցներ. —

Քառասնական թուականներուն ենք։

Հայ ուսանողութիւնը երևան է գալիս արևմտեան ուսման տաճարներուն, հայ առաջին համալսարանականները *) — *Ձիրքոտ, տոկուն, ուսումնասէր — ագահօրէն*

---

*) Ւղղել են, անշուշտ, հայ ուսանողները նաև քառասնական թուերից առաջ, բայց բուն խմբական հոսանքը, որոշ գուներանութեամբ, ծայր է տալիս 40-ական թուականներին։

կլանում են եւրոպական մտքի արգիւնքները, որպէս զի գան պատուաստելու հայրենիքի խոպան միջավայրին։

Ւ֊ր թիւրքահայ վերածնութեան այդ առաջին ծիծեռնակները տագնապած են ընդհանրապէս արմատական գաղափարներով, դեմոկրատիզմի, ոամկավարութեան հաստատմամբ, և խանգավառ, ազատաշունչ հայրենասիրութեամբ։

Պարիզը կենտրոն էր և սիրուած ժամադրավայր մեր փոքրաթիւ ուսումնասէրներ երիտասարդութեան։ Պարիզի մէջ հաստատուել էր Մխիթարեան-Մուրադեան վարժարանը, Պարիզի մէջ խմբուել էր ապագայ հայ գործիչների պլեադը. — Ղեւոնդեան Պալեան, Խաչատուր Պարտիզպան, Խաչատուր Միսաքեան, Ներսէս Ռուսինեան. Կրիգոր Ազաթօն, Կարապետ Իւթիւճեան, Գաբրիէլ Այվազովսկի, Ամբրոսիոս Գալֆայեան, Խորէն Գալֆայեան, Յովսէփ Շիշմանեան (Ծերենց) և ուրիշներ։

Պարիզը կենտրոն էր և ամբողջ մտածող աշխարհի ուշադրութեան...

Հազուագիւտ մի շրջան էր։ Ըմբռստութեան շունչ էր անցնում ամբողջ արեւմտեան Եւրոպայով և Պարիզը պատրաստում էր 1848-ի աշխարհագղղրդ փոթորիկը։

Յեղափոխական խօսքը հնչում էր գաղտնի, գաւազրական ակումբներում — Լանկինների որոտախօս շքեղութիւններով — յեղափոխական միտքը այլ և այլ ձևերով արծարծւում էր մամուլի ու գրականութեան մէջ, բառբառում էր անգամ համալսարանական ամբիոններից։ Լամարտին, Վիկտոր Հիւգօ, Դը Միւսսէ հնչեցնում էին իրենց գիւթիչ քնարի դալլալները.

Օգիւստ Կոնտ ծանուցանում էր աշխարհին պօզիտիվիզմի արմատական, փրկարար հաւատամքը. Միշլէ և Կիզօ հրատարակում էին իրենց անմահ գործերը. առաջինը Ֆրանսիական Յեղափոխութեան դրագներն էր պատմում իր թևաւոր, անզուգական լեզուով ու ոճով, երկրորդը Համաշխարհային քաղաքակրթութեան ընթացքն էր ուրուագծում իր ներհուն գիտունութեամբ, ճշմարտախօս գրչով. երկուսն էլ հռչակում էին իրենց մեծ հայրենիքի առաջապահ դերը ընդհանուր քաղաքակրթութեան պրօցէսի մէջ։ Էդգար Քինէ, մի այլ հանճար, շարունակում էր վոլտէրեան աւանդութիւնը, թունաւոր ոճով խարազանում կրօնի ու կղերի կեղծիքները, մարդկութեան խղճի վրայ լեռնացած նախապաշարումներն ու անապաշտութիւնները։ Պարիզեան ամբիոններից որոտում էր ազատ մտքի քարոզը նոր կեանքի ծարաւի երիտասարդութեան ականջներին... Վրայ է հասնում, վերջապէս, Փետրուարեան Յեղափոխութիւնը (1848 թ), որ անմիջապէս փոթորկում է եւրոպական ցամաքը, հրդեհելով մի շարք մայրաքաղաքներ, խորտակելով միապետական գահերը...

Ահա մի այդպիսի պատմական մթնոլորտում էր ուսանում հայ անդրանիկ համալսարանական բոլլը։ Նրա անդամները հանդիսատես են պատմութեան այդ վեհ դրամաներին, ամանք նոյնիսկ փորձում են իրենց բաժին մասնակցութիւնն ունենալ։ Պարիզը նրանց գաստիարակն էր և ոգևորութեան աղբիւրը, պարիզեան եռուզ կամաւոյի մէջ նրանց զգայուն հոգին կրում էր ուժգ-

նօրէն անցքերի ազդեցութիւնը, որդեգրում Ցեղափոխութեան պանծալի սկզբունքները, որդեգրում ժառանգ հայրենիքի ու ժողովրդի պաշտամունքը... և սրտի կսկիծով յիշում էին նրանք իրենց փոքրիկ հայրենիքը Ասիական Արևելքում, ծրարուած սարկութեան և խաւարի անթափանցիկ ժառանգութեամբ..

Յիշում էին և խորհում և յղանում „ծրագիրներ“... Ծրագիրներ ազգային վերածնութեան, ոչ միայն մտաւոր, կուլտուրական, այլ և... քաղաքական։ Ա յգտեղ է յղացում 1863-ի Սահմանադրութեան նախագիծը, ի դէմս „Համաստեղութեան“ երկու խոշոր դէմքերի՝ Նիկողայոս Պալեանի և Ներսէս Ռուսինեանի։

Որքա՜ն յոյզեր ու յոյսեր, ո՛րպիսի տենդային խանդավառութեան օրեր եւ ինչպէ՞ս չվառուէր այդ ազնիւ երիտասարդութիւնը, ինչպէ՞ս նա չբռնուէր հայրենասիրութեան տենդով այդ հպարտագիւտ օրերում, երբ ինքը Ֆրանսիական Հանրապետութեան արտաքին գործերի մինիստրը, Լամարտին, հանգիսաւոր կերպով, Մուրատեան վարժարանի բացման իր ճառի մէջ, տալիս էր հայ ազգին հասունութեան վկայական, ներբողում էր նրա լեզուն, որոշում էր նրա գերը, արժէքը...

La République Française— ասում էր տիեզերահռչակ բանաստեղծը, գիմելով իր առջև հաւաքուած հայազգի հանդիսականներին *)— *envisage la grande question de la régénération orientale...*

---

*) Փետրուարեան Ցեղափոխութիւնից քիչ յետոյ էր։

„... *Les germes de la nationalité orientale dont vous êtes l'un des plus puissants rameaux, se developpent... en France... L'étude de votre belle langue arménienne est utile aux français et réciproquement*“ *)... (Ֆրանսիական Հանրապետութիւնը իր ժառանգութեան առարկայ դարձրած է Արևելքի վերածնութեան մեծ խնդիրը... Սազմերը արևելեան ազգայնութեան, որի աճենակենսունակ ճիւղերից մինն էք դուք, ջարգանում են Ֆրանսիայում... Ձեր հայկական սիրուն լեզուի ուսումնասիրութիւնը օգտակար է Ֆրանսիացիներին և—փոխադարձաբար)...

***

Հայ ուսանողները հետամուտ էին մեծ մասամբ գործնական գիտելիքների, ընտրել էին այլ և այլ մասնաճիւղեր, ոմանք բժշկութիւն, ուրիշները՝ ճարտարապետութիւն, ուրիշները՝ մանկավարժութիւն, մի երկուսը՝ աստուածաբանութիւն։ Պ ր ծ ն ա կ ա ն ժառանգութիւնները գերիշխող էին այն ժամանակ, իբրև ազգային նահապետական իրականութեան մի պահանջ։ Հ ա յ կ ա կ ա ն ա ր հ ե ս տ ը, որ մինչ այն մատակարարել էր իր արդիւնքները տիրապետող ցեղին, չէր այլ ևս կատարելագործւում և 19-րդ դարի առաջին կիսում՝ չէր այլ ևս գոհացնում մարդկանց պահանջները։ Անգամ թիւրքի — եւրոպաբնակ թիւրքի — կենցաղն ու

*) *Lamartine, Discours lors de l'inauguration à Paris du Collège arménien de Samuel Moorat.*

ճաշակը բաւականաչափ նրբացել էին և պահանջները բազմացել,—մինչդեռ հայ արհեստը ծնացել էր քարացած իր հինաւուրց ձևերի մէջ։ Պօլսի և Զմիւռնիայի թիւրքը սկսել էր հագնուել եւրոպական ճաշակով — այդ վերջինը ժուռք էր գործել նրա նիստ ու կացի մէջ... Պէտք էր զարկ տալ ճարտարութեանին, ընդօրինակել եւրոպային և պէտք էր շտապել... Ահա թէ ինչու „գործնական կրթութեան" տեղը առանձնապէս շեշտուում էր այն ժամանակուայ թիւրքահայ հասարակութեան մէջ և գրեթէ արհամարհած էր տեսականը, „վերացականը", նոյն երևոյթը, կարելի է ասել, աւանդաբար պահպանել է մինչև օրս։ Այդ արհամարհանքը յայտնապէս քարոզուում էր թիւրքահայոց նորաբողբոջ ժամուլի մէջ։ Քաւտանական թուականների վերջերում, տնտեսական գիտութիւնների ամենայայտնի ժողովրդականացնողը, Զօրայեան, „Հայաստան" լրագրի մէջ յորդոր էր կարդում հայ ուսանող երիտասարդութեանը՝ ոյժ տալ նախ „հաց վաստկելու գիտութիւններուն", ոչ այնքան՝ լեզուագիտութեան, գրականութեան, փիլիսոփայութեան։

„Մեզի առաւել պէտք եղածը անանկ ժարպիկ են, որ երկրագործութիւն, մեքենագործութիւն, ճարտարարուեստութիւն, վաճառականութիւն, բժշկութիւն սովրին" *)։

Նոյն „Հայաստանը" գրում էր դեռ 1846 թ. յունիս 6-ին.

„Հինգ-վեց տարուան մէջ ազգիս երիտասարդներէն շատ հոգի դէպի Եւրոպայի զանազան կողմերը դիմեցին, ուսման

*) „Հայաստան", 5 փետր. 1849։

համար ծարաւի սրտերին գովացուցին... և ասոնցմէ կանուխ ոտքի ելլողները շահաւէտ արհեստին ձեռք բերելով, արդէն դարձան իրենց հայրենիքը և... ձեռքերնուն եկած նպաստն ալ չեն խնայեր ազգին"...

Դրանց մէջ էր Յարութիւն Տատեան, որ յետոյ դարձաւ Արթին փաշա, գրեթէ ղեկավար Թիւրքիոյ արտաքին քաղաքականութեան:

Այդպէս էր նշանաբանը, կեանքը, սակայն, պատմական բացառիկ վայրկեանը ժղում էր հայ ուսանողներին և դէպի Սօրբոնի այլ ամբիոններ, ուսկից նրանք կարող էին լսել նաև „վերացական" կամ ուրիշ խօսքով քաղաքական ու հասարակական գիտութիւնների վերջին խօսքը: Լսում էին նրանք այդ գիտութիւնները, ըստ երևոյթին կցկտուր, պատահաբար, իմիջիայլոց: Լսում էին և վառւում: Սիրտերը բարձրանում էին և ուժգին բաբախում ֆրանսիական անցքերի ժխորի մէջ, յեղափոխական հռետորութեան թովիչ ազդեցութեան տակ...

Այդ վերջինը մշակում է, մարզում թիւրքահայ երիտասարդին, պօլսեցուն, որ արդէն իսկ արտիստ է ի ծնէ, իր բնութեամբ, խառնուածքով: Նա հետևում է իր գործնական մասնաճիւղին, գնում է երբեմնապէս ունկնդրելու Սօրբոնի փիլիսոփային ու պատմագրին, սակայն նրա ուշքն ու միտքը գրաւած են բանաստեղծների քնարաշունչ մարգանքներով, բեմբասաց քարոզիչների մեծադղրդ ճառերով... Նրա միտքը գործում է, զգացմունքը՝ աւելի ևս. քինէն, Գիզօն, Կօնտը ազդում են թիւրքահայ ուսանողի հոգու և մտայնութեան վրայ,

բայց անհամեմատ աւելի են ազդում Հիւգօն և Լամարտինը։

Ընդհանրապէս, կարելի է ասել, դարբնուեց թիւրքահայ ժառանգականի և հանրային գործիչի տիպը։ Աւելի ճարտասան՝ քան հետախոյզ-հրապարակագիր, աւելի բանաստեղծ՝ քան մտածող-ուսումնասիրող, եւ երբ թերթում էք թիւրքահայոց ժամանակի XIX դարի քաղաքական թուականներից, չէք կարող չնկատել այն ծայրայեղ ժառանգական ազդեցութիւնը, որ տիրում է նրա վրայ։ Ամբողջ տասնեակ տարիների ահագին տարածութեան վրայ դուք հազիւ կը գտնէք մի քանի քիչ-շատ լուրջ ուսումնասիրութիւն՝ հասարակական, տնտեսական կամ քաղաքական խնդիրների շուրջ։

Այդ տիպը հարուստաութեամբ գտնում էք թիւրքահայոց գարգացման բոլոր շրջաններում. այդ տիպի հիմնագծերը մենք տեսնում ենք ամեն կարգի հանրային ու քաղաքական գործիչների մէջ, անգամ նրանց՝ որոնց վիճակուած էր առաջնակարգ դեր խաղալու ոչ միայն իրենց հարազատ հայրենիքի, այլ և ամբողջ Թիւրքիոյ քաղաքական ու դիւանագիտական էւոլիւսիոնի մէջ։

Բանաստեղծ էր Գրիգոր Օտեան, օսմանեան սահմանադրութեան նշանաւոր առհվիրան, որ մեկն էր 1848-ի գաղափարներով սնուած „Համաստեղութեան“ անդամներից։ Երբ նա գրում է 40-ական թուականների հայ մտաւոր սերնդի մասին, նրա կրած ֆրանսիական ազդեցութիւնների ու հովերի մասին, — ամենից ուժով ու խանդավառութեամբ նա ներքաղում է „Լամարթինի,

թիէուռիի, Կիզօի ղեկավարիչն պիրճախօսութիւն“...

... „Բանաստեղծ մը կը նախագահէր (փետուարեան) յեղափոխութեան *), բանաստեղծ մը, ասա՛ղ, որ և այնքան պիտի ներգործէր իմ կեանքիս վրայ ալ“... Այսպէս է գրում Միխայտա փաշայի հռչակաւոր գործակիցը 1879-ին հրատարակած Ռուսինեանի փիլիսոփայութեան պատագրքի իր հակիրճ նախաբանում

Բանաստեղծ էր Ի կ ո ղ ա յ ո ս Պ ա լ ե ա ն ը, նա, որ հաժարւում է 1863-ի մեր Ազգային Սահմանադրութեան գլխաւոր նախապրպիչ (*promoteur*)... „Ինքն իսկ էր աւիւն և յափշտակութիւն“... ասում է նրա մասին Գրիգոր Օտեան, նոյն նախաբանի մէջ։

Բանաստեղծ էր Ն ա հ ա պ ե տ Ռուսինեանը — Պալեանի սիրած և անլաժան ընկերը, որի հետ միասին երկար գիշերներ որոճել էին պարիզում իրենց նուիրական ու հայրենական ծրագիրները։


Մինը, Պալեան, հետևում էր Էդգար Քինէին, միւսը, Ռուսինեան՝ վիկտոր Հուգէնին։ Ուսարեալով իրենց մասնաճիւղը և իւրացնելով 48 թուականի աւետարանը՝ երկու ընկերները որոշում են իւ գոյծ գնել այն՝ ազգային կեանքում։

„Ընդունայն ճգնի մարդ ճոպոպել ազգին ազդեցութենէն“ — ասում է իրաւամբ Օտեան, „և ազգը՝ առաջին բառն էր, զոր արտասանեցին Պալեան ու Ռուսինեան, երբ միացան սոյն տողերու գրողին հետ“...

---

*) Լամարտինի մասին է խօսքը։

1849-ին (մի այլ վկայութեամբ՝ 1851-ին) Նահապետ Ռուսինեան, իբրև զօրքին բժշկապետ, վերադառնում է Պոլիս, հաստատւում է Լակիւտար, Օտեանի և այլ ընկերների հետ—և սկսւում է Սահմանադրութեան մայրախմբակի գործունէութիւնը։



Նիկողոս Պալեան

„Այն ուրեքուն՝ Ազգը վարչութեան պէս բան մը ունէր, լեզուի պէս բան մը, գպրոցի պէս բան մը" (Օտեան)։

Երեք-չորս երիտասարդները ձեռնարկում են կերպարանաւորելու այդ երեք „բաները", որ էական պայմաններն են ազգային առաջադիմութեան։ Եւ այդ

ձեռնարկից պիտի ծնէր Ազգային Սահմանադրութիւնը *)։

*) Անշուշտ, մէկ կամ երկու հայրենասէրների դործ չէր այդ ահագին ձեռնարկը և նրա իրագործումը՝ այն ժամանակուայ պայմաններում։ Կեանքի, մանաւորապէս Թիւրքիոյ քաղաքական կեանքի պայմանները, Եւրոպայի միջամտութեան յարատև սպառնալիքը, քրիստոնեայ հպատակներին գոհացում տալու յարաճուն անհրաժեշտութիւնը — այդ բոլորը դիւրացնում էր հայկական երազների մասնակի իրականացումը։ Բայց և, անշուշտ, անհատները, իրենց կորովի նախաձեռնութեամբ, իրենց յամառ հետապնդումով մեծապէս գործ են ունեցել նոյն երազների իրականացման։ Այդ անհատների շարքումն են նաև Յակոբիկ Կրճիկեան, գօրաւոր Սերվիչեն, որոնք նոյնպէս 40-ական թուականներին, թերևս անկախ մեր յիշատակած անձերից, յղացել են նոյն ծրագիրները, աշխատել են միևնոյն ուղղութեամբ։ Թուում է, սակայն, թէ հայրենասէրների այդ գեղեցիկ շարանի մէջ կենտրօնական դէմքն է Նիկողայոս Պալեանը, որ իր կարող ազդեցութեամբ, իբրև պալատի ճարտարապետ, ամենից աւելի էր նպաստել Սահմանադրութեան խաղաղ ճանապարհով և որ մեռել էր վաղաժամ, նախ քան իր երազն իրագործելը... Համեստ մարդու կատարած դերը մնացել էր բոլորին անյայտ. բոլորն էլ մոռացել էին նրան։ Բոլորը... բացի իր սիրեցեալ և անբաժան Թուխինեանից, որ նոյնպէս տասնեակ տարիներ պահել էր այդ իրողութիւնը սրտի խորքում, իբրև նուիրական մի գաղտնիք և միայն 1870 թուին, Ազգային ժողովի 4 դեկտեմբերի նիստի մէջ, մի անանուն միջադէպից (Յակոբ Պալեանի հրաժարականից) դնդում, արտասուելով՝ բաց է անում հայութեան առջև այդ կարևոր գաղտնիքը, պատմում է հնձկլտալով իր յուշերը պաշտելի բնկերոջ, Նիկողոս Պալեանի մասին, պատմում է, թէ ինչպէս է նա աշխատել Սահմանադրութիւնը

Շատ աքնեցին, տանջեցին. շատ պայքարներ մղեցին... Օտեան ասում է մելամազձօրէն (1879-ին).

„Երբ այնքան տարիներէ ետքը մտքովս կը յածիմ այն ժամանակներուն մէջ, ուր լաւ պատերազմը պատերազմեցանք, լուսոյ՝ խաւարի դէմ, ժողովրդականութեան՝ ամբարյութեան դէմ և ազատամարտութեան՝ եկեղեցական ու աշխարհական իշխանութեանց դէմ, երբ աչքիս առջև կը բերեմ այնքան խոչընդոտները, այնքան սպառնալիքները, այնքան ահ ու դող, այնքան վտանգը, որոց մէջէն անցանք... զարմանքը կը պատէ և կ'րսեմ. Ի՛նչ վեհ է երիտասարդութիւն"...

***

Կենսագրողները հազւագիւտ են, եղածներն էլ՝ խիստ ժլատ—և բառանական թւերի մեր այդ պատւական երիտասարդութեան կեանքն ու գործը ծանր են տակաւին չլուսաբանւած։

նւաճելու համար, մի՛ ինչպէս են 40-ական թւականներից հաժախմբել նրա շուրջը ուրիշ գեմքեր, երբեմնի ուսանողներ, Օտեան, Ագաթօն և ինքը... Ռուսինեան յիշում է, վերջապէս, իր րնկերոջ վազաժամ ու պժբախտ վախճանը և այսպես, ճառի վերջում նրա կոկորդը սեղմւում է, ձայնը հատնում յուշերի, զգացումների ուժգին յորձանքից, հոևտորը թողնում է ամբիոնը և հեկեկալով դուրս է նետւում սրահից... Ցնորքանը վերին աստիճանի յուզիչ է, ամբողջ ժողովը պոկպոկում է խորին, կրօնական լուսթիւն, ատանուած այդ սրտառուչ ճառից և այդ տխուր ու անակնկալ յայտնութիւնից...

Ազգային ժողովի քարտուղարը արձանագրում է.

(Մատեան արտաշարժութեանց ի ժողովն եւ յանկնդիրս)։

Տես „Առենագրութիւնք Ազգային ժողովոյ" (պաշտօնական հրատ. Ազգ. Պատրիարքարանի)։

Օտեան համեմատում է պարիզեան խմբի երկու մեծագոյն դէմքերը—Պալեան և Թուսինեան—և գըտնում է երկուսի միջև անվերածելի նեւհակութիւն.

„Նիկողայոս Պալեան... ինքն էր աւիւն ու յափշտակութիւն, մինչդեռ Թուսինեան անխռով խորհրդածութիւն էր... Մին անսայթաք ընթանար գիծերով շրջապատեալ, միսը խոյանար տաճանեալ ի փոթորկայց և ի շանթիցն հարուածեալ՝ երևակայութեան բաչած սիրուներուն մէջ“...


Համեմատութեան եզրակացութիւնը թուում է փոքր ինչ բռնազբօսիկ Թուսինեանը, որ ներկայացուում է իբրև „անխռով խորհրդածութիւն“ և հակառնեայ Պալեանի—ոչ պակաս աւիւնոտ էր, յափշտակուող, վառվռուն ու թոթռուն։ Այդ կողմից նա թերևս կը գերազանցէր բոլոր մեւանների։ Զգացմունքի տիրապետութեան տակ նա երբեմն հասնում էր բորբոքման ու պաֆոսի գագաթնակէտին և գործում էր անօրմալ, հիւանդագին թռիչքներ։

Այդ տաղանդաւոր կեսարացին *), անտարակոյս, հայ մտաւորական բոյլի ամենաօրիժինալ դէմքն էր և գուցե միանգամայն ամենացայտուն ու ամենահարուստ ներկայացուցիչը այն տիպարի, որ քիչ առաջ յատկանշեցինք։ Նա մարմնացած լիրիզմ է և աբանչելի հոեատու։ Մի հմայիչ լեզու և մի հազուագիւտ պերճախօսութիւն... Ընտիր, նուրբ, բարձրասլաց և ներդաշնակ։ Առանց շինծու ժեստերի և գռեհիկ ճոռոմաբանութեան։ Հայոց փոքրիկ պարլամենտի զարդն էր, Ազգային ծողովի „սոխակ-բեմբասաց“։ Լսում էին այդ սոխակին սիրով ու գոյլումով։ Երբեմն, շղթայազերծ հեղեղի պէս դուրս էր

*) Ծն. 1819 թ.—վախճ. 1876 թ.։

նեաւում իր հունից, զգացումները յորդանում էին, համակում նրա բովանդակ էութիւնը, նա ճառում էր և հեկեկում, լալիս էր և լացացնում...

Այդպէս էր Ռուսինեանը՝ բժիշկ էր և քանաստեղծ, ճարտասան էր և լեզուագէտ, փիլիսոփայ էր և հասա-



Նահապետ Ռուսինեան

բակական գործիչ, — ամեն բանով զբաղւում էր, ամեն տեղ զարնւում էր նրա անխոնջ, մրրկւող ու որոնող հոգին։ Պետքի բոլոր աշխարհներում ստանձնել էր ռէֆորմատորի, վերանորոգչի պաշտօն և անդադար յղանում էր պրօժէներ, ծրագիրներ։

Սակայն... ուտօպիատի ծրագիրներ էին — գատապարտուած մեռնելու։ Բանաստեղծ - ռէֆօրմատօրի ցնորքներ էին, որ չէին կարող շօշափելի հետքեր թողնել սերունդների գիտակցութեան մէջ։ Որովհետեւ, իր փայլուն ու բազմակողմանի ընդունակութիւնների հետ՝ Թուսինեանն ունէր մեր յատկանշած տիպարի անխուսափելի գծերը... Նա աւելի բանաստեղծ էր, քան մտածող։ Աւելի յօրինող՝ քան գործագրող։ Աւելի փայլուն՝ քան խորունկ։ Ոչ ներհուն քաղաքագէտ էր, ինչպէս ոմանք կը պնդեն, ոչ էլ քաղաքական գործիչ։

Եթէ նա ծնուած լինէր Լերմոնտովի միջավայրում, — կը լինէր իբրև դրագէտ կամ բանաստեղծ մի Հիւգօ, մի Լամարտին, և իբրև քաղաքագէտ — մի Թիէռ, մի Գամբետտա...


Այսպէս է ասում Թուսինեանի նորագոյն կենսագրողներից մինը. բժ. Թորգ., „Հանգէս Ամսօրեայ“ի իր շահեկան յօդուածաշարքում *)։

Արդար լինենք մեր սիրելի հանգուցեալների գնահատման մէջ և անօգուտ չափազանցութիւններով չնաեմացնենք նրանց յիշատակը։

Գամբետտա չէր կարող լինել Թուսինեանը — ոչ իսկ արեւմտեան միջավայրում — քանի որ չունէր պահանջած արիութիւնն ու համարձակութիւնը։ Մի բռնաւոր արատ կաշկանդել էր նրա թարմ, ազատատենչ հոգին, անգամալուծել էր ազգային վերածնութեան նրա թռիչքը։ Նա տառապում էր իր ցեղին, աւելի ճիշտ միջավայրին յատուկ մտավախութեամբ, աւելի ճիշտ՝ երկչոտութեամբ։

*) „Հանդ. Ամսօր.“ 1902—903 թ.։

Ամուր գրկած Ֆրանսիական Յեղափոխութեան նշանաբանները, երկար տարիներ նրանց երազած ու գուրգուրած՝ նա, սակայն, դողում էր, երբ նոյն այդ նշանաբանների անունով փորձում էին հայրենի միջավայրում քիչ թէ շատ համարձակ քայլեր անել։ Ֆրանսիա-



Գրիգոր Աղաթօն

կան գաղափարները այն աստիճան վառել էին նրա զգայուն սիրտը, Ռօբեսպիէռի և Դանտօնի պաշտամունքը այն աստիճան գերել էր նրա ամբողջ էութիւնը, որ նա դեռ ուսանողութեան տարիներում յօրինել էր նոր Հայկական տաբեցոյց, անուանելով ամիսները Ֆրան-

սիական Ցեղափոխութեան որդեգրած անուններով, թարգմանելով՝

Germinal — Floréal — Prairial — Thermidor
Բուսին — Ծաղկին — Մարգին — Տօթած
(Ապրիլ — Մայիս — Յունիս — Օգոստոս)
Fructidor — Brumaire
Պտղած — Միգոն
(Սեպտեմբեր — Դեկտեմբեր)։

Սակայն, այդ բոլորը լոկ թէօրիկ զառանցանքներ էին— սիրուն, մանկութեան ու զարձալի բառախաղ։ Ցեղափոխութեան գաղափարը հանգիպել էր հայկական կրաւորականութեան գրանիտեայ ապառաժին. Բուսինեանը անդադար գուրս էր կոչում ուրուականներ և ինքն իսկ սարսափահար փախչում էր այդ ուրուականներից. նա պաշտում էր Ցեղափոխութիւնը, բայց և, անշուշտ, գըլխում նրա նիւթած արեան թափօրներից, նա կուզէր իր սեփական հայրենիքի ազատութիւն, — առանց, սակայն մի կաթիլ արիւնի... Նա երկնել էր իր ընկերներով հայկական Սահմանադրութիւն, բայց «քաղաքական» բառն իսկ նա կուզէր գուրս վտարել ազգային շրջաններից...

Եւ Ազգային Ժողովի «սոխակ-բեմբասացը» սովորաբար նստում էր լուռ ու մունջ ազգի մեծ, հանդիսաւոր վայրկեաններին, երբ գաւառացի հայութեան ազիտղորմ հեծեծանքը գալիս էր փոթորկելու Ղալաթիայի անշուք խորհրդարանը... Իրքէք, անգամ 70-ական թուականների տենդային օրերի մէջ, Խրիմեանի պատրիարքութեան տագնապալի շրջանում, «կարմիր Տարեցոյցի»

հեղինակը պուրս չ'ելաւ իր ակաժայ պապանձուժից, չ'արձագանքեց ժողովրդի օրհասական ճիչերին, չմիացրեց իր պերճախոսի շանթերը հայոց ազգային բողոքին։ Նրա սիրտը խռովում էր ժողովրդային տագնապով, բայց նա դէմ էր բնդոքներին, նա կծկւում էր բռնապետութեան սուրի հանդէպ, սարսափում էր հնարաւոր պատիժներից, գերադասում էր իր լքւած ու վիրաւոր ժողովրդի պէս հեծեծալ ու համբերել և կամացուկ երգել իր յօրինած սրտառուչ տաղը.

Երբ որ բացին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Զքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր բազմերիկ օդեր.
Երբ որ ծիծառն ի բոյն դառնայ,
Երբ որ ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսանել զիմ Կիլիկիա,
Աշխարհն, որ ինձ ետուր արև...

Ամբողջ սերունդներ երգեցին այդ տաղը։

Խե՜ղճ Նուսինեան։ Մեռաւ, նոյն երգը մրմնջալով, հրաժեշտ տուց աշխարհին ձմրան ահեղ տառնամանիքների մէջ, ուր ծիծառն ու ծառերը սուգ էին հագել ամենուրեք, ուր հայրենիքը տնքում էր ամենածանր օրհասի տակ, ուր իր առջև փակուած էին „յոյսի“ բոլոր դռները...

***

Վերադառնանք դարձեալ քաոսանական թուականներին, կեանքի անիւը առաջ էր մղում գանգատ, աննշմարելի թաւալումներով։ Եւ մ'ամ'ուլը, այդ կեանքի

աղօտ ու դալուկ արտայայտիչը, սկսում էր կամաց-կամաց ոգի առնել և բառբառել օրինաւոր, ժողովային բառբառով։ Իրօք կարծես չկար իսկ նրա գլխին բռնապետութեան խարազանը։ Հայ մամուլը ազատ չէր, բայց ցենզօրի ճանկերում էլ չէր։ Այդտեղ ևս իշխող տարրը ցուցահանում էր իր ա ր հ ա մ ա ր հ ո տ հ ա մ բ ե ր ո ղ ո ւ թ իւ ն ը, ինչպէս բոլոր մեր ազգային հաստատութիւնների վերաբերմամբ — դպրոցի, եկեղեցու և այլն։ Սակայն, ե ր կ ի ւ ղ ը տարտափելի ու համաճարակ պատուհասի պէս, կաշկանդել էր հայ գրողի միտքն ու հոգին. երկիւղը՝ ազատ խոսքի գործածութեան և նրա հետ կապւած վտանգների ու հարւածների հանդէպ, նոյն երկիւղը՝ որ անգամալուծել էր Թուրքիայի հայրենակարօտ ոգին, հայրենավրէժ կամքը...

Այնուամենայնիւ, հայ առաջին խմբագիրները խիզախում էին իրենց համեստ հրատարակութիւնների մէջ ազգային-հասարակական մի քանի խնդիրներ դնել ու արծարծել և մի քանի յօդւած ու հրահանգներ արձակել։ Մերի ընդ մերի կ Պօլսի, Զմիւռնիայի հայկական հրապարակագրութիւնը համարձակ թափ էր առնում, ասես իսպառ ազատագրւած բռնաւոր հսկողութիւնից։ Մերի ընդ մերի ազգի ու հայրենիքի մարտաշունչ նշանաբանները հնչում էին բարձրաձայն, ներվոտ ու աճապարոտ, ասես այն տխուր գիտակցութեամբ՝ որ ազատութեան այդ շրջանը վաղանցուկ է, էֆէմեր, պատահական, որ նա շուտով պիտի տեղի տայ մտասպան և մարդասպան խաւարին...

Իւրաքանչիւրը հպարտ է իր ազով — գրում է „Հայաստան“ թերթը 1846 թ.ին—որը՝ իր ազի հնութեամբ,

որը՝ իր հին գիտութեամբ, որը՝ իր հարստութեամբ, ամեն մի ազգ իրաւունք ունի պարծենալու իր այս կամ այն յատկութեամբ... „Ասոնք զի նախախնամութիւնը ամեն ազգի մէջ մէկ յատուկ ձիրք պարգևէր է“... Մեր ազգը պարծենալու բան մը չունի՞ մի... Հայկին օրէն մինչև ատ օրս հայ անունով ինչը քի՞չ ազնւականութիւն կը համարուի իրեն. ահա ասով թող պարծի: Մինչև հիմա հազար հազար մըրիկներու դիմաց մաքառելը քի՞չ արիւնութիւն կը համարուի իրեն. ահա ասով թող պարծի... Հիմա ալ գեռ աշխարհքիս վրայ շատ ազգեր խորին քնի մէջ... իրեն արթննալը, ուսման յառաջդիմութեանը համար այնչափ բնկերութիւններ, դպրոցներ հաստատելը քի՞չ իմաստութիւն կը համարուի իրեն. ահա ասոնցով թող պարծի... Ուրեմն... դո՛ւն, որ միշտ յառաջ երթալուն վրայ ես նէ, մի՛ յուսահատիր, մի՛ վհատիր, հապա յուսա՛, արիացիր և մի՛ ամաչիր Հայ եմ րսելու“...

Եւ ապա թերթը գառնապէս գանգատուում է հայոց օտարամոլութեան առթիւ... „Ռուսիա — ռուսերէն կը խօսին, Պարսկաստան—պարսկերէն, Թիւրքիա—տաճկերէն“... Ծանուցանում է վտանգը և ժխտաբուում... որ „5—6 տարիէ ի վեր, շնորհիւ մի քանի հայ մտաւորականներու, վարժարաններ կը հիմնուին և հայ աշակերտները հայերէն գրել-կարդալ ու խօսիլ սորվեցնելու կ'աշխատին“ *):

Մի ճառի մէջ, զետեղուած նոյն թերթի 1846 թ. 3 օգ.-ի համարում, — մի խանդավառ ներբող ուսման ու գիտութեան հասցէին... Դրանց մէջ է ազգի փրկութիւնը.

„Արթնցի՛ր, Հայոց Ազգ, այս մահահրաւէր տգիտութեան թմրութենէն, միաքդ բեր առաջին ունեցած փառքդ, որ հիմակուան թշուառութեան վիճակդ, որչափ լուսաւորիչ ազգերէն օրինակ առ... Դպրատուները պայծառ պահելու ջանք

*) „Հայաստան“, 27 յուլիս 1846 թ.։

բրէ, Հայկական լեզուն ազէկ մշակէ, օգտակար լեզուներ և ազատական գիտութիւններ ուսանելու հետևէ... ասոնցմով միայն կարող կըլլաս երջանկութեան վախճանը հասնիլ"...

Փիւսւթիւնը — գերագոյն գործոնը ցգիտութիւնն էր, որ քանդեց Հայաստանի տունը.

„Ի՞նչ բրաւ Հայոց տունն ուրոյ արիւնահանձ տգիտութիւնը... Բաւակա՞ն եղաւ, Հայաստա՞ն աշխարհ, բաւակա՞ն եղաւ այն անգութ բռնաւորին խրոխտ լուծին տակը չարաչար քաշած պանտխտութիւննիս, արթնցի՛ր, բա՛յց գրկաւուն սիրտդ, ժողուէ ցիր ու ցան եղած գաւակները. ահա՛ բախտիդ նշոյլը ծագող բարեպատեհ ժամ. ահա՛ գուարճալի օրեր գուշակող աքանչելի գարնան գունները, հալեցո՛ւր այն աստուածային հրովը երկնաբերձ լեռներուդ վրայէն պնդացեալ սառնամանիքը. կանանչագեղ զարդարէ բնութեան այն հրաշալի գեաերէն ջուր խմող դաշտերդ"... (14 դեկտ. 1846)։

Առաջին թոթովանքներն են հայրենասիրական հրապակագրութեան, առաջին ուժեղ յորդորները՝ դէպի ազգային ինքնաճանաչութիւն...

Իսկ ի՞նչ է „հայրենիքը".

„Այն տեղը, ուր որ մէկը աշխարհք կուգայ, ուր կայ իր նախնեացը նշխարներն ու գամբարանները. և այդ նախնեաց նահատակութիւններուն և ուրիշ բրած գործերուն յիշատակարանները"։ (Հայաստան, 19 հոկտ. 1846)։

Ի՞նչ է անհատի պարտականութիւնը առ հայրենիքը.

„Պէտք է, որ մարդս գիտնայ ազգին համար իր չահը ժուռնալ, իր ինչքը, առուցւածքը, իր կեանքն անգամ ազգին ազէկութեանը և պատուոյն նւիրել"...

Սակայն... *„մարդս իրաւունք չունի ազգին ազէկութեանը համար գէշութիւն մը ընելու կամ ուրիշի մը իրաւունքին դպչելու"...*

Այս վերջին յայտարարութիւնը — ժամանակակից ինտերնացիոնալիզմի, միջազգայնութեան ոգով—մի առակ

պատահար է, *accident*, որ գուցէ ակամայ դուրս է թռել հայ խմբագրի գրչի տակից, և որ յաճախ չի կրկնուում այնուհետև թիւրքահայոց մամուլի մէջ։

Դրա հակառակ՝ աստիճանաբար և *crescendo* շեշտուում է կրօնքի, երբեմն նոյնիսկ տարօրինակ, յարձակողական ագգասիրութիւնը — որ միանգամայն բնական է ազգային էւօլիւցիայի այն նախնական հանգրուանում — բազմանում են հայրենասիրական խանդավառող յորդորները, հոլովւում է հարիւրաւոր ձևերով այն մեծ, վերացական գաղափարը, որ դարձաւ այնուհետև ամեն մի թիւրքահայի նուիրական սրբութիւն, որի անունով երգւում է նա և այսօր.

— Ա Զ Գ Ի։

Հառերը — միշտ աւելի պաթետիկ, յորդորները — երբեմն շատ համարձակ ու մոլեգին, հեռագիրեր դուրս են կոչւում Արտիներէն ու Թորգոմներէն տաւերները, խօսում են „հայկական մեծագործ ազգոյն բնատուր ձիրքի“ մասին, յիշում են Տղիշէներին, Անյաղթներին, յիշում են „մարդկային ազգի խանձարուր Հայաստան աշխարհ“... Մի թիւրքահայ ճամբորդ, վերադառնալով Անիի աւերակներից՝ ողբ է կարդում և հրաւիրում իր հայրենակիցներին՝ վրէժ խնդրութեան (գլխաւորապէս, հայրենիքի ներքին թշնամիների դէմ)...

„Ո՛, ազնիւ հայոց ազգ, քաջապէս խորհէ վրէժ առնելու եղանակդ... Որչափ տակաւին պատիժ տաս նէ, արժանի է... Որդոց որոյ, կտակաւ ասանդէ մինչև յաւիտեան զանոնք խոյտառակել և պատժել և վրէժ պահանջել“...

„Հայաստան աշխարհ՝ իր ամեն փառքերէն զրկւած, իր

մեծութիւնները կորնչուցած, երկիրները կողոպտուած, իրեն բարձր Արարատեան գլուխը տրտմութեան ժուխ ու խաւար քողով ծածկուած"...

Ահա և մի խանդավառ յուշ ու ներբող՝ „Ցանն Արշակունեաց".

„Ո՛վ քաղցր անուն, Հայաստանեայց անցաւոր մեծապարծուխեանց հիմնադիր... քու փառքը ո՞վ կրնայ պատմել, ո՞ւր են քու գուկրներդ, ո՞ւր է քու անուանակիր ժողովուրդը քեզմէ մնացած... ո՛վ մնայորդք տանն Արշակունեաց" *)...

Մի յորդառատ լիրիզմ և մի ջերմ, կարօտակէզ հայրենասիրութիւն, որ յիշեցնում են սգաւոր Լէօպարդիի սքանչելի տողերը **).

O, patria mia!... Dove la forza antica?
Dove l'armi e il valore e la costanza?
Chi ti discinse il brando?
Chi ti tradi?... Dove cadesti o quando
Da tanta altezza in cosi basso loco?...

Բայց ահա հայկական ազատասէր հայրենասիրութեան ձայնը հնչում է նոյնիսկ Լէօպարդիի հայրենիքից... Համաեւրոպական յեղափոխութեան հզօր արձագանքը հասնում է վիեննեայի, փոթորկում է Ս. Պազարի չնաշխարհիկ անդորրութիւնը և մեծաւոր խուցերից դուրս է կոչում երիտասարդ աբեղային — ամենից զգայուն և ամենից բանաստեղծ — որ սկսում է անհանգիստ ականջ դնել Արևմուտքից ու Հիւսիսից տեղացող բօմբերին և ապա բանաստեղծական ու ռազմական մի վսեմ յափշտակութեան մէջ առնում է քնարը, ուղղում

*) „Հայաստան", 14 փետր. 1849։
**) *Leopardi: All'Italia,* (1818 թ.)։

իր վեհափառ և բոցավառ նայուածքը դէպի հեռու Արևելք, դէպի սարուկ, բազմաչարչար հայրենիքը և երգում.

Ի՜հ, աթափեաց, աթափեաց ազէ զարիխր,
Յո՛ւշ, յո՛ւշ քեզ Հայաստան,
. . . . . .
Նար ժողովուրդք ի վեր ի վեր ելցեն, իջցեն դու վայրիվայր
Նաբա տիարք ազատացեալք, դու հեգ ծառայ, սարուկ, գերի,
Աչխարհ ամեն հրճուեալ, դու յանմխիթար
Համակեալ սուգ *)...

Հայր Ալիշան էր, հայոց սիրեցեալ նահապետը։ Ապատամբութեան ալիքը տարածւում է դէպի հարաւ, ողողում է Իտալիան, սպառնում է վենետիկին... Ծուխբերը որոտում են և մարտի գոռ աղաղակը թնդացնում է հինաւուրց հանրապետութեան շքեղ ապարանքները։ Հայր Ալիշան ականատես է այդ բոլորին, նրա դիւրավառ սիրտը ցնցւում է և հրդեհւում, նա փչում է իր սրինգը և հնչեցնում իր աննման ռազմերգի որոտընդոստ բոմբիւնները (1849 թ.)...

Հապ՝ օ՜ն ի զէն, գունդագունդ
Հեռեալ ի պար թնունդ ի թնունդ
Ի զէն ի վրէժ օ՜ն անդր յառաջ
Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ. . .

Հայաստանի անմխիթար զաւակի վշտաբեկ կուրծքն է, որ գոռում է, մռնչում և գունդագունդ ի զէն, ի վրէ՜ժ հրաւիրում „հայրենավրէժ հայկազունները“, „արի արանց մանկունքը“...

Անա և Մեծ ու Փոքր Մասիսի յուզիչ դիալոգը (երկխօ-

*) „Բանք վահրամայ Պահլաւունւոյ“ ուսանելորից, գրուած 1848-ին, փետրուարեան յեղափոխութիւնների անմիջական ազդեցութեան տակ։

սութիւն)—մի հոյակապ յղացումն, կատարուած նոյն վիճակական անցքերի ազդեցութեան տակ (1849 թ. մայիս 2).

Աւագ Մասիսը—գոռոզ, ահեղ և յանդուգն, վառուած հրաբխային, աշխարհասէր տրամադրութեամբ. փոքր Մասիսը—երկչոտ, հեգնող ու յոռետես, միանգամայն յուսահատած Հայաստանի ապագայի վերաբերմամբ. Աւագ Մասիսը ինքը Ալիշանն է, ապստամբութեան գաղափարի խորհրդանիշը և նրա մոլեգին արծարծողը, որ պատրաստ է խորտակելու ամենահաւատ խոչընդոտները և վերադարձնելու հայրենիքին կորսուած փառքը. Նա գալոց անխուսափելի „ցնցումների“ գուշակն է, խորաթափանց և լաւատես մարգարէն. փոքր Մասիսը հակայեղափոխական տրամաբանութեան թմբգժանն է, սարկութեան և անշարժութեան պատգամախօսը, որ ի վերջոյ ընկճւում է, յետ նահանջում աւագ եղբօր որոտաձայն, անդիմադրելի շանթերի առջև.

Ինձ մոխիկ արէք, լերունք դուք հաւասար,
. . . . . .
Ես՝ Արարատեան եմ Աւագ Մասիս
Ազնիւ քան զամեն լերունք աշխարհիս...

Եւ ցոյց է տալիս իր դժոխային կուրծքը, սպառնում է կրակ ու բոց ժայթքել, հեղեղել ամբողջ շրջապատը, „սասանեցնել զԱրարատն Հայոց“ և վա՜յ է գոռում, ով դէմ կը կանգնի...

Պրոսեր եղբայրը հեգնում է այդ ոլիմպեան յոխորտանքը, հասկացնելով, որ ամեն ինչ վերջացած է, որ Մասսի հսկայ և չքնաղ լուրգը սոսկ մեռելութեան մի յուշարձան է...

Ձեմ, չեմ այլ փառաց ու բաղդի նշան,
Այլ մեռելութեան հայոց ահարձան.
Գան գրնան դառնան այիք գեաերուն
Չի դառնար որդոյ՝ պարծանք հայերուն։



Հայր Ալիշան

Աւագ Մահիսը.

Մի՛ այդպէս ասիր, Սարուխ, մի՛ այդպէս.
Մի՞թէ քան գԱւագ դու լաւ կր տեսնես.
Ես իրք կը տեսնեմ քանց քեզ առաւել,
Ցերեակն Հայոց փառքն չէ կորել

Թայց... ոքո դուքսը ձիւն է, ներսը՝ պաղուկ քար"—
առարկում է Սարուխը։

Ով խոր կռնչի, թող պինդ խոր մտնու...

Պատասխանում է աւագ եղբայրը և յիշեցնում է իր հրաբխային ծագումը.

Գիտես թէ մարած է գինչ հին կանթեղ
Բայց թէ տամ քըշիկ մի բուքուրդի դեղ՝
Ցանկսած պաշտերդ ամեն ի ման գայ,
Դու այլ հետ լերանց դողաս գինչ սըզայ...
Թէ ուզենամ նոր կանգնեմ ես սարեր,
Յարտգած դեսպան գրկեմ բարկ քարեր...

Ահա և պատուէրն կուռքի վերջին խորհրդաւոր պատգարտութիւնը.

Ինձ մոխիր արէք լերունք դուք հաւատար...
. . . . . .
Երբ յետ դարերու առաջին անգամ
Ես Ասագ Պատիս ներսուց որոտամ,
Կանչեմ ու շնչեմ, արձակեմ ծուխ բոց
Աստանդրնեմ գԱրարատն Հայոց
Այս բլրի նշան հայոց աշխարհին,
Թէ գայ ժամանակ, որ գան փառքն այլ հին...

Այդպէս էր պրոտում հայոց պատմութեան խթզան երգիչը։ Ոչ ոք, գուցէ ոչ մէկը հայ բանաստեղծներից այնքան յուզիչ շեշտերով չի լացել հայրենիքի աւերակները, նրա մարած փառքերը, և ոչ ոք այնքան ուժով ու մոլեգնութեամբ, այնքան սուրբ, անկեղծ ոգևորութեամբ չի հնչեցրել այդ փառքերի յաղթական քամբը...

„Աւարայրի բլուրը“, մեր պատմութեան գեղեցիկ դրւագների երգիչը, մեր սարերի ու ձորերի ոլիմպիական սրընգահարը իր սրբազան խանդավառութեամբ կոչնք ներշնչեց այդ սարերին ու ձորերին, այդ թափե-

րին, աւերակներին և իր սրտառուչ ձայնով — ժերթ յուսահատ և լալկան, ժերթ զարթ ու ժոլեգին — լացացրեց ու ոգևորեց սերունդներին, յոյս ու խրա-խոյս ներշնչեց վիթխարի փլատակների հանդէպ, դուրս կոչեց այդ փլատակներից Հայաստանի ոգին, արծարծեց հայրենիքի և ազատութեան պաշտամունքը և ձգտեց յաղթահարել վախի, յոռետեսութեան ազգադաւ հոսանքը, երգելով բարձրաձայն, ինքնավստահ.

Հայո՜ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել...

Ինչպէ՜ս պիտի ցաւէր, կսկըծար այդ ազնիւ, գերազգայուն սիրտը 1895—96 թուականներին, երբ Զուլումի համայնաջինջ արհաւիրքում խաւարել էին ազատարար «գարունի» վարդագոյն արշալոյսները...

Դառն էր, անտարակոյս, Հայոց Նահապետի յուսախաբութիւնը, ի՞նչ արած... Հայր Ալիշանը այնուամենայնիւ, չէր կարող նզովել հայկական ըմբոստացումը, որ ինքն էր կոչել այնքան խանդագին ու պաղատագին, որ ինքն էր նուիրագործել իր հոյաշունչ, սթափեցուցիչ քնարով, իր գոռ մռնչիւններով... Այդ ըմբոստացումը, այնուամենայնիւ, ճնում է անպարտ՝ թէ խղճի, թէ մտքի առաջ, նա ճնում է բնական և բանական իր ծագման ու զարգացման մէջ, ինչպէս որ բնական էր Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը, չնայած Ութսնապիէռեան Տերրօրի խօշակոծ արհաւիրքներին, արեան հսկայ շատրուաններին, հոգեպարար անմեղների գլխատումներին և, ի վերջոյ, յաղթանակող ռէակցիային...

Եթէ կայ հայ յեղափոխականի մեղսակցութիւնը Հայ-

կական Ջուլֆայի մէջ, ապա Ալիշան և Խրիմեան—երկուսն էլ ընդվզումի և ապստամբեան հոյատիպ շեփորողներ—բաժանում են այդ „մեղսակցութիւնը“, բաժանում են ըմբոստացման հետևանքի պատասխանատուութիւնը՝ Հայ Յեղափ. Դաշնակցութեան հետ, Հնչակեան կուսակցութեան հետ, Արժենական կուսակցութեան հետ։

Եւ... կարմրելու տեղիք չունին այդ պաշտելի դէմքերը, ընդհակառակն հպարտութեամբ ժողովրդային ծովածաւալ տառապանքի ու վշտի հանդէպ, կատարել են այն ձևով, ինչ ձևով թելադրել է իրենց խիղճը և հայաշխարհային պատմութեան ձայնը։

IX

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԾԱԲԺՈՒՄԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Գ.

ԹՐԻՄԵԱՆ ԵՒ «ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ»Ի

Պօլսահայ մամուլը եւ հայասացնդու վիճակը. — Բաղաքագիտական մարզանիշեր. — Խ. Միսաքեան. — Ազատամտութիւն եւ կրօնական ռադիկալիզմ. — Յ. Ոսկան. — „Լուսաւորեալ“ եւ „խաւարեալ“. — Կուսակցական պայքարի այլասեռումը. — Մատնութիւն եւ պրովոկատիօն. — Մամուլ Հայաստանի մէջ. — Խրիմեան եւ „Արծուի Վասպուրականի“. — Ոդբ եւ բողոք — Ալիշան եւ Խրիմեան. — Վանեցի առաքեալը մեծ հայերի շարանի մէջ. — Դրժումը Քրիստոնէական համակերպութեան. — Խրիմեան, իբրեւ միջնակէս տանջուող եւ մաշառող հայ ազխարհի. — Վարագի „Արծուիկներ“. — Թոխմախեան, Սրուանձտեան, Րաֆֆի. — Հայկական դժոխքը 50-ական թուականներին. — Խրիմեանի Մուսան եւ հայոց ապստամբութեան գաղափարը. —

Մամուլը ընդհանրապէս գժգոյն էր և աղքատ Արտաքուստ՝ պատկառելի, ներքուստ՝ անբովանդակ պարթեւական հրատարակութիւնները՝ բաւական խոշոր ու ծանրլուն, բայց մեծ մասամբ անկենդան. Զքաւո-

րութիւնը, ապահովաբար չէր գալիս տիրապետող ոգիից, մաժուլի ու մաքի անազատութիւնից, այլ գալիս էր... գրողներից։

Հայ ժողովրդական կեանքը տեղ չունէր Կ. Պոլսի, Զմիւռնիայի այդ հայաբաստրան մաժուլի մէջ *); գաւառացու ծով վշտերի ու խոհերի մասին — ոչինչ, կամ գրեթէ ոչինչ։

Բայց դուք կը տեսնէիք ամեն օր այդ մեծածաւալ թերթերի մէջ քաղաքագիտական երկարնաշունչ յարձակումներ — արևմտեան այս կամ այն դէպքի կամ անձի մասին, — ուր գիպլոմատ-հրապարակագիրը անօգուտ տեղը սպառում էր իր գիւանագիտական հանճարը... Այդ մարզանքները չունէին գէթ ինքնուրոյնութեան առաքինութիւնը, նրանք գրեթէ միշտ ծաղկաքաղ էին եւրոպական լրագիրներից։

Գրիգոր Արծրունին իրաւունք ունէր, երբ — տակաւին 1872 թուականից — իր „Մշակ“ի մէջ այնքան յաճախ անգրագառնում էր պօլսահայ մամուլի յուսահատեցուցիչ գաստարկութեան վրայ...

Պաթեթիկ ճառեր ու յօդուածներ ազգասիրութեան ու հայրենասիրութեան մասին — որքան կուզէք, բայց դիօգենեսեան լապտերով կը փնտրէք լուրջ, բանաւոր ուսումնասիրութիւններ հայ ժողովրդի կենցաղի մասին, եթէ ոչ նրա կրած տառապանքների (քնազդային երկչոտութիւնը կարող էր արգելք լինել դրան), գէթ այնպիսի խնդիրների մասին, որոնք այս կամ այն ձևով

*) Խոշոր օրգաններից էին „Արշալոյս Արեւելեան“, „Հայաստան“ և „Մասիս“, առաջինը Իզմիրի մէջ։

շշափում էին այդ ժողովրդի բազմադարեայ կեանքը, նրա առօրեայ նիստ ու կացը և նրա առօրեայ յարաբերութիւնները իր ցեղագրական միջավայրում, իրեն շրջապատող տարրերի հետ։

Այդպէս էլ Ներսէս պօլսահայ ժամուլը իր գրեթէ ամբողջ գոյութեան ընթացքում, նաև Ազգային Սահմանադրութիւնից յետոյ ուսումնասիրող ոգին, հայրենի երկրի ու ժողովրդի գարաւոր պատմութիւնը, այդ պատմութեան փիլիսոփայութիւնը որոնող, խուզարկող ու լուսաբանող միտքը գրեթէ իսպառ բացակայում էր պօլսահայ մտաւորականութեան մէջ, անգամ այն մտաւորականութեան՝ որ եւրոպական դպրոց էր անցել, որ առաւօրէն բերել էր իր հետ համալսարանական դիպլոմներ։

Հեռուէն-հեռու, մի Զօրայեան, մի Միսաքեան, մի Ց. Ոսկան բերում էին երբեմնապէս իրենց „ժօգեռն“, քննադատական մտքի շողը, ապում էին մի քանի լուրջ յօդուածներ անտեսագիտութեան, համաշխարհային քաղաքակրթութեան կամ ազատ մտքի էւօլիւցիայի մասին, այն էլ ընդհանրապէս վերացական, ակադէմիկ ձևով, որ չէր կարող տպաւորել հայ մտաւոր կեանքը, չէր կարող գրգռել հայ ուսումնասէր երիտասարդութեան ուշադրութիւնը, ալէկոծել նրա հոգին։

Եւ, սակայն, այդ մի քանի մտաւորականների թղթակցութիւնները ու յօդուածները գրեթէ միակ գնահատելի ժառանգութիւնն է այն հեռաւոր օրերի հայկական հրապարակագրութիւնից... Նրանց վրայ է, որ փոքր ինչ հանգստանում է մեր, յետնորդների, խու-

զարկու և հետաքրքիր միտքը։ Ցիսունական թուականների վերջերում „Մասիս“ի մէջ հրատարակուում է Խաչատուր Միսաքեանի շահեկան յօդուածաշարքը, գրած Պարիզից, „Քաղաքակրթութեան Առեղծուածը“ խորագրով։ Ուսումնական հնդինակը շեշտում է այն ահագին կարևորութիւնը, որ ունին ազգերի զարգացման պրօցէսի մէջ լեզուն, գրականութիւնը և պատմական աւանդութիւնները և հաստատում է, որ ոչ մի բռնակալական հալածանք չէ կարող ջլատել մի ազգի ինքնուրոյնութիւնը... Հին ժամանակներում — ասում է — պատերազմներն ու ասպատակութիւնները կարող էին ջնջել ամբողջ ազգեր, ոչնչացնելով նրանց մատեաններն ու թղթերը, պատմութիւն, լեզու, գրականութիւն և այլն,— սակայն նոր ժամանակում այդ այլ ևս անհնարին է։

... Այս դարուս սկիզբը բոլոր Եւրոպայի երևոյթն էփոխելէնի ըրած ասկալի և երկարատև արշաւանքը ոչ պակաս երկիրներ դլդեցուցին, ոչ պակաս քաղաքներ հրով ու սրով հիմնայատակ ըրին, ոչ պակաս ժողովուրդներ կապտեցին, կողոպտեցին, ոչ պակաս մարդ սատապեցուցին ու կատրեցին, ոչ պակաս գործարաններ ու արուեստարաններ կործանեցին ու քանդեցին և ոչ պակաս յիշատակարաններ աւերեցին կամ ջնջեցին։ Եւ, սակայն, ասոյդ Եւրոպան իր փլատակոյտ ու մոխիրներու տակէն հզօր յարեաւ...

Եւ ասպա վեր է հանում տպագրութեան, մասնաւորապէս հայոց գերը։

... Մամուլը — արգասաւորիչ, անմահարար զօրութիւնը... աշխարհքը շարժող բանին (խօսքի) ինքնակալութիւնը հաստատող, մարդկային պատիւը պաշտպանող, պարտեայց և իրաւունքի սահմանները որոշող, գերութեան կապանքն օրէօր խզող, մարդը հաւասարի համար կրակը դնողին բռնակալութիւնը կործանող, մարդուն անձնիշխանութիւնը, խիղճը և ազատութիւնը հրատարակող և ապահովող զօրութիւնը...

Եւրոպայի այս օրւան բարգաւաճութիւնը տպագրութեան շնորհիւն է... և ւթէ առոր մեր ազգայիններն ալ կը հաւատան նէ, կը հարցնենք, թէ տպագրութիւնն ի՞նչ կ'ընէ մեր մէջ...

Հայոց մէջ ալ պէտք է որ իմացական մարդը քիչ մը խլրտի, շարժի ու առաջ երթայ... Ազէկ գիտնանք, որ ազգային շարժման թաւփ ուղղը տպագրութիւնն է *)...

Երբեմն-երբեմն պօլսահայ հրատարակագիրը շօշափում էր — թռուցիկ, միջանկեալ ձևով — ընկերական խնդիրներ ևս, դասակարգերի փոխ-յարաբերութիւններ, հարստութեան ու էքսւորութեան պրօբլեմներ ևայլն— շօշափում էր և լուծում երկու խօսքով, արևմտեան բուրժուազիայի աւետարանից փոխ առած պատրաստի բանաձևերով: Այդպիսի մի պրօբլեմ էր առաջադրել „Մասիս“ օրագրի առաջին տարւոյ (1852 թ.) առաջին համարի խմբագրականը.

Մենք կը կարծենք, որ ազգի մը ներքին աղքատութեան ներմը չքացնելու համար մէկ կողմէն լուսաւորութիւնն ու ճարտարարուեստը անոր մէջ տարածելու է գործոցներու միջոցաւ ու մէկ ալ կողմէն բարոյական հիմնարկութիւններով հասարակութեան մէջ առաքինութեան, աշխատասիրութեան, խնայողութեան ու բաւականաւորութեան ոգին տարածելու է:

Մենք կը կարծենք, որ ազգի մը վերին, միջին ու ստորին կարգերը իրարու հետ անանկ սերտ կապակցութիւն մը ունին, որ մէկ կարգին աղէկութիւնը կամ դէշութիւնը հարկաւ միւսներուն ալ կը հասնի... Վերին կարգի պաշտօնն է հոգալ, խնամել և հսկել. միջին կարգին պաշտօնն է՝ հնազանդիլ ու գործակից ըլլալ. ու ստորին կարգի պաշտօնն ալ՝ անսալ և երախտագէտ ըլլալն է...

Դասակարգային յարաբերութեան նոյն նահապետա-

---

*) „Մասիս“, 1859 թ. 31 գեկտեմբեր:

կան ըմբռնումն ենք տեսնում „Հայաստան“ լրագրի հետևեալ պարբերութեան մէջ.

Ազգի մը մէջ երկու կարգ ազգայինք կան: Մէկը թէ հայրենեաց եւ հայրենի կրօնի և օրինաց պաշտպանութեանը համար ազգի կողմանէ ընտրուածներն են. և միւսը ան պաշտպանութիւնը յանձնառու բլլող և այն պաշտպանութեանը տակը գանուողներն են *)...

Քանի աւելի ենք ծանեցնում վաթսունական թուականների մեծ շարժման, այնքան աւելի է կենդանանում մտածողը, այնքան աւելի է շեշտւում հայ առաջադէմ մտաւորականութեան **պատկերը** (արժատական գաւանանքն ու տրամադրութիւնը) թէ քաղաքական և թէ սոցիալական ու կրօնական խնդիրների մէջ.

Յ. Ոսկան նոյն „Մասիս“ի մէջ ողբում ու անիծում է, որ կրօնի ու կղերի խորական ազդ շնորհիւ, ազգը **պառակտուած** է (լուսաւորչական, բողոքական, կաթոլիկ) և „հայազգի եղբայրքը տարազգի ըլլալու չափ իրարմէ կը խորշին“...

Ի՞նչ էր ժողովուրդը անցեալին մէջ... խոպան բնաւորութեան խումբ մը, զոր խիստ դիւրին էր, իբրև աչքը գոց ջոլիք մը վարել և նիւթականով մը գոհացնել...

Այժմ հրապարակ է իջել առաջադիմական երիտասարդութիւնը և բաց է արել ժողովրդի աչքերը...

Այժմ ժողովուրդը կուզէ հաւասար՝ առանց գժտութեան, ազգութիւն՝ առանց խորութեան, գաւառապաշտութիւն՝ առանց մոլեռանդութեան...

---

*) „Հայաստան“, 24 օգ. 1846 թ.:

Եւ Ոսկան յորդորում է հետապնդել միայն ու միայն ճշմարտութեան.

Ճշմարտութիւն՝ որ բանտի մէջ չի գալարիր, աքսորի մէջ չի վհատիր, հողի տակ անգամ չի մեռնիր...

Չափազանց է այդ կրօնական բագիկալիզմը, հեռու է նա աթէիստական այն մեծ, գայթակղեցուցիչ հոսանքից, որ յիսունական և վաթսունական թուականներին Ֆօյեռի, Բիւխների, Դարվինի և այլոց ժղումով տարածւել էր եւրոպական ցամաքի վրայ, նւաճել էր ազատութեան ծարաւի մտքերը՝ մանաւանդ բնագիտական երկրների մէջ։

Այնուամենայնիւ, հայ ուսուցչասէր երիտասարդութեան այդ երկչոտ ու հեղհեղուկ ազատամտութիւնն անգամ (կրօնական հարցերի մէջ) փոթորիկ էր յարուցել հայ կղերի և ամբողջ խաւարամիտ բանակի մէջ։ Ազատամիտները հալածւում էին, որպէս „անհաւատ“... Եւ այդ անիրաւ ամբաստանութեամբ ձգտում էին մէկէն ի մէկ չախչախել, չէզոքացնել հայ նորաբողբոջ առաջադիմական միտքն ու հոգին։ Երկու տարրեր — դեմ յանդիման. „լուսաւորեալք“ և „խաւարեալք“, Ոսկան անողորմ է վերջիններին հանդէպ.

Ո՛վ կղերդ ժողովրդեան հայոց, եթէ քու տգիտութիւնդ կամաւ չէ, այլ ստիպողութեան ցեղէն՝ ի վերայ քու Սատանէ՛ թմրութենէդ և փսխանակ քո մէջդ եղող քանի մը ուսեալները իսպառ իրեն անհաւատ բամբասելու, նախ զանոնք քեզի ուսուցիչ կարգէ, ո՛ն սրի՛ և ճանչցի՛ր քու պարտականութիւններդ... (Մասիս“, 11 Հոկտ. 1861)։

Պայքարը սաստկանում էր հետզհետէ երկու հակա-

մարտ բանակների միջև. միևը — առաջադէմ փոքրամասնութիւնը, որ Ազգին ու Հայրենիքին երկրպագելով հանդերձ, որոշել էր առաջ ընթանալ համաձայն գիտութեան և ժամանակի պահանջների, խորտակել բորբոսնած ռուտինը, աւանդապաշտ և անապաշտ ոգին, միւսը — պահպանողական մեծամասնութիւնը, որ ձգտում էր անխախտ պահել իշխող դասակարգերի հինաւուրց առանձնաշնորհումները, կրօնի ու կղերի տարամերժ նախիշխանութիւնը (*hégémonie*):

Կուսակցական պայքարը այլասեռուեց շուտով. տեղացին մտնութիւնները ու գաւառական գաղտաստուքները լոյսի երգեսալ թշնամիներն սկսեցին լուրթ տարածել, թէ հայ ազատամիտ երիտասարդութիւնը ոչ միայն անհաւատ է, այլ և անհաւատարիմ, քաղաքականապէս անվստահելի, թէ նա միտք ունի վերականգնել „հայկական թագաւորութիւնը“...

Երիտասարդները կատաղում են այդ անորակելի ինսինուացիաների հանդէպ, խստօրէն պահանջում են բացատրութիւն, ոմանք նոյնիսկ սպառնում են տերրօրի տալ մտանիչներին...

Այո՛ Հայդի միայն երևան եկաւ ազատամիտ, առաջադիմական ոգին հայ մտաւորականութեան որոշ խաւերում, Հայդի միայն այդ տարրը գործունէութեան ասպարէզ նետեց նորագոյն աշխարհահայեացքի նշանաբաններով, — և ահա մտնիչութեան վտիտի պատուհասը ցցուեց ազգային վերածնութեան ռահվիրաների դէմ։

„Հայ մտաւորականութիւնը անհաւատ է, անաստուած է, նա կուզէ քանդել ազգ ու եկեղեցի, նա դաւադրում է պետութեան դէմ, նա ձգտում է վերահաստատել անկախ Հայաստան“...

Այդ ազգադաւ ամբաստանութիւնները հրապարակ են գալիս այնուհետև պարբերաբար — թիւրքահայ և ռուսահայ հասարակական էւօլիւսիօնի մէջ — ամեն անգամ, երբ հայ մարքի առաջադէմ հոսանքը համարձակ գրոհ է տալիս հին, փտած սովորութիւնների ու հաստատութիւնների դէմ. նոյն կոչերն ու ահազանգը հընչեցին ռուսահայ „խաւարեաւների“ բանակից — „Մեղու Հայաստանի“ից և յաջորդական, գաղափարակից օրգաններից — ընդդէմ Գրիգոր Արծրունու և նրա վարած դպրոցի. իսկ երբ յետոյ բեմ եկան — կեանքի լայն ու փոթորկուղ կրկեսի մէջ — նոր, աւելի ձախակողմեան տարրեր, նոր, աւելի արմատական ու յեղափոխիչ մի հոսանք ի դէմս „Դաշնակցութեան“, որ ազատ օրերում բազմեց տիրականօրէն հայ կեանքի բոլոր լեգալ և ոչ լեգալ հաստատութիւնների մէջ, այն ժամանակ նախկին „լուսաւորեաւները“ մի անակնկալ յետաշրջումով մղեցին դէպի „խաւարեաւների“ շարքերը, գրեթէ իսպառ լուծուեցին նրանց հետ... և նոյն զազրելի գաղտասուքները ընդդէմ այդ նոր յեղափոխական երիտասարդութեան մենք լսեցինք այդ միացեալ օբսկուրանտների շարքերից։

Ծխունական և վանքունական թաղականների հայ ազատամիտ ուսումնականները յուսահատ կատաղութեամբ խարանեցին այդ յոռի բարքերը, որոնց մէջ

այնքան խոր արմատ էր ձգել ապականութեան ու ազգութացութեան թոյնը և եղբայրագաւ ու պառակտիչ բնազդը եւ այն ժամանակից իվեր հայրենասիրական ճառերի ու պաթեթիկ յօդուածների ժէջ յաճախ էր հոլովւում տարածւած հայեացքը, որ հազար տարիներից իվեր շեշտել էին հայ մատենագիրները ծանօթ խօսքերով. „Հայք ոչ միաբանին“. „Հայոց հոգին ընկերական չէ“. „Անմիաբանութիւնը կործանեց Հայոց ազգը“...

Ւսելի բանասեղծ, քան պատմութեան փիլիսոփայ՝ մեր մատենագիրները, առանց խորը մտնելու անցքերի պատճառների ժէջ, իրաքանչիւր մի ազգայինջ աղէտի հանդէպ „անմիաբանութիւնն“ են պատճառ բռնել և լացել ու խարանել անսփոփ երեմիականներով ու շանթուռ մեղադրականներով։ Եւ սակայն, այդ հայեացքը իր հասկանալի չափազանցութեամբ հանդերձ ունի, անշուշտ, իր հայկական *raison d'être*-ը. և այդ պառակտիչ բնազդը, այդ ալլամերժ, անհատապաշտ ոգին, հայ գործիչի յաճախ անսանձ, անարշիկ ու խռովարար ինդիվիդուալիզմը, հայ հասարակի ներքին շաղուանիւթի պակասը, ընկերական զգացումի ծայրայեղ թուլութիւնը պիտի վեր հանեն ապագայում — ցաւով ու անէծքով — իրենց գործնական քարոզների կամ տեսական մարզանքների ժէջ՝ հայ վերածնութեան նորագոյն առաքեալներն ևս, — Նալբանդեան, Րաֆֆի, Պատկանեան, Ւրծրունի և ուրիշներ, իսկ յեղափոխական պարագլուխներից՝ Ֆօրթուգաթեան և Քրիստաֆոր Միքայէլեան։

***

Վատ տարրերը ժառնութեամբ ու այլ ցած միջոցներով գործում էին տուների մէջ, ձգտելով վարկաբեկել նորածիլ ազգային սահմանադրութիւնն ևս, որ հռչակում էին իբրև օճախ անհաւասարութեան, ոամկավարութեան ու յեղափոխութեան... Այդպէս է վկայում „Մասիս“ թերթը իր 1861-ի 17 օգոստ. համարի մէջ։

Յեղափոխութեան օճախ — մի հաստատութիւն, որ տակաւին չէր էլ կերպարանաւորել և որի միակ նպատակն էր՝ բարեկարգել դպրոցները, հիւանդանոցները, վանքերը...

Զարմանալի չէ, որ շուտով մեր ներքին տարրերի թշնամիներին ձայնակցելով թիւրքական աշխարհում իսկ, պաշտօնական կամ մասնաւոր շրջաններում երևան եկան ճշմարիտ պրօվօկատօրներ, ամեն տեսակ „գլգուխ գործոկալներ“, որոնք սկսեցին զարկել ահազանգը, տարածել ստայօգ ու սենսասիօն լուրեր „հայերի ռազմական, ապստամբական պատրաստութիւնների“ մասին... գեռ չիտունակա՞ն թուականներում...

Այդ մասին մի քանի ուշագրաւ տեղեկութիւններ գտնում ենք այն ժամանակւայ հայ և օտար մամուլի մէջ։

1854 թուին, Ղրիմի պատերազմի ժամանակ, մի օր Իզմիրից հեռևեալն էին գրում պօլսի մէջ հրատարակուող *Le Journal de Constantinople* թերթին.

Կը հաստատեն, թէ Մէնէմէնի (Իզմիրէն 5 ժամ հեռու գիւղ մը) հայոց եկեղեցւոյ մէջէն պահւած զէնքեր գտնուեցան. բայց գեռ չենք գիտեր, թէ այս զէնքերը պահողները գէմ ի՞նչ միջոցներ ձեռք առնուեցան, բայց սրտմտմամբ հայերը կը պնդեն, թէ յոյները իրենց մէջ գաղտուկ բերեր պահեր են զանոնք իրենց եկեղեցւոյն մէջ...

Հայ շրջանները դող է ընկնում եւ անմիջապէս Իզմիրի „քաթեժիտ ազգայինները“ բողոք են յայտնում կուսակալին և հետևեալ գրութիւնն են հրատարակում տեղւոյն *Impartial* թերթի մէջ.

Այս տողերը ի՞նչ դիտաւորութեամբ գրուած են արդեօք՝ Ո՞ր փաղաքշին անկիւնէն ժողված են այս չարակամ զրոյցները, որ ամենևին հիմ չունին։ Վերհափառ սուլթանին օգոստափառ անձին և անոր կառավարութեան համար հայոց ազգին ունեցած զգացումները... եւայլն։

Ջո՞ր դի երկիւղը դեռ այն ժամանակ դամոկլեան սրի պէս կախուած է եղել հայոց գլխին... Ահա թէ ինչ էր գրում „Մասիս“ը 1854 թ. 4 նոյեմբերի իր առաջնորդողի մէջ.

Ժամանակէ մը ի վեր ազգերնուս թշնամի մարդիկ անխիղճ չարաժուժութեամբ և յանդուգն լրբութեամբ ազգերնիս բամբասելու և սամանեան բարեխնամ տէրութեան առջև անոր վաղժամանակեայ հաւատարիմ հպատակութեան անարատ համբաւը կտրելու աշխատելով՝ թէպէտ կայսերական լուսաւորեալ կառավարութիւնը հայոց ազգին բնաւոր հեզ և տիրասէր բնաւորութիւնը լաւ կը ճանչնայ, այսուամենայնիւ, Սրբազան Պատրիարք Հայրը պատշաճ դատեց յատուկ տեղեկագրով մը բողոքել Բարձր Դրան...

Սուլթանը, տեսնելով հայ հասարակութեան այդ ծայրայեղ դիւրագրգռութիւնը, վստահութիւն է յայտնում հայ ազգին, պատրիարքը կոնդակ է գրում այդ առթիւ և մի կիրակի օր նա կարդացուում է ս. պօղոսի հայ եկեղեցիներում...

Անպատմելի ուրախութիւն պատճառեց ժողովրդեան և հանդիսաւոր, ջերմեռանդ բարեմաղթութիւններ վառն պահպանութեան անդին կենաց մեր արդարասէր Ինքնակալին, որուն հայրախնամ կառավարութիւն այսչափ գութ և սէր կը ցուցնէ Հայոց ազգին վրայ...

Ս. Պօլսի հայութիւնը և մանաւանդ ազգի երեսելի-
ները գոհ լինելու պատճառ ունէին, բայց մենք կը
տեսնենք քիչ յետոյ, թէ ինչ էր ներկայացնում հայ
ժողովրդի իրական վիճակը... Հայաստանի մէջ,


Շշուկները, կասկածները, „հայկական ապստամբու-
թեան“ վտանգը և նրա առթիւ բարձրացած ալարմը
անհիմն էին, անտարակոյս, „հայոց ազգի հեզ և տի-
րապէս բնաւորութիւնը“, արդարև, անժխտելի մի իրո-
ղութիւն էր, որ շեշտւում էր Հայաստանի բովանդակ
տարածութեան վրայ։ Այն ժամանակ, երբ բալկանեան
մի շարք ժողովուրդներ համակւել էին ազատութեան
ու ապստամբութեան հոգիով, ոմանք արդէն ազատւել,
ուրիշները պատրաստում էին իրենց ազատագրումը, երբ
եւրոպական լախտի հարուածները ընդհատ-ընդհատ շա-
րունակում էին տեղալ „Հիւանդ Մարդու“ մէջքի վրայ,
երբ, չնայեած Ղրիմի պատերազմի յարուցած վայրկե-
նական լաւատեսութեան՝ այդ հիւանդը դատապարտւած
էր անխուսափելի և աստիճանական անդամահատման,—
օսմանեան հայութիւնը, ի գէմս իր առաջաւոր ու ազ-
դեցիկ տարրերի, Ս. Պօլսի հասարակութեան, աղօթքներ
և հոգու հպատակութեան ուղերձներ էր առաքում վե-
հապետին, կեղծօրէն—գուցէ և անկեղծօրէն — հռչա-
կում էր նրա հայրախնամ կառավարութիւնը և հայ
ազգի երջանիկ կացութիւնը... Իսկ Ս. Պօլսի հայ մա-
սունը, որ խանդավառ առաջնորդողների մէջ իսկ ջա-
տագովում էր սուլթաններին, զաքարէական պապան-
ձուհի էր ցոյց տալիս գաւառական հայութեան անլուր

տանջանքների նկատմամբ, հայ թերթերը բացարձակապէս անգիտանում էին Հայաստանն ու հայ ժողովուրդը, գաւառական մշիհնաւոր ու աշխատաւոր ընդհանրութիւնը. բաւականանալով ազգասիրական պոեթեական և պլատոնիկ կոչերով, ակադէմիական ընդհանրապէս չոր ու ցամաք տեսութիւններով և անդադրում բանակութիւններով „Հայաստանեայց առաքելական եկեղեցիի“ շուրջ...

Մի ձայն միայն հնչում էր՝ բարձր ու խրոխտ՝ այդ վեհերոտ, մեղկացուցիչ լռութեան մէջ, հնչում էր մարդկային արժանապատուութեան լիակատար դիտակցութեամբ, առանց քնաւ տոգալու, շոյելու, երկրպագելու, առանց քնաւ վարագուրելու Մեծ Համբի, Ժողովրդի արիւնահոս վէրքերը, հայկական արիւնաներկ ու անիծակուռ դժոխքը... Ձայնը հնչում էր վաստուրականից, վարագայ բարձունքներից, ուր թառել էր Արծիւը գաւառեներգեան մեքենան շալակած և ուսկից նա թափահարում էր անդադար իր հզօր թևերը, արձակում էր իր սուր ճիչը դէպի հայոց աշխարհի մշուշապատ հորիզոնները, լալիս էր իր հարազատ ժողովրդի հետ, մարմնացնում էր նրա տանջանքն ու նահատակութիւնը և շեփորում նրա յուսահատ բողոքը խաւարի ու բռնութեան հաժատարած ուժերի դէմ։

Խրիմեանն էր Ա՛յն ժամանակւայ հայութեան խիղճը, նրա իղձերի սգաւոր և ցաւատանջ թարգմանը։ „Վաստուրականի Արծիւը“ գուցէ միակ յեղափոխական իրողութիւնն էր հայկական հորիզոններում, միակ օրգանը հայրենիքի մէջ, որ նրա անհամար փլատակները ողբալով

Հանդերձ, կուբի, ըմբոստացման հրաւէր էր կարդում նոր սերունդին, ողբն ու բողոքը հիւսւում էին մի ցաւոտ ու միալար ազազակի մէջ, որ բարձրանում էր վարագի անշուք տպարանից, գնում էր հեռուն, մինչև Պօլիս,



Խ ր ի մ ե ա ն

Կովկաս, Պարսկաստան, խօսում էր ամենուրեք բուն երկրի, ժողովրդի ցաւերից, տանում էր ամենուրեք հայրենեաց սարերի ու հովիտների բուրմունքը, լցնում էր սրտերը հայրենասիրական մի ջերմ, արբազան խանդավառութեամբ։

Հայր Ալիշանն էր—հաստատուած հայրենի հողի վրայ, հարազատ ցեղի ծոցում, նրա հսկայ ոգեբերգութեան անմիջապէս հազորդակից, նրա վշտոտ գանգատներին անմիջապէս ձայնակից... Հայր Ալիշանն էր, գուցէ նուազ բանասաեզծ, քան Ւսարայրի երգիչը, բայց աւելի ինքնատիպ և խորունկ, աւելի հզօր ժառանգութեամբ ու սլացքով, միանգամայն վարպետ գրչի և խօսքի, միանգամայն գ ր ո ղ, խ օ տ ո ղ և գ ո ր ծ ո ղ... մի վարպետ՝ ինքնածին, բնատուր, եզակի՝ առանց քիչ-շատ կանոնաւոր կրթութեան, որ սակայն զարմացնում էր ունկնդրին իր հրահանգիչ խօսքով ու ներհուն խմաստութեամբ, մի հանածոյ, անզուտ մեծագ, որ հնչում էր զմայլելի ղօղանջներով, մի տիպար ճշմարիտ առաքեալի, որի վսեմ նպատակի մէջ հարազատ ժողովրդի լեռնացած վիշտն էր ցոլում, որի պարզ ու պարթև կերպարանքը „անձնաւորում էր Հայաստանի բարձրագագաթ լեռնային զանգուածների, նրա յստակ ու լայնարձակ հօրիզոնների ու ջր՛րի“...

Առաջին արեզան էր, որ գարձաւ պիւրիցիստ, հրապարակախօս, առաջին վարդապետն էր, որ մերժեց վանական ամուլ կեանքը և նուիրեց իր բովանդակ էութեամբ — աշխատասէր ժողովրդին։ Հայկական դէմօկրատիզմը—ռամկավարական հոսանքը—չի ունեցել աւելի պերճ և անաղարտ ներկայացուցիչ, աւելի հզօր և համոզուած ռահվիրայ, քան այդ „մոլորուած“ արեղան։ Յայտնութիւնքը, Ճարտկանը դուրս ծնացին նրա առօրեայ ժառանգութիւններից և եկեղեցու բեմից հնչեց հայրենասիրական քարոզը — ջերմ, ազդու, խրախուսիչ —

հնչեցին Հայկի ու Արամի անունները. նոյն բեմից աղօթքի հետ տեղացին ազատախօս վարդապետի շանթերը վաշխառուների, կաշառակեր հոգևորականների և աշխատաւոր ժողովրդի ամեն տեսակ ցեցերի դէմ. նոյն բեմից խարանուեց կեղծիքը, տգիտութիւնը, ջատագովուեց ուսումը, ժողովրդական դպրոցն ու մշակոյթը, գիտութեան ու քաղաքակրթութեան վերջին խօսքը, որ հայրենասէր աբեղան իւրացրել էր ընթերցանութեամբ, սովորել էր այն ժամանակուայ հայ ազգաւոր գրականութիւնից։

Ինքնուսի (*autodidacte*) այդ հազուագիւտ տիպարը շատ-շատ ամբարում է իր մտաւոր պաշարը, արագօրէն զարգանում ու առաջադիմում, շնորհիւ իր դիտելու և ըմբռնելու արտասովոր կարողութեան, շնորհիւ ժանաւանդ իր երկար ու հեռաւոր պտոյտներին — Թիւրքիա, Կովկաս, Պարսկաստան։ Ամեն տեղ ուշի ուշով դիտում է, ուսումնասիրում հայ կեանքն ու հինաւուրց աւերակները, ամեն տեղ իր դիւթիչ քարոզներով, իր անպաճոյճ, բիբլիական բարբառով արծարծում էր հայրենասիրական կրակը, բարձրացնում էր ընկճած սրտերը և հրաւիրում բոլորին դէպի գործ, դէպի անխոնջ հայրենաշէն աշխատանք։

Գրիչը — ոչ նուազ պօրաւոր, քան խօսքը։ Որքա՜ն ոյժ, գեղեցկութիւն ու կրակ կայ այդ յուսահատ, պազատագին կոչերի, այդ ողբերի, երեմիականների, այդ առնական ու մարտաշունչ յորդորների մէջ, որոնցով լի է խրիմեանական գրականութիւնը՝ սկսած իր անդրանիկ „Հրաւիրակ Արարատեան“-ից, ուր առաջին անգամ

թոթովում է հայրենասէր բանաստեղծի քնարը, մինչև „Արծուի վաստպուրական“ի յարձրաթռիչ, հայրենաշունչ էջերը, ուր փուում է ձեր աչքի առջև լայնածաւալ Հայաստանը իր սրտայոյզ տեսարաններով, իր տխուր ու վեհ. Հապանծ փլատակներով, Մնարոպների, վարդանների դեռ խօսուն տաւերներով.. և այդ հսկայ ու լքաւեր գահիճի մէջ տեսնում էք—տերտակների վրայ թառած—Խրիմեանի տիտանեան կերպարանքը, որ ողբում է և յորդորում ու խրախուսում անդադար, որ կոչում է ինափառական, օտարացող հայութիւնը „դէպի երկի՛ր, դէպի երկի՛ր“... „Արթնցէ՛ք, հայկայ որդիք, արթնցէ՛ք“...

Ձե՛զ ինան ծնունդք հայկերան, ձե՛զ ինան խախտեալ հիմունք հայրենեաց՝ի շինել, ՝ի վերանորոգել. վեմք անկեան նոցին թաղել՝ի խոր ի ներջ ընդ հզով, ձե՛զ ինան զ՝արև և պիտոյս հաճարուել. ապա ժողովեցարուք, որի՛ք ի վայրավատին բաժանմանէ... հասեալ շուրջ փարեցարուք զանմահ յիշատակօք ձերոգ նախնեաց. մինչև ե՞րբ այրի մնացեալ ողբայ յօրինեալ Անին բազմասուգ. Դուին, Վաղարշապատ, Գառնի, Տիգրանաշէն... և անդրանիկ աթոռն Թադէի, գաշտն արտուչական Ուարայրին սմայացնալ. մինչև յ՝ե՞րբ Տղմուտ ուահնալ գլորիցի տխուր, լուիկ և ինջիկ. մինչև յ՝ե՞րբ վաեմ արձանն մեծին Հայկայ՝ի հող աննշմարելի անկանգուն մնասցէ և ի գաշտին Շուարշական ոչ բարձրացի ոսկենկար արձանն յիշատակած մեծին Վարդանայ... Մի՛ վհատիք, ոչ գոյ Ցուլիանոս, Ցակոբա, Լանկիմաւուր Հալածիչ քրիստոնէական կրօնի, արևն քաղաքակրթութեան՝ի հորիզոն երկնից բարձրացեալ. չիք բարբարոսական բռնակալութիւն կամաց *)...

„Արևն քաղաքակրթութեան ի հորիզոն երկնից բարձրացաւ“...

---

*) „Արծուի վասպուրականի“, 1859 թ. մայիս

Այդ հատատն է թերևս, որ թելագրում էր Խրիմեանի յեղափոխական աշակերտներից մեկին, Արսէն Թոխմախեանին, գրել նոյն տարուայ յունուարի համարում իր սիրուն ոտանաւորը, որ Հայաստանի գարունն է աւետում.

. . . . . .

Լեռնակուտակ հալին ձիւնք,
Գայ բալձալին այն գարուն
Յար վարգենին և շուշան
Ի խաղս առուոյ կան գուարթուն.
Եւ կաթնորակ ազբերունք
Յայտեալ վիժին 'ի ժարժանդ
Վառեալ ախտակն սիրելոյն
Զայնէ մեղմիկ վարդենւոյն
Աւետելով նոր գարուն...

„Գարնան“ աւետողը պիտի դառնար յետագայում հայ ազատագրական շարժման առաջին ահվիրաներից մինը—գեղեցիկ սկզբնաւորութեամբ և ցնցող, ոգեբերական վախճանով...

"Արևն ի հօրիզօն երկնից բարձրացաւ, չիք բարբարոսական բռնակալութիւն"...

Պարզուրի՞չ է տեսարանը այդ բարձրացող արևի,— Խրիմեան վաղուց զգացել է նրա փրկաւէտ ճառագայթները, ուստի և „Արծուի Վասպուրականի“ն չի բաւականանում սոսկ լալկան մեղեդիներով, սոսկ ամուլ, ագահունչ երեմիականներով, այլ և մերթ ընդ մերթ ըմբոստութեան լարն է հնչեցնում, կռիւ, գիմադրութիւն, ազատութիւն է քարոզում:

Մի ուշագրաւ ալլաբանութեան մէջ „Արծիւը“ իր

հայրական խրատներն է ուղղում զէնքով ու զրահով պատած երիտասարդին.

... Զօրացի՛ր դու, հայկազուն քաջագէն երիտասարդ, ամենևին մի՛ վախենար, ամենևին մի՛ վհատիր, գնա՛ քու ճամբադ, ուսկից որ քու առաքինի նախնիքներդ անցած են քեզի պէս թշնամիներուն հետ կռուելով... Վազէ դէպի Այրարատ... Վարդան Աւարայրի դաշտէն քեզ խրախոյս կը կարդայ... Սի՛րտ առ... Թո՛ղ քաջ Վարդանայ սուրբ արիւնին կարմիր կաթիլներ, որ ճամբադ վրայ թափուած կերևան ծաղկի պէս՝ քու աչքիդ իբրև ուղեցոյց նշան ըլլան. բարո՛վ երթաս...

***

Ալիշան ողբում է և երգում տարածութեան վրայ. հայրենիքից հազարաւոր ժղօններ կեռու, առանց երբէք ոտք դնելու իր երգած սարերի ու ձորերի մէջ, իր ցեղային միջավայրում,—Խրիմեան անձամբ ապրում է և ողբում հայրենի թշուառ, ալանդակուած իրականութիւնը։

Ալիշան գրում է վենետիկեան ազատ ջրերից—Խրիմեան հնչեցնում է իր շեփորը բուն իսկ դժոխքի մէջ, շրջապատուած ամեն կողմից ոսոխներով։

Ալիշան համակուել է ըմբոստութեամբ գլխաւորապէս արևմտեան յեղափոխութիւնների ազդեցութեան տակ,—Խրիմեան դարձել է յեղափոխական իր ցեղի կրած անլուր բռնութիւնների և տառապանքի հանդէպ։

Ալիշան հայոց ազգի բանաստեղծն է, նրա գիւթիչ, պերճախօս ժարգարէն, նրա խանդավառ, անզուգական աշուղը։ Խրիմեան թէ աշուղ է, թէ յեղափոխական գործիչ, թէ երազող և թէ մանաւանդ ձգտող, իրագործող... Միանգամայն մի տք, կամք և ճիգ։

Եւ ի՜նչ հոյակապ ճի գ... Ի՜նչ ահռելի դժւարութիւններ՝ իր յղացած ծրագիրների իրագործման ճամբու վրայ... Ո՞վ կարող է հաշւել այն բոլոր խոչընդոտները, չափել այն բոլոր վտանգները, զրկանքներն ու տառապանքը, որոնք ուղեկցում էին Հայոց Հայրիկին այդ տատասկոտ ուղիի վրայ, երբ նա խիզախում էր յիսուսնական թւականներին տպարան ու մամուլ հաստատել հայկական լեռնագաշտում *):

Մեր նպատակից դուրս է՝ նկարագրել մանրամասնօրէն այդ աննման էպօպէան, որ այն ժամանակւայ թիւրքահայ իրականութեան մէջ մի կատարեալ յայտնութիւն էր... Մանրամասն կը գրւի այն՝ երբ գալոց օր'եկաւիվ պատմագիրը կը գրէ մեր ազգային վերածնութեան բազմահատոր պատմութիւնը: Այդ ժամանակը չի հասել գեռ Խրիմեանի շուրջն անգամ՝ հայ քննադատական միտքը չի գործում տակաւին ցանկալի պաղարիւնութեամբ ու ներդաշնակութեամբ: Դեռ երէկ էր, որ ոմանք — հայ մամուլի Արշակաւանից — ժռտենալով հակային իրենց գաճաճ չափերով, փորձում էին տապալել նրան և իսպառ խաւարեցնել վեհասուն տարւայ անվկանդ ճիգերով վաստակած խրիմեանական լուսապսակը...

***

Կարլայլի խօսքը—թէ ազգերի պատմութիւնը էապէս պատմութիւնն է մեծ մարդկանց—ճիշտ է

*) 1855 թւականին:

ժողովուրդ։ Մեծ մարդիկ, որ յայտնել ու գործել են պատմութեան մրրկածուփ թատրի վրայ, մարմնացնում են որոշ մտքեր, բաղձանքներ, իդէալներ, որ յատուկ են ազգի որոշ պատմական շրջանին։ Առաջնորդ, նեըշնչող, գուշակող, մարգարէ՝ նրանք մի մի փարոս են, լոյսի ու ջերմութեան մի մի աղբիւր, որ գալիս են գէթ ժամմը ցրելու շրջապատող աղջամուղջը, տաքացնում, լուսաւորում են սովորական մահկանացուների պաղ ու իներտ դանգուածները, բնազդով ու արտակարգ հոտառութեամբ ըմբռնում են ժամանակի պահանջները և առնական արիութեամբ բարձրացնում են դրօշակը յանուն այդ պահանջների։

Օրի, Մխիթար, Ներսէս Աշտարակեցի, Ալիշան, Խրիմեան, Նալբանդեան, Րաֆֆի, Պատկանեան, Արծրունի եւայլն—այդ յուսատու փարոսներից են, լոյսի ու ջերմութեան այդ կենդանի աղբիւրներից, որ ժայթքում են հեռուէն-հեռու, ժամանակ առ ժամանակ, կեանքի գոլշ, արևակէզ անապատում, ազգային պատմութեան միօրինակ տարածութեան վրայ, կոթողում են իրենց անձով ու գործով այդ պատմութեան դրւագները, տարածում են իրենց շուրջը օգևորութիւն ու եռանդ և գնում են իրենց ձեռքով խարխխները հայկական կառուցւածքի... Նրանց էութիւնն ըմբռնելով մենք դիւրութեամբ կ ըմբռնէինք և ազգային վերածնութեան պատմութիւնը, նրա ճշմարիտ իմաստը։

Խրիմեանը գուցե ամենից օժտւածն էր, գուցե ամենից ինքնատիպը այդ գեղեցիկ շարանի մէջ...

Այսօր ևս դեռ զարմանքով հարց էք տալիս, թէ

ինչպե՞ս տաճկահայոց ճխլուած, մանրացած, տափակ միջավայրում — և այն էլ այն ժամանակ - կարողացաւ ծնունդ առնել... այդ լեռը՝ նա դուրս ժայթքեց ցեղի խորունկ ու վշտաւատ ծալքերից, որպէս կեանքի ու կրօնքի հրաբխային մի բնկոր, որ պիտի գար շնչաւորելու գաւառական ընդհանուր մեռելութիւնը, տրկութեան ու մեղկութեան, մտաւոր ու բարոյական անդամալուծման մթնոլորտը։ Առանց կանոնաւոր ուսման ու գիտութեան — բայց ահագին բնատուր իմացականութեամբ։ Առանց բարոյական դաստիարակութեան, բայց առողջ բարոյական բնազդով, նախնական քրիստոնեայի ջինջ առաքինութիւններով։

Նախնական քրիստոնեայ՛...

Եւ, սակայն, Վասպուրականի Արծիւը այստեղ ևս ցոյց է տալիս իր օրիգինալ դէմքը, իր անվրէպ բնազդը և իր նուրբ հոտառութիւնը։ Նա մերժում է այդ նախնի քրիստոնէի համակերպութեան բարոզը, մերժում է բոլոր ծոյլ, մեղկարար, կրաւորական հաւատամքները, չարին չարով չպատասխանելու անիծապարտ սկզբունքը, որ գլորել էր հայութիւնը տրկութեան ու ապականութեան տիղմի մէջ, որ սպառնում էր վերջնականապէս կործանել այն։ Նա մերժում է այդ տրկական պաշտամունքները, ըմբոստանում է հայ կղերի, հայ աշխարհի դարաւոր ուսմունքի դէմ, և ժողովրդի սրիւնը ծծող բռնակալ ուժերի դէմ՝ քարոզում է պէնք, դիմադրութիւն, ինքնապաշտպանութիւն...

Այդտեղ էր Խրիմեանի անձնաւորութեան մեծութիւնն ու հմայքը, նրա պատմական մեծագոյն ար-

ժէքներից մինը։ Այդ հանգամանքն է, ի միջի այլոց, որ տալիս է անզուգական ծերունիին թիւրքահայոց „առաջին յեղափոխականի“ տիտղոսը։

Քրիստոնեայ—այո՝ Վաղեմի քրիստոնէութիւնը հրահանգում էր պարզութիւն, բարութիւն, ալտրուիզմ, ժողովրդասիրութիւն ու մարդասիրութիւն։ Այդ բոլոր „հովուերգական առաքինութիւնները“ մենք գտնում ենք վանեցի առաքեալի մէջ և գտնում ենք մի տեսակ քնածին, ինքնաբուխ, անարուեստ, այսպէս ասած, անգիտակից վիճակի մէջ... Ընդհանուր ոչինչ չունէին սոցիալիստականի, ալտրուիստականի նրա գեղեցիկ ժեստերը, „հնարք“ չէր, „փոլիթիկ“ չէր այն վեհանձն բարութիւնը, որ թելադրում էր սուվի, տագնապի վայրկեաններին ժողովրդական դարևոր առելութիւնը և կերակրել ու խնամել հայի հետ անխտիր քիւրդին ու թիւրքին...

Քրիստոնեայ — այո՝ Բայց բարոզելով հանգերձ Քիստոսեան աւետարանը, հոչակելով դրա հետ գիտութեան ու լոյսի անհրաժեշտութիւնը, յորդորելով ժողովրդին դպրոց բանալ, գիրք կարդալ, յորդորելով բաց անել ամեն տեսակ կուլտուրական հիմնարկութիւններ, մեծ վարպետը համոզուած էր և ձգտում էր համոզել ուրիշներին էլ, իր խոպան, ստրկամիտ հայրենակիցներին, որ այդ բոլոր խաղաղ ճիգերը բաւական չեն, որ այդ բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները գործի կէսն են, որ միմիայն նրանցով չի պահպանւի ազգի շէնքը, որ մեծաւոր վերածնութեանը պէտք է անպայման շաղկապւի ա զ գ ա յ ի ն վ ե ր ա ծ ն ո ւ թ ի ւ ն ը...

կոչե՛ւ, մաքառում...

Սթափում էր կամաց-կամաց հայ աշխարհը և Խրիմեանի անձնաւորութեան մէջ կենտրօնանում էին մարտիրոս ժողովրդի բոլոր աղօտ յոյսերն ու տենչանքները, խուլ ու եռուն դժգոհութիւնները ու բողոքները: Պարզ, համեստ վեզարաւորը դառնում է մի ջնա կ է տ այդ սթափուող ու մաքառող աշխարհի... Եւ նրան է վիճակւում քիչ յետոյ՝ պաշտօնապէս հրապարակի վրայ դնել հայկական արիւնոտ խնդիրը Ազգային խորհրդարանի, օսմանեան պետութեան, ապա և ամբողջ Եւրոպայի առջև...

Կուի, մաքառման մէջ սկսում է և վերջանում հրատկայական կարիերը, կուով, անվհատ մաքառումով բարձրանում է արագ արագ երկայնաձիգ սանդուխի վրայ, հասնում է մինչև փառքի ու համբոյրի ծայրագոյն աստիճանները... Աստսան բերկրանքի ու երկիւղած յափշտակութեան մէջ ծափահարում է և խունկ ծխում իր „Հայրիկին“... Հիացում, երկրպագութիւն, պաշտամունք, զառանցանք, առասպելներ չնաշխարհիկ կուռքի շուրջը... Հոյածանք, դաւեր, առասպելների կրճատոց՝ թշնամիների բանակից, թէ հարազատ և թէ օտար, բռնաւոր թշնամիների... Ամբողջ կեանքը՝ անդուլ պայքար յաճախակի պարտութիւններով, երբեմն մինչև կատարեալ խորտակում, յուսահատութիւն, արցունք ու հառաչանք... Սակայն անկումը ժամանակաւոր է, առնական կորովը չի հատնում, պայքարի ոգեղը շարունակւում է մինչև կեանքի վերջալոյսը, երբ էջմիածնի պատերի տակ, համազգային մի ծանր վտանգի հանդէպ, պատաւ արծիւը

վերստին թափահարեց թևերը, ձայնակցեց իր յեղափոխական զաւակներին, ընդ առաջ գնաց հայ մարտական կազմակերպութեան ահազանգին ու յորդորներին և ծառացաւ մի ահարկու բռնապետութեան դէմ...

***

Վերադառնանք, սակայն — վ. Տ-ի

„Արծուի Վասպուրականի“ն իր պատուաւոր տեղն ունի հայ մամուլի և վերածնութեան պատմութեան մէջ։ Նա Խրիմեանի հրաբխային էութեան մի մասն է, նրա ահագին և բեղմնաւոր գործունէութեան պատկառելի մի յուշարձանը։

Աշխատակցում էին Հանդէսին մի խումբ աշակերտներ վարդապետի հիմնած գիշերօթիկ դպրոցից — մի խումբ գաղափարական „Արծուիկներ“, որ Խրիմեան քերել էր ուել Հայաստանի զանազան ծայրերից և որոնք ապրում ու աճում էին իրենց պաշտած վարդապետի շունչով, դաստիարակում, ազնւանում էին նրա մաքուր, գաղափարական մթնոլորտում, նրա թովիչ ընկերութեան մէջ... Սրուանձտեան, Թոխմախեան և ուրիշներ, բոլորն էլ ապագայ հայ ժողովրդական գործիչներ, վարժապետ, քարոզիչ կամ գրող։ Աշխատակցում էր և Րաֆֆին — հայ նորագոյն շարժումների ամենազօրեղ ներշնչողն ու պատրաստողը — որ տակաւին սկսնակ, ապրեց մի քանի ամիս վարագի ընկերութեան մէջ և յետագայում գրեց իր խանգաւառ ներբողը „Արծուի“ ու վանքի մասին։

Գրում են „սաներկները“ արձակ և ոտանաւոր, յա-

ձախ միամիտ աշակերտական ծոթոթանքներ, բայց վառ-
ւած մի կատաղի հայրենասիրական շունչով։ Սո՜ւգ է և
հատաչանք ամենուրեք... Ւրիտասարդ գրողներն էս,
հետևելով իրենց վարպետին, նախ ձգտում են հայրե-
նիքի անօրինակ յիշատուԹիւնները ողբալով, շարժել,
զգայնացնել կարծրացած սրտերը և ապա միայն՝ փո-
խորկել նրանց՝ ըմբոստացման հուժկու յորդորներով...

Արիւն ընդ հող միշտ շաղախի, երկիր ինքնին վա՛յ դոչէ,
Քարինք պայԹեալ աղաղակեն, սիրտ երկիւղած ոչ մնաց.
Ո՞ւր են չքնաղ մեծ ապարանք պերճ աշխարհին մեր Հայոց,
Ի՞սպառ բանդևալ կործանեցան, բնակիչք նոցին ոչ մնաց *)...

Ահա և Անիի սրտաճմլիկ ողբը.

Երբեմն էի ես շատ անուանի
Հայոց քաղաք Թագաւորեալ
Այժմ աւեր հիմնայատակ
Նստեալ կուլամ ես միայնակ...

Բայց մի օր...

Գան ժողովին ազգ միաբան
Ջս հաստատեն քարինք անկեան
Գեղեցկանաս շատ անուանի
Ցապա մի՛ լար սիրուն Անի,
Անի, Անի, իմ՛ Ջան Անի...

Ողբից յետոյ—միշտ խրախոյս... Որովհետև լոկ խըղ-
ճալն ու յուսակտուր վայո՛ցը անարժան էին Վարագի
հպարտ արծուիկներին։ Հայրենիքի փառքերը սգալով
հանդերձ՝ նրանք հետզհետէ—այդ „փառքերի“ զօրու-
Թեամբ իսկ (թէկուզ մարած, անդառնալի)—առգրուում
են ազգային հպարտուԹեան զգացումով,
տրուում են երբեմնապէս գոռոզ ու վէս նացիոնալիզմի

*) „Արծուի Վասպուրականի“, դեկտեմբեր 1855։

հովերով, շարադրում են չափազանցրած ու փքուռոյց ներբողներ՝ հին հայկական մեծութիւններին.

Հակայ հրզօր գեղապատշաճ
Հայկ մեր նախնին քաջարանց
Հա՜ռաքազուկ, կորովաձիգ
Տիեզերայց վհհապանծ
. . . . . .
Արծուի ահեղ ուսուռնաթև
Աշխարհակո՜ղ Արաշ՛ս,
Յառիայէ ի Յ՛Եւրոպայ
Սլացեալ անցեր փութապէս
Ծով և ցամաք կղզիք բազումք
Եղեն ծառայք կամ հրկէզ
. . . . . .
Պարագլուխ պարթև յաղթող
Արքայդ Հայոց Վաղարշակ
Ցահէ քոյին երկեան ապինք
Պատանք եղին նապաստակ։
. . . . . .
Մեծդ Տիգրան աէդ հըրնկէց
Եղջիւր փառաց անսասան,
Անյաղթ գորուն Հռովմէական
Անպարտելի ախոյեան
Մինչ ց՛ե՞րբ կայցես հինէն անտես
Կարօտ եմ քոյդ տեսութեան *)...

Թող լինի գա մի ցնորք, մի վարդագոյն զառանցանք՝ խակ ու շօվէն նացիօնալիզմի... Բայց կայ միւս զգացումը, որ խորապէս օրինաւոր էր ու բանաւոր, որ ունէր իր գոյութեան ողբերգական պատճառները. դա Վարագեան քարոզիչների ը մ բ ո ս տ ո ւ թ ե ա ն ո գ ին էր, հիւսուած մի անհնարին գարշանքի զգացման հետ, որ նրանք տածում էին դէպի տիրող ոէժիմը և նրա ստեղծած կացութիւնը Հայաստանում։

*) „Արծ. Վասպ.", մայիս 1859։

Ի՛նչ էր սակայն այդ ռէժիմն ու կացութիւնը, ինչո՞վ էր նա սարսափելի և նողկալի, ի՞նչ էր հայ զանգուածի թշուառութեան ու տառապանքի պրկիւրը—վաթսունական թուականների սկզբներուն, երբ ռէֆօրմի և ազատութեան հովն էր անցնում ամբողջ օսմանեան երկրի վրայից, եւրոպական ճնշման տակ, երբ սուլթանը պատրաստւում էր վեհանձնօրէն պարգևելու „Սահմանադրութիւնը“ իր սիրելի հայ ազգին և երբ պօլսի հայութիւնը հրճուանքի ու խանդավառութեան մէջ տօնում էր „նոր դարագլուխը“։ Ա՛հ, գտնւեցին վերջին դժբախտ քսանամեակում հայ գրողներ, որոնք հանդէպ ներկայի՝ ներքողեցին, ցաւով ու ափսոսանքով, „հին բարի ժամանակը“, նախայեղափոխական շրջանի բարիքները, թիւրքական ռէժիմի քաղցրութիւնը, հայատառանցու մեղմ ու բարօր վիճակը...

Թո՛ղ նրանք կարդան ոչ թէ „Մասիսն“ ու „Հայաստան“ը, այլ „Արծուի վասպուրականի“ն։ Թող նրանք կարդան Սրուանձտեանի այս ցնցող նկարագրութիւնը հայկական գաւառների ամենօրեայ կացութեան, այս անպաճոյճ տողերը, ուր տեսնում էք մի ահաւոր ու հրէշաւոր դրամայի ներկայացում, մի դիւային չարչարանքի, որին մատնւած էր միլիոնաւոր ժողովուրդը և որի մէջ նա, անյոյս, շղթայակիր, գալարւում էր ու մեռնում ամեն օր և ամեն ժամ... Այդ դժոխքի զարհուրանքը դեռ աճեց այնուհետև, ծանրացաւ տարէց տարի—չէրքէզների ու այլ իսլամ գաղթականների ներարշաւով, քալկանեան յարձակուն շարժումներով, Թիւրքիոյ աստիճանական սպառումով, տուրքերի ստնձորձակ ամբարու-

մով—և հասաւ իր աւերիչ գագաթնակէտին ռուս-թրքական պատերազմից յետոյ։

Անկանչ դնենք Սրուանձտեանին, որ տալիս է պատկերներ հայ շինական կեանքից.

Կը տեսնա՞ս, այն հրապարակի կշտից քանի հատ զօրքեր կ'անցնին և նոցա մէջ շրջապատւած մի ղօրմելի պառաւ և մի երիտասարդ շինական հայ կին... Այն ի՜նչ ձայն էր, ի՞նչ ճիչ էր, որ յանկարծ լուեցաւ... Հարուա՞ծ էր, որ աւին այն կնոջ, պարտուց համար բռնած կը տանին դատել ու տանջել...

Մի՞թէ կ'ամաչանանան և սրբա. այդ ի՞նչ սարսափելի հարուածներ։ Այդպիսի վշտալի արտերը տակաւին աչ՞ր կըզգան։ Զարհուրելի վայրկեաններ տակաւին ուրախալի՞ն կը կրեն...

Թշուառութիւն է մանկան իւր ծնած ըոպէից մինչև գերեզմանը...

Թշուառ է այդ մանուկը, ասում է Ա., ոչ միայն նրա համար, որ չոր հողի վրայ է հանգչում, գարի հաց ուտող մօր կաթն է ծծում, որ զրկուած է ամեն փափկութիւնից ու քնքշութիւնից, այլ ահա նրա թշուառութեան պատճառները։ Հէնց որ աշխարհ է գալիս, հէնց որ ծնողների դառնացած դէմքերը մի փոքր սկսում են ժպտալ՝

Ահա բռնութեանց ձայներ կը խշխշան գեղի հրապարակը և գալով գալով մինչև նոցա շեմը կը կոխեն... Իակոյն փոխուեցաւ տեսարան։ Կամ տուրք ժողովողն է կամ պարտատերը, կամ մի նոր տուկանք (տալեան), կամ քիւրդեր եկան գըշլոտ (վրանաբնակ քիւրդեր աշնան կուգան հայոց գիւղեր ձմեռելու և հայեր ամեն տարի կը հոգան նոցա համար ամեն պիտոյքն ու կարիքը)։

Լա՜ց մանուկ, լաց լալ խղճալի մանուկն։ Գնաց հայրը, գնաց մայրը։ Հայրը այն կողմ աղաղակ կը հանէ. տուրք կը պահանջեն, հարուած կընդունի, վանգի փող չունի... Վա՜յ նրա գլխուն... Կինը գրան նաև կայնած, սիրտը դէպի նոքա՝ծին, և աչքերը դէպի ամուսնն այս աղէտալի տեսարա-

Ներ ու ցուրի յառած կը հեծէր, հեծեծէր. այժմ խոպան թողուց մանուկը և թռաւ ու անկաւ մէջ այն աղէտից, յորմէ և իրեն բաժին ինկաւ, խիկունքն ու մէջքը հարուածեցին, որ եթէ քանի մ՝օր յառաջ լինէր, պիտի վիժէր իւր զաւակը։ Ահա ծնօղք մանկան, ահա մանուկ ծնողաց...

Անցաւ այդ աղէտը—մի ուրիշն եկաւ.

Դարձան վերջապէս ծնողք... կը հանդչէին սիրտերը կամաց-կամաց, թմրեցան կապուտակ երակները, որ ուռած էին ծեծուելէն... և ահա մի ևս վայրկեան դառնութեան։ Գեղի գիրը (մեհլէ մուխթարի) չորս կամ հինգ գազանակերպ քիւրդեր եաևը ձգած մտան տուն։ Արդէն գեղի մէջ փրթիած փոխ-որիկէն, գոռում գոչումէն... գաւազաններու, հայհոյանքներու և թշնամացց ձայներէն յայտնի էր, որ բարբարոսները ձմերելու (դշլաղ) եկած էին գեղ, որ Ուէսին կը ծեծէին, գղրին կը հայհոյէին, միւսի վրայ սուր ու գէնք կը քաշէին, վերջապէս բաժին եղաւ գեղի վրայ և այս ֆ կամ հինգ էլ այս տան բաժինն էր։

Եւ Սրուանձտեան նկարագրում է տան իրարանցումը.

Ամէնքը ոտքի են, ապաստարելու քիւրդերին. — մանուկ, աղջիկ անգամ, իրրև դերիներ... Ոմանք կօշիկները հանել և սրբել, ոմանք զգեստները թօթափել, պահել։ Այն կողմը խեղճ կնիկ թոնիր կը վառէ, որպէս զի գշլաղներ տաքնան. աղջիկներ, հարսներ կերակուր կը պատրաստեն, իսկ էրիկ մարդիկ կայք ու ծանրութիւնները ներս կը կրեն, ձիեր ու տաւարներ կը տեղաւորեն։

Երեխան էն կողմը խեղճ կրակ կուլայ...

Այստեղ միայն հառաչանք և ոչ այլ ինչ...

Արբունի տատանորդ տատցող մի նոր կերպ աէր նա գեղի մէջ, էկած օրէն մինչև գնաց ամեն օր եղ ու ձուածեղ, փոխինդ ու գաթայ, սէր ու կարտոֆ իր սեղանին վերայ պատրաստ պիտի գտնար։ Այս լէ ոչ, փայտ ձեռքը, գէնք վրան... հայհոյանք, ապտռնալիք կը թափէ, մինչև փոխաթուխ ոտները, ծառայ գառնաս, հող գառնաս, շուն գառնաս, հազիւ տան միջնորմով ու մէկ աչքառով քեզ հետ հաշուի...

Ներքին քիւրդիստանու հայեր գրեթէ ամենքն էլ այս վիճակին բնտրած են. թողուլ և գաղթել։

Ահա և զապթիէն, խորջ հաւաքողը.

Իջաւ զապթիէն իւր ձիուց բարևեց ու գնաց Ռէսի տուն. ուզածը կերաւ ապա սկսաւ առաջարկել. պառաւ-կնիկներ, մէկին կը հարկադրէին չորս մարգու տուրք տալ, պատճառ որ սորա չորս որդիքը Աստաբուլ են. բաղդեց թշուառ պառաւը, մէ 1 տարի 4 ամիս է, որ իմ որդին օտարութեան մէջ մեռեր է, բայց ո՞վ էր լսող: Ինքն ասաց, ինքը լացաւ...

Խնայէ՛ք մեզի...

— Չէ, չէ, անկարելի է, փարա՛յ, փարա՛յ: Այնտեղ կանչեցին և քանի մը նորահարսներ, որոնցմէ կը պահանջէին իրենց երիկներու խարջը. խղճալիք, պառաւներու ետև կայնած, ձեռքով ու գլխով իրենց անճարութիւնը յայտնեցին, բայց զապթիէն գոռալով ու երկիւղ տալով պատւիրեց, որ պարտը աննե: Եւ գնաց նորա դղալով ու լալով *)...

Այո՛, „այստեղ միայն լա՛ց ու հառաչա՛նք“ —կրկնենք „Արծուի“ խօսքերը: Ոչ մի ժպիտ ուրախութեան, ոչ մի յոյս... պ.ժոխքն է... *Lasciate ogni speranza voi chi entrate!...*

Ինչպէ՞ս չխռովէր հայ փոքրաթիւ և գիտակից հրիատասարդների սիրտը և չլցուէր ատելութեամբ դէպի այն բութ ու բարբարոս ոէժիմը, որ տրորել էր վայրագօրէն մարդկային կեանք ու պատիւ, հաւցրել էր միլիոնաւոր զանգուածները անասնական, իլօտային կացութեան:

Եւ ահա „Արծուի վաստրական“ի մէջ գժգոհութիւնը խտանալով, միշտ աւելի և աւելի գունաւորուում է ու դուրս պռոթկում մի շարք յօդուածների ու տեղեկագիրների մէջ: Ահաւասիկ մէկը դրանցից: Վէճի են բռնուած փառասէրը և հայրենասէրը. առաջինը էգօիստ, նիւթա-

*) „Արծուի վաստ., 1862 թիւ 3:

պաշտ ու երկչոտ՝ աշխատում է հանել երկրորդին „մոլար ճանապարհէն“ և ասում է.

Ձեր հայրենասէր համարած քաջ Վարդան չէ՞ր, որ իր ուժէն վեր գործի ձեռք տարնելով, հայոց անմեղ և անհամար երիտասարդներու արիւնով ներկել տուաւ Արտազու դաշտը ու բոլոր Հայաստան աշխարհ գերել տալու պատճառ եղաւ։

Հայրենասէրը պատասխանում է.

Ազգիս բարեկաւութեան համար իմ բոլոր գոյքն ալ, կեանքս ալ կը զոհեմ... Վարդանայ տանջուած անտանելի դժոխքը ինձ համար ընտրելի է, քան Վասակայ հանգիստ արքայութիւնը... Եթէ հայոց անմեղ ու անհամար երիտասարդաց արիւնով չ՚ողողէր Հայաստանի դաշտերը, ո՞ւր տեղէն պիտի բուսանէր Հայութեան ազնիւ բողբոջները... („Արծ. Վասպ.“ 1862—63, թիւ 2)։

Ցեղափոխականի և հակայեղափոխականի ծանօթ վէճն է, որ գրեթէ նոյնութեամբ մենք տեսնում ենք մեր շարժման նորագոյն շրջանի մէջ։ Եւ ո՛րքան ճիշտ ըմբռնուեցաւ ապստամբութեան գաղափարի էութեան, նրա բարձրացնող, ազնւացնող առաքելութեան Այդ գիալոգն ևս պատկանում է վարպետի „Արծուիկներից“ մէկի գրչին։

Մի ուրիշ տեղ „Արծիւ“ը պարզապէս ապստամբութիւն է քարոզում անհանգուրժելի լծի դէմ։ Նոյն Արուանձտեանն է. հերի՛ք է լանք, ասում է նա, արիա՛նք և կուենք.

Չի՛ լանք, եղբայրներ, ափսոս են մեր աչքեր. թող լան հին գլուխներ։

Էն գեհ մի կռիւ կայ. կը լսէ՞ք ահաւոր ձայներ, ձայն Արեւմուտքից, ձայն Հիւսիսից... մի՛, մի՛ սարսափինք, նորա

մեզ քաջութիւն թող տան... մենք հաւ չենք, մենք էլ մարդ ու մարդու զաւակ ենք...

Ազգի հաժա՞ր պիտի աշխատիս. էլ ուրեմն դու քեզ հաժար չես, բո ծնողայ հաժար չես... Ազգին ես... Կ'րնթանաս արիաբար, հակայ հակայ, առաջուցդ դժուարինք, վիշտք ու նախատինքներ կոխելով... կոխէ ու կոխվիր, զո՛րկ ու զարկուիր, ինկար, վեր կանգնիր, մեռնիս էլ՝ կր յաղթես... Նահատո՛կ... Ի՞նչ հոգեղէն անուն, ի՞նչ երկնային կ'չուժ... Անուն, որով ազգեր կենդանացած են...

Աշխատինք ուրեմն... Յուսահատութիւն միայն չունենանք... Հայութիւնը... կարծես գերութեան վիճակեալ մի անօթի է... Ա՛հ, այդ իսկ է, գիտես. էլ մի՛, էլ մի՛ յաւելուր... Բայց ինչի՞ կուլաս դորա վերայ. չ'ողբանք, չը յուսահատուինք... Արտասուք սրբենք և ոչ թէ արտասուք թափենք. ձեռք ու ոտք շարժենք և ոչ թալկանանք մեռելի փէս վեր ինկնինք: Լացողներ լացին ու անցան գնացին. հիներն էին նոքա. մեք նորութեամբ շարժինք...

Արարածոց դիւանագիրը ի՞նչ կը գրէ արդեօք հայոց գործքերէն. միշտ ո՞ղբ, հոսա՞նք արտասուաց, գառնութիւն սրտի՞ց, գերութի՞ւն վիճակի... ա՞յս պիտի կարդան տիեզերաց տարեգրութեան մէջ հայոց գործքերը, և ևս տասնիններորդ դարուս հայոց գործքերը..

Այլ և դու, կորովիդ հայկական երիտասարդութիւն, ընդոստս ի վեր կը խոյանաս ալեանաս, թևերուդ վ ր ա յ ա զ ա ա կ ա ն ո ւ թ ի ւ ն բ և ե ա ա ծ, ն ա հ ա տ ա կ ո ւ թ ե ա ն շ ո ւ ղ ո վ. իրաւ ճանապարհը դա է... Բայց մէկ կողմից խառնակ է օդ, մրրկատ է երկինք և միւս կողմից չուան և յորը ձգած են որոգայթ ոտիցդ. ի՞նչ, ուրեմն, դադարի՞ր կամէի ասել քեզ. ո՛չ, ո՛չ, դու ընթացիր, բայց ծանր ծանր, ինչպէս արի, նմանպէս դ ո ւ շ *)..

Հեռո՛ւ յուսահատութիւնը... Հները լացին—բա՛ւ է, մենք շարժի՛նք... Նայեցէք դէպի Արևմուտք և Հիւսիս, այնտեղ կուիւ կայ,—կուիւ ընդդէմ բռնապետութեան, կուիւ յանուն մարդկային իրաւունքների... Մենք էլ

*) „Արծուի վառ.", Շմյան 1862—63 թ., թիւ 1։

մարդ ենք, հետևե՛նք նրանց օրինակին, արիանանք, ոտքի՛ ելնենք, զարկե՛նք և զարկուի՛նք, վայր ընկնինք և նորէն բարձրանանք, գրկենք նահատակութեան ազատարար դրօշը... Ոտքի՛ ելնենք, թէպէտ և... „խառնակ է օդ և մրրկոտ է երկինք“...

Այդպէս էին քարոզում Բաֆֆիից, Պատկանեանից շատ առաջ, իրենց արձակի ու ոտանաւորի մէջ, իրենց ինտիմ, ընտանեկան միջավայրում՝ Վարագի երիտասարդ պատանեաններըյ յեղափոխական այդ ինքնատիպ մարգարէների փաղանգը։

Ե՛ւ Խրիմեան Հպարտ էր իր անուած, դաստիարակած արծուիկներով, Խրիմեանի գաղափարներն էին նրանք շեփորում՝ նորընծայական մի արբազան խանդավառութեամբ, Խրիմեանի Մուսան էր, որ կոչում էր բարձրաձայն, սթափեցուցիչ զօղանջներով հեգ ու աւեր Հայաստանում, որ բախում էր մոլեգնօրէն ազատութեան քրմի դուռը, որ ուզում էր բողոքի տարերային յորձանքի մէջ հալեցնել դարաւոր շղթաները, տիտանեան մի հարուածով ջախջախել բռնապետութեան հիդրան։ Խրիմեանի Մուսան էր — թաւոտ, անմիխթար, բայց և խ՛զախ, անվեհեր — որ եկել էր բուն իսկ հայրենիքի մէջ, նրա խրոխտ ու սգաւոր բարձունքներում ծանուցանելու մի վսեմ գաղափար,—հայկական ապստամբութեան գաղափարը—որ այնուհետև պիտի աճէր, ուռճանար հետզհետէ սուբ՛եկտիվ մտքի և օբ՛եկտիվ իրականութեան կրկնակի մղումով, պիտի երթար կամաց-կամաց նւաճելու սրտերն ու ուղեղները, պիտի երթար պաշարելու „Ձայն տուր ո՛վ ծովակ“ի խորհրդա-

ւոր հեղինակին, պիտի գերէր նրա ամբողջ էութիւնը, արտադրելով մի շարք հոյաշունչ հատորներ, պիտի ստեղծէր պարզ, անյայտ փայլուկցի երիտասարդից — Ր ա ֆ ֆ ի ի ն... որպէս զի նրա միջոցով, նրա հրեղէն քուրայի մէջ բոցավառէր սերունդներին և ծնունդ տար յետագայում այն առնական ու յուզիչ վիպերգութեան, կարիճների այն ցասկոտ ու վրիժառու լեգէոններին, որ քսան տարի շարունակ թնդացրին նոյն հարազատ լեռները դիւցազնական մարտակոչով — „Մա՛հ կամ Ա.զատութիւն“...

Նա պիտի պայթե՛ր — այդ եզակի ու եղերական դիւցազնամարտը — „խառնակ օդում և մրրկոտ երկնքի տակ“, բայց պիտի գար, „Արծուի Վասպուրականի“ի մարգարէական արտայայտութեամբ, բարոյապէս վերածնելու անարգուած, ոտնահարուած համայնքը, սրբելու նրա ճակատից ստրկութեան մուրը և արցունքոտ, արիւնաներկ հողի վրայ „բուսցնելու ՆՈՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ ազնւագոյն խոշորները“...

(ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

ԴՊԻ ՄԵՐ ՏԱՌԱՊԱՆԴԸ . . . . . 3—6

I

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

ա.

Անցեալի արձիվճԼրում. — Հաւատի դիմադրներ եւ ճանապարհներ. -- Տավերնիէ եւ Առաքել Դավրիժեցի. — Կրօնի դերը ընդհանրապէս, Իսլամի դերը մասնաւորապէս. — „Մահմետական հանրապետութեան“ պատրաստիքը. — Օսմանեան բռդամական սիստեմը. -- Իսլամ եւ „ցմտեսական մատերիալիզմ“. — Ռայեայի կացութիւնը իսլամական ռէժիմի տակ. -- Տուրքեր եւ Ռիկաժ. — Իսլամի այլասերող ազդեցութիւնը հայ հասարակութեան վրայ. — Բարքերի խօսքը. -- Հակասութիւններ օսմանեան բռդամական սիստեմի մէջ . . . . . 7—42

II

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

բ.

Իսլամ եւ քրիստոնէութիւն. — Ղուրանի լոյսերն ու ստուերները. -- Թեոկրատիզմը եւ հաւատարութիւնը՝ միմիայն „հաւատացեալների“ շրջանում. — Ջհադ. -- Հակասու-

Լ.Ջ

թեանց մեկնութիւնները. -- Անհամբերողութիւնը՝ արաբական տիրապետութեան օրով. — Օմար՝ Երուսաղէմի պատերի տակ. — Իսլամի ռազմական ոգին.— Մարդմեծեցաւերի լէգէօնները. -- Ֆատալիզմ եւ մոլեռանդութիւն.--Իսլամը եւ արաբական հաղթակերպութիւնը. — Արեւմուտք եւ Արեւելք.--Երկու հակամարս ուղղութիւններ. — Ղուրանը՝ հրամանատար եւ կանոնաւորիչ ամբողջ կեանքի. — Իսլամ եւ պրօգրէս . . . . . 43—75

III

ՏԻՐԱՊԵՏՈՂ ՅԵՂԸ

Բնակուռ նախատագիր.—Սեպը եւ հօրդան.—Խաճնարած եւ երկրագործ ժողովուրդներ. — Բարբարոսութիւն եւ հաղթակերպութիւն. -- Աշխարհակալող կառուածը եւ իր պետը. — Յեղի առանձնայատկութիւնները. — Չուն դէպի Հայաստան եւ Փոքր Ասիա.--Պետութիւնը՝ ցեղի նայելին. -- Զինուորական տարր գերիշխող. — «Չուն բռնապետութեան» տիպարը. — Սոցիալական բոյլ շերտաւորումն. — Ազնւականութեան բացակայութիւնը եւ հետեւանքը. — Պարազիտիզմ եւ ամուլութիւն . . . . 76—117

IV

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Պատմափիլիսոփայական տեսարկ. — Հակօրինութիւններ. — Հայաստան եւ Եւրոպա. -- Կուլտուրական նմանութիւն.—Բնական միջավայրը, իբրեւ ցեղի պահպանութեան գրաւական. -- Դուքանը եւ կառուածը, իբրեւ ճզօր խթաններ հայկական հաղթակերպութեան.—Բնութիւն եւ աշխատանք. -- «Միջնորդ Արեւելքի եւ Արեւ-

էջ

մուտքի միջեւ.—«Յարմարութիւն» անսովոր ուժը եւ նրա սւեւրոս կողմերը --Հայ առեւտուրը միջին դարում. — Հայ վաճառականը՝ որպէս կալտուրայի նախակարապետ. -- Օսար վկայութիւններ. — Տուրքեր, ծոքեր, Կարլ Թիսեր, Օլիվիէ, Լանգլուա, Հախսհաուզէն, Ռեկլիւ եւ ուրիշներ. -- Հայ ազգը միջին դարում. — Փոքորկումի նշաններ.—Անհատների բաւերամուտը. — Մխիթար Աբբա եւ Իսրայէլ Օրի . . . . . 118—152

V

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐԻ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒՄԸ

ՀԱՑՈՑ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁ

—

Խաչի եւ Մահիկի յարաբերութիւնները Կ. Պոլսի նւաճումից ի վեր. — Կապիտալիզմի բաւերամուտը եւ պատմական Եւրոպայի իրաւախոհութիւնները. -- Ոգը Քրիստոնեայ հաւատացեալների մէջ. — Հայր Սանուսո եւ նրա յերը. -- Կապիտիւլասիոնների ծագումը. -- Անգլիոյ առաջին հայերը Արեւելքում. — Սկզբից իսկ՝ բիւրեռմոլ.--Սուլթանը եւ եւրոպական դեսպանները. — Անարգական վերաբերում.--Ռուսաստանը՝ բացառութիւն.— «Մօսկովեան վտանգը» եւ նրա անդրադարձումները հայերի մէջ. — Ղարաբաղը՝ իբրեւ օվազիս ստրկութեան անապատում.--Իսրայէլ Օրիի առաքելութիւնը.— Հայ խաչակրաց արշաւանքի ծրագիրը. — Օրիի անձնաւորութիւնը.--Գերմանական դասախազը եւ նրա կասկածների ու մեղադրանքների արժէքը. — Ֆինկ եւ Հայգէլ. -- Հայկական ազնւականութիւնը՝ նախաձեռնող հայ առաջին յեղափոխական շարժման. — Իսրայէլ Օրին Եւրոպայում ու Ռուսաստանում.--Պետրոս մեծը եւ հայոց ազատութեան խնդիրը. — Օրիի մահը եւ իր ծրագրի վիժումը . . . . . 153—186

VI

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ ԵՒ XIX-ՐԴԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ

(ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՑԵՐԸ)

—

Էջ

Ազատագրական թուիչքներ դարաւոր մռափից յետոյ. — Ղարաբաղ եւ Սիւնիք.--Քաջերի բոյլեր եւ դաւանաւութեան ճիդրաճ. — Արեւելեան եւ Արեւմտեան հայութիւն --Ուշագրաւ զուգաճեռակ.—Ռուսաստանը եւ մեր պատմական ճակատագիրը.—„*Between devil and the deep sea*“. — Յարակաճ ծրագիրներ, խոստումներ եւ ճանճանջ.--Հայ-վրացական դաշնակցութիւն. — Յուսախաբութիւնների շարք. — Ինքնագնութիւն. — Դաւիթ բէկի թատերամուտը. -- Օսմանցի հօրդաների դէմ. — Սիւնիքի դիւցազնամարտը. -- Պարտիզանական կռիւներ եւ „ակն բնդ ական“. — Յոյսը՝ արտաքին միջամտութեան վրայ.--Վիժում. — Հայոց հարցը Եկատերինա II-ի օրով.—Նորէն խոստումներ եւ ձգձգումներ.— Նորէն մահմեդական վրէժխնդրութեան բռնկումներ հայերի դէմ.--Ռուսաց տիրապետութեան հաստատումը.— Հայկական պատրաճքներ խորտակում են. — Կնուտը՝ եաթաղանի տէր.--Մի հինաւուրց վկայութիւն.—Հայ ժողովրդի կացութիւնը Էրիսոնեան ռէժիմի տակ. — «Կրան կովի» քիզիկական ապահովութեան «պլիւսը». — 1826-28 թուականները եւ «Հայոց աշխարհի նւաճումը.--Ներսէս Աշտարակեցի. — Հայ զօրագլուխներ եւ մասնային ապստամբութիւն. -- Ներսէսի պատրաճքները. — Դարձեալ հիասթափութիւն.--Գաղթականների հարցը. — Դաւեր Ներսէսի եւ հայ եկեղեցու իճնավարիճութեան դէմ. -- Ռուսական «սխեմի» յաղթանակը. — Ներսէս ատոռի մէջ.--Յետադարձ ակնարկ.—
Tempora non mutantur . . . . . 187—228

VII

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Ա.

ԱՄԻՐԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Էջ

Ռուսահայ եւ թիւրքահայ.—Ազգային գիտակցութիւնը այստեղ եւ այնտեղ.--Զգտումն դէպի միութիւն.—Եւրոպան եւ հայութիւնը.--Պոլիսը եւ Հայաստանը.—Դասակարգեր.--Հայ ամիրայութեան սոցիալական պատկերը.—Տնտեսական անհրաժեշտութիւն եւ հայրենասիրական բնազդ.--Ազգային հպարտութիւնը կովկասահայ եւ թիւրքահայ ադայութեան մէջ.—Ամիրայութիւնը՝ Թիւրքիոյ տարրալուծման պրօցէսի հանդէպ.--Հայ կղերը.—Լուսաւորչականներ.--Մօրից վազնէրի վկայութիւնը. — Մխիթարեան միաբանութեան էութիւնը եւ դերը. — Թանզիմաթ. -- Նրա անդրադարձումները հայկական պրօգրէսի վրայ. — Դասակարգային կռիւը Կ. Պոլսոյ հայութեան մէջ, 40-ական թւականներում.--Ամիրայութիւն, կղեր եւ ժողովուրդ. — Գում-Գափուի եկեղեցու անդրանիկ ցոյցը.--Ժողովուրդը յաղթող.—„Սահմանադրութեան“ մարտակոչը . . . . . 229—250

VIII

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Բ.

ՊԱԼԵԱՆ, ՌՈՒՍԻՆԵԱՆ, ԱԼԻՇԱՆ

Թիւրքահայ ուսանողութիւնը 40-ական թւականներում. — Ազդեցութիւններ.--Պատմական անցքեր եւ պարիզեան

Էջ

մբնոլորտը.--Յեղափոխութիւն եւ հայրենասիրութիւն.— Լամարտինի ճառը Մուրատեան վարժարանի բացումին.--Թիւրքահայ համալսարանականի եւ հանրային գործիչի տիպը. — Գրիգոր Օտեան՝ վաղեմի հայ ուսանողութեան մասին.--Ռուսինեան եւ Պալեան. — Ազգային Սահմանադրութեան յոբելեանը.--Հայ մամուլը Թիւրքիոյ մէջ.—Հայրենասիրական ճառը.--Հայր Ալիշան, իր դէմքը եւ իր գործը.--Հայկական բերդատեղիներ . . . . . 250—278

IX

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Պ-

ԽՐԻՄԵԱՆ ԵՒ «ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ»

Պոլսահայ մամուլը եւ հայասացնու վիճակը. — Բազմագիտական մարզանիճներ.--Խ. Միսաքեան.—Ազատամտութիւն եւ կրօնական ռադիկալիզմ.—Յ. Ոսկան.--„Լուսաւորեալ“ եւ „խաւարեալ“.—Կուսակցական պայքարի այլասեռումը.--Մասնութիւն եւ պրօվօկասիօն.— Մամուլ Հայասացի մէջ.--Խրիմեան եւ „Արծուի Վասպուրականի“.—Ոդը եւ բողոք.--Ալիշան եւ Խրիմեան.— Վանեցի առաքեալը մեծ հայերի շարանի մէջ.— Դրժումը հրիսոնէական համակերպութեան.--Խրիմեան, իբրեւ միջնակէս տանջուող եւ մահառող հայ ազխարհի. -- Վարագի „Արծուիկներ“. — Թոխմախեան, Սրուանձտեան, Բաֆֆի.--Հայկական դժոխքը 50-ական թուականներին. — Խրիմեանի Մուսան եւ հայոց ապրուստամքութեան գաղափարը . . . . . 279—314

ԳԻՆ
3 ՔՐՈՇԱԿ
10 ԴՐՈՒՇ
1 ՌՈՒԲԼԻ 20 Կ.
1 ԴՈԼԼԱՐ 20 Ս.